372
Ա-70

0120-10

ՀՍԽՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ

(ՔԱՂԱՔԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԻ)

Ծ Ր Ա Գ Ի Ր

(ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀՍԽՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ
ԿՈԼԵԳԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ)

ՊԵՏՀՐԱՏ — ՈՒՍՄԱՆԿՀՐԱՏԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ 1933

13 FEB 2013
50.286
20664
БІБЛІОТЕКА Академії Наук УРСР
49258 КМ
7497-53

Սրբագրիչ Գար. Հովսեփյան
Հանձնված է արտադրության 10 մայիսի 1933 թ.
Ստորագրված է տպագրելու 20 մայիսի 1933 թ.

Պետհրատի տպարան, Երևան, Գլավլիտ 8131 (բ), Հրատ. 2561 Պատվեր № 1160. Տիրաժ 1500

* * *

Համկ (բ) Կ. Կենտկոմի օգոստոսի 25-ի վորոշման հիման վրա վերամշակված ծրագրերը ՀՍԽՀ Լուսժողկոմատի կոլլեգիայի վորոշմամբ հրատարակվեցին, վորպես նախագծեր, դրանք մի անգամ ել ստուգման յենթարկելու մասսայական դպրոցի և ուսուցչության կողմից, օգտագործելու տեղից յեկած դիտողությունները, հատկապես հունվարյան ուսուցչական կոնֆերենցիաների դիտողությունները և ապա վերջնական խմբագրությամբ, վորպես կայուն ծրագրեր, հրատարակել։

Այս ծրագրերը վերջնականապես խմբագրման ու ճշտման յենթարկելիս հաշվի յենք առել ինչպես տեղից ստացած դիտողությունները, այնպես ել Ռ. Ռուսաստանի, Ադրբեջանի, Վրաստանի Լուսժողկոմատների հրատարակած համապատասխան ծրագրերը։

Ծրագրերը վերանայելիս առաջնորդվել ենք մեր ծրագրերը Ռ. Ռուսաստանի և Անդրկովկասյան մյուս հանրապետությունների Լուսժողկոմատների ծրագրերի հետ համաձայնեցման, ծրագրերի ունիֆիկացիայի սկզբունքով։ Այս հանգամանքը հատուկ կարևորություն է ստանում այն պատճառով, վոր մի շարք դասագրքեր, հրատարակված Անդրկովկասի վորևե հանրապետության մեջ, պետք է օգտագործվեն այլ հանրապետությունների մեջ (անգամ Անդրկովկասից դուրս) ապրող նույն ազգության դպրոցներում (օր. Ադրբեջանում հրատարակված մի շարք Թուրքերեն դասագրքեր Հայաստանի Թրքական դպրոցներում և ընդհակառակն)։ Հատկապես Ռ. Ռուսաստանի Լուսժողկոմատի հրատարակած ծրագրերի հետ մեր ծրագրերի համաձայնեցման անհրաժեշտությունը բղխում է նրանից, վոր նպատակահարմար է համարված մի շարք դասագրքեր վոչ թե մեզ մոտ կազմել, այլ թարգմանել կամ փոխադրել Ռ. Ռուսաստանում ընդունված ստաբիլ դասագրքերից։

Սակայն պետք է ասել, վոր 1933 թ. հունվարին լույս տեսած ծրագրերի նախագծերի համեմատությամբ, խոշոր փոփոխություններ չեն կատարված առաջին աստիճանի դպրոցի սույն ծրագրերի մեջ։ Թեև թե շատ զգալի փոփոխություն կատարված է միայն բնագիտության ծրագրերի մեջ. դա հետևանք է այն բանի, վոր 1933 թ. հունվարին հրատարակված նախագծով բուսաբանության սիստեմատիկ դասընթացն սկսվում եր 6-րդ խմբից, իսկ այժմ հրատարակվող ծրագրով դա սկսվում է հինգերորդ խմբից։

Հ. Ս. Խ. Հ. Լ. Ժ. Կ.-ի ՈՒՍՄՈՒՄՆԱ-ՄԵԹՈԴԱԿԱՆ
ՍԵԿՏՈՐԻ ՎԱՐԻՉ՝ Մ. Սահրադյան

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

«Լեզուն ռեալ գիտակցություն է» (Կ. Մարքս), «մարդկային փոխհարաբերության կարևորագույն միջոցը» (Լենին), դասակարգային պայքարի կարևորագույն զենքը, աշխատավոր մասսաների կուլտուրական բարձրացման հզորագույն գործիքը և «առաջ է յեկել, ինչպես և գիտակցությունը, մարդկանց հաղորդակցվելու անհրաժեշտությունից» (Կ. Մարքս): Խորհրդային իշխանության Լենինյան ազգային քաղաքականության պայմաններում, դասակարգային պայքարի ներկա էտապում այսօրվա գրական հայերենն իր արժեքով ներկայացնում է վերևում հիշված մոմենտների խտացումը, և մասսաների կողմից այդ գրական հայերենին տիրապետելու գործը դասակարգային պայքարի, կուլտուրական հեղափոխության և սոցիալիստական շինարարության գործ է հանդիսանում: Այդ իսկ պատճառով մայրենի լեզվի ավանդումը դպրոցում պահանջում է նյութի սիստեմավորում, մշակվածություն և հաջորդական դասավորություն. «մայրենի լեզվի ծրագիրը պետք է ապահովի իրապես սիստեմատիկ և ճշտորեն սահմանագծված գիտելիքների մի ամփոփ շրջանի յուրացում, ինչպես և անթերի ընթերցանության, գրավոր ու բանավոր խոսքի կայուն ունակություններ (Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1932 թ. օգոստոսի 25-ի վորոշումից):

Յելնելով դրանից՝ ուսման յուրաքանչյուր տարվա ծրագրային նյութը դասավորված է հետևյալ հիմնական բաժիններով՝

ա) բանավոր խոսքի զարգացում,
բ) ձեռագրերի ուսուցում՝ և գրավոր խոսքի զարգացում,
գ) ընթերցանություն.
դ) քերականություն և ուղղագրություն:

Սակայն նյութի այսպիսի դասավորումը չի նշանակում, թե հենց այդ կարգով էլ պետք է անցնել. բոլոր բաժինների պարապմունքները պետք է գնան զուգահեռաբար և միմյանց հետ կապակցված. մասնավորապես խոսքի զարգացումը, վորպես աշխատանքի հիմնական մաս, պետք է մտնի լեզվի աշխատանքի բոլոր բաժիններում՝ ամբողջ տարվա ընթացքում:

Նույնը պետք է ասել նաև ընթերցանության վերաբերյալ. խոսքի զարգացման շատ ձևեր կապված են ընթերցանության հետ. քերականության աշխատանքի մեծ մասը կատարվում է նույնպես տեքստերը կարդալու հիման վրա:

Լեզվի դասավանդության հատկացրած ժամերի բաշխումը նրա զանազան բաժինների միջև կատարելիս պետք է ի նկատի ունենալ, վոր ցածր

խմբերում ժամանակի մեծ մասը հատկացվում է կարդալուն և գրելուն, իսկ բարձր խմբերում ժամանակը համեմատական չափով բաշխվում է կարդալու, քերականության և խոսքի զարգացման աշխատանքների միջև։

Գրագիտության ուսուցումը պետք է սկսել տպագիրն ու ձեռագիրը միասին և իրար հետ հյուսված առաջ տանել։ Առանձին ուշադրություն պետք է դարձնել գեղագրության, ինչպես և ուղղագրության վրա։ Ուղղագրության ուսուցումը պետք է տանել հաջորդական կերպով, ըստ հնարավորության կապելով քերականության հետ։

Քերականության դասընթացն սկսվում է 3-րդ խմբից։ 1-ին խմբում աշակերտներին պետք է սովորեցնել առանց տերմինների՝ համառոտ նախադասություն ճանաչելն ու կառուցելը, իսկ 2-րդ խմբում ընդարձակ նախադասություն ճանաչելն ու կառուցելը՝ նույնպես առանց տերմինների։ 3-րդ խմբում աշակերտները սովորում են «ենթակա» և «ստորոգյալ» տերմինները, իսկ նախադասության մնացած անդամները կոչվում են ընդհանուր առմամբ «լրացումներ»։ Այդ խմբում պետք է անցնել գոյական անվան միայն ի հոլովումը և բայի ժամանակների պարզ ըմբռնումը։ 4-րդ խմբում աշակերտները սովորում են պարագայական բառերն առանց ստորաբաժանումների, խնդիրը, վորոշիչը և հատկացուցիչը։ Առիթն ստեղծվելիս պետք է բացատրել այլ հոլովումները՝ առանց դրանք սիստեմատիկ կերպով անցնելու։ Այս խմբում աշակերտները տերմինավորված գաղափար են ստանում նաև ածականների, թվականների, դերանունների, կապերի, շաղկապների և ձայնարկությունների մասին։

Դրանով ամփոփվում է տարրական քերականության դասընթացը։

1-ին աստ. դպրոցում նախադասության գիտական սահմանում չպետք է տալ. 1-ին և 2-րդ խմբերում, «նախադասություն» բառը կարելի չէ գործածել, իսկ 3-րդ խմբից պետք է տալ նաև նրա հիմնական հատկությունները։ 4-րդ խմբում պետք է գաղափար տալ բարդ նախադասության մասին և սովորեցնել միավորյալ նախադասություն կառուցել։

Տասնամյակի առաջին չորս խմբերում աշակերտությունը ծանոթանում է կետադրության բոլոր նշանների, վերջակետի և առոգանության նշանների գործածության բոլոր դեպքերի, իսկ ստորակետի, միջակետի, չակերտի և մնացած նշանների պարզագույն դեպքերի հետ։

Բանավոր խոսքի զարգացման բաժնում առանձին ուշադրություն պետք է դարձնել բարբառային լեզուն գրականով փոխարինելու և ապա խոսելիս պարզ ու բարդ նախադասությունները կանոնավոր կառուցելու վրա։ Բանավոր խոսքի մեջ կանոնավոր բարդ նախադասություններ կառուցելու խիստ պահանջ պիտի ներկայացնել ուսման 3-րդ տարվանից։

Ընթերցանության բաժնում առանձին ուշադրություն պետք է նվիրել բառերը վերլուծման ենթարկելուն և հնչյուններն ու վանկերը համադրելու ունակությունների զարգացմանը։ Սակայն այդ կատարելիս պետք է զգուշանալ ամբողջական բառերով ու նախադասություններով ընթերցելու ունակությանը վնասելուց։

Բառակազմության հին ձևերը սովորեցնելուց հետո 4-րդ խմբում պետք է սովորեցնել նաև բառակազմության նոր ձևերը։ Նորագույն հապավումները, երեխաներին հասկանալի ու պարզ կերպով, կապելով այդ մեր ժամա-

նակակից լեզվաշինարարության դյուրըմբռնելի խնդիրների (լեզվի դերը հասարակական կյանքում և նոր լեզվի կառուցումը), խորհրդային իշխանության ազգային քաղաքականության և ազգային կուլտուրաների զարգացման լենինյան դրույթի հետ.

I ԽՈՒՄԲ

1. **Բանավոր խոսքի զարգացում.** — Երեխաներին վարժեցնել բարձր պարզ, առանց շտապելու խոսել, պատմել իրենց տպավորությունների, ապրումների, կատարած աշխատանքների և զբոսանք-էքսկուրսիաների մասին։ Պատմել պարզ նկարների բովանդակությունը։

Ուղղել մանկական խոսքի պակասավոր կողմերը՝ վերջավորությունները կուլ տալը, խոսելու ընթացքում շնչառության անկանոնությունը, կակազելը և այլն։

Հիշողության զարգացման համար ուսուցչի պատմածից կամ ասածից յուրացնել տալ գեղարվեստական մատչելի հատվածներ և փոքր վոտանավորներ։ Վոտանավորների և լոզունգների կոլեկտիվ ու անհատական արտասանություն։

Աշխատանքի ընթացքում պարզել երեխաների ունեցած բառապաշարը և ստուգել նրանց ըմբռնումը. աշակերտների բառարանը հարստացնել նոր բառերով՝ կապված ստացված գիտելիքների հետ։ Աստիճանաբար բարբառից անցնել գրական լեզվին։

Սովորեցնել երեխաներին հարցերը լավ լսել և ապա պատասխանել։ Աստիճանաբար վարժեցնել հարցերին լրիվ և ամբողջական պատասխաններ տալուն։

2. **Ձեռագրի ուսուցում յեվ գրավոր խոսքի զարգացում.** — Գրաճանաչության անցնելուց առաջ, վորպես գրել սովորեցնելու նախապատրաստություն, մի քանի որ հատկացնել նկարչության միջոցով տառերի էլեմենտներին վարժեցնելուն։ Ընտելացնել գրելու տեխնիկային (գրիչ և մատիտ բռնելուն և այլն)։

Ուսուցչի անմիջական հսկողությամբ սովորել կանոնավոր, մաքուր պարզ և վոչ շատ խոշոր տառերով գրել (տառերի բարձրությունը 8 միլիմետրից ավելի չպետք է լինի)։ Առանձին ուշադրություն դարձնել գեղագրության վրա։

Գրատախտակից առանց տառ բաց թողնելու կարողանալ բառ-բառ, իսկ յերկար բառերը վանկ-վանկ, բայց վոչ տառ-տառ, գիտակցորեն և ճիշտ արտագրել։ Կարողանալ գրել ուսուցչի կողմից արտասանված ուղղագրական տեսակետից հեշտ բառեր և համառոտ նախադասություններ՝ խուսափելով այնպիսի բառերից, վորոնց գրությունը չի համապատասխանում արտասանությանը (գրելու ունակությունների մեջ զարգացնել դիտողամոտորային հիշողությունը)։ Տարեվերջին, նախապես վարժ կարդալ սովորելուց հետո, կարողանալ դասագրքի տպագրից արտագրել և դիտողական թելադրությամբ կարճ նախադասություններ գրել։

Կարողանալ գրել իր անունն ու ազգանունը։

3. **Ընթերցանություն.** — Կարողանալ առանց տառեր բաց թողնելու և կրկնությունների կարդալ մանկական նկարների տակը գրած ամբողջական

բառեր, պարզ և մատչելի բառերից կազմած համառոտ նախադասություններ, ուսուցչի կողմից գրատախտակին գրած բառեր ու կարճ գրություններ, դասագրքի մատչելի հոդվածներ ու ոտանավորներ, ինչպես և իր ձեռագիր տեքստը:

Հետևել, որ իր կարդացածն ու արտասանածը լինեն կանոնավոր, կետադրության և առոգանության նշանների համաձայն:

Ինտոնացիայի միջոցով սովորել սկզբում վերջակետի, իսկ հետագայում նաև ստորակետի և առոգանության նշանների նշանակությունը:

Վարժեցնել ինքնուրույն կերպով պատմելու փոքրիկ պարզ հոդվածների բովանդակությունը՝ սկզբում հարցերի միջոցով և ապա առանց հարցերի:

Ուսուցչի ղեկավարությամբ դերերով վերարտադրել դասագրքի և մանկական ընթերցանության գրքի համապատասխան հոդվածներն ու ոտանավորները (մեկը հեղինակի բառերն է ասում, մյուսը՝ գործող անձերի):

4. **Քերականական յեվ ուղղագրական նախնական գիտելիքներ.** — Աշակերտների կանոնավոր ու լրիվ պատասխանը ծառայեցնել որպես պարզ նախադասության օրինակ. սովորեցնել համառոտ նախադասություն կառուցել:

Գիտենալ վերջակետի գործածությունը որպես նախադասության վերջի նշանի: Ուսուցչի կողմից ասած շատ պարզ նախադասություններ գրել կարողանալ՝ նախադասությունն սկսելով մեծատառով և նախադասության վերջում դնելով վերջակետ:

Կարողանալ նախադասությունը բառերի բաժանել, բառերը՝ վանկերի և վանկերը՝ հնչյունների: Կարողանալ նախադասության մեջ գտնել մեկը մյուսի հետ կապ ունեցող բառեր:

Գիտենալ մեծատառի գործածության հետևյալ պարզագույն դեպքերը. վերնագիրն սկսվում է մեծատառով, նոր գրությունն սկսվում է մեծատառով, վերջակետից հետո բառն սկսվում է մեծատառով, մարդկանց անունն ու ազգանունն սկսվում են մեծատառով:

Գիտենալ, որ գրության վերջում պետք է վերջակետ դնել:

Գիտենալ, որ գրելիս լուսանցքը չի կարելի անցնել և որ տողադարձ անելիս պետք է դնել տողադարձի նշան: Գիտենալ, որ միավանկ բառերը չի կարելի տողադարձ անել:

II. ԽՈՒՄԲ

1. **Բանավոր խոսքի զարգացումը.** — Երեխաներին սովորեցնել պարզ, բարձր, ազատ և առանց շտապելու պատմել իրենց դիտողությունների, ամառվա ընթացքում տեսածների, ապրումների և կատարած աշխատանքների մասին:

Հետևել գրական լեզվի մաքրության և աշխատել աստիճանաբար վերացնել բարբառային ձևերը:

Շարունակել երեխաների վաճի պակասավոր կողմերն ուղղելու աշխատանքները: Սովորեցնել երեխաներին պարզ կերպով պատմել կարդացած հոդվածի համառոտ բովանդակությունը՝ հարցերի օգնությամբ կամ առանց հարցերի:

Անգիր անել տալ կարճ ոտանավորներ:

Սովորեցնել փոքրիկ հոդվածների բովանդակությունը վերարտադրել ինսցենիրովկայի միջոցով:

Հարցերի միջոցով պարզ և արտահայտիչ նկարի կամ ընդհանուր բովանդակություն ունեցող նկարների մասին բանավոր շարադրություններ կազմել:

Շարունակել աշակերտի բառարանի հարստացման աշխատանքը. պայքարել դասակարգայնորեն խորթ բառերի գործածության դեմ:

2. **Ձեռագրի ուսուցում յեվ գրավոր խոսքի զարգացում.** — Նախորդ տարվա համեմատությամբ ավելի դժվար բառեր և ընդարձակ նախադասություններ մաքուր, պարզ և կանոնավոր գրելու ունակություն:

Աշակերտների տպավորությունները, ապրումները, դիտողությունները և որոշումները մշակել և դարձնել գիտական արտադրության, դիտողա-բացատրական թելադրության և ուղղագրական տեսակետից մշակված շատ կարճ շարադրության նյութ:

Կանխապես պատրաստելով գրվելիք բառերի ուղղագրությունը գրատախտակի վրա, սովորեցնել կատարած աշխատանքների մասին օրագիր կազմելը, գրել 5—6 հարցից բաղկացած անկետ, պարզ հասցե, կարճ նամակ:

Պատի թերթի համար փոքրիկ հոդվածների և տեղեկությունների մշակում դասարանում:

Ուսուցչի խիստ հսկողությամբ ուղղագրական և շարահյուսական տեսակետից նախորոք մշակելուց հետո գրավոր շարադրել նկարների բովանդակությունը:

Հարցերին գրավոր պատասխաններ տալով հոդվածի շուրջը կազմել կապակցված շարադրություն:

3. **Ընթերցանություն.** — Փոքրիկ հոդվածի, ոտանավորի, լոզունգի ազատ կապակցված, արտահայտիչ և կանոնավոր արտասանությամբ ընթերցում՝ պահպանելով առոգանության և կետադրության կանոնները:

Իր և ընկերների ձեռագիր տեքստը կարդալու վարժություն:

Կարդացածը քննել հարցերի օգնությամբ: Հոդվածները մասերի բաժանել և վերնագրել:

Կարդացածից անհասկանալի բառերը կամ նախադասություններն առանձնացնելու ունակություն:

Կարդալ բարձրաձայն, յերբեմն նաև լուռ:

Ծանոթանալ գրքի անվանը, հեղինակին: Ցանկի միջոցով գտնել պահանջված հոդվածը:

Ուսուցչի կողմից տրված առաջադրանքով և ցուցմունքներով պահպանել անալին ընթերցանության ճիշտ ընթացքը և պարբերաբար ստուգել արդյունքները: Զանազան մատչելի մանկական գեղարվեստական հոդվածների, «Հոկտեմբերիկ»-ից առանձին պարզ պատմվածքների և կարճ ոտանավորների ընթերցում:

4. **Քերականական յեվ ուղղագրական նախնական գիտելիքներ.** — Կրկնել և խորացնել I խմբում անցածը:

Գիտենալ վերջակետի, շեշտի, հարցական և բացականչական նշանների գործածությունը և դրա հետ կապված կանոնները: Գիտենալ միջակետի ստորակետի, բութի, չակերտի և գծի անունները:

Շարունակել պարզ նախադասություն կառուցելու վարժությունները, հարցերի օգնությամբ (առանց տերմինների) նախադասության գլխավոր անդամները որոշելը։

Ուսուցչի օգնությամբ, իսկ տարեվերջին ինքնուրույն կերպով լրացնել նախադասությունների մեջ բաց թողած կամ հարցերով փոխարինված բառերը. օրինակ՝ աշակերտները սովորում են.———— աշակերտները վերադարձան (որտեղից) և այլն։

Նախադասությունը բառերի և բառերը վանկերի բաժանելու վարժությունները շարունակել։ Գրելիս բառերը լսողությամբ տողադարձ անել։ Գիտենալ տողադարձի պարզագույն դեպքերը։

Գրության և արտասանության անհամապատասխանությունը. հնչյուն և տառ. ձայնավոր և բաղաձայն հնչյուններ. մեծատառ և փոքրատառ. բառի մեջ «և» սղագրության նշանը բաղաձայնից հետո յերկահնչյուն (եվ), իսկ ձայնավորից հետո կամ առանձին գործածվելիս յեռահնչյուն (յեվ) վանկի նշան, «և» սղագրության նշանը մեծատառ ձև չունի, գրվում է լրիվ տառերով (Յեվ) Գիտենալ յերկձայնները։

Շարունակել I խմբում սովորած մեծատառի գործածության դեպքերը. գիտենալ, որ քաղաքների, գյուղերի՝ գետերի, լեռների, փողոցների և գրքերի անունները նույնպես գրվում են մեծատառով։

Յեզակի և հոգնակի. գիտենալ, որ ն-ով վերջացող բազմավանկ բառերը հոգնակիում գրվում են յերկու ն-ով։

Ուղղագրական վարժություններ՝ ակ, իկ, ուկ, ուհի և այլ վերջավորություն ունեցող բառերով։

Ը ձայնավորը բառասկզբում և բառավերջում։

III. ԽՈՒՄԲ

1. Բանավոր խոսքի զարգացում. — Վոտանավորների և գեղարվեստական հատվածների արտասանություն հանդեսներում, հասակավորների շրջանում։

Կարողանալ պատմել կարդացած գրքույկների համառոտ բովանդակությունը և իր տպավորությունները։

Լոզունգներ կազմելը։

Տրված մի քանի բառեր հիմք ծառայեցնելով, բերանացի պատմություն հորինել։

Ուսուցչի սկսած պատմությունը յերևակայությամբ շարունակել և վերջացնել։

Կարողանալ ազատ պատմել լսածի և տեսածի մասին։

Աշակերտի պոլիտեխնիկ բառարանի հարստացում՝ գյուղում կոլտնտեսական մեքենայացված արտադրության, իսկ քաղաքում՝ գործարանի, ռադիոյի և հեռախոսի տեխնիկայի կապակցությամբ։

2. Ձեռագրի ուսուցում յեվ գրավոր խոսքի զարգացում. — Շարունակել մաքուր, գեղեցիկ և կանոնավոր գրելու վարժությունները։

Բանավոր զեկույցի գրավոր ծրագիր կազմելու ունակություն։ Գրի առնել դասարանում նախորոք մշակված հոդվածների ծրագիրը։

Ուսուցչի օգնությամբ մի քանի պարզ նախադասություններով օրագիր

կազմել և գրի առնել յուրաքանչյուր օրվա կատարած աշխատանքները և բնության դիտողությունները։

Կարողանալ գրավոր պատասխաններ տալ տրված պարզ հարցերին։ Շարադրել առաջուց կազմված գրավոր ծրագրի համաձայն։

Գիտակցական արտագրության, դիտողաբացատրական թելադրության և շարադրության նյութ դարձնել գործնական գրություններ, փորձերի և արտադրական աշխատանքների նկարագրություններ.

Ուսուցչի օգնությամբ ընդհանուր բովանդակություն ունեցող նկարների մասին շարադրություն գրել։

Կարողանալ անկետ լրացնել, նամակ և ստացական գրել, պատի լրագրին լուրեր և փոքրիկ հոդվածներ տալ։

3. Ընթերցանություն. — Դասագրքի հոդվածների ընթերցում ճիշտ առոգանությամբ և տրամաբանական վորոշակի շեշտադրությամբ։

Ուսուցչի ցուցմունքով դյուրըմբռնելի փոքրիկ բրոշյուրների և «Հոկտեմբերիկ» մանկական հանդեսի և մանկական գրքերի տնային և ինքնուրույն ընթերցանություն։

Ծանոթություն «Պիոներ կանչ»-ին։

Լուռ կարդալու վարժության խորացում։

Դերերով կարդալ։

Կազմել հոդվածի ծրագիրը հարցերով։

Բնագրում գտնել տրված հարցերին համապատասխանող հատվածները։

Կարողանալ նշել և հարցնել անհասկանալի և անծանոթ բառերը և արտահայտությունները։

4. Քերականություն յեվ ուղղագրություն. — Գաղափար նախադասության մասին, վորպես մտածության արտահայտության միավորի։ Նախադասության գլխավոր անդամները՝ յենթական և ստորոգյալը. նրանց միասնությունը և համաձայնությունը դեմքով և թվով։ Նախադասության մնացած անդամները վորպես այդ յերկուսի լրացումներ։ Պարզ և ընդարձակ նախադասություն։

Յենթակայի արտահայտումն առարկայի անունով, գաղափար գոյական անվան մասին. անվան թիվը հատուկ և հասարակ անուն, մեծատառի գործածության բոլոր դեպքերը. վորոշիչ հոդ (ը և ն) և գործածությունը։

Գաղափար ուղղական հոլովի մասին յենթակայի կապակցությամբ։ Հարցերով սովորեցնել մնացած հոլովները (սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական)։

Ստորոգյալի արտահայտումը գործողություն և կացություն (դրություն) ցույց տվող բառերով. գաղափար բայի մասին. բայի խոնարհումը. յենթակայի գործողությունը կամ կացությունը ժամանակի կապակցությամբ՝ ներկա, անցյալ, ապառնի։

Գաղափար հրամայական յեղանակի մասին։

Գոյականներին փոխարինող բառեր՝ անձնական դերանուններ։

Պարզ և բարդ բառեր. ա հոդակապ. յերբ է գրվում և յերբ չի գրվում։

Նույնանիշ և հականիշ բառեր։

Գաղափար տրամաբանական շեշտի մասին։

Շատ գործածական ինտերնացիոնալ և տեխնիկական բառերի ուղղագրությունը:

Այբուբեն. ինչու է անհրաժեշտ գիտենալ այբուբենը:

Ը ձայնավորի, և յ ձայնակապի գործածության վերաբերյալ ուղղագրական վարժություններ:

Ը ձայնավորը բառամիջում և սկ, սպ, ստ, զբ, զգ, շտ. կապակցություններից առաջ:

Օժանդակ բայի առանձին գրելու վարժություններ:

IV. ԽՈՒՄԲ

1. **Բանավոր խոսքի զարգացում.** — Հոդվածի բովանդակությունը պատմելու վարժություններ: Մասնակցություն դպրոցական բեմադրություններին, ինսցենիրովկաներին և հանդեսներին թե դպրոցում և թե դպրոցից դուրս: Աշակերտական, պիոներական, ծնողական և այլ ժողովներում նախապես պատրաստված համառոտակի զեկուցումով ելույթ:

Կարողանալ պատմել կարդացած գրքերի համառոտ բովանդակությունը և իր տպավորությունները:

2. **Ձեռագրի ուսուցում յեվ գրավոր խոսքի զարգացում.** — Ավելի արագ և ազատ, ավելի մաքուր ու պարզ գրելու վարժություն թե մի տողանի և թե ճերմակ անտող թղթի վրա:

Պատմվածքի, զրույցի, էքսկուրսիայի, աշխատանքների և առաջադրված խնդիրների մասին (սկզբում ուսուցչի օգնությամբ և ապա ինքնուրույն կերպով), կազմել շարադրության պլանը և բովանդակությունը:

Կապակցված կերպով գրել իր կենսագրությունը և իր առաջիկա անելիքները:

Ընտրած թեմայով ինքնուրույն պարզ նկարագրություններ գրել:

II և III խմբերում սովորած գրության գործնական ձևերի ավելի խորացրած վարժություններ. դիմում, հեռագիր, հայտարարություն, հրավեր, լիազորագիր, պարզ արձանագրություն. լրացնել ավելի բարդ անկետ և դրամի փոխադրագիր:

Վարժեցնել թերթին թղթակցելու տեխնիկային:

3. **Ընթերցանություն.** — Դասագրքի հոդվածների, բրոշյուրների, գրքի և «Պիոներ Կանչ»-ի արտահայտիչ ընթերցման վարժություններ. դրանցից օգտվելու ունակություններ՝ ա) ուսուցչի օգնությամբ գրքերում ու լրագրերում փնտրել հետաքրքրող հարցերի պատասխանները, բ) կարդացածի մասին տպավորություններ հաղորդելը, գ) գրքում դուրս բերած դեպքերի ու անցքերի գնահատական տալը:

Գրքերի և հոդվածների տնային և դասարանական ինքնուրույն և լուռ ընթերցում: Ըստ պահանջի բնագրից ընտրել կարևոր հատվածներն ու մտքերը և արտագրել:

Գրքով և լրագրով աշխատանքի խորացում. ծանոթանալ պարբերականների տեսակներին և լրագրի բաժիններին:

4. **Քերականություն յեվ ուղղագրություն.** — Նախադասության պարագա արտահայտող անդամները. տեղի և ժամանակի պարագա. սեռական հատ-

կացուցիչ. վորոշիչը և նրան արտահայտող ածականներն ու թվականները. ածականները՝ վորակի, իսկ թվականները՝ քանակի և կարգի գաղափար արտահայտող խոսքի մասեր:

Գիտենալ, որ բարդ բառերի առաջին բաղադրիչ մասը ի վերջանալու դեպքում՝ ի-ն ա հոդակապի հետ դառնում է ե: Գաղափար բառի արմատի մասին: Հնչյունափոխություն: Ու և ի ձայնավորների փոխվելը ը-ի (տուն—տնակ, կիր—կրաջուր), ե ձայնավորի փոխվելը ի ձայնավորի (հրավեր—հրավիրել): Ածանցավոր բառեր. նախածանցներ՝ ան, ապ, տ, դժ, չ, գեր, արտ, և այլն. վերջածանցներ ատ, ոց, արան, ատան, եղեն և այլն. ածանցները փոխում են բառի իմաստը նրան ուրիշ վորակ տալով (ածուխ առարկա չե ցույց տալիս, իսկ ածխային՝ հատկություն): Գոյականացնող և ածականացնող ածանցներ և դրանց ուղղագրությունը:

Բայերի խոնարհումն անցյալ անկատար, վաղակատար և անցյալ կատարյալ ժամանակներով:

Նախադրություն և հետադրություն. շաղկապ:

Հոմանիշ և նույնանուն բառեր:

Նորագույն հապավումներ (գյուղխորհուրդ, շրջկոմ, շրջգործկոմ, ՀՍԽՀ, ՄՈՊՐ, Համ ԿԿ և այլն):

Նախադասություններ բազմակի անդամներով (միքանի ենթականերով, միքանի ստորոգյալներով), համադաս անդամներով, կոչական բառերով, ձայնարկություններով, ուրիշի ասածով: Ուղղակի խոսքը անուղղակի խոսքի վերածելը:

Հոդերի բոլոր տեսակները:

I—IV խմբերում անցած քերականական գիտելիքների ամփոփում, սիստեմավորում. քերականական վերլուծություն՝ ընթերցանության վարժության զուգընթաց:

Ուղղագրական վարժություններ. երկձայն ունեցող բառերի տողադարձը, ած և աց վերջավորությունները, շատ գործածական ածանցները՝ ույթ, ային, իզմ, ացիա, ռ և ր, ղ և խ, ք և կ, յ կիսաձայն և այլն:

Ուղղագրական տետրակ պահել և այնտեղ նշանակել այն բառերը, վորոնց ուղղագրությունը դժվար է: Գրավոր աշխատանքների ժամանակ բառագրքույկից օգտվելու վարժություն: Գիտենալ տառերի այբբենական կարգը:

Շարունակել վարժություններ՝ կետադրության գործածության վերաբերյալ. գիտենալ ուրիշի ասածից առաջ ինչ նշան է դրվում, ուրիշի ասածն ինչ նշանների մեջ ենք առնում, ուրիշի բառերն ու պատմողի բառերն ինչ նշաններով են բաժանվում (ստորակետ և գիծ), ինչ նշան է դրվում բառի կրճատման և թվարկության ժամանակ, կոչականներ և ձայնարկություններ գրելիս այդ բառերն ինչ կետով ենք բաժանում, նախադասության կրկնվող մասերն ինչ կետով ենք իրարից բաժանում: Գիտենալ բոլոր կետերի անուններն ու նրանց նշանակությունը:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՅԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

3-րդ յեվ 4-րդ խմբերի համար

Աճող սերնդի դաստիարակության գործում հսկայական նշանակություն ունի գեղարվեստական գրականությունը:

Բանաստեղծությունների և պատմվածքների ընթերցանությունը, գեղարվեստական արձակի վերապատմումը, անգիր անելը — այդ բոլորը պետք է ընդարձակի յերեխաների մտահորիզոնը, տա մի շարք կոնկրետ պատկերներ՝ ինչպես անցյալից, այնպես և ներկայից:

3—րդ և 4—րդ խմբերի ծրագրի մշակման արդյունքն այն պետք է լինի, վոր յերեխաները յուրացնեն գրականագիտության հետևյալ տարրերը:

1. Հասկանալ գեղարվեստական յերկի տեքստը, նրա իդեական և գեղարվեստական արժեքը:

2. Կարողանալ տարբերել գեղարվեստական յերկերի վորոշ ձևեր (պատմվածք, բանաստեղծություն, առակ, հեքյաթ):

3. Գեղարվեստական լեզվի առանձնահատկությունների տարրական յուրացումը (մակդիրներ, համեմատություններ, փոխաբերություններ, հանգ.):

4. Տարրական պատկերացում գրողի դասակարգային պատկանելության մասին:

5. Տարրական գաղափար գրականության դերի ու նշանակության մասին՝ հասարակական կյանքում և առանձնապես սոցիալիստական շինարարության գործում:

Ուսման 3-րդ և 4-րդ տարիներում մշակման համար գրական նյութն ընտրելիս պետք է առաջադրվեն հետևյալ սկզբունքները,

1. Յերկի իդեոլոգիական գեղարվեստական արժեքը:
2. Տեքստի լեզվական արժեքը:
3. Մանկական հետաքրքրության և փորձին մոտ լինելը:

ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

3-րդ խումբ

1 Հովհ. Թումանյան.— *Գելը, Տերն ու ծառան, Համբերգ, Հսկան, Սուտլիկ վորսկանը,* 2. Ար. Խնկոյան.— *Ագռավն ու աղվեսը (թարգմ.), Կապիկն ու ակնոցները (թ.), Ճպուռն ու մրջյունը (թ.), Ճանճը (թ.), Մկների ժողովը, Լենտեքստիլ.* 3. Վ. Միրաքյան.— *Գառը մեր տալիս.* 4. Հ. Հակոբյան.— *Բանվեցի յերգը,* 5. Ստ. Զորյան.— *Մի գիշեր անտառում,* 6. Ղ. Աղայան.— *Գարուն,* 7. Մ. Դարբինյան.— *Փոքրիկ Լուիզայի մահը,* 8. Սոֆհուր.— *Փոքրիկ հովիվը,* 9. Թարգմ. ռուսերենից.— *Ինչպես եր սովորում Լենինը, ինչպես եր հանգստանում Լենինը,* 10.— *Թարգմ.* Դ. Դեմիրճյանի.—*Հանդարտ ընկերներ.* 11.— *Թարգմ.* Սիմակ.—*Իմ հայրը չորեքկըրեխեր չե.* 12 Շվարց.—*Հանդիպում* 13. Մ Գորկի.— *Պարմա քաղաքի յերեխաները.* 14. *Վ. Նորենց.— Գարուն:*

4-րդ խումբ

1. Րաֆֆի.— *Մի որավար հող,* 2. Ղ. Աղայան.— *Ամառը,* 3. Վ. Փափազյան.— *Արտը.* 4. Հ. Ճուղուրյան.— *Շաշ Պետին և գիժ Ոհանը,* 5. Հովհ. Թումանյան.— *Սասունցի Դավթի մանկությունը, Գութանի յերգը, Գիքորը (կրճատված), Կոխը, Յեղջերուն,* 6. Վ. Միրաքյան.— *Քոչը, Պատանի ռազմիկներ,* 7. Դ. Դեմիրճյան.— *Նիգյար (կրճատված,)* 8. Ե. Չարենց.— *Լենին,* 9. Ակ. Բակունց.—*Ծիրանի տափը,* 10. Ն. Զարյան.— *Ռուշանի քարափը (հատվ.),* 11. Մ. Արմեն.— *Անմահի կինը (հատվ.),* Հ. Հակոբյան.— *Աշխատանքի յերգը,* 13. Տուրգենեվ.— *Մումու (կրճատված), Գյուղացիների դատը,* 14. Գարշին.— *Թըշնամիները,* 15. Մ. Գորկի.— *Սիմպլոնի տունելը,* 16. Ա. Ցեսենին.— *Ընկերներ,* 17. Կրուպսկայա.— *Նամակ յերեխաներին,* 28. Զոլիչ.— *Ուղիղ ժամի չորսին*

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

3-րդ խումբ

1. Ագնիվցև.— *Հեքյաթ կոմինտերնի մասին,* 1. Ալազան.— *Խորհուրդների համար,* 3. Աղաբաբ.— *Զալոյի էշը,* 4. Անանյան Վ.— *Վոչ մի գայլ մեր հանդերում,* 5. Բեմ Գ.— *Ջորջի Տելնի,* 6. Գարշին.— *Արջերը Ազդանշան,* 7. Դանգիգեր.— *Թե Վանյան ինչու դարձավ ոդաչու,* 8. Դմտրիեվ.— *Մանչուկն ու Կուտիկը,* 9. Զամոյսկի.— *Նամակ Լենինին,* 10. Զորին.— *Ինչպես Պետիկը Լենինի մոտ գնաց,* 11. Թորովենց.— *Լաո-Հո,* 12 Թումանյան Հովհ.— *Արջավորս, Քաջ Նազար, Գելը,* 13. Մայակովսկի.— *Ինչ դառնալ,* 14. Մանուկյան Ս.— *Գելի խաղը,* 15. Մինդիլ.— *Կրասինը սառույցների մեջ,* 16. Միտչել.— *Ինչով կարելի չե համբորդել,* 17. Նորենց Վ.— *Կարմիր հերոսը,* 18. Նեվերով.— *Ինչպես էլին ապրում տիկնիկները,* 19. Շվարց.— *Յերեք հանդիպում,* 20. Պուշկին.— *Վոսկե ձկնիկը,* 21. Պերովսկայա.— *Մեր վագրիկը,* 22. Ռոու.— *Ջինաձետեր.* 23. Սերիկ.— *Միխել, անվախ տղան,* 24. Սիբիրյակով— *Մամին. Վորդեգիրը,* 25. Սլիվիցկի.— *Խորամանկ աղվեսը,* 26. Թարգմ. Վահունի.— *Անդրե Մարտի.* 27. Որլովեց.— *Համբորդություն աերոպլանով:*

4-րդ խումբ

1. Անանյան Վ.— *Կրակե օղակի մեջ,* 2. Աուլենդեր.— *Փոքրիկ Խոն,* 3. Գաբրիելյան Ռ.— *Ովկյանի թագավորը,* 4. Գարշին.— *Չորս օր պատերազմի դաշտում,* 5. Դոդե.— *Գեղեցիկ Նիվերնեզա.* 6. Դորոխով.— *Բալշևիկի տղան.* 7. Գումիլևսկի.— *Մամոնտների գերեզմանը,* 8. Դուրգարյան Մ. *(Կազմող).— Պատանի հեղափոխականներ,* 9. Թումանյան Կ.— *Գիքորը,* 10. Լեոնի.— *Յերաժիշտ Դանիկը,* 11. Խազին.— *Նավթ.* 12. Կիպլինգ.— *Ռիկկի-Տիկկի-Տավի,* 13. Կորոլենկո.— *Գետնափորի յերեխաները,* 14. Կուսյուրե.— *Ժան անհայտ,* 15. Հյուգո Վ.— *Գավրոշ,* 6. Մուլտատուլի.— *Սայիդ և Ադինդա,* 17. Նազարով.— *Յերեխաներն ինչպես ավտոմոբիլ վարել սովորեցին,* 18. Զարենց.— *Մահկալ Սաքոյի պատմությունը,* 19. Չեխով.— *Կաշտանկա,* 20. Պիսկունով.— *Գիգանտ,* 21. Պոկրովսկի.— *Ունգարկա,* 22. Սենկևիչ.— *Յերաժիշտ Յանկոն,* 23. Ստանյուկովիչ.— *Պստիկ նավաստին,* 24. Վլադիմիրսկի.— *Զմրուխտի հանքը,*

25. Տուրգենև.—Մումու, 26. Ողովեց.—Քիմիկոս Կուզման, Պետիկի գիրը, 27. Ցոկս.—Մինխատը մեկ ժամով, 28. Ուիտս.—Փոքրիկ հերոսուհին։

Ծրագիրը մշակված է ԼԺԿ-ի ծրագրա-մեթոդական կայանի Լեզվի և Գրականության սեկցիայի կողմից 1933 թվի հրատարակած հայոց լեզվի և գրականության ծրագրի նախագծի հիման վրա։ Ծրագրի մշակմանը մասնակցել են՝ Ա. Ղարիբյան, Գ. Սևակ, Սիմակ, Խ. Կանայան՝ Մ. Մկրյան, Մ. Գասպարյան, Դ Ներսիսյան յեվ Վ. Նազիրյան։

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Ա. տարիճանի մաթեմատիկայի ներկա ծրագրի հիմքը հանդիսանում է այդ առարկայի հայերեն ծրագրի նախագիծը—լույս տեսած 1932 թվի վերջին և Ռուսաստանի Լուսժողկոմատի կոլեգիայի հաստատած ամենանոր ծրագիրը (1932թ. մարտ)։ Հիշված ծրագրերի միջև չկան էական տարբերություններ. դրանք բոլորն էլ ուսման առաջին չորս տարիների համար ընդգրկում են մաթեմատիկայի դասընթացի նույն սահմանները և կառուցված են նույն սկզբունքներով, վորոնք նշված են Համկոմկուսի Կենտկոմի օգոստոսի 25-ի պատմական վորոշումներում. «Ծրագրերն այնպես մշակել, վորպեսզի ապահովվի գիտությունների հիմունքների հիմնավոր և սիստեմատիկ յուրացումը»։

Ուսման առաջին չորս տարիներում աշակերտները պետք է ձեռք բերեն.

1. հաստատուն գիտելիքներ և ունակություններ թվաբանության չորս գործողությունների (ամբողջ թվերով).

2. մետրական սիստեմի չափերի վերաբերյալ գիտելիքներ (գծային, քառակուսի և խորանարդ) և գործնական ունակություններ այդ չափերի գործածության.

3. սկզբնական գիտելիքներ տասնորդական և հասարակ կոտորակների մասին.

4. տարրական տեղեկություններ գննական յերկրաչափությունից.

5. կենսական բազմազան խնդիրներ լուծելու և բանավոր ու գրավոր հաշվի հիմնավոր ունակություններ։

Ուսման առաջին 5 տարիներում կենտրոնական տեղը գրավում է թվաբանության դասընթացը, վոր ըստ խմբերի բաշխվում է այսպես. ա. խմբում 1-10—ի և 1—20—ի, մասամբ նաև առաջին հարյուրյակի թվաշրջանը, բ. խմբում՝ հարյուրի սահմանում 4 գործողությունները և հազարի սահմանում՝ գումարման և հանման գործողությունները, գ. խմբում, հազարի սահմանում և այնուհետև բազմանիշ թվերի չորս գործողությունները, դ. խմբում՝ ամեն մեծության ամբողջ թվերի չորս գործողությունները, ապա՝ հասարակ ու տասնորդական կոտորակների գումարումն ու հանումը, վերջապես, ե. խմբում և՛ տասնորդական, և՛ հասարակ կոտորակների լրիվ, սիստեմատիկ կուրսը, տոկոսներ, համեմատություն և հարաբերություն, տառային արտահայտություններ։

Գննական յերկրաչափության գլխավոր խնդիրն է, յերեխաների մեջ հետզհետե զարգացնել յերկրաչափական ձևերի և տարածական պատկերացումները։ Այդ աշխատանքն սկսվում է ուսման հենց ա. տարվանից և շարունակվում ու խտանում է վերին խմբերում։

Մաթեմատիկայի ներկա ծրագրում նյութերի բաշխումը կատարված ե այնպես, վոր համապատասխանի յերեխաների տարիքային հնարավորություններին, ուրեմն և ծանրաբեռնում չառաջանա վորևե խմբում, մյուս կողմից՝ արծարծվեն անհրաժեշտ բոլոր նյութերը կուռ հաջորդականությամբ, սիստեմատիկորեն։

Յուրաքանչյուր խմբի ծրագիրը, ինչպես և նախորդումն եր („Նախագծում“), բաժանված ե քառորդների։ Դա կօգնի ուսուցչին՝ պարզ պատկերացնելու գիտելիքների և ունակությունների այն ծավալը, վոր պետք ե սպառել ուսման տարվա տվյալ քառորդում։ Այդ քառորդներն ել մոտավորապես վորոշելու յեն ուսուցչի աշխատանքի տեմպը։

Բայց նյութերի այդ բաշխումը մոտավոր ե. նայած տեղական պայմաններին, աշակերտների պատրաստության չափին և այլն, կարելի յե մի քառորդից մյուսը կատարել նյութերի վորոշ տեղափոխումները։ Սակայն բոլոր դեպքերում ել պետք ե տարեկան ծրագիրն ամբողջությամբ և հիմնավորապես անցնել։

Թվաբանական և յերկրաչափական նյութերը յուրաքանչյուր քառորդում դրված են առանձին—առանձին („Հաշիվ“ և „Չափում ու գծագրում“)։ Այս հանգամանքը բոլորովին չի նշանակում, վոր հարկավոր ե նախ սպառել թվաբանական, ապա՝ յերկրաչափական նյութերը—մեծ սխալ կլիներ մաթեմատիկայի այդ մասերն արհեստականորեն իրարից անջատելը՝ Անհրաժեշտ ե թվաբանական և յերկրաչափական նյութերն անցնել հյուսված, կապակցված։

Ուսման տարվա յուրաքանչյուր քառորդում տրվում ե միայն նոր նյութ. բայց բոլորովին սխալ կլինի յեզրակացնել, վոր պետք ե բացառապես տվյալ քառորդի համար նշված նյութերով զբաղեցնել յերեխաներին։ Շատ անհրաժեշտ ե հաճախ կրկնել անցածները. հաշվային և այլ ունակությունները պայմանավորված են. կրկնություններով։ Ամեն մի նոր նյութի հետ միշտ ել կապվում են նախկին անցածները, ուրեմն և առիթներ միշտ ել կարելի յե ստեղծել հնի և նորի զուգորդման համար։

Ամեն մի քառորդ տարում անցածը պետք ե ամփոփել կրկնություններով և հաշվառումներով, այդ աշխատանքին հատկացնելով մի քանի ժամ։ Նույնն անհրաժեշտ ե անել ամբողջ տարվա անցածի նկատմամբ. հետևապես՝ ծրագիրը պետք ե անցնել այն հաշվով, վոր ուսման տարեվերջին մոտավորապես մեկից մինչև մեկուկես ամիս տրամադրվի անցածի կրկնողություններին, լրացումներին, հաշվառումներին և ամփոփումներին։

Ուսման դ. տարում ամբողջ թվերին հաջորդում ե կոտորակների ուսուցումը, վորոնց գաղափարը տրվում ե դեռ առաջին տարվանից։ Ռուսական ծրագրում նախ դրված ե տասնորդական, ապա հասարակ կոտորակների գաղափարը (գումարման և հանման պարզ դեպքը, կոտորակն ամբողջով բազմապատկելը և ամբողջի վրա բաժանելը)։

Մեր ծրագրում նախ դրված են հասարակ, ապա տասնորդական կոտորակները։ Փորձը ցույց ե տվել, վոր թեպետ տասնորդական կոտորակների գործողություններն ավելի հեշտ են կատարում յերեխաները, սակայն դա մեծ մասամբ տեղի յե ունենում մեքենաբար, ուստի և աշակերտը չի

ստանում կոտորակի և նրա հետ կապված հաշվումների ճիշտ ըմբռնումը. դա հնարավոր ե դառնում հասարակ կոտորակներով, ուստի և մեր ծրագրում նախ դրված ե այդ կուրսը։

Ուսուցիչներն ամեն կերպ պետք ե ձգտեն, վորպեսզի թվաբանության և յերկրաչափության ուսուցումը լինի խիստ կոնկրետ։ Հակառակ ընթացքը բռնել, ինչպես շատ հաճախ լինում ե, նշանակում ե ծանր հարված հասցնել մաթեմատիկայի յուրացմանը։ Այդ պատճառով անհրաժեշտ ե՝ դիտողական իրերի կիրառմանը մեծ տեղ տալ դասավանդման ժամանակ, մանավանդ ուսման ա. և բ. տարիներում։ Սակայն կոնկրետը պետք ե լինի յելակետ՝ վերացականի համար։

Թվաբանության ուսուցումը հիմնված ե յերկու կարևոր մոմենտների՝ հաշվային ունակությունների և խնդիրների լուծման վրա։

Հաշվային ունակություններում կենտրոնական տեղը պատկանում ե **բանավոր հաշվին**։ Յերեխաները պետք ե կարողանան բանավոր և արագ հաշիվ անել վոչ միայն 100-ի թվաշրջանում, այլև ավելի մեծ թվերի սահմանում, գործադրելով այն յեղանակները, վորոնք նշված են գ. և դ. խմբերի ծրագրում։ Բանավոր հաշիվը պետք ե տեղի ունենա ամբողջ տարվա ընթացքում, այլապես չի յուրացվի դա։

Գրավոր հաշվի կարևորությունն ավելի զգալի յե բարձր խմբում, յերբ յերեխաները դժվարանում են բազմանիշ թվերով բանավոր հաշիվներ անել։ Թե բանավոր և թե գրավոր հաշվումներն անելիս պետք ե խստորեն պահպանել նյութերի հաջորդականությունը, յելնելով հեշտից դժվարը սկզբունքներից։ Բանավոր ու գրավոր աշխատանքների մեջ վորոշ տեղ են բռնում X—ով վարժությունները՝ սկսած բ. խմբից։ Այստեղ հարկավոր ե ուսուցիչների ուշադրությունը գրավել մի հանգամանքի վրա — քանի վոր «իքս» տերմինի գործածությունն աշակերտության մեջ առաջացնում ե շփոթություն, ուստի դրա փոխարեն պետք ե ասել «անհայտ թիվ» (որինակ՝ X——15=26-ի արտահայտությունը պետք ե կարդալ այսպես—մի թվի ավելացրած կամ գումարած 15, կդառնա 36, վորքան ե անհայտ թիվը։ 46 –X==23-ի պետք ե կարդալ—ինչ թիվ հանենք 46-ից, վոր մնա 23. վորքան ե անհայտ թիվը)։

Բացի հաշվային ունակություններից, յերեխաները պետք ե ձեռք բերեն նաև յերկրաչափական ունակություններ։ Դրա համար անհրաժեշտ ե այդ գիտելիքներին բացառապես զննական բնույթ տալ՝ կապելով զանազան չափումների հետ, թե դասարանում, աշխատանքի սենյակում, արհեստանոցում և թե դրսում՝ բակում, հողամասում և այլն։ Չափումների անհրաժեշտությունը միշտ հանդես կգա պոլիտեխնիկ աշխատանքների ընթացքում. պետք ե ոգտվել չափման բոլոր առիթներից և կատարել տալ յերեխաներին։ Չափումների համար նրանք պետք ե վարժվեն մետրական չափերի գործածության։

Այդ չափերի ուսուցումն սկսվում ե ա. խմբից և ավարտվում ե գ. խմբում։

Չափումներին հաճախ հաջորդում են գրաֆիկ աշխատանքներ—դիագրամներ, հատակագծեր և այլն։ Ա. և բ. խմբերում գծագրումները պետք ե լինեն ցանցապատ տետրերի վանդակներով, իսկ գ. և դ. խմբում՝ գծային մասշտաբի միջոցով։

Թվաբանական խնդիրներ լուծելու նշանակությունը շատ մեծ ե։ Դրանով վոչ միայն յերեխաների դատողությունն ե զարգանում և թե շրջապատող կյանքի — սոցիալիստական շինարարության հարցերը հասկանալի դառնում։ Խնդիրներ ընդգրկելիս պետք ե պահել խիստ հաջորդականություն՝ հեշտից, պարզից դեպի դժվարը։

Ա. խմբում խնդիրները պետք ե լինեն 1—2, բ. խմբում՝ 2—3, գ. խմբում՝ 3—4 և դ. խմբում՝ 4 և ավելի հարցանի։ Խնդիրների կառուցվածքն այնպես պետք ե լինի, վոր դրանց լուծումը զարգացնի յերեխաների դատողությունը, և վոչ մի դեպքում արհեստական բարդությամբ չծանրաբեռնի նրանց միտքը՝ չնպաստելով դրա սրմանը։

Խնդիրներն իրենց բովանդակությամբ պետք ե լինեն հետաքրքրական, գրավիչ։ Թվական տվյալները քաղել մեր հասարակական կյանքի բոլոր բնագավառներից, յելնելով յերեխաների տեղական յեվ տարիքային պայմաններից։

Վերջապես՝ վոչ մի մաթեմատիկական կանոն, որենք չպետք ե տալ պատրաստի, դոգմատիկ ձևով, այլ բխեցնել անցած դասընթացից և հիմնավորել դրանք կոնկրետ օրինակներով։

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

I ԽՈՒՄԲ

ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴ

Հաշիվ

Յերեխաների թվական պատկերացումների ճշգրտումը։
Ուղիղ և հակադարձ համրանք մինչև 10։
Բանավոր գումարում և հանում։
Ուղիղ և հակադարձ համրանք զույգերով։
Թվանշանների գրելն ու կարդալը մինչև 10։
Գումարման և հանման գրավոր վարժություններ։

Չափում յեվ գծագրում։

Յերախաների տարածական և ժամանակի պատկերացումների ճշգրտումը։

Մետր. մետրով չափելու վարժություններ։

Ծանոթացում քառակուսի, ուղղանկյուն և յեռանկյուն ձևերին։ Այդ ձևերը պատրաստել ձողիկներից, լուցկիներից, կտրել թղթից կամ ստվարաթղթից, գծել վանդակավոր թղթի վրա։ Շրջապատում ցույց տալ այդ ձևերի առարկաներ։

Ուղիղ և կոր գծեր։

Ժամանակի չափեր — վեցորյակ, յոթնորյակ։

ՅԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

Հաշիվ

Յերկրորդ տասնյակի սահմանում։

Ուղիղ և հակադարձ համրանք մեկ-մեկ զույգերով, հնգյակներով, քառյակներով և յեռյակներով մինչև 20։

Բանավոր գումարում և հանում։

Գրավոր թվարկություն։

Գումարման և հանման գրավոր վարժություններ։

Չափում յեվ գծագրում

Կիլոգրամ. դրանով ծանրություններ կշռելը։ Զանազան առարկաներ ձեռքն առնելով իմանալ կիլոգրամի մոտավոր կշիռը։

Լիտր. որոշել, թե լիտրը քանի թեյի բաժակ է և քանի սովորական շիշ։

Հնչուն դրամներ (1, 2, 3, 5, 10, 15, 20 կոպեկանոցներ)

ԵՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

Հ ա շ ի վ

Բանավոր բազմապատկում և բաժանում 20-ի սահմանում։
Բազմապատկման և բաժանման գրավոր վարժություններ։
Հասկացողություն $\frac{1}{2}$-ի և $\frac{1}{4}$-ի մասին։
Ծանոթացում հռոմեական թվանշանների I—XII (ցիֆերբլատ)։

Չափում յեվ գծագրում

Կես մետր, կես կիլո, կես լիտր։
Ժամացույց. որոշել ժամանակը $\frac{1}{2}$ ժամվա ճշտությամբ։
Շրջան։ Շրջապատում ցույց տալ շրջանաձև առարկաներ։

ՉՈՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

Հ ա շ ի վ

Համրանք և բանավոր ու գրավոր թվարկություն մինչև 100։

Գումարում, հանում, բազմապատկում և բաժանում տասնյակներով մինչև 100 — բանավոր ու գրավոր։

Չափում յեվ գծագրում

Սանտիմետր, դեցիմետր։
Ամիսը քանի՞ օր է, օրը քանի՞ ժամ է։
Աչքաչափի վարժեցում. 10 — 20 մետրի սահմանում։

Խորանարդ, չորսուսկ (քառակուսի պրիզմա), գունդ։ Շրջապատում ցույց տալ նման մարմիններ։

Այդպիսի մարմիններով կատարել կառուցումներ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Տարվա ընթացքում լուծել 1—2 հարցանի խնդիրներ, տեղ տալով «այսքանով ավելի» և «այսքանով պակաս» հասկացողություններին։

II ԽՈՒՄԲ

ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴ

Հ ա շ ի վ

Թվարկություն և ապա գումարում ու հանում 100-ի սահմանում — բանավոր ու գրավոր։

ա) Երբ տասնյակը չի անցնում (օր. 20 + 34, 54 — 20, 23 + 34, 57 — 34)

բ) Երբ տասնյակը լրանում է (օր. 24 + 36, 60 — 24)։

գ) Երբ տասնյակն անցնում է (օր. 27 + 38, 62 — 35)։

Գումարման տեղափոխելիության հատկությունը (գումարելիների տեղափոխությունից գումարը չի փոխվում։

Երկանուն անվանական թվերի գումարումն ու հանումն առանց վերածման և անդրադարձման գործողությունների (օր. 17 ռ. 42 կ. + 22 ռ. 36 կ. ռ., 17 մ 50 սմ. — 6 մ 23 սմ և այլն)։

x-ով վարժություններ. օրինակ, x + 13 = 17, 18 — x = 15-ի։

Թվերի տարբերական հարաբերությունը (մի թիվ մյուսից քանիսով է ավելի կամ քանիսով է պակաս)։

Չափում յեվ գծագրում

Չափել բակի, մարգի, պարտեզի կամ նման այլ մակերեսի յերկարությունն ու լայնությունը։

Թղթի վրա գծել որոշ յերկարության ուղիղ գծեր։

Հասկացողություն մասշտաբի մասին։

Քանոնի միջոցով գծել դասարանի հատակագիծը վանդակավոր թղթի վրա, վանդակն ընդունելով միավոր։

ՅԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

Հ ա շ ի վ

Աղյուսակային բազմապատկում և բաժանում 100-ի սահմանում. 1) Բազմապատկման և բաժանման կրկնություն 20-ի շրջանում, 2) ուղիղ և հակադարձ համրանք մինչև 100՝ տասի սահմանում վերցրած թվերի բազմապատիկներով, որպես նախապատրաստություն թվերի բազմապատկման և բաժանման՝ մինչև 100 (օր. 6, 12, 18... կամ 7, 14, 21, 28...), 3) բազմապատկման և բաժանման աղյուսակի առաջին մասի (բազմ. 2, 3, 4, 5-ով և բաժ. 2, 3, 4, 5-ի վրա) գիտակցական յուրացում — բանավոր ու գրավոր։

Սովորեցնել, որ արտադրիչների տեղափոխությամբ արտադրյալը չի փոխվում։

Փակագծերով պարզ վարժություններ։

Չափում յեվ գծագրում

Ցենտներ։
Ծանոթություն ուղղանկյուն ուղիղ պրիզմաներին։
Ուղղանկյուն դիագրամներ, մասշտաբ ընդունելով տետրի վանդակը։

ՅԵՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

Հ ա շ ի վ

Բազմապատկման և բաժանման աղյուսակի յերկրորդ մասի գիտակցական յուրացում — բանավոր ու գրավոր։

Արտաղյուսակային բազմապատկում և բաժանում։

Բաժանում մասերի և բաժանում ըստ պարունակության։

Թվերի քանորդական հարաբերությունը (մի թիվ մյուսից քանի անգամ է մեծ կամ փոքր)։

Կոտորակներ $^1/_2$, $^1/_4$, $^1/_8$, $^1/_{10}$։

Չափում յեվ գծագրում

Ժամանակի չափեր՝ րոպե։ Ժամացույցով որոշել ժամանակը $^1/_4$ ժ. ճշտությամբ։

Հեկտոլիտր։

Քառակուսին, շրջանը և ուղղանկյուն քառանկյունը բաժանել մասերի ծալելով։

ՉՈՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

Հ ա շ ի վ

Բանավոր և գրավոր թվարկություն 1000-ի սահմանում։

Համրանք հարյուրյակներով և տասնյակներով։

Գումարում և հանում հաշվիչի վրա։

Գումարում և հանում կլոր թվերով և ամբողջ թվերի մյուս բոլոր դեպքերով սահմանում։

Լրիվ հարյուրյակների բազմապատկումը միանիշ թվով և բաժանումը թվի վրա։

Չափում յեվ գծագրում

Կիլոմետր։

Գրամ։ Կշռել 100, 200 և 500 գրամի կշռաքարերով։ Ձեռքով մոտավորապես որոշել զանազան առարկաների կշիռը 1—2 կիլոգրամի սահմանում։

Վանդակավոր թղթի վրա կարդալ և գծագրել սյունաձև դիագրամներ, վանդակն ընդունելով իբրև մի քանի միավոր։

Նշանաձողերի միջոցով գետնի վրա անցկացնել ուղիղ գիծ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Տարվա ընթացքում լուծել խնդիրներ 2—3 հարցանի։

Տարեվերջին կատարել այդ տարում անցածի կրկնությունը յեվ ամփոփումը։

III ԽՈՒՄԲ

ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴ

Հ ա շ ի վ

Բանավոր և արագ հաշիվն ամրապնդել 100-ի սահմանում։

Բանավոր հաշիվ 1000-ի սահմանում, ընտրելով հեշտ դեպքերը. ա) կլորացնել գումարելիներից մեկը (օր. $99+67=100+67-1=166$), բ) փոխել գումարելիների դասավորությունը (օրինակ՝ $94+37+6=94+6+37=100+37$)։

Գումարման և հանման գործողությունների տերմինների յուրացում։

Անվանական թվերի վերածումը և անդրադարձումը։

Յերկանուն բարդ անվանական թվերի գումարումը և հանումը (ռուբլի—կոպեկ, մետր—սանտիմետր, կիլոգրամ—գրամ և այլն)։

Բազմապատկման և բաժանման գործողությունները կլոր թվերով— հարյուրյակների և տասնյակների բազմապատկումը միանիշով և բաժանումը միանիշի վրա։

Չափում յեվ գծագրում

Միլիմետր։

Տոնն։

Ժամանակի չափեր — վայրկյան, տարի, դար։

Անցած չափերի վերաբերյալ գիտելիքների ամփոփում և համակարգում։

Քառակուսի և ուղղանկյուն, նրանց կողմերը և անկյունները։

Ուղիղ, սուր և բութ անկյուններ։

Ցանցաթղթի վրա գծագրել ուղղանկյուն հողամասի պլանը՝ մասշտաբ ընտրելով վանդակը։

ՅԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

Հ ա շ ի վ

1000-ի սահմանում բազմապատկման և բաժանման բոլոր դեպքերը— յերկնիշ և յեռանիշ թվերի բազմապատկումը միանիշով և բաժանումը միանիշ թվի վրա, յերկնիշ թվերի բազմապատկումը յերկնիշով և յեռանիշերի բաժանումը յերկնիշ և յեռանիշ թվերի վրա։

1000-ի սահմանում թվերի բանավոր բազմապատկումը 2-ով և 10-ով։

Բազմանիշ թվերի գրավոր բազմապատկումը 10-ով և 100-ով։

Յերկնիշ և յեռանիշ թվերի բանավոր բազմապատկումը 10-ով, 100-ով և 1000-ով։

Մնացորդով բաժանում։

Յերկանուն բարդ անվանական թվերի բազմապատկումը և բաժանումը։

Չափում յեվ գծագրում

Մետրական քառակուսի չափեր — քառ. մետր, քառ. դեցիմետր, քառ. սանտիմետր, քառ. կիլոմետր։

Չափել դասարանի, սեղանի և ուրիշ ուղղանկյուն առարկաների մակերեսները քառակուսի չափը վերադրելով,

Հաշվել ուղղանկյան մակերեսը յերկարության և լայնության միջոցով։

Հողային չափեր — ար, հեկտար։

Մասշտաբի օգնությամբ գծագրել զանազան մեծության ուղղանկյուն մակերեսների հատակագծեր։

Հաշվել քառակուսի և ուղղանկյուն հողամասի իրական մեծությունը նրա հատակագծի մասշտաբով։

ՅԵՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

Հ ա շ ի վ

Կրկնություն և ամփոփում չորս գործողությունների (1000-ի սահմանում)։

Բանավոր և գրավոր թվարկություն բազմանիշ թվերի։

Թվերի կարգերն ու դասերը մինչև միլիոն։

Բազմանիշ թվերի գումարումն ու հանումը իրար տակ գրելով։

Գումարման ստուգումը հանման գործողությամբ և ընդհակառակը։

Բանավոր հաշիվ — արագ բազմապատկման մի քանի հեշտ դեպքերը (յերկնիշ թիվը 50-ով, 11-ով, 9-ով, 49-ով, 99-ով բազմապատկելը կլորացնելով այդ թվերը)։

Չափում յեվ գծագրում

Գծագրել ուղղանկյուն դիագրամներ մասշտաբի օգնությամբ։

Կարողանալ կարդալ ուղղանկյուն դիագրամներ տված մասշտաբով։

ՉՈՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

Հ ա շ ի վ

Ամբողջ թվի մասը գտնելը ($^1/_2$, $^1/_4$, $^1/_8$ և այլն)։

Բազմանիշ թվերի գրավոր բազմապատկումը կլոր տասնյակներով, միանիշ, յերկնիշ, ապա յեռանիշ թվերով և բաժանումն այդ թվերի վրա։

Միջում զերո ունեցող թվերի բազմապատկումը։

Մնացորդով բաժանում։

Բազմապատկման և բաժանման գործողությունների տերմինների յուրացում։

Բազմապատկման ստուգումը բաժանման գործողությամբ և ընդհակառակը։

Կոտորակներ $^1/_3$, $^1/_6$, $^1/_9$, $^1/_5$։

Չափում յեվ գծագրում

Ուղղաձիգ և հորիզոնական ուղղություններ։ Հարթաչափի և կապարալարի գործածումը։

Չափել ու հաշվել ուղղանկյուն հողամասի մակերեսը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Տարվա բոլոր քառորդներում լուծել տալ անհայտով (x) փակագծերով օրինակներ յեվ զուգընթացաբար՝ խնդիրներ 3—4 հարցանի։

Տարեվերջին կատարել այդ խմբում անցածի կրկնություն յեվ ամփոփում։

IV ԽՈՒՄԲ

ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴ

Հ ա շ ի վ

Բանավոր հաշիվ — գումարում՝ գումարելիները կլորացնելու և հանում՝ նվազելին կամ հանելին կլորացնելու յեղանակով. բազմապատկում 25-ով, 125-ով և բաժանում նույն թվերի վրա։

Բանավոր և գրավոր թվարկություն ամեն մեծության ամբողջ թվերի։

Թվերի կարգերն ու դասերը։

Մեծ թվերի կրճատ գրությունը (օր. 156000000 կամ 156 միլիոն)։

Գումարում և հանում ամեն մեծության ամբողջ թվերով։

Ի՞նչ փոփոխություն է կրում գումարը, տարբերությունը, յերբ մեծացնում կամ փոքրացնում ենք գումարման կամ հանման գործողության անդամները։

Բազմապատկման և բաժանման գործողություններն ամեն մեծության ամբողջ թվերով։

Չափում յեվ գծագրում

Խորանարդ չափեր — խորանարդի և ուղղանկյուն պրիզմայի մակերեսույթների ու ծավալների հաշվումը։

ՅԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

Հ ա շ ի վ

Բազմապատկման մասնակի դեպքերը — զերոն բազմապատկչի միջում և վերջում.

Բաժանման մասնակի դեպքերը — զերոն բաժանելի և բաժանարարի վերջում, քանորդում։

Ի՞նչ փոփոխություններ են կրում արտադրյալը և քանորդը, յերբ մեծացնում կամ փոքրացնում ենք բազմապատկման և բաժանման գործողության անդամները։

Կոտորակների ստացումը՝ մեծությունները հավասար մասերի բաժանելուց և չափելուց։

Կոտորակները մեծացնելը և փոքրացնելը մի քանի անգամ։ Կոտորակի ընդարձակումը։

Կանոնավոր և անկանոն կոտորակ։ Անկանոն կոտորակի ամբողջ թիվն անջատելը։ Խառը թիվն անկանոն կոտորակ դարձնելը։

Կոտորակների գումարումն ու հանումը. ա) յերբ հայտարարները նույնն են, բ) յերբ մի հայտարարը բազմապատիկ է մյուսին։

Չափում յեվ գծագրում

Յեռանկյուն. նրա տեսակները։

Յեռանկյունների մակերեսների հաշվումը։

ՑԵՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

Հաշիվ

Հասկացողություն տասնորդական կոտորակի մասին։
Տասնորդական կոտորակի կարդալն ու գրելը։
Տասնորդական կոտորակի ձևափոխությունները (որ. 0,3 կամ 0,30)։
Տասնորդական կոտորակների համեմատումը մեծության տեսակետից։
Բարդ անվանական թվերի ձևակերպումը տասնորդական կոտորակով, (որինակ, 3 մ 7 դմ կամ 3,7 մ և ընդհակառակը)։
Տասնորդական կոտորակների գումարումը և հանումը։
Տասնորդական կոտորակների բազմապատկումը 10-ով, 100-ով։
Տասն. կոտորակների բաժանումը 10-ի, 100-ի վրա։
Տասն. կոտորակների բազմապատկումն ամբողջ թվով և բաժանումն ամբողջ թվի վրա։

Չափում յեվ գծագրում

Շրջան, շրջանագիծ, շառավիղ, տրամագիծ, սեկտոր, աղեղ, լար, աստիճան։
Տոկոսային տրանսպորտիր։
Շրջանաձև դիագրամներ։

ՉՈՐՐՈՐԴ ՔԱՌՈՐԴ

Հաշիվ

Տոկոս. տոկոսն իբրև մի թվի հարյուրերորդական մաս (%)։
Տվյալ թվի մեկ կամ մի քանի տոկոս գտնելը (յերկու գործողությամբ)։
Տասնորդական կոտորակն արտահայտել համապատասխան քանակի տոկոսներով և ընդհակառակը (որ. 0,65 = 65 տոկ., 25 տոկ. = 0,25-ի)։

Չափում յեվ գծագրում

Ջննական յերկրաչափության անցած նյութերի կրկնություն և ամփոփում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Տարվա ընթացքում լուծել տալ 3—5 հարցանի խնդիրներ ամբողջ յեվ կոտորակ թվերով, տոկոսների, մակերեսների յեվ ծավալների հաշվումով։
Վարժեցնել չափելու վոչ ուղղագիծ ձևեր ունեցող մակերեսները։
Գծագրել տալ տվյալ վայրի հատակագիծը յեվ կատարել ամենապարզ հանույթներ։
Կրկնել յեվ համակարգել 4 տարում անցած ամբողջ յեվ կոտորակ թվերի դասընթացը։

Ծրագիրը մշակել ե Լ. Ժ. Կ. ծրագրա—մեթոդական կայանի մաթեմատիկայի սեկցիան։ Ծրագրի մշակմանը մասնակցել են ընկ. ընկ. Արշ. Տոնյան, Արշ. Շավարշյան, Լ. Զալիկյան, Վ. Թորգոմյան, Մ. Սդոնց։

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ

(ՆԵՐԱԾԱԿԱՆ)

Ռուսաց լեզվի դասավանդումը տասնամյա Պոլիտեխնիկ դպրոցում պետք ե օժանդակի դպրոցին առաջադրված ընդհանուր խնդիրների իրագործմանը՝ դաստիարակել մի սերունդ, վորն ընդունակ լինի վերջնականապես կոմունիզմ հաստատելու։

Մասնավորապես ռուսաց լեզվի դասավանդումը պետք ե օժանդակի տիրապետելու կուլտուրապես առաջավոր ազգության աշխատավորության լեզվին և Միության վողջ աշխատավորության հետ մասնակցելու սոցիալիզմի կառուցման գործին։

Այդ նպատակադրումով անհրաժեշտ ե աշակերտին սովորեցնել՝

1. ազատ կարդալ լրագրեր, գեղարվեստական յերկեր, գիտական և տեխնիկական պարզ գրքեր.

2. գրավոր արտահայտել իր մտքերը, կազմել բրոշյուրների և հոդվածների կոնսպեկտներ, տալ կարդացածի համառոտ բովանդակությունը.

3. կազմել գործնական գրություններ՝ ստացական, տեղեկանք, վկայական, դիմում, նամակ, հայտարարություն, օրագիր և այլն.

4. մասնակցել ժողովների հարցերի քննությանը, արտահայտվել իրեն հետաքրքրող հարցերի շուրջը, հայտարարություններ անել և այլն և այլն։

Այս խնդիրը լուծելիս անհրաժեշտ ե հիմք ընդունել Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1931 թվի սեպտեմբերի 5-ի և 1932 թվի օգոստոսի 25-ի վորոշումները, վորոշակի սիստեմ մտցնելով այդ լեզվի դասավանդության գործում, ապահովելով միջնակարգ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտի կողմից ռուսաց լեզվի տիրապետումը։

Այս նպատակներից Ա. աստ. դպրոցին բաժին ե ընկնում գրաճանաչությունը, ընթերցանության նախնական տեխնիկային տիրապետելը և պարզ գրավարժությունն ու խոսքը։

ՈՒՍՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ (3-ՐԴ ԽՈՒՄԲ).

(Բանավոր խոսքի զարգացում)

Լեքսիկական դասեր ($1 - 1\frac{1}{2}$ ամիս)։

Լեքսիկական դասերի նյութը վերցնել յերեխայի շրջապատից՝ դպրոց ընտանիք, գյուղի, կամ քաղաքի գլխավոր զբաղմունքներ, հիմնարկներ, կազմակերպություններ, տարվա յեղանակներ, մինչև 100 հաշվելը։ Առարկաների անունները և գործողությունները սովորում են կապակցված, պարզ և համառոտ նախադասություններով։

Նպատակահարմար ե առաջին որերին օգտագործել ռուսերեն այն բա-

ները, որոնք հայերեն խոսակցության մեջ հաճախ են գործածվում, օրինակ՝ пол, стол, шкап, стакан, класс, чайник և այլն։

Լեքսիկական պարապմունքների ժամանակ 1—1½ ամսվա ընթացքում աշակերտները պետք է յուրացնեն 80—100 բառ, որից հետո հնարավոր է արդեն անցնել գրաճանաչության։

Գրաճանաչություն

Գրաճանաչությունն սկսել կոմբինացիոն մեթոդով, ամբողջական բառերի հիման վրա։ Կարդալ պարզ տեքստ։ Կարդացածը բաժանել բառերի, բառերը՝ հնչյունների։ Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ։ Փափուկ և կոշտ բաղաձայններ (ь), որպես փափկացնող նշան։ Վանկ։ Շեշտ։ Կոշտ և փափուկ արտասանությամբ բաղաձայններ ունեցող բառերով վարժություններ, ինչպես նախդիրները բառերի հետ միասին արտասանելու վարժություններ՝ в окно, на стол, к доске և այլն։

Բանավոր խոսքի զարգացում

Кто это? և что это? հարցերի միջոցով տալ շրջապատի առարկաների անունները։ Հասկանալ և կատարել գործողություններ՝ иди напиши, читай, смотри, открой, закрой, принеси, отнеси և այլն։

Դրական և բացասական պատասխաններ (это стол? да, это стол? нет, это не стол և այլն)։ Здесь, там, сюда, вчера, завтра, сегодня և նման գործածական բառերի հասկացողություն։

Հաշվել մինչև 100-ը և պատասխանել сколько հարցին։

Անհրաժեշտ է, որ դասատուն իր ծրագրում նախօրոք նշի անցնելիք բառերի ամբողջ ցուցակը։

Ընթերցանության տեխնիկայի զարգացում

Լեզվի դասագրքից կարդալ հոդվածներ և փոքր պատմվածքներ հետևյալ թեմաների շուրջը՝ դպրոց, դասարան, ուսումնական պիտույքներ, ընտանիք, գյուղ, քաղաք, զբաղմունքներ, մարդու մարմնի մասեր, Կոմկուսակցություն, կոմսոմոլ, պիոներ, Խորհրդային իշխանություն, կոլխոզշինարարություն, կուլտուրական խնդիրներ, ինտերնացիոնալ և հակակրոնական դաստիարակություն, հեղափոխական տոնակատարություններ և այլ խնդիրներ։

Գրավոր խոսքի զարգացում

Տառերը ճիշտ գրել։ Հատուկ ուշադրություն դարձնել ձեռագրի պարզության, համաչափության և գեղեցկության վրա։ Գրատախտակից արտագրելիս, տառերը կից (слитно) գրել. իսկ տարեվերջում գրքից փոքրիկ նախադասություններ և հոդվածներ արտագրել։ Տողադարձ։ Գրքում տրված և պատասխանված հարցերն արտագրել։ Հատուկ մշակված (ուսուցչի կողմից) անկետա լրացնել։ Գրել իր հասցեն, անունը, ազգանունը, նույնը և ընկերներինը։

Քերականություն յեվ ուղղագրություն

«ь»-ը որպես փափկացնող նշան։ Փափուկ ձայնավորի՝ я, ю, е, ё արտասանումը բառերի սկզբում, վերջում, միջում։ Վարժեցնել հայերենին վոչ հարազատ հնչյունների արտասանությանը՝ ы, я, щ, е։

Անձնական դերանունների գործածություն՝ առանց քերականական տերմինների (3-րդ—4-րդ խմբում Ռ. Լ. ուսուցման 1-ին և 2-րդ տարիներում քերականական տերմիններ չեն գործածվում, կատարվում են ուղղագրական և լեզվական վարժություններ)՝ я, ты, он, она, мы, вы, они։

Մեծատառի գործածությունը։

Տարեվերջին ծանոթություն «о» արտասանության տարրական կանոններին։

ՈՒՍՄԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ (4-րդ խումբ)

Բանավոր խոսքի զարգացում

Ամփոփ կերպով վերհիշել և կրկնել նախորդ տարվա վարժությունները։ Մասնակցություն դպրոցական զանազան հանդեսներին՝ փոքրիկ ոտանավորների արտասանությամբ։ Հարցերի միջոցով սովորած նկարագրական հոդվածների բովանդակության համառոտ վերարտադրում։

Բառապաշարի հարստացում առտնին և սոցիալ-արտադրական կյանքի տերմիններով, ընտանի և վայրի կենդանիների ու թռչունների, տեղական գլխավոր բույսերի, փոխադրական միջոցների անուններով։ Ուսուցչի հարցերի օգնությամբ պատմել պարզ նկարի բովանդակությունը։ Յուրացրած բառերի քանակը նախորդ տարվա հետ միասին պետք է լինի առնվազն 500։

Ընթերցանության տեխնիկայի զարգացում

Դասագրքի հոդվածների ընթերցանություն՝ պահպանելով շեշտերի, կետադրության և առոգանության կանոնները։

Գեղարվեստական հոդվածները լինում են հետևյալ հիմնական հարցերի շուրջը՝ քաղաք, գյուղ, հնգամյակ, սոցշինարարություն, հարվածայնություն, նոր կենցաղ, հեղափոխական տոնակատարություններ, տարվա յեղանակները, կենդանիների կյանքը, յերեխաների տպավորությունները, ինտերնացիոնալ և հակակրոնական դաստիարակություն, կոլխոզշինարարություն, պիոներական կյանք և այլն։ Բարձր և լուռ ընթերցանություն։ Առոգանության նշանների պահպանումն ընթերցանության ժամանակ, մասնավորապես վերջակետի, բացականչական ու հարցական նշանների աճումն ու գործածությունը։ Անցած հոդվածի շուրջը տրված հարցերին պատասխանել։

Գրավոր խոսքի զարգացում

Մաքուր և ճիշտ գրել. կրկնողության կարգով հիշեցնել լավ, մաքուր և կանոնավոր ձեռագրի խոշոր նշանակությունը։ Այդ նպատակով կատարել հաճախակի գիտակցական արտագրություն գրատախտակից (մեծ մասամբ) և գրքից, վերջինս որպես տնային աշխատանք՝ ստուգելով և համապատաս

խան գիտությունները անելով։ Նոցունդներ և պլակատներ գրել. գործիքների և առարկաների փոքր ցուցակներ կազմել։

Սեփական բառարան կազմել։

Քերականություն, ուղղագրություն յեվ կետադրություն

Գոյական անունները, նրանց վերջավորությունները՝ արական՝ բաղաձայներով, իգական՝ а, я, о, е։

Գործածական ածականների համաձայնեցումը գոյականների հետ (սկզբնական ձևը՝ белый, ая, ое, красный, ая, ое, новый, ая, ое *և այլն)։*

Բայի կանոնավոր ձևերի խոնարհումը. ներկա, անցյալ, ապառնի ժամանակով։

Ծանոթություն. — *Նախադասության մեջ ամենագործածվող նախդիրներին՝* в, на, к, под, у *և այլն։*

Ձայնավորները՝ г, к, х, ж, ш, ч, щ*-ից հետո. հատկապես «*и*» տառի գործածության կանոնն այդ բաղաձայներից հետո։*

Գոյականների (ուղիղ ձևի) փոփոխությունն ըստ տրված հարցերի (առանց քերականական տերմինների)։

Ստորակետ, կրկնակետ, դրանց գործածության գլխավոր դեպքերը։

Ծրագիրը մշակված է ԼԺԿ-ի ծրագրա-մեթոդական կայանի Լեզվի և Գրականության սեկցիայի կողմից։ Ծրագրի մշակմանը մասնակցել են՝ Լ. Խուդոյան, Զ. Ցարինսկայա և Հ. Մարտիրոսյան։

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1-ԻՆ ԽՈՒՄԲ

1. ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Դպրոցում սովորում են մեծ ու փոքր յերեխաներ։ Դպրոցում սովորում են տարբեր ազգությունների աշխատավորների, բանվորների, կոլխոզնիկների, վոչ կոլխոզնիկ գյուղացիների, ծառայողների և այլ յերեխաները։ Նրանք ընկերներ են իրենց աշխատանքներում և խաղի մեջ։ Ամբողջ դասարանում, դպրոցում կա վորոշ կարգ ու կանոն։ Հարկավոր է խնայել դպրոցը, դասարանը և դպրոցական իրերը։ Պետք է սովորել ոգտվել շենքից, ուսումնական խուլքներից և կահկարասիներից։ Հարկավոր է կարգ պահպանել, աշխատանքի և խաղի ժամանակ չխանգարել ուրիշի աշխատանքը և միասին աշխատել։

Պետք է կանոնավոր հաճախել դպրոցը և պարապմունքները բաց չթողնել. յեկեղեցական տոներին բոլորը պետք է հաճախեն դպրոց։ Ստուգել՝ պրդյոք դպրոցական տարիքի բոլոր յերեխաները հաճախում են դպրոց։ Իմանալ՝ ինչու չեն բոլորը հաճախում։ Պայքար գիտակից դիսցիպլինայի համար։

Ուսուցչի ղեկավարությամբ հոկտեմբերիկները և պիոներները ակտիվորեն մասնակցում և կազմակերպում են այդ պայքարը։

Սովորեցնել յերեխաներին պատասխանատվության՝ հանձնարարած գործի համար, հաշվետու լինել կատարած վորոշ աշխատանքի համար (հերթապահություն, հաճախումների հաշվառում)։

Յերեխաների ուժերին համապատասխանող՝ խմբի և դպրոցի շահերից բղխող աշխատանքների կատարումը։

Հարգանք դեպի ուսուցիչը, աշակերտության, տեխ. աշխատողի, հավաքարարի և մյուսների աշխատանքները։

Յերեխաների վարքը դասամիջոցին դպրոցում և փողոցում։

Ընկերական փոխհարաբերությունների զարգացումը փոքրերի և մեծերի, աղջիկների և տղաների, զանազան ազգությունների յերեխաների միջև։

Աշխատանքի ձևեր յեվ մեթոդներ

Ուսուցչի զրույցը յերեխաների հետ։ Վոտանավորների և պատմվածքների ընթերցում։ Առողջապահական, սանիտարական բովանդակությամբ պլակատների վերլուծում։

Յերեխաների ոգնությամբ պարզել՝ ով չի սովորում կամ դադարել է դպրոց հաճախելուց։

2. ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐ

Մեր դպրոցում կան հոկտեմբերիկներ։ Հոկտեմբերիկները մանկական «Հոկտեմբերիկ» կազմակերպության անդամ են։ Ինչով են պարապում հոկտեմբերիկներն իրանց խմբերում։ Հոկտեմբերիկները բոլոր յերկրների ազգությունների աշխատավորների յերեխաների ընկերներն են։ Հոկտեմբերիկները պետք է օրինակ ծառայեն իրենց բոլոր ընկերների համար՝ աշխատանքի , սովորելու և կարգապահության մեջ։ Հոկտեմբերիկները կազմակերպված և միացած են փնջիկներում։ Փնջիկները կազմում են հոկտեմբերիկների խմբեր. հոկտեմբերիկների ղեկավարներին տալիս է կոմսոմոլը, իսկ փնջիկներին՝ պիոներ-կազմակերպությունը։ Դպրոցական և հոկտեմբերիկների խմբերում յերեխաներն աշխատում են կոլեկտիվ կերպով, միասին, ընկերաբար, օգնում են մեկը մյուսին։

Լավագույն հոկտեմբերիկներին տալիս ենք պիոներական ջոկատներին։ Հոկտեմբերիկներն օգնում են ուսուցչին՝ բոլոր յերեխաներին ներգրավել պայքարելու ուսման համար, դպրոցական կարգ ու կանոնի, գիտակից դիսցիպլինայի համար։ Հոկտեմբերիկները ներգրավում են բոլոր յերեխաներին պայքարելու պարտուսի համար, օգնում են, վորպեսզի դպրոցական տարիք ունեցող բոլոր յերեխաները սովորեն դպրոցում, կանոնավոր հաճախեն, օգնեն իրար դպրոցական պարապմունքներում, օգնեն գրքերով և դպրոցական պիտույքներով։

Աշխատանքի մեթոդները յեվ ձևերը

Ուսուցչի զրույցը։ Պատմվածքների ընթերցում։ Զրույց նկարներով։ Տվյալ խմբի հոկտեմբերիկների պատմվածքը,— ինչ են անում իրենց հոկտեմբերիկական խմբակներում։

Ինչով և ինչպես են օգնում ուսուցչին դպրոցում։

Խումբը պետք է այցելի հոկտեմբերիկների հավաքույթը։

Ներկա լինել պիոներական հավաքույթների, վորտեղ հոկտեմբերիկներին նվիրում են պիոներական կազմակերպությանը։

3. ՄԵՐ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Այս թեման գյուղի դպրոցի համար հանդիսանում է 4-րդը իսկ, 3-րդը թեման «մեր կոլտնտեսությունը»։

Քաղաքի յեվ գործարանային ազգաբնակության զբաղմունքը.— *Քաղաքում գործարաններում բանվորներն արտադրում են զանազան մեքենաներ, պատրաստում են գործվածքներ, թուղթ, մեխ և ուրիշ շատ իրեր, վորոնք հարկավոր են սոցիալիստական տնտեսության աշխատավորության մատակարարումը բարելավելու համար։*

Գործարանում աշխատանքը կատարվում է մեքենաների միջոցով: Աշխատանքի կազմակերպումը գործարանում։— *Ինչ է մշակում մեր գործարանը, ինչպիսի հումք և վորտեղից է ստանում։ Գործարաններում և ֆաբրիկաներում աշխատանքը կատարվում է մեքենաների օգնությամբ, մեքենան հեշտացնում է մարդու աշխատանքը։ Մեքենայի աշխատանքն ավելի ձեռնտու և արդյունավետ է (բերել օրինակներ) քան ձեռքի աշխատանքը։ Գործարանում աշխատանքը կատարվում է կոլեկտիվ կերպով։ Մեկի աշխատանքը կապվում է մյուսի աշխատանքի հետ։ Բանվորները կառուցում են բազմաթիվ նոր գործարաններ ու ֆաբրիկաներ ու վերանորոգում են հները։ Իրենց աշխատանքները արագ և լավ կատարելու համար, լավագույն բանվորները կազմակերպում են հարվածային բրիգադներ։ Օրինակներ առանձին հարվածայինների աշխատանքներից,— նրանց պայքարը վորակի, աշխատանքի արտադրողականության բարձրացման, ինքնարժեքի իջեցման խնդիրներում։ Կատարելով աշխատանքը հարվածայնորեն, բանվորները բարելավում են իրենց և աշխատավորության վիճակը։*

Գործարանները գտնվում են քաղաքներում, գործարանային ավաններում.— *Այնտեղ, վորտեղ կառուցվում են խոշոր գործարաններ, առաջ են գալիս նոր բանվորական ավաններ կամ մեծ քաղաքներ։*

Քաղաքների և բանվորական ավանների ազգաբնակության մեծ մասը գործարանների բանվորներն են։ Մեծ քաղաքներում կան շատ պետական և հասարակական հիմնարկներ,— Քաղխորհուրդ, թատրոններ, կինոներ, գրադարաններ, ակումբներ, հասարակական ճաշարաններ, փոստ, հեռագրատուն դպրոցներ, հիվանդանոցներ, դեղատներ և ուսումնական շատ հիմնարկներ՝ յերեխաների, պատանիների և մեծերի համար։ Կան ուսումնական հիմնարկներ, վորտեղ պատրաստում են գյուղատնտեսներ, բժիշկներ, ճարտարապետներ, շինարարներ և առհասարակ մասնագետներ քաղաքի և գյուղի համար։ Քաղաքում կան մեծ խանութներ, շուկաներ, կոլխոզային շուկաներ։

Աշխատանքի ձևերն ու մեթոդները

Եքսկուրսիա դեպի գործարան։ Գործարանի հարվածայինների զրույց յերեխաների հետ։ Զրույց նկարներով։ Կինո-նկար կամ մոգական լապտերի միջոցով ցույց տալ նկարներ։

4. ՄԵՐ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղի ազգաբնակության զբաղմունքը։— *Մեր գյուղի ազգաբնակության հիմնական զբաղմունքը։ Գյուղատնտեսական աշխատանքի հիմնական ձևերը, — վարը, ցանքը, բերքահավաքը, անասունների խնամքը, կաթից ուրիշ մթերքներ ստանալը և այլն։ Մեզ մոտ Հայաստանում տեխնիկական բույսերի մշակումը, բամբակի ցանքը, բերքի հավաքը, ծխախոտի սածիլը, խաղողի մշակումը, ետելը, խաղողից գինի ստանալը և այլն։*

Կոլտնտեսականները յեվ մենատնտեսները։— *Գյուղացիներն իրենց տնտեսությունը տանում են կամ մենակ իրենց ընտանիքով (մենատնտեսներ), կամ միացած կոլտնտեսության մեջ։ Պարզել՝ մեր գյուղում ինչպես են տանում գյուղացիներն իրենց տնտեսությունը։ Յերեխաների դիտողությունների և կոնկրետ փաստերի (գյուղական դպրոցներում) կամ ուսուցչի զրույցների միջոցով (քաղաքի դպրոցներում) պարզել մանր անհատական տնտեսության բնորոշ առանձնահատկությունները — մանր ցրված հողամասեր, հետամնաց գյուղատնտեսական գործիքներ, մեքենաների բացակայությունը, տնտեսական մանր շինություններ։ Բացատրել, վոր առաջ չքավորներն ու-*

միջակներն այդպես էլին տանում իրենց տնտեսությունը։ Բացատրել, վոր չքավորներն, այնպիսի մարդիկ էլին, վորոնց տնտեսության համար սովորաբար պակասում եր կամ սերմ, կամ ձի, կամ գործիքներ կամ այդ բոլորը միասին։ Չքավորներն այն մարդիկն են, վորոնք ապրում էլին կիսաքաղց և, վորպես որենք, գտնվում էլին կուլակի, կալվածատիրոջ լծի տակ (Ստալին)։ Պարզել, վոր «միջակների զգալի մասը գտնվում եր նույն կարիքի և զրկանքների մեջ, ինչ վոր չքավորները» (Ստալին)։

Պարզել, վոր առանձին խոշոր կուլակային տնտեսությունները, ինչպես նաև կուլակները լայնացնում էլին իրենց տնտեսությունն ի հաշիվ չքավորների։ Գյուղական դպրոցներում տալ որինակներ տեղական կյանքից։ Կուլակների ճնշումից ազատվելու համար, իրենց տնտեսությունները բարելավելու, բարգավաճելու և ապրելու պայմանները լավացնելու համար գյուղացիները կազմակերպվում են կոլտնտեսությունների մեջ։ Կոլտնտեսականը ցերեկվա մենատնտեսն է։

Մենատնտեսը (բարեխիղճ աշխատող) վաղվա կոլտնտեսականն է, Կոմունիստական կուսակցությունը, քաղաքի բանվորությունը և գյուղխորհուրդները ոգնում են՝ կազմակերպելու կոլտնտեսություններ։ Ստալինը կոլխոզի շինարարության մասին։

Ինչպես է կազմակերպված աշխատանքը և կյանքը կոլտնտեսության մեջ.— Մեր կոլտնտեսությունը կազմակերպված է նախկին անհատական տնտեսություններից։ Կոլտնտեսությունում հողը, մեքենաները, գործիքների մեծ մասը, շինանյութերը (գոմ, մարագ և այլն) ընդհանուր են. բոլոր աշխատանքները կատարվում են կազմակերպված և կոլեկտիվ ձևով։ Աշխատանքն արագ և լավ կատարելու համար կազմակերպվում են հարվածային բրիգադներ։ Կոլեկտիվ աշխատանքը կոլտնտեսություններում գյուղացիներին ավելի ոգուտ է տալիս, քան աշխատանքն անհատական տնտեսություններում (բերել կոնկրետ որինակներ) կոլտնտեսություններում շատ աշխատանքներ կատարվում են մեքենաների միջոցով։ Մեքենաները հեշտացնում են մարդու աշխատանքը, մեքենաների աշխատանքն ավելի ձեռնտու և արդյունավետ է (բերել որինակներ)։ Կոլտնտեսությունները ժամանակին հոգում են կոլտնտեսականների տնտեսությունը բարելավելու մասին, վորպեսզի բարձրացնեն կոլտնտեսության բերքը (ինչ միջոցներով.— բերել որինակներ.— սերմի ախտահանում, լավ և ժամանակին հերկ, քաղհան, աշխատանքի լավ կազմակերպում և այլն)։ Կոլտնտեսություններում բերքը բաժանվում է հետևյալ կերպ, ով շատ և լավ է աշխատում, նա շատ է ստանում, ով չի աշխատում, նա վոչինչ չի ստանում (բերել որինակներ մեր կոլտնտեսություններից)։ Կոլտնտեսությունները հոգում են ցերեխաների և ծերերի մասին։ Նրանք հոգում են նաև իրենց անդամների սովորելու մասին, ընդհանուր ճաշարաններ, մսուրներ, մանկապարտեզներ բանալու և այլ խնդիրների մասին։ Կոլտնտեսականները տանում են կուլտուրական և ուրիշ աշխատանք մենատնտեսների մեջ։

Կոլտնտեսության թշնամիները.— Կուլակներին և տերտերներին կոլտնտեսություն չեն ընդունում։ Նրանք կոլտնտեսության թշնամիներն են։ Կուլակներն առաջ շատ մեքենաներ ու հողեր ունեյին։ Հիմա շատ տեղերում կուլակների հողերն ու մեքենաները վերցրել, տվել են կոլտնտեսություններին (ցույց տալ տեղի որինակներով)։ Կուլակները և տերտերները խանգարում և վնասում են կոլտնտեսության աշխատանքը (կոնկրետ որինակներ՝ մեքենաներ, արտեր փչացնելու, խոտ այրելու, անասուններ փչացնելու և գողանալու մասին)։

Հասարակական գույքը հափշտակողները, լոդրները, կուլակների դաշնակիցներն են։ Կուլակներին և նրանց դաշնակիցներին պետք է դուրս քշել կոլտնտեսություններից։

Աշխատանքի մեթոդներ և ձևեր

Կազմել ալբոմ և պլակատներ ցերեխաների աշխատանքներից, վորոնք արտահայտում են գյուղի ագգարնականության աշխատանքը և կենցաղը։ Փոքր վոտանավորներ անգիր անել։ Ցերկու մեծ նկարներ — մենատնտեսի բակը և տնտեսությունը, կոլտնտեսության բակը և տնտեսությունը։ Մենատնտեսների և կոլտնտեսության վարելահողը։ Կինո նկար (գյուղատնտեսական գործիքներն աշխատանքի ժամանակ։

Եքսկուրսիա դեպի կոլտնտեսություն կամ գյուղատնտեսական մեքենաների պահեստ։ Եքսկուրսիա կոլտնտեսության, ճաշարան, ակումբ, մանկապարտեզ (գյուղի ցերեխաների համար). ուսուցչի զրույցը՝ նկարներով։

5. ԳՈՐԾԱՐԱՆԻ, ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՔԱՂԱՔԻ ԵՎ ԳՅՈՒՂԻ ԿԱՊԸ

Բանվորները և կոլտնտեսականները — բանվորների ղեկավարությամբ կատարում են ընդհանուր գործ։ Վորքան լավ աշխատեն կոլտնտեսությունները, այնքան շատ կլինի հում նյութը գործարանների համար (ճակնդեղ, բամբակ, ծխախոտ և այլն), այնքան շատ կլինեն մթերքները պետության, Կարմիր բանակի, բանվորության համար, այնքան լավ կլինի իրենց՝ կոլտնտեսականների վիճակը։ Վորքան լավ է գնում աշխատանքը գործարաններում, այնքան շատ մեքենաներ, ցերկաթ, ապակի, կտոր, վոտնամաններ և ուրիշ նյութեր են պատրաստվում, վորոնք հարկավոր են աշխատավորության և նրանց ցերեխաների վիճակը բարելավելու համար։ Զանազան բեռներ տեղափոխում են քաղաքից մյուս քաղաքներ, քաղաքներից գյուղեր և գյուղերից քաղաքներ։ Կոլտնտեսություններին ոգնելու համար բանվորները քաղաքների գործարաններից աշխատակիցներ են ուղարկում գյուղերը։ Քաղաքներից գյուղեր աշխատելու համար գնում են գյուղատնտեսներ, ուսուցիչներ, բժիշկներ և այլն։ Գյուղերից քաղաք գնում են ուսումը շարունակելու, աշխատելու։

Քաղաքներից գյուղեր ուղարկվում են թերթեր, ժուռնալներ, գրքեր։ Թերթերից, ժուռնալներից, գրքերից կարելի յե իմանալ, թե զանազան ցերկրներում ինչպես է ապրում և աշխատում աշխատավորությունը (թերթերից բերել որինակներ մշակած նյութերի վերաբերյալ)։

Բանվորները և կոլտնտեսականներն ունեն ընդհանուր խնդիր Կոմունիստական կուսակցության գլխավորությամբ, բանվոր դասակարգի ղեկավարությամբ բարելավել աշխատավորության վիճակը։

Դասագրքերից պատմվածքների ընթերցանություն, զրույց նկարներով մանկական բեմադրություն, նամակագրություն քաղաքի և գյուղի առաջին խմբերի միջև։ Կապ հաստատել մոտ գտնվող հարևան դպրոցների հետ։

2-ՐԴ ԽՈՒՄԲ

1. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԱՌԱՋ ՑԱՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՎ ԱՅԺՄ՝ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Ով եր առաջ կառավարում մեր յերկիրը.— *Հիմա մեր յերկրի տերը բանվորն ու գյուղացիներն են. առաջ յերկիրը կառավարում եր ցարը՝ կապիտալիստների և կալվածատերերի հետ. գործարանները, հողի մեծ մասը գտնվում եյին ցարի, կապիտալիստների և կալվածատերերի ձեռքին։ Գյուղացիները քիչ հող ունեյին. գյուղացիներն աշխատում եյին կալվածատերերի և կապիտալիստների համար։ Ցարական իշխանությունը մտածում, հոգում եր կապիտալիստների, կալվածատերերի շահերի մասին և ճնշում եր բանվորներին ու գյուղացիներին.*

Տեխնիկան այժմ յեվ առաջ.— *Առաջ մեր յերկրում առանց մեքենաների փոքր հողամասերի վրա եյին աշխատում՝ պապական հետամնաց գործիքներով, Շատ տեղերում, մանավանդ ծայրամասերում, չկային գործարաններ, շատ իրեր պատրաստվում եյին տնայնագործական դազգյահների վրա (տալ օրինակներ). հիմա կոլտնտեսականները և խորհտնտեսության բանվորներն աշխատում են մեծ հողամասերի վրա՝ մեքենաներով։ Այնտեղ, վորտեղ չկար բոլորովին մեքենայի աշխատանք, այժմ խորհուրդները կառուցում են նոր գործարաններ։ Աշխատանքի պայմաններն այժմ և առաջ. առաջ բանվորները գործարաններում ունեյին ծանր և մաշող աշխատանք, ցածր աշխատավարձ, բնակարանային վատ պայմաններ, բանվորական յերկար օր։ Գործարանատիրոջ քմահաճույքով նրանք կարող եյին զրկվել աշխատանքից, շատերը յերկար ժամանակ մնում եյին առանց գործի, իրենց ընտանիքների հետ սովի եյին մատնված, աշխատանքի պայմանները շատ ծանր եյին։ Խորհրդային յերկրում բանվորներն ունեն 7 ժամյա բանվորական օր, իսկ մի քանի կատեգորիայի բանվորներ՝ 6 ժամյա, բոլոր բանվորներն ստանում են արձակուրդ, կա աշխատանքային պաշտպանություն. խորհրդային յերկրում չկա գործազրկություն։ Սովը չի սպառնում բանվորներին և նրանց ընտանիքներին. գյուղացիներն առաջ կատարում եյին մաշող, դժվար աշխատանք. գյուղացիները կալվածատերերի լծի տակ եյին. Թեպետ իրենք եյին արտադրում մթերքները, բայց ապրում եյին կիսաքաղց, վատ բերքի ժամանակ գյուղացու ընտանիքը վոչ մի տեղից օժանդակություն չեր ստանում։ Այժմ կալվածատերերի հողն անցել ե գյուղացիներին. գյուղացիներն աշխատում են իրենց և իրենց կոլտնտեսության համար։ Հիմա իշխանությունը գյուղացիներին, հատկապես կոլտնտեսականներին, օգնում ե մեքենաներով, գյուղատնտեսական և բժշկական օժանդակություն ե ցույց տալիս։ Կոլտնտեսություններում կազմակերպվում են աշխատանքի պաշտպանություն, հասարակական սնունդ։ Լավագույն գործարաններում և կոլտնտեսություններում աշխատանքն ընթանում ե հարվածային կերպով, ծավալված ե սոցմրցումը։ Այդ գործարաններում ու կոլտնտեսություններում ունենք հսկայական նվաճումներ։ Առաջավոր գործարանները, կոլտնտեսությունները, խորտնտեսությունները օգնում են հետ մնացողներին. Լավագույն հարվածայինները պարգևատրվում են (կոնկրետ օրինակներ)։ Առաջ աշխատանքը աշխատավորության համար ծանր լուծ եր, աշխատավորության վրա շահագործողները արհամարհանքով եյին նայում, ֆիզիկական աշխատանքը համարվում եր ցածր, անարգ,— հիմա աշխատանքը մեզ մոտ դառնում ե պարծանքի, հերոսության գործ, աշխատանքը վոգևորում ե բանվորներին, կոլտնտեսականներին, վորովհետև նրանք միահամուռ կերպով աշխատում են իրենց պետության համար, իրենց համար, աշխատում են իրենց և իրենց յերեխաների վիճակը բարելավելու համար.*

Քաղաքի գյուղի յեվ յերկրի զանազան մասերի կապը առաջ յեվ հիմա։— *Մեր յերկիրը մեծ ե. ունի շատ քաղաքներ, բանվորական ավաններ և գյուղեր։ Առաջ գյուղերի կապը քաղաքների հետ, կապը ծայրամասերի խուլ անկյունների և կենտրոնի մեծ քաղաքների հետ դժվար եր։ Յերկիրը չուներ լավ ճանապարհներ, հաղորդակցության միջոցները չեյին զարգացած, չեյին զարգացած և կապի միջոցները (օրինակներով բացատրել թե ինչպիսի դժվարություններ եր դա առաջ բերում)։ Այդ բոլորի հետևանքով ծայրամասերի ազգաբնակչությունը կտրված եր քաղաքներից, մնում եր կուլտուրապես ցածր աստիճանի վրա. այժմ բարելավվում և կառուցվում են խճուղային նոր ճանապարհներ, անց են կացվում նոր յերկաթուղիներ, զարգանում ե ավտոմոբիլային հաղորդակցությունը, օդային հաղորդակցությունը՝ աերոպլաններով, դիրիժաբլներով։ Առաջ հեռախոս կար միայն կենտրոնական մեծ քաղաքներում, այժմ հեռախոսային ցանցով շատ գյուղեր կապված են իրանց շրջանային կենտրոնի հետ։ Ամեն տեղ մուտք ե գործել ռադիոն (օրինակներով բացատրել հեռախոսի, հեռագրի, ռադիոյի նշանակությունը)։ Բացատրել՝ վորքան մեծ նշանակություն ունի այդքան մեծ յերկրի համար, ինչպես խորհուրդների յերկիրն ե, հաղորդակցության միջոցների բարելավումը և զարգացումը։*

Ազգային փոքրամասնությունների դրությունը առաջ յեվ այժմ.— *Մեր յերկրում ապրում են բազմաթիվ տարբեր ազգություններ։ Ցարական իշխանության օրոք դաժան կերպով ճնշում եյին զանազան ազգությունների աշխատավորությանը, նրանցից խլում եյին հողերը, անտառները, նրանց տալիս եյին ամենածանր և ամենաքիչ վարձատրվող աշխատանք։ կասեցնում եյին ազգային շրջանների տնտեսական զարգացումը։ Ցարական իշխանությունն առանձնապես արգելակում եր վոչ ռուս ազգությունների մեջ կուլտուրայի, լուսավորության զարգացումը, արգելում եր խոսել և գրել մայրենի լեզվով, թույլ չեր տալիս իրենց լեզվով դպրոց ունենալ (բերել օրինակներ՝ հայկական դպրոցների փակելը)։ Ժողովրդական կրթության լուսավորության փոխարեն այդ ազգությունների մեջ հատկապես տարածվում եյին կրոնական զանազան սնապաշտություններ։ Ազգություններին իրար դեմ եյին սրում։ Կազմակերպում եյին կոտորածներ, սպանում և թալանում եյին հրեյաներին, հայերին և թուրքերին։ 1905 թ., վորպեսզի*

Անդրկովկասում հեղափոխական շարժումը չծավալվի, ցարական իշխանությունը կազմակերպեց հայ—թուրքական կոտորածներ. Թալանվեց, ավերվեց, կոտորվեց ինչպես հայկական շրջանների, այնպես էլ թուրքական շրջանների հայ և թուրք աշխատավորությունը։ Ցեկեղեցին ակտիվորեն ոգնում էր ցարական իշխանության այդ քաղաքականության կենսագործմանը։

Խորհուրդների յերկրում բոլոր ազգությունններն ունեն հավասար իրավունքներ։ Խորհրդային իշխանությունը հոգում է, վորպեսզի վոչնչացնի ազգային փոքրամասնությունների մեջ կուլտուրական հետամնացությունը։ Այն շրջաններում, վորտեղ չկար արդյունաբերություն, կառուցվում են գործարաններ, անց են կացվում յերկաթուղիներ (Թուրք-սիբ, Միջևան-Ղափան, Բանաքեռ-Աղստաֆա), կառուցվում են նոր ելեկտրոկայաններ, (Զորագես, Ձագես, Բանաքեռգես և այլն), նոր տեքստիլ և այլ գործարաններ (մահուդի գործարան Վրաստանում, Բաթումում, Ուզբեկստանում, մեզ մոտ՝ Լենինականում և այլն)։ Խորհուրդների ազգությունների մեջ ծավալվում է կուլտուրական մեծ աշխատանք. բացվում են նոր դպրոցներ, ակումբներ, գրադարաններ, ռադիոներ։ Խորհրդային Հայաստանում ցարական իշխանության ժամանակ ազգաբնակության մեծ մասն անգրագետ էր. այժմ մենք վերացնում ենք անգրագիտությունը, բաց ենք անում նոր դպրոցներ, համալսարաններ, մտցրել ենք 7-ամյա պարտադիր ուսում։ Այն ազգությունները, վորոնք չունեյին գիր-գրականություն, այժմ ունեն իրանց լեզվով գիր-գրականություն, թերթ, դպրոց, ինչպես որ. քրդերը մեզ մոտ։ Տարբեր ազգությունների դպրոցականները և պիոներները կապ են պահպանում իրար հետ։ Տարբեր ազգությունների դպրոցականները և պիոներներն ուրիշ յերկրների մանկական կոմունիստական կազմակերպությունների հետ կապ են պահպանում։ Խ. յերկրի աշխատավորությունն ամբողջ աշխարհի բանվորների և գյուղացիների բարեկամն է։ Բանվորուհիների և գեղջկուհիների դրությունը հիմա և առաջ։ Մինչև հեղափոխությունը զանազան ազգությունների պատկանող բանվորուհիներն ու գեղջկուհիներն ապրում եյին առանձնապես ծանր պայմաններում.— ցածր աշխատավարձ, ժամակար և ծանր աշխատանք, յերեխաներին խնամելու անհնարինություն, տնային ծանր աշխատանք, իրավազրկություն, ստորացած վիճակ, զուրկ՝ սովորելու իրավունքից։ Կրոնի դերը կնոջ ստրկացման գործում։ Խ. իշխանության ժամանակ վերջ է տրված կնոջ իրավազրկությանը, ստեղծվել է լայն հնարավորություն սովորելու, կինը կարող է լայն կերպով մասնակցել հասարակական աշխատանքներին, աշխատել արտադրության մեջ, կա կնոջ աշխատանքի պաշտպանություն, մոր և մանկան պաշտպանություն, կազմակերպվում է հասարակական սնունդ, բացվում են մանկապարտեզներ և մսուրներ,

Յերեխաների կյանքի պայմանները հիմա յեվ առաջ.— Աշխատավորության յերեխաները ցարական իշխանության ժամանակ ստիպված եյին փոքր հասակից պարապել ծանր աշխատանքով, սովորելը նրանց համար կամ անմատչելի յեր, կամ շատ սահմանափակ։ Շատ յերեխաներ անապաստան եյին։ Կապիտալիստական յերկրներում աշխատավորների յերեխաների դրությունը հիմա էլ այդպես է։ Խորհ. իշխանության ժամանակ արգելված է մանկական աշխատանքը, մտցվում է պարտադ. մինչև 17 տարեկան հասակը պոլիտեխնիկ ուսուցում. ծավալվում են՝ մանկ. հիմնարկները, մսուրները,

հրապարակները, տեխնիկական կայանները, մանկական ակումբները, թատրոնները և այլն։ Խ. Իշխանությունը վերացրեց անապաստանությունը։

Յերեխաներն իրանց կազմակերպությունների միջոցով ոգնում են խորհրդային իշխանության՝ մեծերի և իրենց կենցաղի բարելավման խնդրում, կանանց ազատագրման գործում։

Ժողովրդական լուսավորությունը հիմա յեվ առաջ.— Ցարի ժամանակ բանվորներին և գյուղացիներին պահում եյին տգիտության մեջ։ Սովորելը նրանց համար դարձնում եյին անմատչելի, վորովհետև անգրագետներին և կիսագրագետներին ավելի հեշտ է ճնշել, յերկրում կային և շատ անգրագետներ։ Աշխատավորությունը փոխանակ գիտություն ստանալու, յենթարկվում էր կրոնական խաբեբայությունների, շատ տարածված եյին զանազան սնոտիապաշտություններ։ Աշխատավորությունը չէր կարողանում բացատրել հասարակ յերևույթներ, չեյին ստանում վոչ մի գիտելիք։ Հիմա մեր յերկրում լայն կերպով ծավալված է մեծահասակների ուսուցումը։ Կա լայն հնարավորություն սովորելու։ Աշխատավորությունը տիրապետում է գիտությանը և տեխնիկային՝ սոցիալիստական տնտեսությունը և աշխատավորության դրությունը բարելավելու համար։

Աշխատավորության հանգիստը հիմա յեվ առաջ.— Առաջ աշխատավորության հանգիստը կապված էր կրոնական տոների հետ. տերտերները հանդիսավոր պատարագների միջոցով գրավում եյին ժողովրդին իրենց աղոթատները (յեկեղեցիներ, մեչիտներ, սինագոգներ) և խաբում զանազան կրոնական հեքիաթներով, հրաշքներով և այլն։ Ուխտավայրեր, մատաղ։ Այդ տոներին լայն տարածված եյին՝ հարբեցողությունը, կռիվը, ծեծը, կուլտուրական զվարճալիքներ շատ քիչ և անմատչելի եյին քաղաքի աշխատավորության համար, իսկ գյուղում բոլորովին չկային։

Այժմ խորհուրդների յերկրում աշխատավորներն ունեն իրենց ակումբները, կինոները, կուլտուրայի տները, կուլտուրայի և հանգստի պարկերը։ Խորհրդային տոներին աշխատավորությունը հավաքվում է ընդհանուր, կոլեկտիվ դեմոստրացիաների, նշում է իր նվաճումները։ Այդ որերին բոլոր թատրոնները, կինոները և ակումբները ձրիաբար տրամադրվում են աշխատավորությանը։ Ցարական իշխանության ժամանակ աշխատավորության մեջ բոլորովին տարածված չեյին ֆիզկուլտուրային պարապմունքները և սպորտը. Խ. յերկրում կան մեծ ստադիոններ, սպորտային հրապարակներ, լողանալ սովորողների դպրոցներ։ Լայնորեն ծավալված է ֆիզկուլտուրան. Խորհուրդների յերկրի ազգաբնակությունը պետք է լինի և կլինի առողջ և ուժեղ։

2. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ (15 տարի առաջ) խորհուրդների յերկրի աշխատավորները տապալեցին ցարի, կապիտալիստների և կալվածատերերի իշխանությունը։ Նրանք ընկ. Լենինի ղեկավարությամբ տապալեցին կապիտալիստներին և կալվածատերերին, խլեցին նրանցից գործարանները, հողը և հաստատեցին իրանց իշխանությունը — խորհուրդների իշխանությունը, խորհուրդների միջոցով իրանք սկսեցին կառավարել յերկիրը։

Աշխատավորության դասակարգային թշնամիները խանգարում են մեր շինարարությունը: Բոլոր ազգությունների աշխատավորները համախմբված պայքարում են մեր թշնամիների դեմ նրանց դեմ, վորոնք ապրում և ցանկանում են ապրել ի հաշիվ բանվորների և գյուղացիների աշխատանքի, պայքարում են կուլակների, վնասարարների, հասարակական գույքը հափշտակողների, սպեկուլյանտների գործակալների դեմ (բերել կոնկրետ որինակներ): Կուսակցության ղեկավարությամբ, բանվոր դասակարգը բոլոր ազգությունների աշխատավորության հետ միասին այժմս կառուցում է նոր կյանք՝ առանց կապիտալիստների, կալվածատերերի, առանց ճնշվածների:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ ՑԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ուսուցչի պատմվածքը և զրույցը:

Պատվածքների և հուշերի ընթերցում:
Զրույց նկարներով («Կրեմլի առումը», Ձմեռային պալատի առումը»):
Լոզունգների ընթերցումը և բացատրումը:
Սովորել Հոկտեմբերյան հեղափոխության վերաբերող վոտանավորներ:
Օգտագործել տեղական գավառագիտական նյութեր:

3-ՐԴ ԽՈՒՄԲ

1. ԻՆՉՈՒ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ՄԵՐ ԱՆՑՅԱԼԸ

Բանվորների և գյուղացիների 1917 թ. հոկտեմբերյան հաղթանակը հետևանք էր կալվածատերերի և կապիտալիստների դեմ նրանց վարած յերկարատև և համառ պայքարի: Կալվածատերերը և կապիտալիստները դաժանորեն պատժում եյին իրենց դեմ պայքարող բանվորներին և գյուղացիներին: Կապիտալիստների և կալվածատերերի դեմ տարվող պայքարում առաջավոր հեղափոխական բանվորները Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ միացած եյին բոլշևիկյան կուսակցության մեջ: Բանվորները և գյուղացիները միայն այն պատճառով կարողացան հաղթել կալվածատերերին ու կապիտալիստներին, վոր նրանց պայքարը ղեկավարվում էր բոլշևիկների կողմից: Ուսումնասիրելով անցյալը՝ մենք սովորում ենք հաղթել մեր թշնամիներին:

2. ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՃՈՐՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Կար ժամանակ, յերբ գյուղացիները և բանվորներն ամրացված եյին իրենց կալվածատիրոջը, պարտավոր եյին նրա համար աշխատել [տալ կոռ ու բեգառային աշխատանքի ճորտատիրական տուրք (оброк), ճորտատիրական գործարանի աշխատանքի ու կյանքի պատկերներ]: Ճորտը կալվածատիրոջ սեփականությունն էր, և կալվածատերը նրան պատժում, ծեծում, վաճառում էր և առհասարակ վարվում էր նրա հետ այնպես, ինչպես իր սեփական անասունի, շան, կամ վորևէ այլ առարկայի հետ: Պետությունը,

յեկեղեցիներին, ու վանքերին պատկանող գյուղացիների դրությունը նույնքան ծանր էր, վորքան և կալվածատերերին պատկանող գյուղացիների դրությունը: Առանձնապես ծանր էր վոչ ռուս ազգության պատկանող աշխատավորության դրությունը, վորոնց ճնշում եյին և՛ ցարական իշխանությունն ու չինովնիկները, և՛ իրենց սեփական կալվածատերերն ու տերտերները: Այս կապակցությամբ տալ հատկապես Անդրկովկասյան ժողովուրդների աշխատավորության (հայեր, վրացիներ, թուրքեր) կրկնակի ճնշման ու հարստահարման պատկերները: Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի կնյազները, բեգերը, մելիքները. գյուղացիների ճնշումն ու հարստահարումը դրանց կողմից: Եջմիածնի վանքապատկան հողերի վրա ապրող գյուղացիների շահագործման պատկերներ:

Կալվածատերերի համար պետք էր ճորտատիրական իրավունքը: Գյուղացիներն աշխատում եյին նրանց համար, վորի հետևանքով էլ կալվածատերերը կարող եյին վարել պարապ, պորտաբույծ կյանք, իրենց ժամանակն անցկացնել քեֆերի ու խրախճանքների մեջ: Ճորտ գյուղացիների աշխատանքը կալվածատերերի համար ապահովում էր ճոխ և հարուստ կյանք (տալ կալվածատիրոջ կալվածի, ճորտական գյուղի, կալվածատերերի խելացնոր քմահաճույքի, ազգային շրջանների կողոպուտի պատկերներ):

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Գրական-գեղարվեստական հատվածների ընթերցում: Վերլուծել ու սովորել մեկ յերկու վոտանավորներ.

Ճորտատիրական գյուղացիների ու բանվորների աշխատանքն ու կյանքը պատկերող գավառագիտական նյութերի վերլուծում:

Եքսկուրսիա տեղական պատմա-հեղափոխական թանգարան (յեթե կա): Եքսկուրսիա նախկին կալվածատիրական կալված (յեթե կա): Ուսուցչի պատմածը և դասագրքի ընթերցումը:

3. ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԻ ԴԵՄ

Գյուղացիներին հնազանդության մեջ պահելու համար կալվածատերերին ոգնության էր հասնում ցարական իշխանությունն իր բանակով, վոստիկանությամբ ու բանտերով: Թագավորն ինքն առաջին կալվածատերն էր: Թագավորին ու կալվածատերերին եյին ծառայում յեկեղեցին ու տերտերները: Գյուղացիք հաճախ կալվածատիրական ճնշումից ու հարստահարումից ազատվելու համար փախչում եյին անտառները, ծայրամասերը, հաճախ ապստամբում եյին հարստահարիչների դեմ (գյուղացիական պայքարի ձևերը—հրդեհումներ, ապստամբություններ, կալվածատերերի սպանություններ), բայց վոչ մի անգամ գյուղացիությունը չի կարողացել հաղթել՝ իր անկազմակերպության հետևանքով (բերել որինակներ գյուղացիների ապստամբություններից): Ստեփան Ռազինի ապստամբությունը: Ամենախոշոր ապստամբությունը Պուգաչովի ապստամբությունն էր՝ 150 տարի սրանից առաջ (տալ պուգաչովյան ապստամբության և ապստամբների անողոք պատժի պատկերներ): Տալ Անդրկովկասի գյուղացիության ապստամբության որինակներ ու պատկերներ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

«18-րդ դարի գյուղացիական ապստամբությունները» դիապոզիտիվների ցուցադրում։ Ճորտատիրության ժամանակ կալվածատերերի դեմ գյուղացիների պայքարը պատկերող գավառագիտական նյութերի օգտագործում։

Ուսուցչի պատմում, դասագրքի ընթերցում։

4. ՃՈՐՏԱՏԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱՑՈՒՄ

Արդյունաբերության զարգացման ազդեցության տակ, ճորտատիրական աշխատանքի ցածր արդյունավետության հետևանքով, աճող գյուղացիական խռովությունների ազդեցության տակ, ցարական կառավարությունը 1861 թվին հարկադրված էր վերացնել ճորտատիրական իրավունքը։ Սակայն բոլոր ամենալավ հողերն առաջվա նման մնացին կալվածատերերի ձեռքին, գյուղացիներն ստացան քիչ, այն էլ ամենավատ հողերը, որի համար նրանք 50 տարվա ընթացքում պարտավոր էին կալվածատերերին վճարել հետգնման գումարներ (выкупные платежи)։ Կալվածատերերն այժմ, ինչպես և ճորտատիրության ժամանակ, պարապ և ճոխ կյանք էին վարում։ Նրանք իրենց հողերի մի մասը վարձով տալիս էին գյուղացիներին և դրա փոխարեն նրանց, ինչպես ճորտատիրության ժամանակ, հարկադրում էին իրենց համար աշխատել։

Իրանց՝ գյուղացիների մեջ սկսվում է շերտավորում։ Դրանցից մի մասը, կալվածատերերի մոտիկ ծառաները, զբաղվելով առևտրով, մյուս գյուղացիներին շահագործելով՝ կուլակներ են դառնում։ Գյուղացիության հիմնական մասսան, միջակ գյուղացիությունը շահագործվելով կալվածատերերի, կուլակների, կապիտալիստների կողմից՝ ավելի ու ավելի է աղքատանում ու քայքայվում։ Քայքայվող գյուղացիները թողնում էին գյուղատնտեսությունը և գնում աշխատելու գործարաններում, որոնք ճորտատիրության վերացումից հետո արագ կերպով զարգանում են։ Փախչելով կալվածատիրական ու կուլակային հարստահարությունից ու ճորտատիրությունից և բանվորներ դառնալով, նրանք ընկնում էին կապիտալիստական դաժան շահագործման ու ստրկության գիրկը (բերել օրինակներ Հայաստանի նախահեղափոխական գյուղի քայքայումից և քայքայվող գյուղացիների մասսայական գաղթից դեպի արդյունաբերական կենտրոններ—Բաքու, Թիֆլիս, և այլն)։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Գյուղացիների «Ազատագրման» ժամանակ նրանցից խլված հողերի չափին վերաբերող դիագրամների օգտագործում։ Գեղարվեստական գրականության հատվածների ընթերցում։

5. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՑԱՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՄԻՆՉԵՎ 1905 ԹԻՎԸ

Կապիտալիստներին ձեռնտու էր աշխատանքի վարձել քաղցած գյուղացիներին։ Նրանք բանվորներին վճարում էին փոքր աշխատավարձ, սահ-

մանում էին երկար աշխատանքի օր, վերցնում էին տուգանք, հարկադրում էին իրանց խանութներից գնել ավելի թանգ ու վատ ապրանքներ, ապրել նեղ ու կեղտոտ բանվորական կազարմաներում (տալ բանվորների աշխատանքի ու կենցաղի պատկերներ հեղափոխությունից առաջ)։

Առանձնապես ծանր էր երեխաների և կանանց կյանքը (բերել օրինակներ, համեմատելով կանանց և երեխաների այժմյան վիճակի հետ՝ մեզ մոտ)։

Կապիտալիստներն օգտվելով բանվորների էժան աշխատանքից, արագ կերպով մեծացնում էին իրենց հարստությունը, կառուցում էին նորանոր գործարաններ, գնում էին նորանոր մեքենաներ։ Բոլոր գործարանները, խոշոր տները պատկանում էին կապիտալիստներին։ Բանվորների աշխատանքի հաշվին կապիտալիստները հեշտ և փարթամ կյանք էին վարում։

Բանվորները պայքարում էին կապիտալիստների դեմ։ Նրանք կազմակերպում էին գործադուլներ և ցույցեր։ Ոստիկանությունը, ժանդարմներն ու բանակը գնդակոծում էին բանվորներին և հարկադրում էին ենթարկվել կապիտալիստներին (տալ 1885 թվին Մորոզովյան գործադուլի, Օբուխովյան պաշտպանության, Բաքվի գործադուլի նկարագրությունները)։ Կապիտալիստների և ցարական իշխանության դեմ բանվորների հաջող պայքարի համար անհրաժեշտ է բանվոր դասակարգի կուսակցության կազմակերպումը, որը միացնում է բանվորության ամենաառաջավոր և գիտակից խավերը։ Կուսակցությունը մի անգամից չի առաջացել. Սկզբում առաջացել են բանվորական խմբակներ, որոնք 1898 թվին միացել և կազմել են բանվորական կուսակցություն.

Լենինը շատ է աշխատել բանվոր դասակարգի կուսակցություն ստեղծելու վրա, մի կուսակցություն, որը պետք է պայքարեր ցարական իշխանության, կալվածատերերի և կապիտալիստների դեմ։

Բանվորների և գյուղացիների շահերը պաշտպանելու համար՝ ցարական իշխանության, կալվածատերերի և կապիտալիստների դեմ պայքարելիս ընկել են բազմաթիվ առաջավոր բանվորներ ու բոլշևիկներ։ Ցարական իշխանությունը նրանց բանտ էր նստեցնում, աքսորում տաժանակիր աշխատանքի էր ուղարկում, կախաղան էր բարձրացնում։

Ցարական իշխանությունը հատկապես հետապնդում էր բոլշևիկ առաջնորդներին,— Լենինին, Ստալինին Ձերժինսկուն, Կալինին, Սվերդլովին, Մոլոտովին, Ֆրունզեյին, Վորոշիլովին, Ռուձուտակին, Կագանովիչին, Պոստիշևին, Շահումյանին և այլն։ Բայց բոլշևիկները շարունակում էին բանվորների ու գյուղացիների ազատագրման համար մղվող համառ պայքարը։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Տետրերում գրանցել Լենինի և Ստալինի կենսագրության կարևորագույն թվականները։ Օգտագործել տեղական գավառագիտական նյութը հավաքված «Գործարանների պատմությունը» կազմելու համար. Աշակերտները դիագրամ են կազմում հետևյալ թեմայի վերաբերող՝ «Գործարանատիրոջ ընտանիքի անդամի և բանվորների ընտանիքի անդամի բնակարանային տարածության նորման «(նյութը վերցնել գրքից կամ աշակերտների

կողմից ինքնուրույն կերպով ձեռք բերված տեղական մատերիալից)։ Կապիտալիստական երկրների արդի բանվորության բնակարանային պայմանները բնութագրող նկարների կամ այլ նյութի վերլուծում։ Հավաքած նյութերից ալբոմ կազմել։

ԽՍՀՄ բնակարանային շինարարությունը բնութագրող նյութերի վերլուծում ու ծանոթացում։ Բանվորական նոր ավանների, բնակարանների լուսանկարներ։

Էքսկուրսիա պատմահեղափոխական թանգարան. թեման՝ «Ընդհատակ տաժանակիր աշխատանք, աքսոր»։

Հին բոլշևիկների հիշողություններից հատվածների ընթերցում կամ պատմում ուսուցչի կողմից։

ՄՈՊՐ-ի Պատանի Բարեկամների կազմակերպում։

6. 1905 ԹՎԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Բանվորների դրությունը վատանում էր։ Աճում էր բանվորական մասսաների անբավականությունը։ Բանվորական լայն մասսաները դեռ չգիտեին իրենց դրության բարելավման համար պայքարելու իսկական ուղիները և կարծում էին, թե թագավորի մոտ օգնություն կգտնեն։ Պետերբուրգի (այժմ Լենինգրադի) բանվորները 1905 թվի հունվարի 9-ին իրենց կանանց և երեխաների հետ գնացին թագավորից խնդրելու, վորպեսզի բարելավի իրենց կյանքը։ Բայց թագավորը հրամայեց գնդակոծել բանվորների հսկայական բազմությունը։

Բանվորների գնդակոծումը նույնիսկ կիսագիտակից բանվորների մեջ մեծ զայրույթ առաջացրեց թագավորի դեմ։ Բարձրացավ գործադուլների և գյուղացիական ապստամբությունների ալիք։ Ցարական կառավարությունն օգտվելով աշխատավորության վորոշ մասի տգիտությունից ու անգիտակցությունից, մի ազգություն սրում էր մի այլ ազգության դեմ (թուրքերին ու հայերին միմյանց դեմ, ռուսներին՝ հրեյաների դեմ) և կոտորածներ էր սարքում (հատկապես կանգ առնել ու տալ պատկերներ հայ-թուրքական կոտորածներից)։ Ցարական կառավարությունը զորքերը նետում է՝ ճնշելու հեղափոխությունը։ Ամենագիտակից զինվորներն ու մատրոսներն ապստամբություն են բարձրացնում («Պատյոմկին» զրահակիրի վրայի ապստամբությունը)։ Զորքի մեծ մասն իր անգիտակցության հետևանքով դեռ թագավորի կողմն էր։

1905 թվի հոկտեմբերին բանվորներն ընդհանուր գործադուլ հայտարարեցին (տալ ընդհանուր գործադուլի նկարագրությունը)։ Գյուղերում գյուղացիք ապստամբում էին կալվածատերերի դեմ։ Բանվորները ստեղծեցին բանվորական պատգամավորների խորհուրդներ։ Բոլշևիկները կոչ էին անում զինված ուժով տապալել ցարական կառավարությունը։ 1905 թվի դեկտեմբերին կազմակերպվեց զինված ապստամբություն (տալ Պրեսնայի բարիկադային մարտերի պատկերներ)։ Կառավարությունն իր ամենահավատարիմ զորքերն ուղարկեց Մոսկվա և ճնշեց զինված ապստամբությունը (տալ ապստամբների գազանային ճնշման ու պատժի պատկերներ)։ Ռուսաստանի այլ վայրերում տեղի ունեցած զինված ապստամբությունները

նույնպես ճնշվում են։ Թագավորի, կալվածատերերի և կապիտալիստների իշխանությունը մնում է (տալ հեղափոխության, գործադուլների ու ապստամբությունների նկարագրություններ Անդրկովկասից)։

1905 թվի հեղափոխությունը պարտվեց նրանից, վոր գյուղացիներն ու զինվորները բանվորների հետ միատեղ ու համերաշխ հանդես չեկան, և կառավարությունն առանձին-առանձին ճնշեց բանվորներին, զինվորներին ու գյուղացիներին։

1905 թվի հեղափոխությունը մեզ սովորեցրեց, վոր միայն գյուղացիության աշխատավոր մասսաների ու բանակի միացյալ ճակատով, բանվոր դասակարգի ու նրա բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ է հնարավոր հաղթել ցարական ինքնակալությունը։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐ ՈՒ ՁԵՎԵՐ

1905 թվի հեղափոխական պայքարի առանձին մոմենտները պատկերող նկարների (կամ բացիկների) դիտում (հունվարի 9-ը, դեկտեմբերյան ապստամբություն, «Պատյոմկին» զրահակրի ապստամբության, Անդրկովկասի հեղափոխական շարժման դեպքեր և այլն)։ Համապատասխան կինոների դիտում։

Գրական-գեղարվեստական հատվածների և հիշողությունների ընթերցում։ Մեծերի հիշողություններն Անդրկովկասյան հեղափոխական շարժումներից և հայ թուրքական կոտորածներից։ 1905 թվի հեղափոխական մասնակիցների զրույցները երեխաների հետ։

Էքսկուրսիա Պատմա-հեղափոխական թանգարան։

Ինսցենիրովկա և դրամատիզացիա։

Տեղական գավառագիտական նյութերի օգտագործում։

7. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Զանազան երկրների կապիտալիստների կողմից 1914 թվին սկսած իմպերիալիստական պատերազմի ժամանակ բանվորներն ապստամբություն բարձրացրին և հեղափոխությանը միացած զինվորների ու մատրոսների օժանդակությամբ — 1917 թվի փետրվարին տապալեցին ցարի իշխանությունը։ Կազմակերպվեց ժամանակավոր կառավարություն, վորը բաղկացած էր կապիտալիստներից և կալվածատերերից։ Բանվորներն ու գյուղացիները կազմակերպեցին և միացան բանվորական, բատրակային գյուղացիական, զինվորների պատգամավորների խորհուրդներում։ Ժամանակավոր կառավարության՝ բուրժուազիայի կառավարության կողքին առաջացել էր դեռ թույլ, սաղմային, բայց այնուամենայնիվ, անկասկած, իրապես գոյություն ունեցող մի այլ կառավարություն՝ Բանվորների, զինվորների խորհուրդներ» (Լենին)։

Բոլշևիկները Լենինի գլխավորությամբ կոչ էին անում աշխատել այնպես անել, վոր ամբողջ իշխանությունը խորհուրդներին պատկանի, վերջ տալ պատերազմին և հաշտություն կնքել հողն ու գործարանները հանձնել աշխատավորներին։ Բուրժուազիան դաժան տեռոր է կիրառում հեղափոխական բանվորների, առաջին հերթին՝ բոլշևիկների դեմ։ Լենինը հարկադրված

է լինում աշխատանքը տանել ընդհատակում (պատմել Լենինի կյանքի մասին՝ տաղավարում)։ Լենինը սերտ կապ էր պահպանում կուսակցության Կենտրոնական Կոմիտեի հետ և ղեկավարում էր իշխանությունը զինված միջոցներով գրավելու նախապատրաստման գործը։ Բոլշևիկների ու բոլշևիկյան լոզունգների ազդեցությունը շարունակում էր աճել։ Զորքերն ու գյուղացիները մասսայաբար անցնում են բոլշևիկների կողմը։ Ապստամբում են ճնշված ազգությունները

1917թ. հոկտեմբերի 25-ին (նոր տոմարով նոյեմբերի 7-ին) բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ տեղի ունեցավ զինված ապստամբություն (տալ հոկտեմբերյան մարտերի պատկերները Պետրոգրադում.— „Ավրորա" կրեյսերը, Ձմեռային պալատի գրավումը, հոկտեմբերյան օրերը Մոսկվայում)։ Ռուսաստանում վոչնչացվում է կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությունը։ Ռուսաստանը հայտարարվում է Խորհրդային Սոցիալիստական հանրապետություն. Հանրապետության գլուխ է անցնում Ժողովրդական կոմիսարների խորհուրդը, վորի նախագահն էր Լենինը։ Վողջ աշխարհում առաջին անգամ բանվոր դասակարգն սկսեց կառավարել պետությունը։ Խորհրդային կառավարության առաջին դեկրետներն էին հաշտության մասին, ամբողջ հողն առանց հատուցման աշխատավորներին հանձնելու մասին, բոլոր բանկերը, յերկաթուղիները, խոշորագույն գործարանները պետական սեփականություն հայտարարելու մասին։

Հոկտեմբերյան հեղափոխությունից մոտ մի տարի հետո ուրիշ յերկրներում—Գերմանիա, Բուլղարիա, Իտալիա, Վենգրիա, նույնպես հեղափոխություններ ծագեցին, բայց բուրժուազիային հաջողվեց տերորի և դաժան պատիժների միջոցով այդ յերկրներում առժամապես ճնշել այդ հեղափոխությունները։

Հայաստանի խորհրդայնացումը.—Հայաստանի բանվորների և գյուղացիների սոսկալի դրությունը դաշնակցական կառավարության օրոք։ Հայաստանի ազգային փոքրամասնությունների հալածանքներն ու կոտորածը դաշնակցականների կողմից (Զանգիբասարի, Աղբաբայի, Վեդիբասարի կոտորածները և այլն)։

Պատերազմներ Վրաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի հետ։ Հայաստանի տնտեսության ծայր աստիճանի քայքայվելը և աշխատավորության անտանելի վիճակը դաշնակցական կառավարության քաղաքականության հետևանքով։ Բանվորների և գյուղացիների պայքարը դաշնակցական տիրապետության դեմ Հայաստանի Կոմկուսի ղեկավարությամբ. Մայիսյան ապստամբությունը։—

Հայաստանի բանվորների և գյուղացիների ապստամբությունը Կոմկուսի ղեկավարությամբ. դաշնակցական կառավարության տապալումը և Խորհրդային իշխանության հաստատումը (Հայաստանի խորհրդայնացումը 1920 թ. նոյեմբերի 29—ին)։ Ադրբեջանի և Վրաստանի խորհրդայնացումը։

Աշխատանքի մեթոդները յեվ ձևերը

Պատմվածք։ Զրույց։ Հոկտեմբերյան հեղափոխությունը պատկերող նկարների կամ բացիկների ցուցադրում։ Կինոնկարների ցուցադրում։

Գրական — գեղարվեստական հատվածների և հիշողությունների ընթերցում։ Հեղափոխության մասնակիցների զրույց յերեխաների հետ։

Տեղական գավառագիտական նյութերի օգտագործում։ Հոկտեմբերյան և Նոյեմբերյան հեղափոխությանը նվիրված յերեկույթի կազմակերպում (ցանկալի յեն հեղափոխության մասնակիցների ելույթներ)։

8. ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Կալվածատերերը և կապիտալիստները զրկվելով իշխանությունից, փորձում էյին նորից վերադարձնել այն։ Նրանք հավաքեցին ցարական բանակի սպաներին և օտարերկրյա կապիտալիստների օգնությամբ պատերազմ սկսեցին խորհրդային իշխանության դեմ։ Խորհուրդների պաշտպանության և կապիտալիստներին ու կալվածատերերին ճնշելու համար կազմակերպվեց Կարմիր բանակը։ Կոմունիստական կուսակցությունը ղեկավարում է Կարմիր բանակի պայքարը։ Կոմունիստները պայքարի ամենադժվարին ու վտանգավոր ճակատամասերում են։ Կոմունիստները բանակի ամենագիտակից և կարգապահ կորիզն են հանդիսանում.

Տալ Կարմիր բանակի հերոսական պայքարի պատկերը և Լենինգրադի պաշտպանության, Պերեկոպի, Հայաստանի քաղաքացիական կռիվների ու հաղթանակների օրինակի հիման վրա վեր հանել կոմունիստների դերն այդ պայքարում։ ընկ. Ստալինը վորպես այդ հաղթանակների կազմակերպիչ ու ղեկավար։

Սպիտակ բանակների և օտարերկրյա կապիտալիստների դեմ տարվող պայքարում խորհրդային բանվորներին ու գյուղացիներին օգնում էյին արտասահմանյան բանվորները.—Նրանք կազմակերպում էյին գործադուլներ, կանգնեցնում էյին կապիտալիստների կողմից սպիտակ բանակներին ուղարկվող զենքերը և ռազմական պարագաների առաքումը, նրանց զորքերի մեջ ապստամբություններ էյին կազմակերպում (Մարտիի ղեկավարությամբ ֆրանսիական նավատորմիղի ապստամբությունը Սև ծովում)։ Ռազմական ճակատում հաղթանակելով կապիտալիստների ու կալվածատերերի դեմ, կուսակցությունն ու խորհրդային իշխանությունն իրենց ուժերը նետում են վերականգնելու քայքայված ժողովրդական տնտեսությունը։ Գործարկվում են գործարանները։ Կոմունիստները տնտեսական ճակատի առաջին շարքերումն են։ Կուսակցության բջիջը ձեռնարկության մեջ, կոլխոզում, խորհրդային տնտեսության մեջ կազմակերպում է բանվորական և կոլխոզային մասսան և ղեկավարում է շինարարությունը։ Կոմունիստները լավագույն հարվածայիններն են և մասսաների մեջ սոցմրցումն անցկացնողը։

Կուսակցության համագումարներն ընտրում են Կենտրոնական Կոմիտե, վորը ղեկավարում է վողջ յերկրի սոցիալիստական շինարարությունը։ Կուսակցությունը միշտ և ամենուրեք մասսաների հետ է։ Նա սերտ կերպով կապված է նրանց հետ և մասսաների պայքարն ու սոցիալիզմի կառուցման գործը ղեկավարում է բանվորների ու գյուղացիների կազմակերպության միջոցով։

աշխատանքի մեթոդներն ու ձևերը

Պատմում։ Զրույց։

Քաղաքացիական կռիվների պատկերներ („26 կոմիսարների գնդակահարումը" և այլն)։ Կինոնկարների ցուցադրում։ Եքսկուրսիա Կարմիր բանակի զորանոցը (կարելի յե հրավիրել տեղական զորամասի քաղկազմի ներկայացուցչին՝ աշակերտների հետ զրուցելու համար)։

Եքսկուրսիա՝ գործարան, խորհտնտեսություն, կոլտնտեսություն։ Թեման՝ «Սոցիալիստական շինարարություն, սոցմրցում, հարվածայնություն»։

Տեղական գավառագիտական մատերիալ (Կուսպատի և «գործարանների պատմության» տվյալներից)։

Քաղաքացիական պատերազմների մասնակիցների հիշողություններ ու պատմություններ։

Գրական-գեղարվեստական հատվածների ընթերցում։

Լրագրերից հատվածների ընթերցում։

Հարվածայինի անկյուն կազմակերպել դպրոցում, ձեռնարկության կարմիր անկյունում։

9. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆ

Կոմյերիտմությունը կուսակցության օգնականն ե։ Կուսակցության հետ և նրա ղեկավարությամբ կոմյերիտմիությունը հերոսական պայքար ե տարել քաղաքացիական պատերազմում։ Կուսակցության հետ միասին կոմյերիտմությունը տանում ե սոցիալիստական շինարարության մեծ գործը։ Կոմյերիտմությունն ամրացնում ե ԽՍՀՄ-ի պաշտպանությունը բոլոր յերկրների կապիտալիստների հարձակման դեմ (ցույց տալ կոմյերիտմիության աշխատանքը՝ Կարմիր բանակում, նավատորմում, ՊԱԶԸ-Ավիաքիմում)։ Կուսակցության արժանի փոխարինողը լինելու, սոցիալիզմ կառուցելու համար կոմյերիտմիությունը պայքարում ե ուսման լավագույն վորակի համար։ Բոլոր Կապիտալիստական յերկրներում գոյություն ունի կոմյերիտմիություն։ Բոլոր յերկրների կոմյերիտմիության պայքարն ու աշխատանքը ղեկավարում ե ԿԻՄ (յերիտասարդության կոմունիստական ինտերնացիոնալը)։

Տալ պատկերներ կոմյերիտմիության տեղական կազմակերպության պատմությունից և արդի աշխատանքից։

աշխատանքի մեթոդները յեվ ձևերը

Գրական-գեղարվեստական հատվածների և պատմվածքների ընթերցում հետևյալ թեմաների շուրջը. 1 կոմյերիտմիությունը քաղաքացիական պատերազմում և 2) կոմյերիտմիությունը սոցիալիստական շինարարության մեջ։ Կոմյերիտ բջիջի ներկայացուցչի զրույցն աշակերտների հետ «Կոմյերիտմիությունը և սոցմրցումը» թեմայի մասին։

Պատմում։ Ուսուցչի զրույցն աշակերտների հետ։

10. ՊԻՈՆԵՐՆԵՐ

Պիոներները կոմյերիտմիության փոխարինողն ու օգնականն են։ Պիոներներն ունեն իրենց օրենքներն ու սովորությունները (պարզաբանել այդ օրենքներն ու սովորույթները)։

Բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների ազատագրման գործն ամրապնդելու համար պիոներները պետք ե պայքարեն լավագույն ուսման և գիտակցական դիսցիպլինայի համար։ Պիոներներն օգնություն ու ղեկավարություն են ցույց տալիս իրենց կրտսեր ընկերներին—հոկտեմբերիկներին։ ԽՍՀՄ-ի պիոներները կապ են պահպանում կապիտալիստական յերկրների պիոներների հետ և օգնում են նրանց դժվար պայքարի գործին։ Պիոներները չափահասների օգնականներն են սոցիալիստական շինարարության գործում (քննարկել թե տեղական պիոներական կոլեկտիվներն ինչ հասարակական աշխատանք են կատարում)։ Պատկերներ տեղական պիոներ կազմակերպության պատմությունից և արդի աշխատանքից։

աշխատանքի մեթոդներ յեվ ձևեր

Խմբի մասնակցությունը պիոներ-կոլեկտիվի հավաքույթին։ Պիոներ-կոլեկտիվի կողմից նշված պիոներների զրույցը (դասարանում) աշակերտների հետ՝ պիոներական կազմակերպությունների խնդիրների մասին։ Աշակերտների կողմից պիոներների անկյուն կազմակերպելը։ Նամակներ գրել ԽՍՀՄ այլ ազգության պիոներների և վորևե կապիտալիստական յերկրի պիոներ-կազմակերպության։

11. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԸ ՎՈՂՋ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՆ Ե

Վողջ աշխարհի բանվոր դասակարգը, Խորհրդային Միության աշխատավորները, կուսակցությունը, Լենինյան կոմյերիտմիությունը, պիոներները, հոկտեմբերիկները և բոլոր դպրոցականները շարունակում են Լենինի գործը,—վողջ աշխարհում սոցիալիզմ կառուցելու պայքարը։ Պրոլետարիատի առաջնորդները—Մարքս, Ենգելս, Լենին—ստեղծել են ուսմունք՝ սոցիալիստական հասարակության մասին, վորը մեր յերկրում արդեն կառուցվում ե։ Սոցիալիստական հասարակության մեջ մեքենան ու գիտությունն աշխատանքը դարձնում են հեշտ և հետաքրքիր։ Մարդու առաջ կբացվեն գիտության, արվեստի, տեխնիկայի զարգացման անսահման հնարավորություններ։ Չեն լինի պատերազմներ և գործազրկություն։ Չի լինի մարդու ճընշումն ու հարստահարումը մարդու կողմից։

Վողջ աշխարհի աշխատավորների գործն ե՝ պայքար սոցիալիզմի համար։ Սոցիալիզմի համար ընկել են միլիոնավոր աշխատավորներ և անչափ կոմունիստներ։ Կոմունիստական կուսակցությունն իր առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավարությամբ շարունակում ե Լենինի գործը—աշխատավորական մասսաների հետ նոր սոցիալիստական հասարակություն ե կառուցում խորհուրդների յերկրում։

4 ԽՈՒՄԲ

1) ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Խորհուրդների խնդիրները *(2 ժամ)*. — *Բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորների խորհուրդները պրոլետարական դիկտատուրայի օրգաններն են։ Խորհուրդները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ կազմակերպում և տանում են յերկրի ներսը՝ դասակարգային թշնամու դեմ՝ պայքարի, սոցիալիստական շինարարության և մեր յերկրի պաշտպանության ամրապնդման աշխատանքները։*

Խորհուրդները հոգ են տանում, վորպեսզի գործարանները, խորհտընտեսությունները, կոլտնտեսությունները կատարեն իրենց համար նշված աշխատանքների պլանը. նրանք հոգ են տանում բնակարանային շինարարության և քաղաքների ու գյուղերի բարեկարգության, խորհրդային առևտրի ծավալման, անգրագիտության վերացման և պարտուսի, ժողովրդական առողջապահության, Սոց. ապահովագրման, հասարակական-սոցիալիստական գույքի պահպանման մասին։

Ովքեր են ընտրում խորհուրդները *(2 ժամ)*. — *Գյուղը, քաղաքը, հանրապետությունը, շրջանը, վողջ յերկիրը կառավարելու համար 18 տարին լրացրած բանվորները, գյուղացիները, ծառայողները, տնայնագործները և կարմիր բանակայիններն իրենց ժողովներում պատգամավորներ են ընտրում խորհուրդների համար։ Խորհուրդների համար ընտրում են ամենաառաջադեմ և գիտակից բանվորներին, կոլխոզնիկներին, չքավորներին, միջակ մենատնտեսներին, կարմիր բանակայիններին։ Խորհուրդների համար չեն ընտրվում և իրավունք չունեն ընտրելու շահագործողները (առևտրականներ, կուլակներ, նախկին վոստիկաններ և բոլոր կրոնների տերտերները)։*

Խորհուրդներին ընտրված պատգամավորները խորհրդի աշխատանքներին մասնակցում են — առանց արտադրությունից, գործարանից, խորհտընտեսությունից, կոլխոզից կտրվելու։ Նրանք պարտավոր են հաշիվ տալ ընտրողների առաջ։ Յեթե վորևէ պատգամավոր վատ է աշխատում, չի կատարում իր վրա դրված պարտականությունները, ընտրողները կարող են նրան յետ կանչել և նրա տեղն ուրիշ պատգամավոր ընտրել։

Խորհուրդների յերկրի կառավարման գործի մեջ են ներգրավում աշխատավորական մասսաներին *(4 ժամ)*. — *Խորհուրդների աշխատանքներին ներգրավվում են աշխատավորության լայն մասսաները։ Յուրաքանչյուր խորհրդի շուրջը կազմակերպվում են մի շարք սեկցիաներ — կոմունալ, վոր հոգ է տանում քաղաքի և գյուղի բարեկարգության մասին, ժողովրդական կրթության, վոր հոգ է տանում դպրոցների, մանկապարտեզների, կինոների, ակումբների մասին և այլն։*

Յուրաքանչյուր սեկցիա կազմվում է խորհրդի պատգամավորներից և ակտիվ բանվորներից, բանվորուհիներից, գյուղացիներից և գեղջկուհիներից։

Սեկցիաները հետազոտում են առանձին հիմնարկների աշխատանքի դրվածքը, միջոցներ են ձեռք առնում նրանց ամենօրյա աշխատանքը բարելավելու և քննարկում են սեկցիայի աշխատանքների հետ կապված հարցերը։

Խորհուրդներն ընտրողների հետ կապվելու համար գործարաններում խորհուրդների պատգամավորներից, տվյալ ձեռնարկության ակտիվ բանվոր բանվորուհիներից կազմակերպվում են պատգամավորական խմբակներ, պատգամավորական խմբակները բանվորներին ծանոթացնում են խորհրդի աշխատանքների հետ, բանվորներին ներգրավում են սեկցիոն աշխատանքի, հոգ են տանում, վորպեսզի ձեռնարկը կատարի իր պլանը, հոգ են տանում ձեռնարկության մեջ ռացիոնալիզացիայի սովորեցման, հարվածայնության ծավալման, բանվորների նյութական, կենցաղային դրության բարելավման մասին։

Խորհուրդների սեկցիաների, պատգամավորական խմբակների միջոցով աշխատավորների միլիոնավոր մասսաները մասնակցում են մեր յերկրի կառավարմանը։

Խորհուրդներն իրենց աշխատանքներում լայն կերպով ներգրավում են բանվորուհիներին և գեղջկուհիներին։

Խորհուրդների աշխատանքներին ակտիվ կերպով մասնակցող և խորհրդային իշխանության տարբեր օրգաններում ղեկավար աշխատանքի առաջ քաշված աշխատավոր կանանց թվի աճումը։ Յեկեղեցու ու հոգևորականների պայքարը՝ կանանց հասարակական ակտիվ աշխատանքի ներգրավելու դեմ. Խորհուրդների աշխատանքները խանգարող դասակարգային թշնամիների դեմ պայքարելու համար խորհուրդներն իրենց աշխատանքներում ավելի լայն կերպով պետք է ներգրավեն աշխատավորներին և նրանց առաջ քաշեն ղեկավար աշխատանքի, վճռականորեն պայքարեն բյուրոկրատիզմի դեմ և ծավալեն ինքնաքննադատությունը։

Խորհուրդների աշխատանքը ղեկավարում է կոմունիստների — բոլշևիկների կուսակցությունը։ Ուրիշ յերկրներում բանվորներն ու գյուղացիները հեղափոխական պայքար են մղում Խորհրդային իշխանություն հաստատելու համար։ Այժմ, բացի ԽՍՀՄ, գոյություն ունեն խորհուրդներ Չինաստանի զանազան մասերում, վորոնք (խորհուրդները) չինական կոմկուսի ղեկավարությամբ հերոսական պայքար են տանում կապիտալիստների և կալվածատերերի դեմ.

Աշխատանքի ձևերը յեվ մեթոդները

Էքսկուրսիա դեպի գյուղխորհուրդ, կամ քաղխորհուրդ ու նրա սեկցիաները, կամ ձեռնարկության պատգամավորական խմբակը։ Խորհրդի կամ նրա սեկցիաների նախագահի կամ անդամների զրույցը յերեխաների հետ՝ «Խորհրդի խնդիրները և աշխատանքները» նյութի մասին.

Գեղարվեստական գրականության հատվածների ընթերցում (թեմաները՝ դասակարգային պայքարը խորհուրդների շուրջը, կնոջ աշխատանքը խորհրդում, ցարական Ռուսաստանում ճնշված ազգաբնակչությունների, հատկապես անդրկովկասյան ժողովուրդների կյանքը և այլն)։

Շրջանային լրագրի, ձեռնարկության բազմատիրաժ թերթի «Պիոներ կանչ»-ի, «Պիոներ ղեկ»-ի ընթերցում (խորհուրդների աշխատանքներին վերաբերող հոդվածներ)։

Մեր պարբերականներում, շաբաթաթերթերում, ամսագրերում զետեղված համապատասխան նյութերի շուրջը զրույց։ Տանից՝ յերեխաների կողմից բերված նկարներից կազմել ալբոմ, հետևյալ թեմայի շուրջը — «Մեր

շրջանի, Խորհրդային Հայաստանի, Անդրկովկասի, ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարությունը և կուլտուրական նվաճումները»։

Վերջին ընտրությունների ժամանակ դպրոցի կողմից պատգամավորներին տրված նակազի կատարման ստուգումը խմբի կողմից։

Խորհրդին և նրա ժողովրդական կրթության սեկցիային ներկայացնելու համար ռապորտ պատրաստել դպրոցի 4-րդ խմբերի աշխատանքների, ուսման վիճակի մասին։ Գեղարվեստորեն ձևավորված արտահայտել խորհրդի աշխատանքների ցուցանիշները։ Կապ հաստատել, համապատասխան նյութերի փոխանակում կատարել այլ ազգության վորևե դպրոցի հետ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Ուսուցչի պատմումը և դասագրքի ընթերցումը, վորպես բոլոր թեմաների համար ընդհանուր աշխատանքի ձևեր, հետագայում այլևս առանձնապես չեն մատնանշվելու։

ԽՍՀՄ բոլոր ազգությունների աշխատավորների յեղբայրական դաշինքն ե կապիտալիստների դեմ պայքարելու յեվ սոցիալիզմ կառուցելու համար *(8ժամ)*.— Բոլոր ազգությունների իրավահավասարությունը։ Տվյալ ազգության, քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքի ղեկավարման գործին յուրաքանչյուր ազգության աշխատավորներին ներգրավելը։

Յուրաքանչյուր ազգության դպրոցում և հիմնարկներում մայրենի լեզվով դասավանդում ու գործավարություն։

Խորհրդային իշխանության ոգնությունը ցարական իշխանության ժամանակ ճնշված ազգություններին — հզոր գործարաններ կառուցելու, կոլխոզային շինարարության և ազգային շրջանների կուլտուրական հետամնացության վերացման գործում։

Անդրկովկասի և հատկապես Հայաստանի որինակով ցույց տալ, թե ինչպիսի հսկայական տնտեսական և կուլտուրական նվաճումներ ունի ցարական այդ նախկին գաղութ և կուլտուրապես հետամնաց յերկիրը։

Գյուղխորհուրդը և քաղխորհուրդը վորպես խորհրդային իշխանության տորին որգանները գյուղում և քաղաքում.

Իշխանության բարձրագույն որգանը շրջանում հանդիսանում ե խորհուրդների շրջանային համագումարը։ Այդտեղ են լուծվում շրջանին վերաբերող բոլոր գլխավոր հարցերը, իսկ մշտական աշխատանքի համար ընտրվում ե շրջանային գործադիր կոմիտե։

Շրջանները միանում և կազմում են մարզեր կամ յերկրներ (այն հանրապետություններում, վորտեղ դրանք կան. մեզ մոտ շրջաններն անմիջապես միանում և կազմում են հանրապետությունը)։ Իշխանության բարձրագույն որգանը մարզում կամ յերկրում հանդիսանում ե խորհուրդների մարզային կամ յերկրային համագումարը։ Այդտեղ են լուծվում մարզին կամ յերկրին վերաբերող բոլոր գլխավոր հարցերը, իսկ մշտական աշխատանքի համար ընտրվում ե մարզային (յերկրային) գործադիր կոմիտե։

Յուրաքանչյուր հանրապետության բարձրագույն որգանը հանդիսանում ե խորհուրդների հանրապետական համագումարը։ այդտեղ են լուծվում տվյալ հանրապետությանը վերաբերող բոլոր հարցերը։

Խորհուրդների յերկու համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում հանրապետության մեջ բարձրագույն մարմինը հանդիսանում ե Կենտրոնական Գործադիր Կոմիտեն (Կենտգործկոմ), վորն ընտրվում ե խորհուրդների հանրապետական համագումարի կողմից։

Սոցիալիստական շինարարության տարբեր բնագավառները կառավարելու համար Կենտգործկոմը կազմակերպում ե զանազան ժողկոմատներ, ինչպես, որինակ՝ Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատը, վոր կառավարում ե բոլոր դպրոցները և այլ կուլտուր-կրթական հիմնարկները, նրանց համար պատրաստում ե ուսուցիչներ, կազմում ե ծրագրեր և այլն։

Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատ, վոր հոգ ե տանում գյուղատնտեսության կոլեկտիվացման, նրա բերքատվության բարձրացման, կոլխոզներին ու մենատնտես գյուղացիներին մեքենաներ, գյուղատնտեսական գործիքներ, պարարտանյութեր մատակարարելու մասին։

Յուրաքանչյուր կոմիսարիատ գլխավորում ե Կենտգործկոմի կողմից նշանակված ժողովրդական կոմիսարը (ժողկոմ)։

Բոլոր ժողովրդական կոմիսարները միասին կազմում են ժողովրդական կոմիսարների խորհուրդը (Ժողկոմխորհ)՝ Ժողկոմխորհի նախագահի գլխավորությամբ։ Ժողկոմխորհը տանում ե հանրապետության կառավարման հետ կապված ընթացիկ աշխատանքները։

Մեր յերկրի բոլոր հանրապետությունները միանում և կազմում են Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (ԽՍՀՄ)։ ԽՍՀՄ-ում իշխանության գերագույն մարմինը հանդիսանում ե ԽՍՀՄ-ի խորհուրդների համագումարը։ Այդտեղ են լուծվում վողջ միությանը վերաբերող գլխավոր հարցերը։

ԽՍՀՄ-ի խորհուրդների համագումարի միջև ընկած ժամանակաշրջանում Միության բարձրագույն որգանը հանդիսանում ե ԽՍՀՄ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն։ ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի նախագահն ե ընկ. Կալինինը։

Վողջ Խորհրդային Միության սոցիալիստական շինարարության տարբեր բնագավառները կառավարելու համար ԽՍՀՄ-ի Կենտգործկոմը կազմակերպում ե տարբեր ժողկոմատներ։ Որինակ՝ ռազմական և ծովային գործերի կոմիսարիատ։ Նա յե կառավարում մեր յերկրի զինյալ ուժերը, հոգ ե տանում մեր յերկրի պաշտպանության ամրապնդման մասին։

Ռազմական և Ծովային Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը գլխավորում ե ընկ. Վորոշիլովը։

ԽՍՀՄ-ի բոլոր Ժողովրդական Կոմիսարները միասին կազմում են ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհը, վորը տանում ե ԽՍՀՄ-ը կառավարելու հետ կապված վողջ ընթացիկ աշխատանքը։

ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի նախագահն ե ընկ. Մոլոտովը։

Աշխատանքի մեթոդները յեվ ձևերը

Ուսուցչի զրույցը։ ԽՍՀՄ-ի քաղաքական քարտեզի ուսումնասիրությունը։

Խորհրդային սահմանադրության սխեմայի վերլուծությունը։

Ծանոթանալ ԽՍՀՄ-ի և Խորհ. Հայաստանի խորհուրդների վերջին համագումարի կամ Կենտգործկոմի վերջին նստաշրջանի աշխատանքներին։

2. ՄԵՆՔ ՍՈՑԻԱԼԻԶՄ ԵՆՔ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Մեր խնդիրն է՝ կառուցել այնպիսի հասարակություն, վորտեղ չի լինի մարդու ճնշումն ու շահագործումը մարդու կողմից, մի հասարակություն, վորտեղ չեն լինի դասակարգեր։ Մեր խնդիրն է՝ բոլոր աշխատավորներին դարձնել սոցիալիստական հասարակության գիտակից և ակտիվ կառուցողներ։

Խորհրդային Միության բանվոր դասակարգը, դաշնակցած աշխատավորների բազմամիլիոն մասսաների հետ, Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, ինքն իր ուժերով կառուցում է այդ նոր կյանքը, նոր հասարակությունը։ Նոր հասարակության կառուցումը մեծ և բարդ գործ է, այն պետք է կազմակերպել, տանել ընդհանուր պլանով, այն պետք է ղեկավարել։

Մենք սոցիալիզմը կառուցում ենք միասնական պլանով, վոր ընդգրկում է ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառները՝ ճիշտ կերպով հաշվի առնելով դրանցից յուրաքանչյուրի խնդիրները։ Պլանը հասցված է մինչև յուրաքանչյուր գործարան, յուրաքանչյուր կոլտնտեսություն։ Միայն ԽՍՀՄ-ում է հնարավոր պլանային տնտեսությունը, վորովհետև արտադրության բոլոր գլխավոր միջոցներն ու գործիքները պատկանում են խորհրդային պետությանը։

Գոէլրո (էլեկտրիֆիկացիայի գլխավոր պլանը) մեր ժողովրդական տնտեսության առաջին պլանն է, վորն ստեղծվել է Լենինի ղեկավարությամբ։ Առաջին հնգամյա պլանի ստեղծումը՝ կուսակցության Կենտկոմի և կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավարությամբ։ Այդ պլանի հիմնական խնդիրները — ԽՍՀՄ-ի ինդուստրացումը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը։

Մեր յերկրում դեռ կան շահագործող դասակարգերի ու դրանց գործակալների մնացորդներ — կուլակներ, նախկին կալվածատերեր, կապիտալիստներ, սպաներ, տերտերներ, վոստիկաններ, մանր առևտրականներ, վորոնք ամեն կերպ աշխատում են խանգարել սոցիալիստական շինարարության մեծ գործը, դիմադրում, վնասում են բանվոր դասակարգի գործին։ Պետք է ճնշել դրանց դիմադրությունը. պայքարել վնասարարության ամեն մի փորձի դեմ։

Խորհրդային Միությունը շրջապատված է կապիտալիստական յերկրներով։ Բուրժուական կառավարությունները հարձակում են պատրաստում խորհուրդների յերկրի վրա, պետք է Խորհրդային Միությունը պաշտպանել տարբերկրյա կապիտալիստների հարձակումներից։

3. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄ (22 ժամ)

Առաջին հնգամյակի խնդիրները ինդուստրացման ասպարեզում (6 ժամ). — Մեքենաները հեշտացնում են մարդու աշխատանքը, մեքենայացրած աշխատանքը տալիս է աշխատանքի շատ ավելի բարձր արտադրողականություն, քան ձեռքի աշխատանքը։

Գործարաններում, գյուղատնտեսության մեջ մեքենայացրած աշխատանքին անցնելն ապահովելու համար, անհրաժեշտ է կազմակերպել մեքենաների արտադրությունը (արտադրության միջոցների արտադրություն)։ Մեքենաների արտադրությունը պահանջում է մեծ քանակությամբ մետաղ, պահանջում է մեծ քանակի մետաղահանք և ածուխ, վորի միջոցով մետաղահանքը հալվում, մետաղ է դառնում (թուջ, յերկաթ, պողպատ)։

Մեքենաներ կառուցող, հանք, ածուխ, նավթ հանող գործարաններն ու ձեռնարկները կազմում են արդյունաբերության առանձին ճյուղ, այսպես կոչված՝ ծանր արդյունաբերություն կամ ծանր ինդուստրիա։

Առաջ մեքենաների մեծամասնությունը մեզ մոտ ներմուծվում էր արտասահմանից։ Առաջին հնգամյակի խնդիրն այն էր, վորպեսզի մեզ մոտ կառուցվեն մեքենաներ արտադրող նոր գործարաններ և դրանով հնարավոր լինի ազատագրվել տարբերկրյա կապիտալիստներից մեր ունեցած կախումից, ավելացնել նավթի, ածխի և յերկաթահանքի հանույթը, յերկրին տալ գործարանների համար մեքենաներ, վորոնք պատրաստում են լայն գործածության առարկաներ (անկվածային, տպագրական մեքենաներ և այլն), կոլխոզային դաշտերին տալ տրակտորներ և այլ մեքենաներ, տրանսպորտի համար տալ ռելսեր, շոգեկառքեր, ավտոմոբիլներ, Կարմիր բանակի և նավատորմիղի համար տալ զենք և այլն։

Մեր նվաճումները (16 ժամ). — Առաջին հնգամյակում ընկ. Ստալինի նախաձեռնությամբ ստեղծված է նոր ածխա-մետաղաձուլական բազա — Ուրալ-կուզնեցյան կոմբինատը։ Կառուցված և գործարկված են նոր խոշոր գործարաններ — Ստալինգրադի և Խարկովի տրակտորային գործարանները, Ռոստովի գյուղատնտեսական մեքենաների գործարանը, Սարատովի կոմբայնների գործարանը և բազմաթիվ այլ գործարաններ։ Այդ բոլորի հետևանքով մենք գրավեցինք յերկրորդ տեղը թջի համաշխարհային արտադրության և մեքենաշինարարության մեջ։ Ընդարձակված է քարածխի հանույթը Դոնբասում և Մերձմոսկովյան շրջանում։

Խոշոր հետախուզական աշխատանքներ են կատարված քարածխային նոր շրջաններ հայտաբերելու համար (Կարագանդա)։ Ածխի ասպարեզում նույնպես մենք ուժեղ կերպով առաջ ենք գնացել — համաշխարհային հանույթի մեջ 6-րդ տեղից 2-րդ տեղն անցնելով։

Անդրկովկասի և Հայաստանի նվաճումները ինդուստրացման բնագավառում։ Քիմիական, տեքստիլ արդյունաբերության և այլ ճյուղերի ստեղծումն ու զարգացումը Հայաստանում։

Առաջին հնգամյակում կառուցված են բազմաթիվ էլեկտրոկայաններ, դրանցից ամենախոշորն է Դնեպրոգեսը։ Անդրկովկասի և Հայաստանի էլեկտրիֆիկացիան՝ Զագես, Ռիոնգես, Ձորագես, Քանաքեռգես, Սևան-Զանգվի պրոբլեմը։

Առաջին հնգամյակում կառուցվել են նոր ավտոմոբիլային գործարաններ, — Գորկիի ավտոգործարանը, Մոսկվայի՝ ընկ. Ստալինի անվան գործարանը։ Նոր յերկաթուղիների կառուցումը, Թուրքսիբ, խճուղային ճանապարհների կառուցում ու բարելավում։ Ոդային հաղորդակցության զարգացում։

Խորհուրդների յերկիրը հաջողությամբ ավարտեց մեր յերկրի ինդուստրացման ծրագիրը, շնորհիվ աշխատավորական լայն մասսաների հերոսական աշխատանքի ու ենտուզիազմի։

Սոցիալիզմի կառուցման հարվածայինների պատկերներ։

Խորհրդային իշխանության հոգացողությունը — բանվորների ու աշխատավորների նյութական-կենցաղային դրության բարելավման և կուլտուրական մակարդակի բարձրացման մասին։

7-ժամյա բանվորական օր, գործազրկության վերացում, բնակարանային շինարարություն։ Հին արդյունաբերական քաղաքներում բանվորական ծայրամասերի, ինչպես և նոր կառուցվող քաղաքների ու բանվորական ավանների բարեկարգում։

Կուլտուրայի պալատների, թատրոնների, ակումբների, դպրոցների կառուցում։ Սոցապ, հանգստյան տներ, սանատորիաներ և այլն։

Աշխատանքի մեթոդները յեվ ձևերը

Ուսուցչի զրույցը։ Աշխարհագրական քարտեզի վրա ցույց տալ նորակառույցները և նոր արդյունաբերական շրջանները։

Սոցիալիստական շինարարության ասպարեզում բանվորական մասսաների, բանվորական յերիտասարդության հերոսական պայքարի մասին պատմող գեղարվեստական հատվածների ընթերցում։

Կազմել առաջին հնգամյակի պատկերազարդ ալբոմ-ժուռնալ։ Եքսկուրսիա կազմակերպել իր քաղաքում, շրջանում դիտելու հնգամյակի ընթացքում այդտեղ կատարված փոփոխությունները։ Եքսկուրսիա տեղական-գավառագիտական թանգարանը։ Դպրոցում, ձեռնարկության ակումբում, կազմակերպել հարվածայինի անկյուն։ Կազմել հանրապետության և ԽՍՀՄ-ի ինդուստրացման քարտեզը (այդտեղ նշանակել նորակառույցների պայմանական նշանները)։

Դպրոցի համար պատրաստել համապատասխան դիապոզիտիվներ։

4։ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ (26 ժ.)

Կոլեկտիվացումը գյուղատնտեսության զարգացման սոցիալիստական ուղին է *(6 ժամ).—Մանր մենատնտես գյուղացիական տնտեսության հետամնացությունն իր կտոր-կտոր արած հողամասերով, սահմաններով, հեռու ընկած հողամասերով, ցարական իշխանության ժամանակից ժառանգած աշխատանքի պարզունակ գործիքներով։*

Մանր մենատնտես գյուղացիական տնտեսությունների ցածր բերքատվությունը։ Մանր գյուղացիական տնտեսության մեջ մեքենաների, գիտության ու տեխնիկայի նվաճումների օգտագործման անհնարությունը։

Կուլակի աճումը մանր գյուղացի-սեփականատիրոջից, վորը շահագործում է գյուղական չքավորությանն ու միջակներին։ Մանր անհատական գյուղացիական տնտեսությունն արգելակում է արդյունաբերության հետագա զարգացումը։ Սոցիալիզմի հաջող կառուցման համար անհրաժեշտ է, վոր արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը զարգանան միևնույն սոցիալիստական ուղիով։ Լենինի կոոպերատիվ պլանը մանր սեփականատիրական գյուղացիական տնտեսության սոցիալիստական վերափոխման ուղին է, վոր տանում է դեպի վողջ ժողովրդական տնտեսության

արտադրողականության վերելքը, դեպի կուլակության, վորպես դասակարգի, լիկվիդացիան։ Գյուղատնտեսության կոլեկտիվացումը հանդիսանում է գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման լենինյան պլանի կատարումը։

Միայն կոլեկտիվ աշխատանքով, ընդհանուր սեփականություն հանդիսացող հողի վրա չի կարելի բարձրացնել գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականությունը, հասնել բարձր բերքատվության, լայն կերպով կիրառել տրակտորներ, կոմբայններ և այլ խոշոր գյուղատնտեսական մեքենաներ, վորոնք հեշտացնում են մարդու աշխատանքը, միայն այդ ձևով կարելի չի բարելավել գյուղացիության նյութական դրությունը։

Միայն սոցիալիստական գյուղատնտեսության մեջ է հնարավոր պլանային աշխատանքը՝ չոր և անբերրի հողերի վոռոգման, ճահիճների չորացման, արհեստական պարարտացման և նոր հողամասերի օգտագործման բնագավառում։

Միայն սոցիալիստական տնտեսության մեջ է հնարավոր տնտեսական շրջանների մասնագիտացումը (Միջին Ասիան, Անդրկովկասը՝ բամբակ, Ուկրայինան՝ ճակնդեղ, Արևմտյան մարզը՝ վուշ և այլն)։

Անասնաբուծության, տեխնիկական կուլտուրաների, հացահատիկային տնտեսության լայն զարգացումը հնարավոր է միայն խորհտնտեսային ու կոլտնտեսային շինարարության միջոցով։

Կոլեկտիվ տնտեսությունը միջակ ու չքավոր գյուղացուն ազատում է կուլակային ստրկությունից, բարելավում է կոլխոզնիկի նյութական դրությունը, բարձրացնում է նրա կուլտուրական մակարդակը։ Կոլեկտիվացումը վոչնչացնում է կապիտալիզմի արմատները գյուղում, վոչնչացնում է կուլակությունը, վորպես դասակարգ։ Հին կարգերը տանում եյին հետ-դեպի կուլակային-կապիտալիստական իրավակարգ, նոր, կոլխոզային կարգերը տանում են դեպի սոցիալիզմ։ Յերրորդ ուղի չկա։

Շնորհիվ կոմունիստական կուսակցության և նրա առաջնորդ ընկ. Ստալինի ղեկավարության, բանվորական պետության ոգնության և արդյունաբերության բուռն աճման՝ առաջին հնգամյակում կոլեկտիվացված է գյուղացիական տնտեսությունների 60 տոկոսից ավելին, ստեղծված են 5000 խոշոր հացահատիկային և անասնաբուծական խորհտնտեսություն և 2446 ՄՏԿ։ Գյուղը վճռաբար ու անվերադարձ կանգնել է սոցիալիստական զարգացման ուղու վրա։

Կապիտալիստական յերկրներում գյուղատնտեսությունը չի կարող զարգանալ, վորպես խոշոր կոլեկտիվ տնտեսություն, վորովհետև այնտեղ հողը պատկանում է առանձին կալվածատերերի ու կապիտալիստների, վորոնք միայն իրենց տնտեսության մասին են մտածում։ Կապիտալիստական գյուղատնտեսությունը հենված է չքավորների ու միջակների շահագործման վրա։

Խորհտնտեսություններ յեվ ՄՏԿ. (2 ժամ).*— Խորհտնտեսությունները պետական, սոցիալիստական ձեռնարկություններ են։*

Խորհտնտեսությունները, վորպես սոցիալիստական յերկրագործության խոշորագույն գործարաններ, և ՄՏԿ-ը հանդիսանում են գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, կոլխոզնիկների վրա խորհրդային ազդեցության ուժեղացման լծակներ։

Խորհտնտեսություններում և ՄՏԿ-ում քաղբաժինների կազմակերպումը: Քաղբաժինների խնդիրները:

Խորհտնտեսությունների և ՄՏԿ-ի աշխատանքի կազմակերպման օրինակներ:

Խորհտնտեսությունների և ՄՏԿ-ի լավագույն հարվածայինների ու աշխատանքի հերոսների օրինակներ:

Կոլտնտեսություններ (8 ժամ). — Կոլտնտեսությունների տարբերությունը խորհտնտեսությունից: Կոլտնտեսությունները որպես գյուղացիների կամավոր միավորումներ: Կոլտնտեսություն ընդունվում են բոլոր աշխատավորները: Կոլտնտեսություն չեն ընդունվում կուլակները, ձայնազուրկները, տերտերները և այլն: Կոլտնտեսության մեջ շահագործման բացակայությունը և նրանց արտադրության սոցիալիստական բնույթը: Կոլտնտեսությունների պարտավորությունները պետության հանդեպ՝ հաց և գյուղատնտեսական այլ մթերքներ հանձնելու խնդրում:

Կոլխոզները հանդիսանում են Խորհրդային իշխանության հաստատուն հենարանները գյուղում:

Կոլխոզային սեփականությունը հանդիսանում է հանրային (սոցիալիստական) սեփականություն. այն սրբազան և անձեռնմխելի է: Կոլտնտեսությունների տիպերը, ըստ արտադրության միջոցների ու գործիքների համայնացման աստիճանի, — հողգործական ընկերություններ (Տոզ), արտել, կոմունա: Տվյալ շրջանում արտելը հանդիսանում է կոլտնտեսության հիմնական ձևը:

Արտելում համայնացած են և ընդհանուրի սեփականությունն են հանդիսանում գյուղատնտեսական մեքենաները և գործիքները, բանող անասունները, տնտեսական շենքերը. կոլխոզում հողը միասին են մշակում: Կոլխոզնիկների ոժանդակ տնտեսության անհրաժեշտությունն ու նշանակությունը, — կով, բանջարանոց, մանր անասուններ, թռչուն և այլն: Յուրաքանչյուր կոլխոզային ընտանիք պետք է ունենա ոժանդակ տնտեսություն: Առաջին հնգամյակի ընթացքում ոչնչացված է կուլակային շահագործումն ու ստրկությունը, կոլխոզ ներգրավված չքավորները բարձրացել են միջակների մակարդակին, որոնք կարող են օգտվել կոլխոզային հողով, կոլխոզներին տրամադրվող արտոնություններով, տրակտորներով, գյուղատնտեսական մեքենաներով: «Այդ միայն առաջին քայլն է, մեր առաջին նվաճումը կոլխոզային շինարարության ուղու վրա: Յերկրորդ քայլն այն է որպեսզի կոլխոզնիկներին և նախկին չքավորներին ու նախկին միջակներին էլ ավելի բարձրացնենք: Այդ կայանում է նրանում, որպեսզի բոլոր կոլխոզնիկներին ունևոր դարձնենք» (Ստալին): Իսկ դրա համար այժմ պահանջվում է միայն աշխատել ծրագրված և կազմակերպված, բարեխղճորեն, պայքարել կուլակների, լոդըրների դեմ, պահպանել կոլխոզային սեփականությունը:

Աշխատանքի սոցիալիստական ձևերի զարգացումը կոլխոզում — սոցմրցում, հարվածայնություն, հանդիպական պլան: Կոլխոզնիկների ակտիվ մասնակցությունը սոցիալիստական շինարարությանը: Լավագույն կոլտնտեսությունների աշխատանքի օրինակելի կազմակերպվածություն, լավագույն հարվածային — աշխատանքի հերոս կոլխոզնիկների օրինակներ:

Կոլտնտեսությունների կազմակերպչական տնտեսական ամրապնդումը հանդիսանում է կոլխոզային շինարարության կենտրոնական խնդիրը (4 ժամ). — Աշխատանքի ճիշտ և կանոնավոր կազմակերպումը կոլխոզում. բրիգադներ, սոցմրցում, հարվածայնություն, գործարք, պայքար դիմազրկության դեմ և այլն: Հանրային սեփականության պաշտպանությունը: Պայքար աշխատանքային դիսցիպլինայի, դեպի կոլխոզային ունեցվածքը հոգատար վերաբերմունքի համար: Պայքար մթերքների հափշտակման, մեքենաների, գործիքների և բանող անասունների փչացման դեմ: Կոլխոզնիկների աշխատանքի հաշվառում: Աշխօրեր: Կոլխոզնիկների յեկամուտները կապված են իրենց կոլխոզի յեկամտի և իրենց սեփական աշխատանքի քանակի ու որակի հետ: Ով շատ և լավ է աշխատում, նա ավելի է ստանում: Աշխատանքի պաշտպանություն կոլխոզում, հատկապես յերեխաների աշխատանքի պաշտպանություն: Կոլխոզում բարձրագույն վճռական մարմինը հանդիսանում է կոլխոզնիկների ընդհանուր ժողովը: Մշտական ղեկավար մարմինը հանդիսանում է կոլտնտեսության վարչությունը, որ ընտրվում է կոլխոզնիկների ընդհանուր ժողովում:

Գյուղատնտեսական սոցիալիստական վերակառուցումը տեղի յե ունենում դասակարգային կատաղի պայքարի պայմաններում (4 ժամ). — Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը չքավորներին ու միջակներին ազատում է կուլակային շահագործումից: Համատարած կոլեկտիվացման շրջաններում կուլակությունը, որպես դասակարգ, արդեն վերացված է: Կուլակներից խլված են հողը, գյուղատնտեսական իրվենտարը, անասունները և հանձնված են կոլխոզներին: Կուլակային տները հատկացված են դըպրոցներին, ակումբներին, խրճիթ-ընթերցարաններին: Կուլակներն արտաքսվում են համատարած կոլեկտիվացման շրջաններից: Այս պատճառով էլ կուլակներն ու նրանց պաշտպանող հոգևորականությունը (բոլոր կրոնների) կատաղի կերպով դիմադրում են խորհտնտեսային և կոլտնտեսային շինարարությանը:

Կուլակները և կենթակուլակները սպառնալիքների, հրկիզումների, ակտիվ կոլխոզնիկների սպանության, կոլխոզային գույքի հափշտակման միջոցով բացահայտ կերպով վնասում եյին կոլտնտեսություններին: Այժմ նրանք պայքարի այլ մեթոդներ են կիրառում — որևէ ձևով՝ խաբելով կոլխոզ են խցկվում և աշխատում են կոլխոզները ներսից քայքայել. — թաքցնում են կոլխոզային հացը, հափշտակում են հասարակական ունեցվածքը. Խորհրդային իշխանությունից թաքցնում են կոլխոզի յեկամուտները, խառնում են առանձին կոլխոզների կատարած աշխատանքի ու ստանալիքի հաշիվները, որպեսզի կոլխոզնիկների մեջ դժգոհություն ու դժկամություն առաջացնեն: Փչացնում են մեքենաները, կոլխոզնիկներին դրդում են իրանց պարտավորությունները չկատարել խորհրդային պետության հանդեպ:

Կուլակությունը հիմնական, վճռական շրջաններում, որպես դասակարգ վերացված է, բայց վերջնականապես դեռ չի ոչնչացված:

Անհրաժեշտ է վճռական պայքար կուլակների ու կենթակուլակների կոլխոզների սրբազան և անձեռնմխելի սեփականությունը հափշտակողների դեմ:

Անհրաժեշտ է պայքարել կոլխոզնիկների տնտեսության ու գիտակցու-

թյան մեջ գոյություն ունեցող կապիտալիզմի մնացորդների դեմ և դաստիարակել նրանց, վորպես սոցիալիստական հասարակության գիտակից և ակտիվ կառուցողների։

Կոլխոզային առեվտուր (2 *ժամ*).—Կոլխոզային առևտուրը նպաստում է քաղաքի և գյուղի աշխատավորական լայն մասսաների մատակարարման բարելավմանը։ Կոլխոզների կողմից իրենց արտադրանքի ավելցուկի վաճառքը լրացուցիչ չեկամուտ է հանդիսանում կոլտնտեսությունների և կոլտնտեսականների համար։ Կոլխոզային առևտուրն ամրացնում է գյուղի և քաղաքի, կոլտնտեսությունների և գործարանների շաղկապը։

Կոլխոզային առևտուրն ուժեղացնելու համար կուսակցությունը և Խորհրդային իշխանությունն իջեցրել են հացամթերումների պլանը և ճշտիվ կերպով սահմանել են, թե կոլտնտեսություններն իրենց արտադրանքից ինչ քանակի հաց և գյուղատնտեսական այլ մթերքներ պարտավոր են հանձնել պետությանը։ Վորպեսզի կոլտնտեսություններն ու կոլտնտեսականներն իրավունք ունենան իրենց արտադրանքի ավելցուկները վաճառելու, նրանք անպայման պետք է նախորոք կատարեն պետական մթերումների պլանը։ Անհրաժեշտ է վճռական պայքար կոլխոզային առևտուրը խանգարող սպեկուլյանտների դեմ։ Անհրաժեշտ է մեծ դաստիարակչական աշխատանք տանել կոլխոզնիկների մեջ՝ կոլխոզային շուկայի գների խորհրդային քաղաքականությունն իրականացնելու համար։

Աշխատանքի մեթոդները յեվ ձևերը

Կազմակերպել պատկերների խմբակ՝ տեղական նյութերը հավաքելու համար։ Հրատարակել բյուլետեն, վորն անդրադարձնի աշխատանքի դրությունը շրջանում և դասակարգային պայքարի փաստերը։

Քաղաքում.—էքսկուրսիա ձեռնարկության չեֆ բազան. նպատակը—ծանոթանալ ձեռնարկության տարած աշխատանքին՝ գյուղում և ձևակերպել դպրոցի Ա խմբի պարտականությունները, անելիքները շեֆական աշխատանքի գծով։

Գյուղում.—էքսկուրսիա ՄՏԿ, խորհտնտեսություն, կոլտնտեսություն (էքսկուրսիայի թեման՝ գյուղատնտեսության զինվածությունը մեքենաներով, աշխատանքի կազմակերպումը կոլխոզում)։ Մշակած նյութի ցուցահանդես (պլակատներ, քարտեզներ, աղյուսակներ)՝ աշակերտների զեկուցումներով։ Կոլխոզում կազմակերպել հարվածային անկյուն։ Զրույց։ Ուսուցչի պատմումը։

5. ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ (5 *ժամ*)

Ընդհանուր տարրական ուսուցման իրականացումը։ Ընկ. Ստալինը պարտադիր տարրական ուսուցման մասին (16-րդ համագումարի զեկուցումը)։ Ընդհանուր 7-ամյա ուսուցման իրականացումն արդյունաբերական կենտրոններում։ 10-ամյա պոլիտեխնիկական դպրոցների ցանցի ծավալումը։ Զափահաս ազգաբնակության անգրագիտության վերացման խնդիրը։ Մսուրների, մանկապարտեզների, ակումբների, գրադարանների աճումը։

Տեխնիկումների, բուհերի ցանցի աճումը։ Տեխնիկային տիրապետելու խնդիրը և տեխնիկական պրոպագանդը չափահասների և յերեխաների մեջ (մանկական տեխնիկական կայաններ)։ Քաղաքական լուսավորություն։ Պայքար կրոնի և հին կենցաղի դեմ։ Կուլտուրայի զարգացման արագ տեմպերը, ազգային շրջաններում և հանրապետություններում։ Պարտուսը, անգրագիտության վերացումը Խորհրդային Հայաստանում, նախադպրոցական կրթություն, բանֆակներ, տեխնիկումներ, բուհեր։ Այս բոլորը համեմատել անցյալի հետ։

Աշխատանքի մեթոդները յեվ ձևերը

Պատրաստել պլակատ հետևյալ թեմայով. «Կուլտուրան մեր շրջանում, հանրապետության մեջ՝ հեղափոխությունից առաջ և հիմա»։ Էքսկուրսիա կազմակերպել դեպի հետևյալ կուլտուրական հիմնարկներից մեկը—օրինակելի բանվորական ակումբ, օրինակելի խրճիթ ընթերցարան, մանկամսուր, մանկապարտեզ, կոլխոզի հասարակական ճաշարան և այլն։ 1-ին աստիճանի դպրոցի աշխատանքի ստուգատեսի կազմակերպումը հետևյալ ուղղություններով. 1) ուսման վորակը և դիսցիպլինան, 2) խմբակների աշխատանքը, 3) հասարակական աշխատանքը։ Լույս ընծայել բյուլետեն՝ նվիրված ստուգատեսի արդյունքներին։ Հակակրոնական յերեկույթի կազմակերպում. պատանի անաստվածների խմբակի կազմակերպում։

6. ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Հնգամյակի կատարումը 4 տարում.—ԽՍՀՄ-ն ագրարային յերկրից դարձել է արդյունաբերական։ Կապիտալիստական յերկրներից ԽՍՀՄ-ի տնտեսական կախվածության թուլացումը և մեր յերկրի պաշտպանունակության ամրացումը։ Ազգային շրջանների ինդուստրացումը (բերել Խորհրդային Հայաստանի օրինակը)։ Գյուղատնտեսության կոլեկտիվացումը։ Կուլակության, վորպես դասակարգի, վերացումը։ Առաջին հնգամյակը նոր գործարանների, խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների շինարարության հնգամյակն է։ Բանվորների և կոլխոզային մասսաների նյութական դրության և կուլտուրական մակարդակի բարձրացումը, գործազրկության վերացումը, բանվոր դասակարգի թվական աճումը, 7-ժամյա բանվորական օրվա անցնելը։

Հիմնական հանրագումարները.—կառուցված է սոցիալիստական էկոնոմիկայի ֆունդամենտը, ապահովված է սոցիալիզմի լիակատար հաղթանակը ԽՍՀՄ-ում։

Հնգամյակի հաջող կատարումը 4 տարում հետևանք է ընկ. Ստալինի գլխավորությամբ կոմունիստական կուսակցության ղեկավարության և աշխատավոր մասսաների հերոսական աշխատանքի։

Ընկ. Ստալինի,—լավագույն լենինիստի, բոլշևիկյան կուսակցության առաջնորդի, բոլոր աշխատավորների առաջնորդի դերը սոցիալիստական արդյունաբերության ստեղծման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, առաջին հնգամյակի հաղթանակների և նվաճումների ապահովման գործում։

7. ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (8 ժամ)

Ավարտել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական վերակառուցումը և վերջնականապես վերացնել դասակարգերը՝ — բոլոր աշխատավորներին դարձնելով սոցիալիստական հասարակության գիտակից և ակտիվ կառուցողներ: Յերկրորդ հնգամյակը գերազանցորեն արդյունաբերական նոր ձեռնարկների յուրացման և կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների կազմակերպչական տնտեսական ամրապնդման հնգամյակ ե: Ուշադրության կենտրոնը պիտի լինեն՝ արտադրողականության բարձրացումը, արտադրանքի վորակի լավացումը, գյուղատնտեսական աշխատանքի վորակի բարձրացումը, բերքատվության բարձրացումը: Արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ նոր տեխնիկայի յուրացումն ե հանդիսանում կարևորագույն խնդիրը: Ամբողջովին ազատագրվել կապիտալիստական յերկրներից ունեցած տնտեսական կախումից: Լայնացնել թեթև արդյունաբերությունն այնպես, վոր աշխատավորների մատակարարումը լայն սպառման առարկաներով ավելանա յերկու յերեք անգամ՝ համեմատած առաջին հնգամյակի վերջի հետ: Վերացնել ազգային հանրապետությունների ու շրջանների հետ մնալը:

8. ՅԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ — ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ (10 ժամ)

Խորհուրդների յերկրում. — *Թե արդյունաբերության, թե գյուղատնտեսության աճող վերելք: «Ով ում» հարցի անվերադարձ լուծումը հօգուտ սոցիալիզմի՝ թե քաղաքում, թե գյուղում: Համ. Կ. (բ) Կ. սոցիալիստական տնտեսության ղեկավար և կազմակերպիչ:*

Կապիտալի աշխարհում. — *Տնտեսության կազմալուծումը, գործարանների փակումը:*

Գործազուրկների բանակի աճում: Աշխատավարձի իջեցում: Մասսայական աղքատացում և աշխատավորների ու նրանց յերեխաների սով: Ժողովրդական կրթության հատկացվող միջոցների կրճատումը: Բուրժուազիայի պայքարը հեղափոխական բանվորների դեմ, վորոնք ձգտում են տապալելու կապիտալիստական իրավակարգը (տալ վառ որինակներ այն բանի, թե ինչպիսի դաժանությամբ ե հակահեղափոխական բուրժուազիան ճնշում բանվորական հեղափոխական շարժումը, ցույց տալ կոմունիստների անձնազոհությունը և նվիրվածությունը հեղափոխությանը)

ԽՍՀՄ-ի միջազգային դրությունը յեվ խաղաղարար քաղաքականությունը

Կապիտալիստները կրիզիսից դուրս գալու յելք փնտրում են նոր պատերազմի, առաջին հերթին ԽՍՀՄ-ի դեմ ուղղված պատերազմի նախապատրաստման մեջ: Սպառազինման աճումը կապիտալիստական յերկրներում: Կապիտալիստների փորձերը՝ իրենց յերկրների աշխատավորներից թաքցնել պատերազմի նախապատրաստությունները: Կապիտալիստական յերկրների պրոլետարիատի պայքարը պատերազմի նախապատրաստման դեմ: Բերել որինակներ կոմունիստական կուսակցությունների հակապատերազմական

աշխատանքից, բանվորների հակապատերազմյան յելույթներից: Խորհրդային կառավարության առաջարկներն ընդհանուր զինաթափման մասին: Մեր յերկրի մշտական պատրաստականությունը, հետ մղելու ամեն մի հարձակում: ԽՍՀՄ-ի աշխատավորության նախապատրաստությունը յերկրի պաշտպանության համար: Կարմիր բանակի ամրացումը: Դպրոցականների խնդիրները — ԽՍՀՄ-ի պաշտպանության նախապատրաստման գործում: Պրոլետարական հեղափոխությունը, կապիտալիստական յերկրների պրոլետարիատի և աշխատավորների համար միակ յելքն ե կրիզիսից դուրս գալու համար: Կոմունիստական կուսակցությունները — հեղափոխական վերելքի ղեկավարներ: Կոմունիստական Ինտերնացիոնալը, համաշխարհային պրոլետարական հեղափոխության մարտական շտաբ: ԽՍՀՄ-ը Համ Կ(բ)Կ-ի ղեկավարությամբ բոլոր յերկրների բանվորների համար որինակ հանդիսացավ, թե ինչպես պետք ե պայքարել ու հաղթել կապիտալիստներին: Առաջին հնգամյակի հաջողությունները բոլոր յերկրների բանվոր դասակարգի հեղափոխական ուժերը մոբիլիզացիայի յեն յենթարկում կապիտալիզմի դեմ: ԽՍՀՄ միջազգային պրոլետարիատի հարվածային բրիգադն ե:

Աշխատանքի մեթոդները յեվ ձևերը

Լրագրերի, գեղարվեստական գրականության հատվածների, պատմվածքների ընթերցանություն: Թեմային վերաբերող՝ աշակերտների աշխատանքներից պատրաստել ալբոմ: Նախապատրաստում կենդանի լրագրի համար:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհագրության, վորպես առանձին առարկայի, դասավանդման նպատակներն ու խնդիրները սահմանված են Համ. Կ. (բ) Կ. Կենտկոմի 1931 թ. սեպտեմբերի 5-ի և 1932 թ. ոգոստոսի 25-ի վորոշումներով:

Աշխարհագրությունը տարրական դպրոցում ձեռք ե բերել ինքնուրույն ուսումնական առարկայի նշանակություն, վորը սովորողներին պիտի տա.

1. քարտեզի իմանալը, հատկապես ԽՍՀՄ-ի քարտեզի:
2. տարրական տեղեկություններ գավառագիտությունից:
3. տարրական հասկացողություններ ֆիզիկական աշխարհագրությունից:
4. ԽՍՀՄ-ի ֆիզիկական աշխարհագրության հիմնական տարրերը:
5. Խորհրդային Միության տնտեսության և ժողովուրդների ազգային կուլտուրաներին վերաբերող կարևոր գիտելիքներ:
6. տարրական գիտելիքներ կապիտալիստական յերկրների աշխարհագրությունից:

Աշխարհագրությունը, վորպես ինքնուրույն առարկա, ավանդվում ե տարրական դպրոցում յերրորդ խմբից սկսած, սակայն աշխարհագրական տարրական գիտելիքներ տրվում են հենց առաջին խմբից՝ բնագիտության ծրագրում:

Հաշվի առնելով տարրական դպրոցում սովորողների տարիքը՝ յերրորդ և չորրորդ խմբերի աշխարհագրության կուրսին տրվում ե նախապատրաստական բնույթ: Նրա գլխավոր խնդիրն ե հանդիսանում՝ սովորողներին սիստեմատիկ ձևով ծանոթացնել աշխարհագրության տարրական հասկացողություններին, ամբողջ աշխարհի քարտեզին և մանավանդ ԽՍՀՄ-ի քարտեզին: Գավառագիտական մոտեցումը հանդիսանում ե հիմնականը, մանավանդ ուսման յերրորդ տարվա կուրսում: Չորրորդ տարվա կուրսը չի ծանրաբեռնվում տնտեսական աշխարհագրության կուրսին վերաբերող տարրերով:

Յերրորդ խմբում աշխարհագրությանը հատկացվում ե 72 ժամ: Կուրսի ընդհանուր վերնագիրը (Մեր տեղանքը, մեր շրջանը, մեր հանրապետությունը) ընդծում ե պարապմունքների գավառագիտական բնույթը:

Յերրորդ խմբի ծրագիրը պարունակում ե հետևյալ բաժինները.

1. Կողմնորոշում տարածության մեջ . . . . 6 ժամ
2. Ծանոթություն տեղի ռելյեֆի և տեղական պլանի հետ . 6 »
3. Մակերևութային և գետնային ջրեր . . . . 6 »
4. Յեղանակ և կլիմա . . . . 8 »

5. Ծանոթություն քարտեզի հետ . . . . 6 »
6. Յերկրագունդը և նրա պատկերացումը գլոբուսի և կիսագնդերի քարտեզի վրա . . . . 18 »
7. Ինչպես են ապրում աշխատավորները մեր շրջանում, մեր հանրապետության մեջ (աշխարհագրական տեսություն) . . 18 »
8. Աշխատանքի հաշվառում . . . . 2 »

Ընդամենը՝ 72 ժամ:

Ծրագրի մեջ «Յերկրագունդ» թեման մտցնելը բացատրվում ե հետևյալ նկատառումով. սովորողները ճիշտ կերպով կարող են մոտենալ իրենց բնակավայրի ուսումնասիրությանն այն դեպքում, յեթե նրանք գիտեն այն, վորպես յերկրագնդի մի մասնիկը. յերկրագնդին ծանոթ լինելը նրանց նյութ կտա՝ իրենց բնակավայրն այլ վայրերի հետ համեմատելու, հետևապես կնպաստի իրենց բնակավայրի առանձնահատկություններն ավելի լավ հասկանալու:

Այս թեման շոշափում ե նաև բնագիտության ծրագիրը, ուր տրվում են յերկրի, լեռնային տեսակների, ոգտակար հանածոների, տեղումների և քամու հարցերը:

Յերրորդ խմբի աշակերտներն արդեն կարդում են թերթեր, ժուռնալներ, վորտեղ պատահում են տեղեկություններ ամբողջ յերկրագնդի մասին: Այս ևս հարկադրում ե դպրոցին՝ չհետաձգել աշխարհի քարտեզի ուսումնասիրությունը:

Ըստ որացուցային ժամկետների, «Յերկրագունդ» թեման ընկնում ե ձմեռային ամիսներին (հունվար, փետրվար և մարտի սկիզբը): Այս ժամանակաշրջանում անհամեմատ քիչ նյութ կա գավառագիտական աշխատանքի համար:

Ահա թե ինչու յե ծրագիրը նշում՝ շրջանի, հանրապետության, ԽՍՀՄ-ի քարտեզներին ծանոթանալուց հետո հունվար ամսին անցնել ամբողջ աշխարհի քարտեզի ծանոթացմանը: Փորձը ցույց ե տալիս, վոր յերրորդ խմբի աշակերտները կարողանում են այդ թեմայից լիովին գլուխ հանել, յեթե դասատուն կարողանում ե մատչելի ձևով բացատրել և ղեկավարել:

Հարկավոր ե նկատի ունենալ, վոր յերրորդ խմբի կուրսի հիմնական նպատակն ե՝ գավառագիտական մատերիալի հիման վրա տալ տարրական աշխարհագրական հասկացողություններ, ունակություն՝ ըմբռնելու շրջապատող տեղանքի առանձնահատկությունները, սովորեցնել առանձին յերևույթներն ընդհանրացնելու (իր շրջանի աշխարհագրական տեսությունը): Յերրորդ տարվա ծրագիրը՝ «Յերկրագունդ», «Մակերևույթի ձևի փոփոխությունը», «Յեղանակ և կլիմա» և այլ թեմաների կապակցությամբ բավականաչափ նյութ ե տալիս մատերիալիստական աշխարհըմբռնողությունը զարգացնելու, ինչպես և հակակրոնական դաստիարակության համար:

Չորրորդ խմբի կուրսի մշակմանը տրվում ե 72 ժամ:

Այս խմբում՝ քարտեզի վրա կատարվող աշխատանքն ընդլայնվում ե: Ուսման չորրորդ տարվա հիմնական թեման ե «Մեր յերկիրը», վոր պիտի հանդիսանա վեցերորդ խմբում ԽՍՀՄ-ի տնտեսա-աշխարհագրական ուսումնասիրության նախապատրաստական աստիճանը: Բնական ե, վոր այս թեման մշակվում ե ավելի նեղ բազայի վրա և մեթոդական այլ ձևերով՝ հա-

մեմատած վեցերորդ խմբի կուրսի հետ։ Այս կուրսի խնդիրն է կուտակել կոնկրետ պատկերացումներ իր յերկրի բնության և տնտեսության մասին՝ ըստ գոտիների։

Ծրագիրն ունի հետևյալ բաժինները՝

1. ԽՍՀՄ-ի աշխարհագրական դիրքը, տարածությունը, սահմանները, մակերևույթի համառոտ տեսությունը . . . . 10 ժամ
2. ԽՍՀՄ-ի գոտիների տեսությունը . . . . 30 »
3. ԽՍՀՄ-ի ընդհանուր տեսությունը (գլխավոր՝ բնական տարբերությունները, ԽՍՀՄ-ի արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի տեղաբաշխումը . . . . . . 10 »
4. ԽՍՀՄ-ի քաղաքական տեսությունը . . . . 8 »
5. Աշխարհի քարտեզը . . . . 14 »

Ընդամենը՝ 72 ժամ

Այսպիսով ԽՍՀՄ-ի քարտեզի վրա առաջին կողմնորոշումից և մակերևույթի համառոտ տեսությունից (10 ժամ) հետո սովորողները կանգ են առնում գոտիների տեսության վրա (3 ժամ) և ապա այս բոլորը հանրագումարի յեն բերում ԽՍՀՄ-ի ընդհանուր տեսության մեջ (18 ժամ)։ Այս կարգը մասնավորից դեպի ընդհանուրն ավելի յե համապատասխանում չորրորդ խմբի աշակերտների տարիքին։ ԽՍՀՄ-ի գոտիների տեսությունն ընդգծում է չորրորդ տարվա կուրսի հիմնական նպատակը, այն է՝ տարրական ձևով տալ ԽՍՀՄ-ի ֆիզիկական աշխարհագրության հիմունքները։ Սրա հետ միաժամանակ հասարակագիտության դասերին հասկացողություն է տրվում ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման մասին։ ԽՍՀՄ-ի աշխարհագրությունը ցայտուն կերպով պետք ցույց տա ԽՍՀՄ-ի աշխատավորության կողմից յերկրի անսահման հարստությունների յուրացման պատկերները, ցույց տա տնտեսության նոր ձևերի շինարարության պատկերը, ցույց տա, թե ինչպես աշխատավորական կոլեկտիվը նորանոր լանդշաֆտներ և աշխարհագրական նոր՝ փոփոխություններ է ստեղծում, թե ինչպես սոցիալիզմ կառուցող յերկրում փոխվում է յերկրի «դեմքը», վոչ թե դարերի ու հազարամյակների, այլ հնգամյակների ու տասնամյակների ընթացքում։ Դասատուն պետք կարողանա աշակերտներին դաստիարակել և վոգևորել այնպես, վոր նրանց մեջ առաջանա մեր մեծ շինարարությանը մասնակցելու բոլշևիկյան բուռն ցանկություն։ Աշխարհագրության ուսուցման այդպիսի դրվածքը միայն — տալով ԽՍՀՄ-ի հսկայական շինարարության ճշգրիտ պատկերը — կնպաստի սովորողների կոմունիստական դաստիարակությանը։

«Աշխարհի քարտեզը» թեման նպատակ է դնում սովորողներին ծանոթացնել աշխարհի խոշոր պետություններին, յերկրագնդի վրա նրանց ունեցած դիրքին, իմպերիալիստական պետությունների գաղութին, համաշխարհային ճանապարհներին, կարևորագույն ռազմագիտական և առևտրական կենտրոնին. սովորեցնել քարտեզից ոգտվել՝ թերթեր, ժուռնալներ կարդալիս, հասարակագիտության նյութերը մշակելիս։ Այդ թեմայում տրվում է սոցիալիզմ կառուցող յերկրի՝ ԽՍՀՄ-ի համեմատությունը կապիտալիստական յերկրների հետ. այդ համեմատությունը ցայտուն կերպով պետք ցույց տա, թե ինչպես տարբեր ձևով են ոգտագործվում արտադրողական ուժերը տար-

բեր սիստեմներում, թե ինչպես մեզնում աստիճանաբար լավանում է աշխատավորության դրությունը և դեպի ուր է տանում կապիտալիզմը (ճգնաժամ, շահագործում)։

Պատմականության մոմենտները և ԽՍՀՄ-ի ժողովուրդների ազգային կուլտուրայի խնդիրներն իրենց արտահայտությունն են գտնում տնտեսության համադրման մեջ՝ «առաջ և այժմ» և «ժողովուրդների կենցաղն ու կուլտուրան» ուսումնասիրելիս։

ՅԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

ՄԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ, ՄԵՐ ՇՐՋԱՆԸ, ՄԵՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (72 ժամ)

I Կողմնորոշում տարածության մեջ (6 ժամ)

1. Կողմնորոշում տարածության մեջ՝ հորիզոն, հորիզոնի կողմերի վորոշելը արեգակի միջոցով, բևեռային աստղով և կողմնացույցով։ Կողմնացույցի կազմությունը։
2. Դասարանի, դպրոցական հողամասի, կոլտնտեսության սխեմատիկ պլան կազմելը, իսկ քաղաքում՝ մոտիկ փողոցների պլանը։ Մասշտաբ (գծային)։ Դասարանի և դպրոցական հողամասի գծագրումը մասշտաբով։
3. Կողմնորոշում պատրաստի պլանով։ Նրա ստուգումը էքսկուրսիայի ժամանակ (պլանի համեմատությունն իրականի հետ)։ Պլանի վրա հորիզոնի կողմերի նշանակումը։ Հեռավորությունների վորոշելը պլանով։ Կարողանալ ոգտվել ուղեցույցով (մեծ քաղաքներում)։

II Ծանոթություն տեղի ռելյեֆի յեվ տեղագրական պլանի հետ (6 ժամ)

1. Ծանոթություն իր բնակավայրի հետ (էքսկուրսիայի միջոցով)։ Տեղի ռելյեֆը՝ հարթություն, բլուր, ցածրադիր վայր, ձորեր, գետահովիտ և այլն։ Գյուղատնտեսական տեսքեր. անտառ, դաշտեր, մարգագետիններ, ճահիճներ։ Ճանապարհներ, կառուցվածքներ, կապի միջոցներ՝ կապված տեղագրական պլանի աշխատանքների հետ։
2. Տեղի առանձնահատկությունների պատկերումը տեղագրական պլանի վրա (սովորողների ծանոթությունը յեղած տեղագրական պլաններին)։
3. Ծանոթություն հողատեսքերի դասավորությանը՝ նայած տեղի ռելյեֆին, տնտեսական ոգտագործման համար հարմար ու անհարմար տեղերի հայտաբերումը։

III Յերկրի մակերեվույթի յեվ գետնային (грунтовые) ջրեր (6 ժամ)

1. Ծանոթություն իր բնակավայրի մակերևույթին և գետնային ջրերի հետ։
2. Գետնային ջրերի առաջանալը։ Ջրալի և ջրակայուն հողաշերտեր, ջրհորներ։
3. Աղբյուր, առվակ, ակունք, գետաբերան, գետեր, հուն-գետահովիտ, վտակ, գետի աջ և ձախ ափ, գետային սիստեմ, հոսող և կանգնած ջրեր, լճակ, լիճ, կղզի, թերակղզի։

4. Քամու և ջրի ազդեցության ներքո ցամաքի մակերևույթի ձևերի առաջանալը, ավազակույտեր, սողափուլեր (ОПОЛЗНИ) և այլն։

5. Մարդու ներգործությունը բնության վրա. ճահիճների չորացնելը, ձորերի և գետափերի ամրացում, պայքար ավազների դեմ, հողի վոռոգումը։

IV. Յեղանակ յեվ կլիմա *(8 ժամ)*

1. Յեղանակի վերաբերյալ ուսման տարվա սկզբից արած դիտողությունների արդյունքները. — 1) աշխատանք ջերմաչափի միջոցով. ոդի ջերմության չափելը. աշնանային ամիսներ. աստիճանաբար ցրտելը, որվա կարճանալը, արեգակի որըստորև ավելի ցածր դիրք ընդունելը. 2) յեղանակի որացույցի տվյալների հաշվառումը. պարզ, ամպամած և անձրևային որերի քանակը։ Տեղումներ. դրանց-չափումն անձրևաչափով, տեղումների առաջանալը, նրանց տեսակները, տեղումների նշանակությունը գյուղատընտեսության համար. 3) քամու ուժը և ուղղությունը. աշխատանք հողմացույցի և հողմաչափի միջոցով. քամու ուժի ոգտագործումը մարդու կողմից (հողմաղացներ, շարժիչներ)։

2. Յեղանակի փոփոխականությունը և կլիմայի կայունությունը։ Ոդերևութաբանական կայանի դերը մեր բնակավայրի յեղանակի և կլիմայի ուսումնասիրության գործում։

3. Յեղանակի գիտական նախագուշակման հնարավորությունը և նախապաշարմունքների ու սնահավատությունների մերկացումը։

V Ծանոթություն քարտեզի հետ *(6 ժամ)*

1. Իր շրջանի, հանրապետության, Անդրկովկասի և ԽՍՀՄ-ի քարտեզների ցուցադրումը։

2. Քարտեզի վրա գտնել իր գյուղը, քաղաքը, հանրապետության տեղը։ Քարտեզի մասշտաբի գտնելը, քաղաքների և ավանների միջև յեղած տարածության վորոշելը։ Գետերի, քաղաքների, ծովերի, լճերի, յերկաթուղիների պայմանական նշանակումը քարտեզի վրա։

3. Ֆիզիկական քարտեզի վրա յերկրի մակերևույթի զանազան ձևերի դաշտավայրերի, բարձրությունների և լեռների, ինչպես և ծովերի զանազան խորության նշանակումը։ Ցամաքի մակերևույթի բարձրությունը ծովի մակերևույթ։ Ֆիզիկական քարտեզի պայմանական գույները։

VI Յերկրագունդ յեվ նրա պատկերելը գլոբուսի ու կիսագնդերի քարտեզի վրա *(18 ժամ)*

1. Գլոբուսը, վորպես յերկրագնդի մոդել։ Այն յերևույթները, վորոնք կասկածել տվին մարդուն, վոր յերկիրը գնդաձև է։ Բարձր առարկաների գագաթների լուսավորվելն արեգակը ծագելու և մայր մտնելու ժամանակ։ Նավի աստիճանաբար աներևութանալը հորիզոնի հետևում՝ հեռանալու ժամանակ, և ընդհակառակն՝ նրա աստիճանաբար յերևալը մոտենալու ժամանակ։ Ճանապարհորդություններ յերկրի շուրջը (Մագելան և մյուսները)։

2. Յերկրի որական պտույտը. ցերեկվա և գիշերվա հաջորդումը։ Առաջինն ով դրեց յերկրագնդի պտույտի հարցը և յեկեղեցին ինչպես վերաբերվեց այդ ուսմունքին (իմանալ Կոպերնիկոսի, Գալիլեյի, Բրունոյի մասին)։

2. Բևեռներ, աստիճանացանցի գլխավոր գծերը, հասարակած, գլխավոր — միջորեյական։ Հյուսիսային և հարավային, արևելյան և արևմտյան կիսագնդեր։

4. Կիսագնդերի քարտեզը։ Աշխարհամասեր։ Ովկիանոսներ։

5. Յերկրի պտույտն արեգակի շուրջը։ Տարվա յեղանակների հաջորդելն իրար, վորպես հետևանք (շնորհիվ յերկրի թեքության) տարվա ընթացքում յերկրի մակերևույթի տարբեր չափերով տաքանալուն։

6. Յերկրի բաժանումը հինգ կլիմայական (ջերմության) գոտիների։ Նրանց պայմանական սահմանները (արևադարձեր, բևեռային շրջաններ)։

7. Ցուրտ, բարեխառն և տաք յերկրներ. դրանց կլիմայի, բուսական և կենդանական աշխարհի տարբերությունները (համապատասխան նկարների ցուցադրում. ցույց տալ կիսագնդերի քարտեզի վրա ցուրտ, բարեխառն և տաք յերկրների տեղադրությունը)։ Յերկրագնդի զանազան ժողովուրդները և նրանց բաշխումը յերկրագնդի վրա։

Գլխավոր պետությունները և նրանց գլխավոր քաղաքները։ Զանազան յերկրների ժողովուրդների կյանքին վերաբերող պատկերներ։

VII Ինչպես են ապրում յեվ ինչով են զբաղվում աշխատավորները մեր շրջանում, յեվ մեր հանրապետության մեջ *(աշխարհագրական տեսություն—20 ժամ)*

Ա. ՄԵՐ ՇՐՋԱՆԸ (10 ժամ)

1. Գտնել շրջանի տեղն իր հանրապետության քարտեզի վրա, իմանալ՝ վոր կողմն է հոսում մոտակա գետը և ուր է թափվում. իմանալ իր դպրոցից 5 — 10 կիլոմետր շառավիղի վրա գտնվող գյուղերը։ Իմանալ իր շրջանի կենտրոնը և գլխավոր բնակելի վայրերը։ Շրջանի տերիտորիայի յերկաթուղիները, խճուղիները (աշխատանք քարտեզի վրա)։

2. Մեր շրջանի բնական պայմանները. մակերևույթի կազմությունը, կլիման, հողը, վոռոգումը, կենդանական և բուսական աշխարհը, ոգտակար հանածոները, եներգիայի տեղական աղբյուրները։

3. Շրջանի բնակչությունը՝ թիվը, բնակված վայրերը, ազգային կազմը։

4. Շրջանի տնտեսությունը. իմանալ՝ վորտեղ են տեղավորված գործարանները, ելեկտրոկայանները, տնայնագործական արհեստագործությունները, նրանց գլխավոր պրոդուկցիան։

Շրջանի գյուղատնտեսությունը. վորտեղ և ինչպիսի կոլտնտեսություններ, խորհտնտեսություններ, մեքենատրակտորային կայաններ և ագրոկայաններ կան։

5. Շրջանի տնտեսության փոփոխումը՝ կապված հնգամյա պլանի հետ։

Բ. Հ. Ս. Խ. Հ (10 ժամ)

1. ՀՍԽՀ-ի տեղն Անդրկովկասի և ԽՍՀՄ-ի քարտեզի վրա։ Տվյալ քարտեզի մասշտաբը։ ՀՍԽՀ-ի տարածությունը։ ՀԽՍՀ-ի գլխավոր քաղաքը։

Հարևան Խ. հանրապետությունները և յերկրները (Վ. Ս. Խ. Հ., Ադ. Ս. Խ. Հ. Թուրքիա, Պարսկաստան)։ Հաղորդակցության ճանապարհները՝ յերկաթուղիները և խճուղիները (ուր են տանում նրանք), գլխավոր գետերը (վերտեղ են թափվում) և լճերը։

2. Հ. Ս. Խ. Հ.-ի գլխավոր ու բնական հարստությունները (պղինձ, տուֆ, բազալտ, պեմզա, մարմար, անտառ, արոտավայրեր, սպիտակ ածուխ և այլն) և ինչպես են նրանք օգտագործվում Հ. Ս. Խ. Հ. տնտեսության մեջ։

3. Ազգաբնակությունը, նրա թիվը և ազգային կազմը։

4. Հ. Ս. Խ. Հ.-ի տնտեսության ընդհանուր բնույթը — կապված հընգամյա պլանի հետ (արդյունաբերական, գյուղատնտեսական մասնագիտացումն ըստ շրջանների)։ Մեր շրջանի տնտեսական կապը մյուս շրջանների հետ։ Հ. Ս. Խ. Հ.-ի արդյունաբերության և գյուղատնտեսության գլխավոր արտագրանքը։ Տնտեսական տեսակետից ինչ հանրապետությունների հետ է կապված Հ. Ս. Խ. Հ. (ներմուծում և արտահանում)։ Հ. Ս. Խ. Հ. հանդիսանում է Անդրֆեդերացիայի հանրապետություններից մեկը, ինչպես և Անդրֆեդերացիան՝ Խ. Ս. Հ. Մ.-ի դաշնակցային հանրապետություններից մեկը։

Անդրկովկասի Ս. Ֆ. Խ. հանրապետություն

Անդրկովկասի սահմանները։ Գլխավոր քաղաքները։ Գլխավոր յերկաթուղագիծը։ Գլխավոր գետերն ու լճերը։ Բնական գլխավոր հարստությունները։ Ազգային կազմը։ Անդրֆեդերացիայի մեջ մտնող հանրապետությունները և նրանց կենտրոնները։

ՉՈՐՈՐԴ ԽՈՒՄԲ

ԽՍՀՄ (քաղաքական յեվ ֆիզիկական տեսություն) յեվ աշխարհի քարտեզը
(172 ժամ)

I ԽՍՀՄ-ի ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ, ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ (10 ժամ)

1. Աշխարհի քարտեզը։ Աշխարհամասերը — Յեվրոպա, Ասիա, Աֆրիկա, Ավստրալիա, Ամերիկա և Անտարկտիդա։ Ովկիանոսները. — Մեծ կամ Խաղաղ, Ատլանտյան, և Հնդկական։

2. Համեմատել՝ ինչն է յերկրագնդի վրա ավելի, ցամաքը, թե ջուրը։

3. Աստիճանացանցը կիսագնդի քարտեզի վրա։ Վերհիշել նրա կազմությունը և նշանակությունը։ Հասկացողություն աշխարհագրական լայնության և յերկարության մասին։

4. ԽՍՀՄ-ի աշխարհագրական դիրքը (նշել նրա դիրքը Հյուսիսային կիսագնդում, ջերմության (կլիմայական) տարբեր գոտիներում, դիրքն ովկիանոսների նկատմամբ։ Ծայրամասերը (ամենահեռավոր կետերը)։

5. Մեր Միության տարածությունը։ ԽՍՀՄ-ի ծովային և ցամաքային սահմանները։ Կղզիները և թերակղզիները։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Իմանալ ԽՍՀՄ-ի ծովերը՝ Հյուսիսային սառուցյալ, Բարենցի, Սպիտակ, Սեվ, Ազովի — Կասպից, Բերինգյան, Օխոտի, Ճապոնական։ Կղզիները՝ Նոր յերկիր Սախալին։ Թերակղզիներ՝ Կոլա, Կամչատկա, Ղրիմ։

6. ԽՍՀՄ-ի հարևանները (սահմանակից պետությունները) — Ֆինլանդիա, Եստոնիա, Լատվիա, Լեհաստան, Ռումինիա, Թյուրքիա, Պարսկաստան, Աֆղանստան, Չինաստան, Մոնղոլիա, Ճապոնիա։ Նրանց մայրաքաղաքները։

7. Միության մակերևույթի ընդհանուր բնույթը (համառոտ)։ Գլխավոր դաշտավայրերը, բարձրությունները և լեռները (ցույց տալ ֆիզիկական քարտեզի վրա)։

8. Ամենագլխավոր գետերը — Վոլգա՝ Կամա և Օկա վտակներով, Դնեպր, Հյուսիսային Դվինա, Պեչորա, Նևա, Դոն, Ուրալ, Օբ՝ Իրտիշ վտակով, Յենիսեյ՝ Անգարա վտակով, Լենա, Ամուր, Արաքս, Քուռ։ Վոր ծովերն են թափվում այս գետերը։

9. ԽՍՀՄ-ի գլխավոր լճերը՝ Լադոգա, Օնեգա, Բալխաշ, Բայկալ, Սևան (անուշահամ ջուր ունեցողներ), Կասպից, Արալյան, Ելտոն և Բասկունչակ (աղի ջուր ունեցողներ)։

II ԽՍՀՄ-ի ԳՈՏԻՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.— Մեր պետության լայնածավալ լինելը։ Ցուրտ և բարեխառն գոտիներում գտնվելը. ԽՍՀՄ-ի բնական պայմանների այլազանությունը՝ կլիմայի, հողի, բուսական ու կենդանական աշխարհների տեսակներից, վոր բնորոշվում է Միության զանազան մասերի դիրքով։ Նրանց փոխադարձ պայմանավորվածությունը և գոնալ դիրքը։

Ա. Բեվեռային գոտի *(13 ժամ)*

1. Հյուսիսային բեվեռային ծովի տեսությունը։ Ծովափնյա գիծ։ Կղզիները՝ Նոր յերկիր, Ֆրանց Հովսեփի յերկիր։ Թերակղզիները՝ Կոլա, Չուկոտա։ Ծովերը՝ Բարենցի, Կարայի։

2. Կլիմայի խստությունը։ Ձմեռվա առանձնահատկությունները (ցրտերը, բեվեռային գիշեր, հյուսիսափայլ)

Ամառվա առանձնահատկությունները (ձյուն, սառույցներ։ բեվեռային օր)։

3. Կենդանիները.— Փոկ, ծովացուլեր, կետեր, սպիտակ արջեր։ Գազանորսություն և ձկնորսություն։

4. Նավագնացության պայմանները Հյուսիսային ծովերում։ Հյուսիսային մեծ ճանապարհը։ Հյուսիսն ուսումնասիրող մեր արշավախմբերը («Սիբիրյակով» սառցահատը և այլն)։

5. Ռադիոկայանների տեղաբաշխումը՝ բեվեռային կղզիների վրա,

Բ. Տունդրաների գոտի (3 ժամ)

1. Տունդրաների տարածումը հյուսիսային ափերով։ Ռելյեֆը։ Օգտակար հանածոները. գրաֆիտ (Յենիսեյ), ապատիտ (Խիբին), խոշոր գետերը։

Տունդրայի առանձնահատուկ բնույթը՝ կարճ ամառ, յերկարատև ձմեռ, բեվեռային գիշերով, հողի հավիտենական սառած լինելը, հողի աննշան հալվելը՝ ամրանը։

2. Տունդրայի բուսականությունը.— Մամուռներ, քարաքոսներ, թփապտուղներ, կեչի և այլն։

3. Կենդանիներ.— Հյուսիսային յեղջերու, բևեռային աղվեսներ, բևեռային մկներ։ Թռչունները.— Բեվեռային կաքավներ, սագեր, կապիկներ

(չվող թռչուններ և բևեռային բու։ Ջկնային հարստությունները։ Միջատների առատությունն՝ ամառը։

4. Տունդրայի բնակչությունը.—Լոպարներ, նենցներ, չուկչաներ, կամչադալներ և այլն։ Նրանց բնակարաններն ու կենցաղը։ Ցարական կարգերում ազգաբնակչության շահագործումը մեծագնորդների և վաճառականների միջոցով։ Տունդրայի խորհրդայնացումը։ Խորհրդային իշխանության հոգատարությունը հյուսիսային բնակիչների կուլտուրայի և կենցաղի բարելավման գործում (կուլտկայաններ, ֆակտորիաներ, հիվանդանոցներ, դպրոցներ)։

5. Տնտեսության տիպիկ ճյուղերը.—Եղջերվաբուծություն, ձկնորսություն, որսորդություն։ Բնակիչների քոչը՝ եղջերուների կերի կապակցությամբ։ Տնտեսությունը վարելու տեխնիկայի բարելավումը և աստիճանաբար կոլեկտիվ ձևերի անցումը։ Փոխադրական միջոցներ։ Մերձբևեռային հողագործության հնարավորությունները։

6. Տունդրայի գոտու հանրապետությունները և վարչական մարզերը։

Գ. Տայգայի գոտին (4 ժամ)

1. Տասնյակ հազար կիլոմետր տարածությամբ ձգվող փշատերև անտառները ԽՍՀՄ-ում (քարտեզի վրա ցույց տալ նրանց սահմանները)։ Ռելյեֆը, օգտակար հանածոները՝ քարածուխ, նավթ, աղ, ոսկի։

2. Տայգան հատող գետեր։

3. Տայգայի կլիմայական առանձնահատկությունները։ Կարճատև, սակայն տաք ամառը, ուժեղ քամիներ՝ ձմեռը։ Ցրտության բևեռը—Օյմյակոն։

4. Բուսական աշխարհը.—Ծառերի տեսակները—սոճի, եղևնի, Սիբիրում՝ փիճի, մայրի, ցնլատին (пихта). ճահիճները, տորֆավայրերը։ Կենդանական աշխարհը—սկյուռներ, նապաստակներ, աղվեսներ, գայլեր, արջեր և այլն։ Թռչունները.—Աքարներ, մայրահավեր, փայտփորիկներ։

5 Անմարդաբնակ տայգաներ.—Նոսր, սակավաթիվ ավաններ գետափերին կամ տայգայի օգտագործման տեղերում։

6. Տայգայի՝ ճանապարհներից զուրկ լինելը.—Քարտեզի վրա ցույց տալ երկաթգիծը, որ անցնում է տայգայի հարավային եզրերով (Լենինգրադ—Պերմ—Սվերդլով—Նովոսիբիրսկ—Վլադիվոստոկ) և հարավից հյուսիս ձգվող՝ Լենինգրադ—Մուրման—Յարոսլավլ—Արխանգելսկ։ Գետերի նշանակությունը որպես հաղորդակցության միջոց։

7. Անտառագործությունն (անտառների կտրելն ու լաստափոխումը) առաջ և այժմ։ Անտառանյութերի առաքումն արտասահման՝ դեպի հյուսիս հոսող գետերի միջոցով և դեպի երկրի ներսը՝ Վոլգայով, Կամայով և Վոլգայի այլ վտակներով։ Անտառանյութերը գետափ տանելը ձիերով և տրակտորներով (ձմեռը՝ սառցե ճանապարհներով)։ Նավարկելի և լաստառաք գետերի բարելավումը (ջրանցքներ, գետերի մաքրում)։

8. Որսորդություն.—Սկյուռ, սամույր և այլն։ Նշել գազանորսության պրիմիտիվ ձևերից աստիճանաբար մորթավոր գազանների բազմացմանն անցնելը գոտորդի բուծարաններում։

9. Հողագործություն և կաթնանասնապահություն (անտառների կորըտելը վարելահողի վերածելու համար, և խոտարք գետավողող մարգագետիններում)։

10. Տայգայի գոտու բնակիչները.—Կարելներ, յակուտներ, կոմի, օստյակներ, վոգուլներ և ռուսներ։ Գոտու հանրապետությունները և վարչական մարզերը։

Դ. Խառն անտառների գոտի (4 ժամ)

1. Շրջանի սահմանները (ԽՍՀՄ-ի բուսաբանական քարտեզով)։ Ռելյեֆը։ Անտառի ծառերի տեսակները (կաղնի, լորի, թխկի, հացենի և այլն)։

2. Օգտակար հանածոներ՝ քարածուխ (Մերձմոսկովյան ավազան, Կուզնեցի ավազան (Կուզբաս), ֆոսֆորիտներ, տորֆ, (Ջերեմխով)։

3. Միջին ռուսական բարձրություններից սկիզբ առնող գետերը և նրանց ընթացքը։

4. Կլիման, հողը, բուսական և կենդանական աշխարհը. — Մարդն իր տնտեսությամբ ինչ փոփոխություններ է մտցնում լանդշաֆտի մեջ։

5. Գյուղատնտեսությունը խառն անտառների շրջանում։ Գյուղատնտեսական կուլտուրաները՝ հացահատիկներ.—տարեկան, գարի, վարսակ տեխնիկական բույսեր՝ վուշ կանեփ, կարտոֆիլ։ Կաթնանասնապահությունը։

6. Տնայնագործությունն անտառային շրջանում։ Նրա նշանակությունը։

7. Խառն անտառների շրջանի հանրապետությունները և վարչական մարզերը։

Ե. Անտառատափաստանային և տափաստանային գոտի (4 ժամ)

1. Գոտու սահմանները ԽՍՀՄ-ի Եվրոպական և Ասիական մասում։

Ռելյեֆը։

Օգտակար հանածոներ.—Քարածուխ (Դոնբաս, Կարագանդա), երկաթահանք (Կրիվոռոգ, Կերչ), նավթ (Էմբա), պղինձ (Կազակստան), քարաղ, Դոնբաս)։

2. Կլիմայական առանձնահատկությունները.—Սևահողը։ Բուսականության բնույթը։ Տափաստանների կենդանական աշխարհը։ Տափաստանի լանդշաֆտի փոխվելը (հերկվածությունը)։

3. Բնակչությունը և տնտեսության գլխավոր ճյուղերը.—Հացահատիկների մշակություն, այգեգործություն, բանջարաբուծություն, գյուղատնտեսական նոր կուլտուրաներ, որոնք տարբերվում են խառն անտառների շրջանի կուլտուրաներից. ցորեն, եգիպտացորեն, շաքարի ճակնդեղ, արևածաղիկ, ծխախոտ, բամբակ։ Մսատու և կաթնատու անասնապահություն։ Պայքար երաշտի և դաշտային վնասատուների դեմ (մորեխ, պոնտական մուկ)։ Տափաստանի քոչվորները—կազակներ։ Նրանց աստիճանական անցումը նստակյաց կյանքի և կոլեկտիվացման՝ խորհրդային կարգերում։

Խոշորագույն խորհրդային տնտեսություններ.—հացահատիկային, անասնապահական և այլն։ «Գիգանտ» խորհրդային տնտեսությունը։

4. Տափաստանային գոտու հանրապետությունները և վարչական մարզերը։

Զ. Մերձարևադարձային գոտի *(4 ժամ)*

(Զոր յեվ խոնավ)

1 Ղրիմի հարավային ափը և Կովկասյան ծովափը. Նրանց ռելյեֆը: Կլիմայի, բուսական և կենդանական աշխարհների առանձնահատկությունները: Մերձարևադարձային կուլտուրաներ (կիտրոն, նարինջ, թեյ, թուզ, խաղող և այլն):

2. Բնակչությունը և տնտեսության գլխավոր ճյուղերը:

3. Կուրորտային նշանակությունը: Ով է օգտվել կուրորտներից առաջ, և ով է օգտվում այժմ:

Է. Անապատների գոտի (Թուրանի դաշտավայր *(4 ժամ)*

1. Գոտու տեղադրությունը: Խոշոր գետերը. Ամու-Դարյա, Սիր-Դարյա:

2. Անապատի, կլիմայի, հողի բուսական և կենդանական աշխարհների առանձնահատկությունները: Մի շարք գետերի առանձնահատկությունը (կորչելն ավազներում. օր՝ Զու, Սարի-սու): Օվազիսներ:

2. Թուրանի դաշտավայրի բնակիչները և տնտեսության տիպիկ ճյուղերը գետահովիտներում, նախալեռնային վայրերում և օվազիսներում առաջ և այժմ: Քոչվոր անասնապահություն և դաշտային հողագործություն: Արհեստական ոռոգում: Բամբակագործություն:

4. Անապատների գոտու հանրապետություններն ու վարչական մարզերը:

Ը. Բնության պատկերներ յեվ տնտեսության տիպիկ ճյուղեր

լեռներում *(4 ժամ)*

1. Կարևորագույն լեռնաշղթաները. — Ուրալ, Կովկասյան լեռնաշղթա, Տյան-Շան, Պամիր, Ալտայ:

2. Բնության, աշխատանքի և կենցաղի պատկերներ լեռնային վայրերի պայմաններում: Կլիմայի, բուսական և կենդանական աշխարհների այլազանությունը՝ կախված ծովի մակերևույթից, վայրի ունեցած բարձրությունից (ուղղահայաց գոտիականություն): Ջյունապատ գագաթներ, սառցադաշտեր, լեռնային գետեր և նրանց օգտագործումը: Ալպյան մարգագետիններ: Լեռնային տիպի քոչվոր անասնապահություն: Հողագործության դժվարությունը լեռներում: Անտառային շերտը լեռներում: Լեռնականների տնտեսության փոփոխությունները խորհրդային իշխանության օրոք: Հովիտների ոռոգումը: Ելեկտրիֆիկացիա: Հովիտների արժեքավոր կուլտուրաները:

3. Լեռների բնակիչները: Լեռնականների բնակարանները և կենցաղը: Տնայնագործություն:

4. Օգտակար հանածոները—Յերկաթահանք (Ուրալ), մարգանեց (Ճիատուրի՝ Կովկասում), նավթ (Բագու, Գրոզնի, Մայկոպ), գունավոր մետաղներ (Ուրալ—Կովկաս):

5. Լեռնային շրջանի հանրապետությունները:

III *ԽՍՀՄ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ (10 ժամ*

ԽՍՀՄ-ի բնության գլխավոր տարբերությունները. արդյունաբերության գյուղատնտեսության յեվ տրանսպորտի տեղաբաշխումը ԽՍՀՄ-ում:

1. ԽՍՀՄ-ի մակերևույթի ընդհանուր բնույթը: Դաշտավայրերի, բարձրավանդակների և լեռների դասավորությունը: Լեռների ծալքամասային դասավորումը: Լեռների կապն օգտակար հանածոների հետ:

2. Ռելյեֆի ազդեցությունը ԽՍՀՄ-ի գետերի ուղղության վրա: Գլխավոր թեքվածքները (դեպի վո՞ր ծովերը ԽՍՀՄ մակերևույթն ունի թեքվածք): Հասկացողություն գետերի ջրբաժանների և ավազանների մասին: Խոշորագույն ջրբաժանները:

3. ԽՍՀՄ-ի կլիմայի բազմազանությունը: Ցույց տալ ցուրտ, բարեխառն և ամենատաք վայրերը: ԽՍՀՄ-ի կլիմայի ցամաքային լինելը, վոր դեպի արևելք գնալով ավելի յե խստանում:

4. ԽՍՀՄ-ի հողային և բուսական գոտիները (բուսաբանական քարտեզի վրա ցույց տալ ԽՍՀՄ-ի գոտիների դասավորությունը, նշել բուսականության բնույթն ըստ գոտիների): Կլիմայի, հողի և բուսական աշխարհի կապը:

5. Կենդանական աշխարհի տեղաբաշխումը ԽՍՀՄ-ում (թվել գոտիների խոշորագույն ներկայացուցիչներին)

6. ԽՍՀՄ-ի արդյունաբերության աշխարհագրական տեղաբաշխումը: Գլխավոր օգտակար հանածոների տեղն ու նրանց օգտագործումն առաջ և այժմ: Արդյունաբերական կենտրոններ: Նոր, սոցիալիստական քաղաքներ՝ Մագնիտոգորսկ, Ստալինսկ (Կուզնեցկստրոյ), Խիբինգորսկ: Գունավոր և սև մետաղագործության ու մեքենաշինարարական գիգանտ գործարանների վայրերը՝ Մոսկվա, Լենինգրադ, Դնեպրոպետրովսկ, Խարկով Ստալինգրադ, Ռոստով (Դոնի վրա), Չելյաբինսկ, Ստալինսկ, Մագնիտոգորսկ, Գորկի, Բալխաշստրոյ, Ռիդդերստրոյ: Քիմիական կոմբինատների տեղաբաշխումը (Բոբրիկ, Բերեզնիկի): Հանքերի և շախտերի տեղաբաշխումը (Դոնի ավազան, Կուզնեցի ավազան, Ուրալ, Կազակստան), նավթի վերամշակման գործարանների տեղաբաշխումը (Բագու, Գրոզնի, Մայկոպ և ուրիշները):

7. Խոշորագույն ելեկտրոկայանների տեղաբաշխումը. — Դնեպրոգես, Վոլխովի, Զագես, Ձորագես, Քանաքեռգես և ուրիշները:

8. Գյուղատնտեսության հիմնական ճյուղերի աշխարհագրական տեղաբաշխումը.—հողագործություն (ցույց տալ հացահատիկային, վուշի, շաքարի ճակնդեղի, բամբակագործական ռայոնները, չոր և խոնավ ռայոնները), անասնապահություն (կաթնատու, մսատու), ձկնորսություն, աղվամազ գազանների վորսը, անտառագործություն և տնայնագործություն:

9. ԽՍՀՄ-ի տրանսպորտը. Իմանալ յերկաթուղիների և ջրային ցանցի հիմնական ուղղությունները: Ցույց տալ Մոսկվան ԽՍՀՄ-ի մնացած խոշոր քաղաքների հետ կապող յերկաթուղիները: Իմանալ նավարկելի գետերը, ցույց տալ Մարինյան սիստեմը (Կասպից ծով—Վոլգա—Նևա, Բալտիկ ծով). Իմանալ նավահանգստային քաղաքները և ճանապարհները դեպի արտասահման: Անվանել նոր յերկաթուղիներն ու ջրանցքները: Մեծ Վոլգայի նախագիծը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—ԽՍՀՄ-ի արդյունաբերության գյուղատնտեսության և տրանսպորտի թեմաները վերամշակելիս օգտագործել հասարակագիտության ծրագրի նյութերը

IV. ԽՍՀՄ-Ի ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ (8 ժամ)

ԽՍՀՄ-ի վարչա-քաղաքական յեվ ազգագրական քարտեզը (ԽՍՀՄ-ի կազմն ու բնակչությունը)

1. ԽՍՀՄ ի բնակչությունը: Ընդհանուր թիվը, աճման տեմպերը:

2. ԽՍՀՄ ի ազգային կազմը: Ազգությունների տեղաբաշխումը ԽՍՀՄ-ի տերիտորիայի վրա: ԽՍՀՄ-ի ազգային քաղաքական բաժանումը: ԽՍՀՄ ի դաշնակցային հանրապետությունները և նրանց կենտրոնները. 1) ՌՍՖԽՀ —Մոսկվա 2) ՈՒՍԽՀ—Խարկով, 3) ԲՍԽՀ)—Մինսկ, 4) ԱՍՖԽՀ—Թիֆլիս, 5) ԹՍԽՀ—Աշխաբատ, 6) Ուզբեկստանի— Տաշկենտ, 7) Տաջիկստանի—Ստալինաբադ:

3). Ավտոնոմ հանրապետություններ, վարչական մարզեր և նրանց կենտրոնները.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ավտոնոմ մարզերից և Ազգային շրջաններից քարտեզի վրա անցնել միայն այն, վոր ԱՍՖԽՀ-ի կազմի մեջ են մտնում:

Ցույց տալ նաև այն քաղաքները, վորոնք վարչական կենտրոնի նշանակություն չունեն, սակայն նշանավոր են արդյունաբերության և առևտրի տեսակետից.— Սեվաստոպոլ Նովորոսիյսկ, Աստրախան, Սարատով, Մագնիտոգորսկ, Ստալինսկ, Վլադիվոստոկ:

4. ԽՍՀՄ-ի ազգաբնակչության տարբեր խտությունը: Ցույց տալ ամենախիտ և ամենանոսր բնակված վայրերը: Նշել բնակչության տեղաշարժը դեպի արևելք՝ արդյունաբերական վայրերը և ծայրամասերը յերկրի արտադրողական ուժերի նոր տեղաբաշխման առնչությամբ:

5. Քաղաքային և գյուղական բնակչության տոկոսը և նրա կրած փոփոխությունները՝ ժողովրդական տնտեսության ինդուստրացման առնչությամբ: ԽՍՀՄ-ի պրոլետարիատի թվական աճումը:

Կրկնություն և հաշվառում:

V-րդ.— ԱՇԽԱՐՀԻ ՔԱՐՏԵԶԸ (14 ժամ)

1. Յերկու աշխարհ, յերկու սիստեմ: Սոցիալիզմի յերկիրը—ԽՍՀՄ, կենտրոնը—Մոսկվա: Գաղութներ տիրապետող կապիտալիստական յերկրներ.— Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներ, կենտրոնը—Վաշինգտոն. Անգլիա—Լոնդոն. Ֆրանսիա—Փարիզ. Իտալիա —Հռոմ, Բելգիա—Բրյուսել. Հոլլանդիա—Հաագա Յապոնիա—Տոկիո: Կիսագաղութային յերկրներ՝ Չինաստան - Նանկին, Յեգիպտոս—Գահիրե և այլն: Գաղութային յերկրներ՝ Հնդկաստան, Հնդկաչին, Մալայան Արշիպելագի կղզիները, համարյա ամբողջ Աֆրիկան, Մադագասկար կղզին և այլն: Իմանալ՝ սրանք վոր աշխարհամասում են գտնվում և ինչպես անհամաչափ են զարգացած այդ յերկրները. ինչ գաղութներ են տիրապետում խոշորագույն իմպերիալիստական պետությունները, ի՞նչպես են նրանք թալանում գաղութների աշխատավորությանը և կռիվ մղում իրար դեմ և ինչպես է աճում հեղափոխական շարժումը գաղութներում:

2. Վորոշել ՀԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի Յապոնիայի, Չինաստանի աշխարհագրական դիրքը, նրանց մոտիկությունը ծովին, ծովափի կտրվածությունը, մյուս պետությունների հետ հարաբերություն ունենալու հարմարությունները: Ցույց տալ համաշխարհային հաղորդակցության ճանապարհները, կարևորագույն ստրատեգիական և առևտրական կետերը.— Ջիբրալտար, Սուեզի ջրանցք, Ադեն, Սինգապուր, Կանտոն, Յոկոհամա, Հոնոլուլու, Սանֆրանցիսկո, Պանամայի ջրանցք, Նյու-Յորք, Լոնդոն:

3. Քարտեզով համեմատել աշխարհի գլխավոր յերկրների տարածությունը: Իմանալ Անգլիայի, Ֆրանսիայի, ՀԱՄՆ-ի, Իտալիայի և Յապոնիայի գլխավոր գաղութները:

4. Յերկրագնդի բնակչության ընդհանուր թիվը: Բնակչության տեղաբաշխումը (բնակչության խտությունը քարտեզով): Ցույց տալ առավել խիտ բնակված յերկրները—Չինաստան, Հնդկաստան, Բելգիա, Հոլանդիա, Անգլիա և այլն: Սակավաբնակ յերկրներ.— ԽՍՀՄ-ի հյուսիսը, Սահարա, Ավստրալիա:

5. Գլխավոր պետությունների և նրանց գաղութների ազգաբնակության թիվը:

6. Կրկնություն և թեմայի հաշվառում: Յերկրի քաղաքական քարտեզի տեսությունը:

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Ա.

Ա. աստիճանի դպրոցում բնագիտության խնդիրներն են՝

1. Յելնելով բնության կյանքի, բնության յերևույթների մասին յերեխաների ունեցած պատկերացումներից, ճշտելով այդ պատկերացումները և պայքարելով դրանց կրոնական և սնահավատական խեղաթյուրումների դեմ՝ ընդարձակել աշակերտների՝ կենդանի և անկենդան բնությունից վերցրած նոր փաստերի գիտելիքներով։

2. Կոնկրետ նյութի հիման վրա տալ յերեխաներին՝ նրանց մատչելի և ըմբռնելի ձևով յերևան բերած բնության զարգացման ամենապարզ օրինաչափությունները։

3. Տալ բնության տարերային ուժերին տիրապետելու վառ պատկեր՝ սոցիալիստական շինարարության պրոցեսում։

4. Արթնացնել յերեխաների մեջ բնությունն ուսումնասիրելու հետաքրքրություն և նրանց զինել բնության յերևույթները հետազոտելու տարրական հետազոտություններով։

Այս դեպքում բնագիտությունը դառնում է հզոր մի գործիք՝ միլիոնավոր յերեխաներին վորպես մարտնչող անաստվածներ, վորպես սոցիալիստական տնտեսության ապագա աշխատավորներ դաստիարակելու, ընդունակ՝ ուսուցման ոգակներում (միջնակարգ դպրոցում, ֆաբգործուսում և տեխնիկումներում) տիրապետելու տեխնիկային և գիտությանը։

Ա. Աստիճանի դպրոցում չափազանց դժվար է խոսել բնության մասին յեղած այս կամ այն գիտության սիստեմատիկ ուսումնասիրության մասին, բայց գիտության հիմունքներին տիրապետելու առաջին մերձեցումները լիովին ռեալ խնդիր են հանդիսանում բնագիտության աշխատանքների համար։ Սակայն դեպի բնությունը հայեցողական մոտեցում չպետք է լինի, վոր արտահայտվում է բնության «գեղեցկությունների» առաջ, նրա տարերային ուժերի առաջ խոնարհվելով։ Բնագիտության աշխատանքների մարտական բնույթ, բնության վրա ներգործելու, այն աշխատավորների շահերի օգտին վերափոխելու փաստերի դրսևորում,— ահա բնագիտության աշխատանքների առանձնահատկությունները խորհրդային դպրոցում։

Ուստի բնագիտության ծրագրում, նրա բոլոր հիմնական բաժիններում, բնության զարգացման բոլոր հիմնական օրինաչափությունները պարզելիս պետք է տրվի վառ, ցայտուն նյութ, վոր բնորոշի սոցիալիստական տնտեսության մեջ (արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ) բնության հարստությունների արտադրական տիրապետումը։ Ծրագրում կան ցուցմունքներ՝ յերեխաներին արդյունաբերության հսկաների կառուցման պատկերները տալու՝ գյուղատնտեսության վերակառուցման հարցերի անհրաժեշտության մասին։ Ըստ վորում թեորիայի ուսումնասիրությունը կապ ունի գյուղատնտեսության մեջ յերեխաների տանելիք գործնական աշխատանքների, հասարակական-օգտակար աշխատանքների հետ, հիմք ունենալով աշակերտների հասարակական-արտադրական աշխատանքի յենթարկումը դպրոցի ուսումնական և դաստիարակչական նպատակներին։ Պիտի տրվեն գյուղատնտեսական այնպիսի աշխատանքներ և այն սահմաններում, վորպեսզի նրանց կատարումը նպաստի յերեխաների կողմից «գիտական հիմունքների» տիրապետման ընդարձակմանը և ամրացմանը, նպաստի նրանց կոմունիստական դաստիարակությանը և զինի նրանց իրենց տեսական գիտելիքները պրակտիկայում, փորձնական աշխատանքում գործադրելու կարողությամբ։

Բ.

Ուսման նյութի ընդհանուր սխեման հետևյալն է.

Յերեխաներն առաջին տարում ծանոթանում են բնության մեջ տեղի ունեցող սեզոնային փոփոխություններին՝ յեղանակի փոփոխություններին, բույսերի և կենդանիների կյանքում կատարվող փոփոխություններին։ Բնության այդ սեզոնային փոփոխությունները յերեխաներին տրվում են ընդհանուր պատկերներով, յերեխաների ուշադրությունը հրավիրելով կոնկրետ, վառ փաստերի վրա, ինչպես, օրինակ՝ տերևաթափը, կենդանիների նախապատրաստությունը ձմեռելու համար, կյանքի արթնացումը բնության մեջ գարնանը և այլն։ Այս նյութը մշակվում է յերեխաների անմիջական դիտողությունների հիման վրա։

Իսկ ամառվա մասին նյութը տեղ է գտնում ամառային առաջադրություններում։

Ուսման յերկրորդ տարում բույսերի և կենդանիների կյանքն ուսումնասիրվում է վոչ թե բնության մեջ կատարվող սեզոնային փոփոխությունների ընդհանուր պատկերներով, այլ բնության առանձին խմբավորումներով. ինչպես, օրինակ՝ բանջարանոց, այգի, լճակ, գետ, անտառ։ Ըստ վորում վերցվում է յերեխաներին մոտիկ նյութ, վոր մատչելի է անմիջական դիտողության (բանջարանոց, այգի, ընտանի կենդանիներ և թռչուններ, մոտակա ջրամբար, գետ, մոտակա անտառը)։ Սակայն յերկրորդ տարում յերեխաների մտահորիզոնն ընդարձակվում է ընտանի կենդանիների և թռչունների վայրենի ցեղակիցների ուսումնասիրությամբ՝ թե ձմեռող և թե չվող, ինչպես և ջրային միջատների և կենդանիների ուսումնասիրությամբ։

Ուսման յերրորդ տարում ամբողջապես տրվում է նյութ՝ անօրգանական բնությունից յերեք գլխավոր թեմաներով. «Ջուր» «Օդ» «Հող և օգտակար հանածոներ» ինչպես և, միայն 2 ժամով, ամենատարրական տեղեկություններ՝ էլեկտրական յերևույթների մասին։ Միանգամայն պարզ է, վոր անօրգանական բնության նյութի մշակումը ուսուցչից կպահանջի պրակտիկա դարձնել փորձեր, դիտողություններ կատարելը, ինչպես դեմոնստրատիվ բնույթ կրող (վոր ինքը՝ ուսուցիչն է ցույց տալիս), այնպես

էլ յերեխաների ձեռքով կատարվող։ Այս առումով անօրգանական բնության ծրագիրը բավականաչափ հետաքրքիր նյութ է տալիս։

Ուսման չորրորդ տարում մշակվում է օրգանական բնությունը՝ յերեք թեմայով՝ «Բույսի կյանքը», «Կենդանիների կյանքը» և, վերջապես, «Ինչպես է կազմված և ինչպես է աշխատում մարդու մարմինը»։

Բույսն ուսումնասիրվում է այստեղ վոչ թե հայեցողական ձևով, այլ լուսաբանվում է տարբեր բույսերի հիմնական մասերի տնտեսական նշանակությունը։ Ուշադրություն է դարձվում նաև թե ինչպես բույսերի բազմազան հարմարումները գոյության պայմաններին մարդն օգտագործում է տնտեսական նպատակներով, օրինակ՝ յերաշտադիմացկուն բույսերի նշանակությունը յերաշտի դեմ պայքարելու գործում, Միչուրինի աշխատանքը՝ մրգա-պտղական կուլտուրաները դեպի հյուսիս տարածելու վերաբերյալ։

«Կենդանիների կյանքը» թեմայում ուսումնասիրվում է կենդանիների հարմարումների բազմազանությունը գոյության տարբեր պայմաններին. Ջրային կենդանիներ, յերկկենցաղներ և սողուններ, թռչուններ, գիշատիչ, խոտակեր կենդանիներ (տաք և ցուրտ յերկրների), խոտակեր կենդանիների ընտանեցումը և նրանց նշանակությունը մարդու կյանքում։

«Մարդու մարմնի մասին» թեմայով վերջանում է բնագիտության դասընթացն Ա. աստ. դպրոցում։ Մարդկային մարմնի ուսումնասիրությունը կապվում է առողջապահության հարցերի լուսաբանման հետ։

Ընդհանուր առմամբ Ա. աստիճանի դպրոցում բնագիտության նյութը բավականաչափ ամբողջական է ավարտված։ Դա կարևոր է նրա համար, վոր քառամյա դպրոցն ընդհանուր տարրական կրթության մասսայական դպրոցն է հանդիսանում։ Մյուս կողմից՝ յոթնամյա ուսուցումը վորպես ընդհանուր կրթություն ծավալելիս անհրաժեշտ է, վորպեսզի քառամյա դպրոցի ծրագիրը կազմի միջնակարգ պոլիտեխնիկական դպրոցի սիստեմատիկ դասընթացի օրգանական բաղկացուցիչ մասը։

Այդ պատճառով էլ բնագիտության դասընթացը քիչ թե շատ սիստեմատիկ կերպով սկսում ենք անցնել ուսման յերրորդ տարուց։ Յերրորդ տարում տրվում են տարրական, էլեմենտար տեղեկություններ անօրգանական բնությունից, վոր անհրաժեշտ են բույսերի և կենդանիների կյանքի բարդ պրոցեսները հասկանալու համար, վոր մշակվում են միջնակարգ դպրոցում, ուսման հետագա տարիներում։

Գ.

«Դասատուն պարտավոր է սիստեմատիկ կերպով ու հետևողականորեն շարադրել իր ավանդած դիսցիպլինը, ամեն կերպ վարժեցնելով յերեխաներին՝ աշխատելու դասագրքի վրա, զանազան տեսակի ինքնուրույն գրավոր աշխատանքների, կաբինետում, լաբորատորիայում, ուսումնական արհեստանոցում աշխատելու, և այդ հիմնական միջոցների հետ միասին լայն կերպով գործադրվող փորձերի և ուսումնական պիտույքների զանազան տեսակի դեմոնստրացիաներ, էքսկուրսիաներ (դեպի գործարան, թանգարան, դաշտ անտառ և այլն)։ Դրա հետ միաժամանակ դասատուն պետք է ամեն կերպ օգնի յերեխաներին, յերբ նրանք դժվարանան իրենց ուսումնական պարապմունքներում։ Յերեխաներին սիստեմատիկ կերպով պետք է վարժեցնել

ինքնուրույն աշխատանքի, լայն կերպով գործադրելով զանազան առաջադրանքներ, գիտելիքների վորոշ կուրսի ավարտելուն համընթաց (խնդիրների և վարժությունների լուծում, մոդելների պատրաստում, աշխատանք լաբորատորիաներում, հերբարիումների հավաքում, ուսումնական նպատակներով դպրոցական հողամասերի օգտագործում և այլն) Կ.Կ-ի 1932 թ. օգոստոսի 25-ի վորոշումից)։

Ծրագիրը պետք է տա վոչ միայն ուսումնական նյութի բովանդակությունը, այլև հիմնականում սահմանի նյութի մշակման հաջորդական ընթացքը, ցույց տա աշխատանքի մեթոդները։ Ահա թե ինչու հենց ծրագրի մեջ մտցրած են ցուցմունքներ՝ էքսկուրսիաների, լաբորատոր աշխատանքների, ուսուցչի դեմոնստրացիաների, կենդանի անկյան և բնության մեջ կատարվելիք դիտողությունների, դպրոցական հողամասում տարվելիք աշխատանքների անհրաժեշտ մինիմումի նկատմամբ։

Կենդանի բնության ուսումնասիրության համար չափազանց էական առանձնահատկություն է հանդիսանում այնպիսի դիտողությունների կիրառումը, վորոնք չեն պարփակվում ծրագրի մշակման համար հատկացված ուսման ժամանակի մեջ։ Այնպիսի հարցեր, ինչպես բույսերի զարգացումն ու աճումը, միջատների զարգացումը և այլն, պահանջում են յերկարատև դիտողություններ կենդանի անկյան մեջ, բուն բնության մեջ պահանջում են, վոր փորձեր դրվեն դպրոցական հողամասում, Ահա թե ինչու հարկավոր է աշխատանքներ կազմակերպել պատանի բնագետների, պատանի փորձարարների խմբակներում, վորոնց աշխատանքը հանդիսանում է բնագիտական աշխատանքի անհրաժեշտ բաղկացուցիչ մասը։ Պատանի բնագետների աշխատանքը կրթական արժեքի հետ միասին չափազանց կարևոր է յերեխաներին ինքնուրույն աշխատանքների վարժեցնելու տեսակետից, վոր զարգացնում է նախաձեռնությունը, ինքնագործունեությունը և մշակում հետազոտական աշխատանքի ունակություններ։

Բնության և գյուղատնտեսության մասին դպրոցում ստացած գիտելիքները լրացնելու և ամրապնդելու նպատակով հենց ծրագրի մեջ մտցվում են առաջադրանքներ ամառվա համար։ Այդ առաջադրանքներն հաջողությամբ կատարելու համար պատանի բնագետների կազմակերպությունը խոշոր անելիքներ ունի։

Ամառվա առաջադրանքներ տալը պրակտիկա դարձնելու համար անհրաժեշտ պայման է հանդիսանում ամառվա կատարած աշխատանքի հաշվառումը։ Հենց ամառվա աշխատանքների հաշվառումից էլ պետք է սկսի նոր ուսումնական տարին։ Դա կարևոր է աշակերտների ամառային աշխատանքները դպրոցի պրակտիկայում ամրացնելու համար, դա կարևոր է նաև նրա համար, վոր տալիս է հարուստ, կոնկրետ նյութ, վորի հիման վրա ուսուցիչը կառուցելու է իր հետագա աշխատանքը։

Յերեխաների ամառային բնագիտական և գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար առաջին հերթին պետք է օգտագործվեն այն հնարավորությունները, վոր ստեղծվում են յերեխաների կազմակերպված կյանքի պայմաններում՝ պիոներ-լագերների, մանկական հրապարակների, գաղութների պայմաններում և այլն։ Չպետք է դուրս մնան և բնությունը, և գյուղատնտեսությունը դիտելու համար անհատական առաջա-

դրությունները, հետագայում ստուգելով յուրաքանչյուրի աշխատանքը, հետագայում կազմակերպելով յուրաքանչյուր աշակերտի կողմից ամառային առաջադրանքների կատարման արդյունքների հասարակական ստուգատես՝ ամբողջ դասարանով։

Բնագիտության ծրագրի մեջ են դրվում և առողջապահական գիտելիքներն ու ունակությունները։ Ինչպես արդեն յերևում ե ծրագրի այդ մասի կառուցումից, հիշյալ գիտելիքների և ունակությունների մշակումը բաշխված ե ամբողջ ուսումնական տարվա ընթացքում՝ ըստ ամիսների։ Առողջապահական գիտելիքներին պետք ե հատկացնել ընդհանուր ժամերից։ Ինչ վերաբերում ե առողջապահական ունակություններին, դրանք յերեխաների մեջ պետք ե պատվաստվեն ու դաստիարակվեն վողջ աշխատանքների ընթացքում։

Բ Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ

1. ԱՇՈՒՆ

Աշնան պատկերներ։ Փոփոխություններ բնության և մարդկային աշխատանքների մեջ։ Յեղանակի հետզհետե ցրտելը։ Պայմանական նշաններով կարողանալ նշանակել յեղանակի փոփոխություններն աշնանը․ պարզ յեղանակ, անձրև, տաք և ցուրտ քամիներ։

Դաշտի, բանջարանոցի, այգու անտառի տեսքն աշնանը (եքսկուրսիա դեպի դաշտ, բանջարանոց, այգի, անտառ)։ Ծանոթանալ տեղական ամենատարածված խոտաբույսերի, ծառերի, թփերի մի քանի տեսակների հետ (3 — 4 տեսակ)։ Սաղարթավոր և փշատերև ծառեր։ Տերևների աշնանային գունավորումները։ Տերևաթափ։ Ծանոթանալ ծառապտուղների և սերմերի հետ (կաղին, տխիլ, ընկույզ և այլն)։ Հավաքել պտուղներ, սերմեր՝ ոգտակար թռչուններին ձմրանը կերակրելու համար։

Ծանոթանալ բամբակի, ծխախոտի, ցորենի, գարու պտղատու բույսերի սերմերի հետ։ Ծանոթանալ աշնան պտուղներին։

Թռչունների չուն․ ո՞ւր են չվում թռչունները։ Ամենատարածված՝ ձմեռող թռչունների տեսակները։ Ընտանի թռչունների խնամքը․ վայրի կենդանիների ձմրան պատրաստությունները (սկյուռ, վոզնի, դաշտային մկներ և այլն)։ Մկները և այլ կրծողները վորպես հացահատիկների վնասատուներ։ Պայքար նրանց դեմ։ Ընտանի կենդանիներն աշնանը։ Նրանց խնամքը։ Բնության նյութերի հավաքումը ձմեռային աշխատանքների և դասարանը զարդարելու համար։

2. ՁՄԵՌ

Ձմրան յեղանակի փոփոխության դիտողություններ։ Ցերեկվա կարճանալը։ Գիշերվա յերկարելը։ Ամենակարճ որը ձմրանը։ Ջրի սառելը։ Սառցի գոյանալը, ձյուն։ Պայմանական նշաններով պատկերացնել ձմրան յեղանակի փոփոխությունները։ Ցուրտ և տաք յերկրների պատկերներ։ Ցուրտ յերկրի բուսականությունը (մամուռ, գաճաճ ծառեր)։ Սառցահատ «Կրասին»-ի մասին պատմություն։ Տաք յերկրի բուսականությունը (համառոտ․ արմավենիներ, լիմոնի, նարնջի ծառեր)։ Մշտադալար ծառեր։ Համապատասխան նկարների կամ կինո-ֆիլմի միջոցով ցուցադրել «կյանքը և բնությունը ցուրտ և տաք յերկրներում»։

Ընտանի կենդանիները ձմրանը։ Նրանց պաշտպանելը ցրտից՝ տաք

գոմերում։ Էքսկուրսիա կազմակերպել դեպի կոլխոզի, սովխոզի գոմերը։ Ընտանի կենդանիների բրդափոխությունը, մազափոխությունը ձմռանը։ Նրանց գույնը, նրանց կերակրելը։

Վայրի կենդանիների կյանքը ձմռանը։ Նրանց գունափոխությունը (աղվես, գայլ, նապաստակ)։ Մուշտակավոր կենդանիների վորսի պատկերներ։

Ընտանի ու ձմեռող ոգտակար թռչունների խնամքն ու կերակրելը։ Դիտողություն տեղական թռչուններից մի քանիսի վրա։ Մարդկանց նախապատրաստությունը ձմռանը։ Սննդամթերքներ, հագուստեղեն, անկողին, վառելիք։ Դռները, պատուհանները, պատերը կարգի բերելը։ Յերեխաների ձմռան խաղեր — սպորտ։

3. ԳԱՐՈՒՆ

Դիտողություններ բնության գարնանային փոփոխությունների։ Ցերեկվա յերկարելը։ Յեղանակի տաքանալը։ Ձյան հալոցը, ջրերի ազատվելը սառույցից. սառցահոս. Ջրերի հորդացումը (էքսկուրսիա դեպի դաշտ, գետափ)։ Գետափի քանդումը հոսող ջրի կողմից։

Ավազի և կավի արտաքին հատկությունների համեմատությունը։ Ավազի ֆիզիկական հատկությունները (թափվող, լավ ջուր անցկացնող)։ Կավ (կպչուն, հունցելի, ջուր անցչկացնող, չորանալուց պնդացող, ճաքճքող, ջուրը պղտորող)։ Ավազի, կավի ոգտագործումը շինարարության մեջ (էքսկուրսիա դեպի բրուտանոց)։

Ընտանի և վայրի կենդանիները գարնանը։ Նրանց մազա-բրդափոխությունը։ Տաք որերին բակ հանելը, արոտ հանելը։ Գարնան վերջին սար գնալը (քոչ)։ Գարնանը վերադարձող առաջին թռչունները. նրանց բներ պատրաստելն ու նորոգելը։ Նրանց կյանքը, փետրափոխությունը։ Ընտանի թռչունները գարնանը, նրանց խնամքն ու թուխս դնելը։

Մարդկանց նախապատրաստությունը գարնանը և գարնան աշխատանքներին։ Ծառերի բողբոջումն ու ճյուղեր տալը (դիտողություններ)։ Դուրսը և տանը ցանված բույսերի խնամքը։ Պարզ դիտողություններ բույսերի աճման վրա թե դպրոցական հողամասում և թե դպրոցից դուրս։ Սերմերի ծլման վրա դիտողություններ դիտածի՝ նկարում։

Էքսկուրսիաներ դեպի դաշտ, այգի, անտառ, բանջարանոց։

Կազմել գարնան առաջին բույսերի, ծաղիկների, պտուղների հավաքածուներ։ Ծլեցնել սերմեր, չորացնել բույսեր։

4. ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՄԱՌՎԱ ՀԱՄԱՐ

Գրի առնել և նկարել ջրում ապրող կենդանիները, բանջարանոցի կամ այգու վնասատու միջատները, անտառի թռչունները։ Հավաքել և չորացնել ոգտակար կուլտուրական բույսեր և բանջարանոցի, դաշտի ամենատարածված մոլախոտերը։ Շարունակել խնամել ցանված բույսերը։

5. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբեր. — Մարմնի խնամքը։ Ձեռքերի, վզի, գլխի, քթի, ատամների մաքրությունը։

Ոճառի, ջրի, ատամի խոզանակի, թաշկինակի, յերեսսրբիչի գործածությունը։ Ինչպես պետք է նստել սեղանի առաջ պարապմունքի ժամանակ։

Դպրոցի սանիտար հանձնաժողովի աշխատանքը։

Հոկտեմբեր. — Կերակուր և խմելու ջուր։ Առանձին աման կերակրի համար և նրա մաքուր պահելը։ Ձեռքերի լվանալը ճաշելուց առաջ։ Բերանի վողողելը ճաշելուց և առհասարակ ուտելուց հետո։ Ինչպես պահել խմելու ջուրը։ Յեփ տված ջրի գործածությունը։

Նոյեմբեր. — Քուն։ Քնելու ժամանակը և նրա տևողությունը։ Անկողին և նրա պարագաների խնամքը։

Դեկտեմբեր. — Խաղեր և սպորտ՝ ձմեռը։ Նրանց նշանակությունն առողջության համար։

Հունվար. — Հագուստ, կոշկեղենի նշանակությունը և նրանց խնամքը։

Փետրվար. — Շենքի խնամքը. ոդափոխությունն ու մաքուր պահելը։ Շենքի մաքրելու միջոցները։ Շենքի կարգավորման և ոդափոխության միջոցները։

Մարտ յեվ ապրիլ. — Առողջ և հիվանդ մարդ։ Կեղտը հիվանդության տարածող (քոս, տրախոմա, քոր, ծաղիկ), ինչպես պաշտպանվել վարակումից։ Կրոնական ծեսերի վնասակարությունը։ Հիվանդության դեպքում բժշկին դիմելու անհրաժեշտությունը։ Տնային բժիշկներին («հեքիմ» դալլաք») դիմելու վնասակարությունը։

Մայիս. — Արևը, ջուրն ու ոդն ամրացնում են առողջությունը։ Ի՞նչպես կանոնավոր կերպով ոգտվել արևից, ջրից և ոդից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Առողջապահական այս և հաջորդ խմբերի նյութերի դասավորությունն ըստ ամիսների պարտադիր չէ, այլ հանձնարարվում է միայն այդ նյութն անցնել ամբողջ տարվա ընթացքում։

ՅԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ

1. ԱՅԳԻՆ, ԲԱՆՋԱՐԱՆՈՑՆ ՈՒ ԴԱՇՏՆ ԱՇՆԱՆԸ

Ամառային առաջադրանքների ամփոփումն

Այգի. — Ծանոթություն այգու մրգատու ծառերի և պտղատու թփերի հետ (էքսկուրսիա դեպի այգի)։ Ծառի գլխավոր մասերը. արմատ, բուն տերև։ Սովորել ծառերը տարբերել պտուղներով, տերևներով կեղևներով (վերցնել տեղական մի քանի խիստ տարբերվող ծառեր)։ Ծանոթություն հյութալի պտուղների կազմությանը (կեղև, «միս» սերմերը)։ Մրգերի և պտուղների նշանակությունն աշխատավորների սննդի գործում։ Այգեգործության զարգացումը տվյալ շրջանում։ Այգու վնասատուներն աշնանը (թրթուրների բները չոր տերևներում)։ Վնասատուների մասսայաբար հանդես գալը, սնապաշտների կողմից աստվածային պատիժ համարելը և պայքար այդպիսի նախապաշարումների դեմ։

Պայքար այգու վնասատուների դեմ (նկատի ունենալ տվյալ շրջանի ամենատարածված վնասատուները)։

Էքսկուրսիա դեպի կոլ. և խորհտնտեսության այգիները։

Գործնական աշխատանք. — Կազմել մրգերի, պտուղների ու այգու վնասատուների հավաքածու։

Խնամել և ուսումնասիրել այգու օգտակար թռչուններին: Կազմել նրանց փետուրների հավաքածուներ:

Բանջարանոց.— Բանջարեղենները և նրանց օգտագործումը (կարտոֆիլ, կաղամբ, ճակնդեղ, բողկ, գազար, պամիդոր, վարունգ, ձմերուկ, սոխ, դդում):

Բանջարանոցային գլխավոր մոլախոտերը (տվյալ շրջանի և երեխաներին ծանոթ): Պայքարի միջոցները մոլախոտերի դեմ: Բանջարանոցի մաքրումը, աշնան վարը: Բանջարանոցի վնասատուներն աշնանը (թրթուր, կաղամբի լվիճ, և այլն):

Վո՞րտեղ են ձմեռում բանջարանոցի վնասատուները:

Երեխաների աշնանային աշխատանքները դպրոցի հողամասում.— Դպրոցական հողամասի բերքի հավաքումը, հողամասի մաքրումը, վնասատուների հավաքումն ու վոչնչացումը:

Եքսկուրսիա դեպի բանջարանոց.— Հավաքել և չորացնել բանջարեղեն և կազմել հավաքածու (եքսպոնատներով). պատրաստել նրանց մոդելները: Կազմել բանջարանոցի վնասատուների և մոլախոտերի հավաքածու:

Ուսումնասիրել և խնամել բանջարանոցի օգտակար թռչուններին և կազմել նրանց բների, ձվերի ու փետուրների հավաքածու:

Դաշտ. — Աշխատանքները բամբակի դաշտում, բամբակի չանաքը (եքսկուրսիա դեպի կոլ. և խորհտնտեսությունների բամբակի դաշտերը:)

Բամբակ. — Ծանոթություն բամբակենու հետ (արմատ, ցողուն, տերև և կնգուղ) Բամբակի վնասատուները և պայքար նրանց դեմ: Ի՞նչ է մշակվում բամբակի թելերից և կորիզներից: Բամբակի դերը ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարության մեջ:

Եքսկուրսիա՝ դեպի ջուլհականոց, տեքստիլ, բամբակազտիչ գործարանները:

Գործնական աշխատանք. — Չորացնել բամբակենին, կազմել բամբակի գործվածքների, թելերի հավաքածուներ:

2. ԸՆՏԱՆԻ ՅԵՎ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ՈՒ ԹՌՉՈՒՆՆԵՐԸ

Ընտանի յեվ վայրի կենդանիները տվյալ վայրում

Կատուներ յեվ շներ. — Նրանց կյանքի ուսումնասիրությունը: Պահապան, հովվական, վորսորդական և ռազմական շներ: Շներով ճանապարհորդությունը Հյուսիսում: Կատվի ու շան արտաքին նմանությունն իրենց վայրենի ցեղակիցների հետ ու տարբերությունը նրանցից (վայրի կատու, վագր, առյուծ, գայլ և այլն):

Ձին, վոչխարը, կովը վորպես խոտակերներ: Նրանց օգտակարությունը: Նրանց վայրի ցեղակիցները: (Զեբրա): Եշ և ջորի: Ուղտ: Նրանցից ստացած օգուտը: Խոզը և նրա բազմածնությունն ու ամենակերությունը: Ճագարը, նրա բազմածնությունը: Նրանց նշանակությունը Խ. Ս. Հ. Մ.-ում: Ճագարի կյանքի դիտողություն: Վայրի կենդանիների, կրծողների, խոտակերների ատամները և նրանց տարբերությունը: Ընտանի կենդանիների ընտելացումը և նրանցից ստացած օգուտը:

Ընտանի թռչուններ. — Հավ (վորպես ցամաքային), բադ և սագ (վորպես լողացող թռչուններ): Նրանց վայրի տեսակները: Ի՞նչպես են ապրում

հավերը, բադերն ու սագերը, նրանց կերակրելը: Նրանցից ստացած օգուտները: Տեղական օգտակար և վնասակար թռչուններ: Գիշատիչ թռչուններ, նրանց կյանքը: Ընտանի աղավնիներ: Փոստատար աղավնիներն ու նրանց նշանակությունը յերկրի պաշտպանության գործում:

Եքսկուրսիա դեպի թռչնաբուծարան:

Գործնական աշխատանք. — Պահել հավեր և աղավնիներ: Կազմել օգտակար և վնասակար գիշատիչ և ընտանի թռչունների ձվերի ու փետուրների հավաքածուներ:

Մեղու յեվ շերամ. — Ծանոթություն նրանց կյանքին:

Եքսկուրսիա դեպի մեղվանոց և շերամապահական կայան:

3. ԳԵՏ ՅԵՎ ԼԻՃ

Ի՞նչ է լիճը: Գետի և լճի տարբերությունը: Ի՞նչպես են կազմվում գետերն ու լճերը: Ջրի հոսանքի քայքայիչ աշխատանքը. գետերի ափերի վողողումը: Ինչի՞ց են առաջանում ձորերը: Պայքար հեղեղումների դեմ:

Կյանքը գետում, լճում, ճահճում գարնանը: Հասկացողություն տվյալ շրջանի ջրային բույսերի և կենդանիների մասին:

Տվյալ շրջանի գետերում, լճերում ապրող ձկները: Գորտեր: Գորտերից և գոդոշներից ստացած օգուտը (միջատներով սնվելը): Մոծակն ու նրա զարգացումը: Մալարիայի մոծակի վնասակարությունը: Տարրական հասկացողություն մալարիայից պաշտպանվելու միջոցների մասին: Մալարիայի դեմ ձեռք առնված միջոցները խորհրդային իշխանության կողմից: Այլ վնասատու միջոցներ (ծանոթանալ տվյալ շրջանի յերկու-յերեք տեսակի հետ):

Աշխարհագրական տարրական հասկացողություններ: — Գետի ակունքը և գետաբերանը: Վտակ: Գետի աջ և ձախ ափերը: Լեռներ: Բլուրներ: Հարթավայրեր:

6. ԱՆՏԱՌԸ ԳԱՐՆԱՆԸ

Տեղական ծառերի, թփերի կարևոր տեսակները (եքսկուրսիա դեպի անտառ): Դիտել ծառերի բողբոջների բացվելն անտառում: Գարնանային առաջին ծաղիկներն անտառում (տվյալ շրջանի). սովորել ճանաչել նրանց արտաքին տեսքից: Ամենատարածված միջատները շրջանի անտառում (վնասակար և օգտակար):

Անտառի միջատների դիտողությունը «Կենդանի անկյունում»: Վնասակար միջատներին վոչնչացնող՝ տեղական անտառի ամենատարածված թռչունները: Թռչունների պաշտպանությունը: Ի՞նչ է տալիս անտառը մեր ժողովրդական տնտեսությանը (շինանյութ, վառելիք, թուղթ պատրաստելու նյութ և այլն): Անտառի պաշտպանությունը: Հասկացողություն անտառի տնկարանների մասին:

Եքսկուրսիա դեպի անտառ:

Գործնական աշխատանք.— Մասնակցել անտառի տնկարանի աշխատանքներին, խնամել տունկերը: Կազմակերպել ծառատնկման տոն: Խնամել ծառերը:

Ամառային առաջադրանքներ Հավաքել այգու, անտառի ծառերի, թփե-

րի տեսակների նմուշներ։ Բներից և ճյուղերից հավաքել ծառերի սերմեր՝ տնկարանների համար։ Թռչունների կյանքի դիտողություններ. թուխս նստելը, ձուտերի դուրս գալը, նրանց կերակրելը։ Չորացնել գլխավոր ծառերի, թփերի տերևներ և կազմել հավաքածուներ։ Հավաքել գետերի, լճերի առուների ափերից զանազան գույների և ձևերի քարեր։

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբեր.—Ծանոթություն խմբի յերեխաների ընտանեկան կենցաղային պայմանների հետ։ Բնակարանի առողջությունը։

Ինչպե՞ս են կատարվում շենքի մաքրության պահանջները գյուղում (օդ, տաքություն, լույս, շենքի մաքրումը)։ Դասարանական կահույքն ու նրանցից օգտվելը։

Սանիտարաառողջապահական աշխատանքի կազմակերպումը խմբում։

Հոկտեմբեր-նոյեմբեր։ գյուղացական հասարակական սնունդ։ Բուսական և կենդանական սնունդ. սննդառության առողջապահությունը. ուտելու վորոշ ժամեր, ուտելուց հետո հանգիստ, ատամների խնամքը։

Ծանոթություն ժողսննդի կազմակերպության հետ, մաքրությունը ճաշարանում։

Դեկտեմբեր.—Ձմեռային խաղեր և սպորտ։ Նրանց նշանակությունը ամրապնդման համար։

Հունվար.—Հագուստ և վոտաման։ Տարբեր մատերիաների հատկությունները, վորոնցից պատրաստում են հագուստ և վոտաման։ Հագուստի և վոտամանի խնամքը։

Փետրվար-մարտ.—Ջրից օգտվելը։ Պայքար խմելու ջրի մաքրության համար։ Ջրհորն ու նրա կառուցվածքը (թորումն ու ջրաբաշխումը)։ Ինչպես օգտվել աղբյուրից ու ջրհորից։

Ապրիլ.—Փողոցների և հրապարակների առողջապահիկ դրությունը։

Մայիս.—Ամառվա նշանակությունն առողջության ամրացման համար։

Ամրանը կազմակերպվելու վերաբերյալ աշխատանքի կազմակերպումը. հրապարակներ՝ խաղերի, սպորտի համար։

ՅԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Ամառային աշխատանքների հաշվառում յեվ ամփոփում

1. ՋՈՒՐ

Հասկացողություն պինդ, հեղուկ և գազային մարմինների մասին։ Ջրի յերեք վիճակը։ Ջրի ընդարձակվելը ջերմությունից և սառչելուց։ Հասկացողություն ջերմաչափի և նրանից օգտվելու մասին։ Ջրի յեռալն ու գոլորշիանալը։ Շոգու ընդարձակվելն ու առաձգականությունը (փակ անոթում յեռացած ջրի փորձը)։ Գոլորշու օգտագործումը շոգեշարժի աշխատանքի համար (միայն ցույց տալ)։ Վորտեղից և ի՞նչ դրությամբ է սառցվում ջուրը յերկրիս վրա։ Ընդհանուր հասկացողություն՝ անձրևի, ձյան, մառախուղի, ցողի, յեղյամի առաջացման մասին (ջրի գոլորշիացման և գոլորշին սառը մարմնով սառեցնելու փորձի հիման վրա)։ Ջրի շրջանառությունը բնության մեջ։ Անձրև, ձյուն, ջրի ներծծումը գետնի մեջ։ Վորտեղից է առաջանում

ջրհորի ջուրը։ Առվակներ, գետեր, ծովեր։ Ջրի գոլորշիացումը ջրամբարներում և այլն։ Բարձրից ցած թափվող ջրի ուժի օգտագործումը մարդու կողմից («սպիտակ ածուխ» Յերևանի, Ձորագետի, Քանաքեռի հիդրոէլեկտրակայանները)։ Ջրի լուծող հատկությունը։ Ջրում չլուծվող և լուծվող նյութեր։ Ջրի թորումը։ Ջրի գործածությունը։ Ջրի դերն առողջապահության մեջ։ Ջրի անհրաժեշտությունը մարդկանց, կենդանիների և բույսերի համար։ Խմելու ջուր. աղբյուրի մաքուր ջրի նշանակությունն առողջապահության տեսակետից։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ։ ՄԻՆԻՄՈՒՄ ՓՈՐՁԵՐ

1. Ջրի գոլորշիացումը և գոլորշին նստեցնելը սառը մարմնի վրա.
2. Ջրի ընդարձակվելը տաքությունից։
3. Գոլորշու առաձգականության շուրջը փորձ։
4. Փորձեր՝ ջրի լուծելիության, քամելու, գոլորշիացման վերաբերյալ։

2. ՕԴ

Օդ.—Օդի առաձգականությունը (օդային ատրճանակ), տաքությունից ընդարձակվելը (լավ փակված—խցանած սրվակի տաքացման փորձը)։ Օդը վատ ջերմության հաղորդիչ է. շենքեր կառուցելիս՝ այս հատկությունից օգտվելը (կրկնակի շրջանակներ)։ Ինչպե՞ս են հաղորդում ջերմությունն այլ մարմինները։

Տաք և ցուրտ օդի շարժումը սենյակում։ Քամին վորպես օդի շարժում։ Քամու ուղղությունը վորոշելու գործիք։ Հողմացույց և նրա կազմությունը։ Օդի շարժումը (օդի ճնշումը ցույց տվող փորձ), ծանրաչափ և նրա նշանակությունը։ Քամու աշխատանքը բնության մեջ. փոթորիկ, թարթառ, ավազի լցքեր, գույներ, պայքար նրանց դեմ։ Քամու ուժի օգտագործումը։ Հողմաղացներ։

Օդի բաղադրությունը. թթվածին, բորակածին, ածխաթթու գազ։ Թթվածնի՝ այրմանը նպաստող՝ հատկությունը (փորձ)։

Ածխաթթու գազի հատկությունը—ծանր գազ. այրմանը չի նպաստում և պղտորում է կրաջուրը։ Թթվածնի անհրաժեշտությունն օրգանիզմի համար. ածխաթթու գազի վնասակարությունը կենդանիների համար։

Գործնական աշխատանք.—Մինիմում փորձեր—1. Վառվող մոմի փորձը՝ ցույց տալու օդի շարժումը սենյակում։ Օդի ատրճանակի կազմությունը (օդի առաձգականությունը)։

2. Օդի ջերմահաղորդականության փորձ։ 3. Թթվածնի ու ածխաթթվի հատկությունները վորոշող փորձեր։ 4. Փորձեր օդի ճնշման վերաբերյալ—բաժակի, շշի, տակառի միջոցով։

3. ՀՈՂ ՅԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ

ա) Հող.—Յերկրի վերին հողմահարված շերտը կոչվում է հող։ Հողի կազմը. կավ, ավազ, բույսերի և կենդանիների փտած և վոչ փտած մնացորդները։ Հողի տեսակները.—ավազահող, կավահող, սևահող։

Ջոր և ջրախառն կավը և նրա հատկությունները, գույնը, ամրությունը, ջուր չանցկացնելը (փորձ)։ Հումուսը և նրա համեմատությունը կավի, ավազի հետ. հումուսի այրումը (փորձ)։

Ապառները, որոնցից առաջացել են ավազն ու կավը։ Գրանիտ և լեռնային տեսակների մասին հասկացողություն։

Պինդ մարմինների ընդարձակումը տաքությունից և սեղմվելը ցրտից (փորձ)։

Ջերմության և ցրտության ազդեցությունը լեռնային տեսակների վրա։ Ինչպես առաջացան կավն ու ավազը (լեռնային տեսակների քայքայումից)։

Լեռնային տեսակների, կավի և ավազի օգտագործումը շինարարության մեջ։ Աղյուսի, բրուտանոցային իրերի և ապակու արտադրություններ։ Կրաքար և նրան ճանաչելը (գույնը, կարծրությունը, թթուներից ազդվելը)։ Կրաքարի տարբեր տեսակները. կավիճ, կոշտ կրաքար, մարմար։ Կիր ինչպես ստանալ։ Հանգած և չհանգած կիր, նրա գործածությունը (փորձ հանգած կիր ստանալու համար)։ Կրաքարի զանազան տեսակները։ Ցեմենտ պատրաստելը. ցեմենտի հատկությունը (փորձ), ցեմենտի օգտագործումը շենքերի համար։

բ) Աղ.—*Աղի բյուրեղի գոյացումը (դիտողություն աղի հագեցած լուծույթից բաժանվող բյուրեղների վրա)։ Աղի ստանալը ջրից (ծովից, աղի լճերից և աղբյուրներից)։ Քարաղի շերտերի մշակումը։ Աղային հանքերը Նախիջևանի շրջանում (տարրական հասկացողություն Նախիջևանի շրջանի աղի ստացման մասին)։ Աղի անհրաժեշտությունը մարդու և կենդանիների համար։*

Հասկացողություն պարարտացման համար գործածվող օգտակար հանածոների մասին։

գ) Մետաղներ.—*Երկաթ, պղինձ, կապար, անագ, ալյումին, ոսկի։ Մետաղների արտաքին տեսքը, գույնը, փայլը (դիտել և համեմատել նմուշները)։ Մետաղների հատկությունները (ամրությունը, հալվելը, կռելիությունը, ջերմահաղորդականությունը. համեմատել փայտի հետ)։ Մետաղների փոփոխությունը ջրի, օդի ազդեցությունից։* Երկաթ*ժանգ,* բուճավեր, պղնձաժանգառ։ *Ժանգոտող և չժանգոտող մետաղներ։ Մետաղների նշանակությունն արդյունաբերության, շինարարության և տնտեսության մեջ։*

Հանք.—*հանքի օրինակներ. երկաթահանք, պղնձահանք, կապար (ծանոթություն նմուշների հետ)։ Հանքահանություն (շախտա)։ Մետաղաձուլումը հանքից՝ հալոցի միջոցով։ Հասկացողություն հալոցի (դոմենի) վառարանների մասին, նրանց կառուցվածքը, պահպանությունը։ Մետաղի նշանակությունը Խ. Ս. Հ. Մ.-ի ինդուստրացման գործում։*

Տեղական օգտակար հանածոներ.—*Տուֆ, արթիկ տուֆ, պեմզա, բազալտ։ Սրանց տեսակները, հատկությունները, նշանակությունը շինարարության և արտադրության համար։*

Գործնական աշխատանք.—*Պատրաստել հողի տեսակների, կավի, ավազի, կրաքարի, աղի, հանքերի հավաքածուներ։*

Վառելիքի համար գործածվող օգտակար հանածոներ — նավթ, քարածուխ, տորֆ։

ա) Նավթը՝ *հեղուկ վառելանյութ։ Նավթի ստացումը։ Նավթամուղ։ Նավթից ստացած տարբեր տեսակի նյութերը։ Նրանց օգտագործումն արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ (բենզին, կերոսին, յուղ և այլն։) Նավթհանքերը Ադրբեջանում և Անդրկովկասում։ Նավթային արդյունաբերությունը որպես առաջատար արդյունաբերություն Խ. Ս. Հ. Մ-ում։ Նավթի վճռական դերը սոցիալիստական շինարարության մեջ։*

բ) Քարածուխ.—*Ծանոթություն քարածխի կազմության հետ։ Քարածխի տարբեր տեսակները և նրանց համեմատությունը ածխի և տորֆի հետ։ Քարածխի գույնը. բուսական մնացորդների տեսանելի առկայությունը քարածխի մեջ։ Բույսի ածխանալը — այրումը օդի պակասության դեպքում (ինչպե՞ս են փայտածուխ ստանում)։ Քարածխի գոյացումը նախնական անտառների բուսական մնացորդներից։ Քարածխահանքեր և քարածխի ստացումը (շախտա)։ Քարածխի նշանակությունը սոցիալիստական շինարարության համար։*

գ) Տորֆ.—*Տորֆի առաջանալը։ Բույսերի մնացորդների կուտակումը ճահիճներում։ Տորֆային ճահիճներ և նրանց բուսականությունը։ Տորֆի մշակումը սոցիալիստական տնտեսության մեջ։ Տորֆային նոր շերտեր Նախիջևանում (Շախբուզում) և Հայաստանում*

Էքսկուրսիաներ՝ *դեպի ավազահողային, կավահողային, սևահողային վայրերը։*

Էքսկուրսիա *(ըստ հարմարության)՝ դեպի կրի, տուֆի, պեմզայի, բազալտի, պղնձի հանքավայրերը։*

1. Փորձեր՝ լուծականության, *քամելու, գոլորշիացման վերաբերյալ։*
2. Փորձեր՝ հողի վերաբերյալ *(ավազի, կավի, հումուսի կազմն ու հատկությունները)։*
3. Փորձեր՝ մետաղների վերաբերյալ *(հալումը, ջերմահաղորդականությունը, ընդարձակումը և այլն ։*

4. ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (2 ժամ).

Փոթորիկ։ Ամպրոպն ու կայծակը որպես էլեկտրական երևույթ։ Կայծակի և ամպրոպի հետ կապված կրոնական նախապաշարմունքների անհեթեթությունը։ Շփման միջոցով էլեկտրական կայծ ստանալը։ Շանթարգել և նրա կառուցվածքը։

Առաջադրություններ ամառվա համար.— *Տվյալ շրջանի համար նոր կուլտուրաներ հանդիսացող բանջարեղենների, կերաբույսերի և տեխնիկական բույսերի ցանքս (յուրաքանչյուրից մեկ կամ երկու ներկայացուցիչ) և նրանց խնամքը։ Հավաքել տակիքներ, կոճղեղներ (վայրի)՝ դպրոցական հողամասում տնկելու համար։*

Պատրաստել զանազան սերմերի ու պտուղների հավաքածուներ (տվյալ շրջանի)։

Առողջապահություն

Սեպտեմբեր.— *Աշխատանքի, հանգստի առողջապահությունը դպրոցում։ Շենքի առողջապահիկ վիճակը (մաքրություն, մաքուր օդ, բարեխառնություն)։ Լուսավորությունը ձախից. ինչպես բռնել գիրքն ու տետրը, հեռա-*

վորությունն աչքից։ Աշխատանքի ուղիղ դիրք արհեստանոցում։ Ֆիզկուլտ-րոպեյի նշանակությունը դասի ժամանակ։ Հանգիստը դասամիջոցներին։

Հոկտեմբեր.— *Աշխատանքի և հանգստի առողջապահությունը տանը։ Աշխատանքը բացոթյա և շենքում։ Նախազգուշական կանոններ մրսելու դեմ, բացոթյա աշխատանքի և խաղերի ժամանակ։*

Նոյեմբեր.— *Օրվա ռեժիմը. աշխատանք, հանգիստ, խաղ, սնունդ, քուն։*

Դեկտեմբեր.— *Աշխատանքի և հանգստի առողջապահությունն արտադրության մեջ։ Օդափոխություն, լուսավորություն, մեքենաների նախազգուշական վանդակապատում։ Բժշկական կետեր արտադրության մեջ։*

Հունվար.— *Մարդու հիվանդությունները. վարակիչ և վոչ վարակիչ։ Հասկացողություն հիվանդություններ առաջացնող մանրեների մասին (աչքով անտեսանելի, իսկ մանրադիտակի տակ տեսանելի եյակներ)։*

Փետրվար-մարտ.— *Վարակման միջոցները. շփումով (քոս), սննդի հետ (վորովայնի տիֆ, խոլերա, փորահարինք), ներշնչած օդով (թոքախտ), մանրեներն արյան մեջ ընկնելով (ջերմ և բծավոր տիֆ)։ Կրոնական ծիսակատարությունների վնասակարությունը (հաղորդում, սրբերի պատկերներ, խաչեր, քարեր համբուրելը և այլն։*

Ապրիլ.— *Ճանճերը, մոծակները, վոջիլները, վորպես վարակ տարածողներ։ Պայքար նրանց դեմ։*

Մայիս.— *Կազմակերպում՝ ամառային կազդուրիչ աշխատանքի. բացոթյա կազմակերպված աշխատանք, կանոնավոր սնում, քուն, ֆիզկուլտուրա, ազատ խաղեր։ Մարմնի ամրապնդման օրենքները։ Լագերների և հրապարակների նշանակությունը՝ աշակերտների և պիոներների համար։ Սանատորիաներ, հանգստի տներ՝ աշխատավորների համար։*

ՉՈՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

1. ԲՈՒՅՍԵՐԻ ԿՅԱՆՔԸ

Բույսերի գլխավոր մասերը.— *Բույսերի բազմատեսակ սերմերն ու պտուղները (դիտել, համեմատել և հավաքածուներ կազմել)։*

Ինչպես են տարածվում պտուղներն ու սերմերը քամու, կենդանիների (կարթավոր պտուղներ — կոծոծներ) և թռչունների միջոցով։

Ծաղկի գլխավոր մասերը. վարսանդ, առեջքներ (դիտել խոշոր ծաղկի վրա)։ Պտուղների և սերմերի զարգացումը ծաղկից։

Արմատ. բազմազան արմատներ.— *Արմատի նշանակությունը բույսերի համար։ Արմատները բույսին տալիս են ջուր և սննդարար նյութեր։ Արմատը բույսին ամրացնում է հողի մեջ։ Հողի նշանակությունը բույսի զարգացման համար։*

Ցողուն. *Զանազան ցողուններ. խոտի, փայտի, ուղղաձիգ, մագլցող, փաթթվող ցողուններ։ Ցողունի նշանակությունը բույսի համար. ցողունի միջոցով փոխադրվում են ջուր և սննդանյութեր։*

Տերև.— *Զանազանաձև տերևներ (պատրաստել հավաքածուներ)։ Տերևի նշանակությունը. բույսերը սննդանյութեր վերցնում են վոչ միայն*

արմատներով, այլև տերևների միջոցով՝ օդից։ Ջրի գոլորշիացումը տերևի միջոցով (փորձ)։

Բույսերի տարբեր մասերի օգտագործումը տնտեսական նպատակներով. ծանոթություն կուլտուրական բույսերի տարբեր խմբերի հետ։

Բույսերի հարմարվելը գոյության տարբեր պայմաններին

Ջրային բույսեր.— *Թույլ ցողուն, շատերը չունեն արմատ։ Զմեռելու միջոցները։*

բ) Խոնավ յեվ ստվերոտ տեղերի բույսեր.— *Անտառային խոտեր։ Լայնատերև, շուտ թառամող և վոչ խորարմատ բույսեր։ Ծառի տեսքը խիտ անտառում և բաց տեղում։ Խիտ տնկիների նշանակությունը՝ շինափայտ և առհասարակ փայտանյութ ստանալու համար։*

բ) Չոր վայրերի բույսեր.— *Հողից ջուր ստանալու հարմարանքները (խոր և տարածուն արմատներ) խոնավությունը պահպանելու հարմարությունները։ Մազմզուկներով ծածկված ցողունների, տերևների հաստածավորված նեղ մասերը։ Անտերև բույսեր (կակտուսներ)։ Ցերաշտադիմացկուն բույսերի օգտագործումը՝ անապատային վայրերում տնկելու համար։*

2. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ

ա) Կյանքը ջրում.— *Հասկացողություն ձկան մասին։ Ձկան հարմարվելը ջրային կյանքին։ Ձկների ձու՛դնելը։ Ձկներից ստացած օգուտը։ Ձրկնային արդյունաբերությունը Հայաստանում (Սեվանում) նշանակությունն ու զարգացման ուղիները։*

Հարևան հանրապետությունների ձկնարդյունաբերությունը։ Ծովերում և գետերում ապրող կենդանիները, նրանց հարմարվելը ջրային կյանքին (օրինակ՝ փոկեր, կորոլներ, ծովոզնիներ, շնաձկներ), լուսատու ձկներ։

Ծովային կենդանիներ.— *Փոկեր, կետ և նրանց տված օգուտը. փոկորսություն և կետորսություն։*

բ) Կյանքն օդում.— *Թռչունների հարմարանքները թռչելուն. փետուրների և բմբուլների նշանակությունը։ Թռչունների կազմության առանձնահատկությունները (կրանը, թևերը, վոսկորները), թռչունների արտաքին տեսքը՝ կապված նրանց կենցաղի և սնունդ ձեռք բերելու յեղանակի հետ (տալ տվյալ շրջանի գիշատիչ, հատիկակեր, միջատակեր թռչուններից մի քանի ցայտուն օրինակներ)։*

Հավերը վորպես վատ թռչողներ։ Հավի ձվի կազմն ու նշանակությունը։ Հավաբուծությունը և նրա նշանակությունը Հայաստանում։ Հասկացողություն ինկուբատորի մասին (ինկուբատորի կազմությունը), ճուտերի դուրս գալն ինկուբատորում։

գ) Կյանքը ցամաքի վրա.— *Գորտերը վորպես օրինակ յերկկենցաղ կենդանու։ Ցամաքային կենդանիների բազմազանությունը։ Թունավոր և անթույն օձեր։ Հայաստանի տվյալ շրջանի օձերը։ Կրիա, կոկորդիլոս, նրանց պաշտպանող վահանները։ Մողեսները և նրանց պոչերի դյուրահատումն ու ռեգեներացիան։ Տաք և ցուրտ յերկրների գազանները և նրանց իրենց միջավայրին հարմարվելը։ Գիշատիչներին ընտելացնելու ուղղությամբ կա-*

տարված աշխատանքները։ Բացառապես բուսական կերակրով սնվող կենդանիներ։ Նրանց ընտելացման դյուրությունը։ Այդ կենդանիների խոշոր նշանակությունը մարդու համար։

3. Ինչպես է կազմված յեվ ինչպես է աշխատում մարդու մարմինը

Մարդու և կենդանու արտաքին տեսքի համեմատությունը։ Մարմնի գլխավոր մասերը և ծածկույթը. գլուխը, իրանը, վերջավորությունները, մաշկը, մազերը (կենդանիների բուրդը)։ Մկանները ու նրանց նշանակությունը։

Կմախքի գլխավոր մասերը.— Վողնաշար, գանգ, կրծքի վանդակ, վերջավորություններ։ Կմախքը, մարդու հենարանն է և ներքին որգանների պաշտպանը։ Աշխատանքի ժամանակ վոչ ուղիղ դիրքի պատճառով վողնաշարի ծռումները է պայքար սրա դեմ, ֆիզկուլտուրայի նշանակությունը։

Ներքին որգաններ.— Գանգուղեղի և վողնուղեղի տեղն ու արտաքին տեսքը։ Սիրտը, թոքերը, ստամոքսը, աղիքները, լյարդը, յերիկամները, միզափամփուշտը։ Սննդի անհրաժեշտությունը մարմնի աճման և աշխատանքի համար (ընդհանուր հասկացողություն)։ Սննդի տեսակները։ Մարսողությունը մարդու մեջ։ կերակրի մանրացումը բերանում։ Նրա փոփոխությունն ստամոքսում։ Կերակրի ներծծումն աղիքներում։ Վարակիչ հիվանդություններ, վորոնք տարածվում են սննդի մեջ ընկած մանրէների միջոցով (տիֆ, խոլերա, սկարլատինա և այլն)։ Հասկացողություն մանրէների մասին (հասարակ աչքին տեսանելի, միայն միկրոսկոպով դիտելի)։ Վարակ տարածող ճանճեր և պայքար նրանց դեմ։ Կերակուրը մաքուր պահելու անհրաժեշտությունը։ Արյան, սրտի և արյունատար անոթների նշանակությունը։ Սննդանյութերի և թթվածնի բաշխումը մարմնի մեջ, արյան միջոցով։ Մալարիայով հիվանդանալը՝ արյան մեջ մալարիայի միկրոբներ ընկնելու հետևանքով։ Մոծակը՝ մալարիա տարածող։

Մոծակի զարգացման պայմանները (լճեր, ճահիճներ)։ Մալարիայի վայրերը Հայաստանում։ Մալարիայի դեմ պայքարի ուղիները, պայքար մալարիայի դեմ Հայաստանում (ճահիճների չորացնելը, ջրանցքների առուների կանոնավորելը և այլն)։ Մալարիայի կայանները Հայաստանում և նրանց դերը։ Ծանոթություն տեղական շրջանի մալարիայի կայանների հետ (եքսկուրսիա դեպի մալարիայի մոտակա կայանը)։

Շնչառություն. — Հասկացողություն թոքերի կազմության մասին։ Թթվածնի նշանակությունը մարդու և կենդանիների համար։ Ածխաթթու գազի դուրս գալը արտաշնչման ժամանակ (փորձ՝ արտաշնչելով կրաջրի մեջ)։ Թոքախտը և նրա տարածման ուղիները. Ծխելու վնասը։ Հասկացողություն թունավոր գազերի և նրանցից պաշտպանվելու մասին (հակագազ)։ Ինչպես է ազդում թունավոր նյութը մարդու և կենդանու որգանիզմի վրա։

Ուղեղի յեվ նյարդերի նշանակությունը.— Զգայարանների դերը և կապն ուղեղի հետ։ Ի՞նչպես պահպանել տեսողությունը և լսողությունը։ Ի՞նչպես պահպանել առողջությունը։ Մարմնի ամրապնդումը. ֆիզկուլտուրա, կանոնավոր սնում, կազմակերպված աշխատանք և հանգիստ։ Ալկոհոլի վնասակարությունը և պայքար նրա դեմ։ Ինչպես պաշտպանվել հիվանդություններից։ Պատվաստումներ վարակիչ հիվանդությունների դեմ։

Եքսկուրսիաներ յեվ դիտողություններ.— Եքսկուրսիաներ դեպի ջրամբարներ ու դաշտ՝ դիտելու բուսականության առանձնահատկությունները և սերմեր ու պտուղներ հավաքելու համար։

Գյուղատնտեսական աշխատանքներ.— Մասնակցել դպրոցական հողամասի բերքահավաքին, նոր կուլտուրաների փորձերի հաշվառմանը։

Կազմակերպել կենդանի անկյուն, ակվարիում, տերրարիում, դիտել բույսերի և կենդանիների կյանքն այնտեղ։

Պատրաստել կենդանիների, թռչունների կմախք, գանգ, վերջավորություններ, ինչպես և եքսպոնատներ ֆորմալինի (մեջ), մոդելներ։

Կազմել տվյալ շրջանի ջրային, խոնավ և չոր վայրի բույսերի հավաքածուներ։

Կազմել մազերի, բրդերի, փետուրների հավաքածուներ։

Կատարել (ուսուցչի կողմից) գորտի, ձկան, թռչունի պարզ հատումներ՝ ծանոթանալու նրանց մարմնի գլխավոր մասերին և որգաններին։

ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

(ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԻԱՆՏ)

Բացատրական նամակ

Համ. Կ. (բ) Կ. Կենտրոնական Կոմիտեն պոլիտեխնիկական կրթությունը բնորոշում է վորպես կոմունիստական դաստիարակության բաղկացուցիչ մի մաս, վորը դպրոցականներին պետք է տա «գիտությունների հիմունքներ» «Տեսականում յեվ գործնականում նրանց ծանոթացնի արտադրության բոլոր ճյուղերին» ուսուցման և արտադրողական աշխատանքի միջև սերտ կապ ստեղծի այնպիսի հիմունքներով, վոր «հասարակական արտադրողական վողջ աշխատանքը յենթարկված լինի դպրոցի ուսումնական և դաստիարակչական նպատակներին»։

Հետևաբար՝ պոլիտեխնիկական կրթությունը դպրոցում բաղկացած է «գիտությունների հիմունքների» (բնագիտություն, մաթեմատիկա, հասարակագիտություն) ուսումնասիրությունից և պոլիտեխնիկական աշխատանքային ուսուցումից։

Տվյալ ծրագրերը հանդիսանում են աշխատանքային ուսուցման ծրագրեր, և աշխատանքային ուսուցումը մենք համարում ենք վորպես ինքնուրույն մի դիսցիպլինա։

Յելնելով դպրոցական կրտսեր տարիքի առանձնահատկություններից, Ա. աստ. դպրոցի առաջ պոլիտեխնիկական աշխատանքային ուսուցման բնագավառում դրված են հետևյալ կոնկրետ խնդիրները.

1. յերեխաների մեջ զարգացնել հետաքրքրություն դեպի տեխնիկան.

2. ընդարձակել յերեխաների տեխնիկական մտահորիզոնը՝ նյութերի տեխնոլոգիական հատկությունների, նրանց մշակման ձևերի, գործիքների պատրաստման և օգտագործման, մեքենաների և մեխանիզմների, եներգիայի օգտագործման տարբեր ձևերի և աշխատանքի կազմակերպման բնագավառներում, ինչպես և յերեխաներին ըմբռնել տալ արտադրության գլխավոր ճյուղերը և նրանց ընդհանուր հիմունքները.

3. աշխատանքային գործունեության միջոցով տիրապետել գլխավոր արտադրությունների տարրական գործիքների գործածության սկզբնական կարողություններին.

4, զարգացնել յերեխաների մեջ արտադրական տեխնիկական ընդունակություններ և կոնստրուկտիվ ստեղծագործության ունակություններ.

5. հիմք դնել նոր սոցիալիստական աշխատանքային կուլտուրայի (կոլեկտիվիզմ, կազմակերպվածություն, դիսցիպլինարություն և այլն)։

Ըստ Մարքսի ուսմունքի՝ աշխատանքը բաղկացած է յերեք հիմնական էլեմենտներից.

1. մարդու նպատակահարմար գործունեությունից,
2. աշխատանքի առարկայից (մշակվող նյութից),
3. աշխատանքի գործիքից (գործիք, մեքենա, եներգիա)։

Այդ հիմնական էլեմենտների ուսումնասիրությամբ զբաղվում են այնպիսի գիտություններ, ինչպես աշխատանքի գիտական կազմակերպությունը (կամ արտադրության ռացիոնալիզացիան), առանձին արտադրությունների տեխնոլոգիան և մեքենագիտությունը։

Առաջին աստ. դպրոցի առաջ խնդիր է դրվում՝ յերեխաներին տարրական ձևով ծանոթացնել այդ գիտությունների՝ աշխատանքի կազմակերպման տեխնոլոգիայի և մեքենագիտության հիմունքների հետ։ Յելնելով սրանից՝ պոլիտեխնիկական աշխատանքային ուսուցման ծրագիրը բաղկացած է յերեք հիմնական բաժիններից (տես ծրագրերի սխեման եջ 110). 1. աշխատանքի և արտադրության կազմակերպման ուսումնասիրությունը, 2. հիմնական արտադրությունների և գլխավոր նյութերի մշակման ծանոթություն և 3. մեքենագիտության հիմունքների, տեխնիկական մեխանիկայի և եներգետիկայի հիմունքների տարրական ուսումնասիրություն։

Արտադրության գլխավոր ճյուղերի հետ յերեխաներին ծանոթացնելու նպատակով կատարած նյութերի ընտրությունը բնական է, վոր պետք է վորոշվի դպրոցական տարիքի յերեխաների առանձնահատկություններով։

Դպրոցական կրտսեր տարիքի յերեխաների մտավոր պահանջները և հետաքրքրությունը մեծ չափով ուղղված են դեպի արտաքին աշխարհի ճանաչումը։ Հարցասիրություն և հետաքրքրություն — ահա այդ տարիքի բնորոշ գծերը։

Սակայն սրա հետ միասին պետք է ընդգծել, վոր նրանց հետաքրքրությունները բավականաչափ կայուն չեն, և նրանք կարիք են զգում տպավորությունների ավելի հաճախակի փոփոխման։ Ուստի և 7-ամյակի 1-ին աստիճանը, 2-րդ աստիճանի համեմատությամբ՝ ընդգրկում է արտադրությունների և մշակվող նյութերի ավելի բազմազան շրջաններ, ըստ վորում այդ բազմազանությունն 1-ին աստիճանի վերջում աստիճանաբար նվազում է, մի հանգամանք, վոր ուսուցման 4-րդ տարում ստեղծում է բնական անցում դեպի 7-ամյակի հինգերորդ խմբի ծրագիրը։

Հիմնական արտադրությունները, վորոնց հետ յերեխաները պետք է ծանոթանան 1-ին աստիճանում, հանդիսանում են ա) գյուղատնտեսությունը, բ) տեքստիլ արտադրությունը, գ) պոլիգրաֆ արտադրությունը, դ) շինարարական գործը, ե) փայտամշակման և զ) մետաղամշակման արտադրությունը։

Հիմնական նյութերը, վորոնցով յերեխաներն աշխատում են աշխատանքային սենյակում, ըստ ծրագրի հետևյալներն են՝ թուղթը, տեքստիլը, շինարարական նյութերը, փայտը և մետաղը (գլխավորապես մետաղալարը և թիթեղը)։

Ուսուցման բոլոր չորս տարվա ընթացքում տրվում է գյուղատնտեսական աշխատանք։ Մեխանիկայի և եներգետիկայի, ինչպես և արտադրության մեջ մեծերի աշխատանքի կազմակերպման էլեմենտների ծանոթությունը տրվում է բոլոր չորս տարիներում՝ աճող բարդությամբ։

Տարրական դպրոցում պոլիտեխնիկական աշխատանքային ուսուցման հիմնական ուղիները են հանդիսանում.

1. յերեխաների աշխատանքի կազմակերպումը աշխատանքի սենյակում և դպրոցին կից հողամասում.

2. շրջապատի արտադրական միջավայրի ուսումնասիրությունը և կապը նրա հետ (ֆաբրիկա, գործարան, կոլխոզ, տնայնագործական արհեստանոց և այլն):

Աշակերտության պոլիտեխնիկական աշխատանքային ուսուցումն իրականացնելու համար դպրոցն ունի մի շարք միջոցներ, ինչպես օրինակ՝ արտադրողական աշխատանք, տեխնիկական մոդելացում, լաբորատորական տեխնոլոգիական աշխատանք, եքսկուրսիաներ դեպի տարբեր արտադրություններ, տեխնիկական խմբակներ, մոդելներ, գրքեր, տեխնիկական զննական իրեր, կինո, դիապոզիտիվներ յեվ այլն:

Այս բոլորի մեջ առաջին տեղը գրավում ե յերեխաների արտադրողական աշխատանքը աշխատանքի սենյակներում և դպրոցի հողամասում: Աշխատանքային գործունեության միջոցով յերեխաները ներգրավվում են մեծերի աշխատանքային գործունեության մեջ, ուսումնասիրում են տարբեր նյութերի տեխնոլոգիական առանձնահատկությունները, նրանց մշակման, տեխնիկական ունակություններ են ձեռք բերում գործիքների և 1-ին աստիճանի տարիքին մատչելի վորոշ հաստոցների ու մեքենաների գործածության մեջ, մոտենում են արտադրության գլխավոր ճյուղերի ուսումնասիրության, զարգացնում են իրենց կոնստրուկտիվ ստեղծագործական ընդունակությունները և այլն: Յերեխաների աշխատանքային գործունեությունը պետք ե կրի արտադրողական բնույթ. վորպես աշխատանքի արդյունք պետք ե ստացվեն հասարակական ռեալ արժեք ունեցող այս կամ այն իրերը (խաղալիքներ, դպրոցական պարագաներ, կենցաղի իրեր և այլն): Յերեխաների աշխատանքը վոչ մի դեպքում չպետք ե միայն ծառայի կրթական աշխատանքի իլյուստրացիայի համար, ինչպես այդ տեղի յե ունեցել մինչև այժմ: Սակայն մյուս կողմից՝ յերեխաների աշխատանքի բովանդակությունը պետք ե յենթարկվի դպրոցի ուսումնական-դաստիարակչական նպատակներին: Այն բոլորը, ինչ յերեխաները շինում են, պետք ե արդարացվի այն գիտելիքներով և կարողություններով, վոր ձեռք են բերում յերեխաները՝ շինելով այս կամ այն իրը:

Յերեխաների աշխատանքային ուսուցման ընթացքում ծրագրերը խոշոր տեղ են հատկացնում ձեռքի աշխատանքներին: Սրանց արժեքը վորոշվում ե վոչ միայն ձեռք բերվող կարողություններով և գիտելիքներով, վոր անհրաժեշտ են յուրաքանչյուր արտադրողական աշխատանքի ժամանակ, այլև նրանով, վոր առանց ձեռքի գործիքների գործածության կուտակված փորձի դժվար ե ըմբռնել մեքենայի եյությունը, վոր, ամբողջությամբ կամ իր առանձին մասնիկներով, ըստ Մարքսի վոչ այլ ինչ ե, յեթե վոչ ձեռքի գործիքների ձևափոխություն: Յերեխաների աշխատանքի գործունեության համար ընտրված են այնպիսի նյութեր, պրոցեսներ, գործիքներ, վորոնք ամենից ավելի տիպիկ են արտադրությունների մեծամասնության համար և միաժամանակ ամենից ավելի մատչելի՝ տվյալ տարիքին, յերեխաների մեջ դաստիարակում են ֆիզիկական անհրաժեշտ հատկություններ և

տալիս են աշխատանքի մի ձևից մյուսին հեշտությամբ փոխանցվող ունակություններ:

Տարբեր նյութերի մեխանիկական մշակման բազմազան ոպերացիաներից, ինչպես ասացինք, տարրական դպրոցի համար ընտրված են ամենից ավելի տիպիկը: Այդ ոպերացիաների շրջանը կարելի յե սխեմատիկ կերպով ներկայացնել հետևյալ ձևով՝

1. մշակման պրոցեսներ. — Կտրելը (կտրել դանակով, մկրատով, ստամեսկայով) սղոցելը, ռանդելը, ծակելը, փշրելը, կորացնելը, մոդելացումը, ձուլելը և այլն.

2. սարքավորման պրոցեսներ. — Գամերով, բոլտերով, պտուտակներով (զակլյոպկաներով) միացում, թելով և մետաղալարով կարելը, կապելը, վոլորելը, հյուսելը, գործելը, սոսնձելը, զոդելը, բթակներով միացում և այլն.

3. ստուգման, չափման պրոցեսներ. — Չափում, նշում (ռազմետկա):

Արտադրության մեծամասնության համար տիպիկ այդ պրոցեսներին համապատասխան ընտրված են հետևյալ տարրական գործիքները՝ դանակը, մկրատը, սղոցը, ծակող, փորող (դոլբյոժնի), ռանդող գործիքներ, խածաններ, տափակաբերան և կլորաբերան, մոդելացման և ձուլման հարմարանքներ, մուրճ, պտուտակիչ, բանալի, ասեղ, վրձին, զոդիչ, մետր, անկյունարդ, կարկին:

Նյութերից ընտրված են այնպիսիները, վորոնք կյանքում շատ տարածված և արժեքավոր են կրթական և դաստիարակչական տեսակետից:

Թղթի և կարտոնի աշխատանքները նպաստում են ձեռքի մանր մկանների զարգացման ճարպկության, շարժումների նրբության, դաստիարակում են ճշտապահություն և կազմակերպվածության ունակություններ: Թղթե իրերը (իզդելիա) խոշոր արժեք են ներկայացնում յերեխաների աշխատանքի պրոդուկցիայի հասարակական օգտակար նշանակության տեսակետից, վորովհետև յերեխաներն ուսուցման առաջին տարվանից իսկ կարող են իրենց և ուրիշների համար շինել խաղալիքներ, ուսումնական պարագաներ և այլն: Թղթի և կարտոնի աշխատանքների պրոցեսները տիպիկ են բազմաթիվ հարթ մակերևույթ ունեցող նյութերի համար (մկրատով կտրելը, ծալելը, սոսնձելը, կարելը և այլն):

Տեքստիլ նյութերով աշխատելը շարունակելով մանր մկանների զարգացումը, յերեխաներին հնարավորություն ե տալիս իրենց կյանքի փորձով համոզվել, թե մեքենայի աշխատանքն ինչ առավելություններ ունի ձեռքի աշխատանքի համեմատությամբ (յերեխաները յերկրորդ տարվանից արդեն սկսում են գործնականում ծանոթանալ կարի մեքենայի հետ), նույնպես հնարավորություն ե տալիս լաբարատոր փորձերով ծանոթացնել յերեխաներին մանրաթելավոր նյութերի տեխնոլոգիական հատկությունների հետ և մոտեցնում ե նրանց մանելու և գործելու սկզբունքների հասկացողությունը:

Փայտն ամենից ավելի հարուստ նյութ ե այն բազմազան ձևերով, վոր նրան կարելի յե տալ (կխաններ, չորսվիկներ—բրուսոկ, անիվներ և այլն), և այդ պատճառով ել նա ամենից ավելի հետաքրքիրն ե կոնստրուկտիվ տեսակետից: Նա նույնպես հետաքրքիր ե գործիքների և մշակման յեղանակի բազմազանության տեսակետից: Այս պատճառով փայտը, վոր իդեպ, յերեխաների համար ամենից ավելի սիրելի նյութն ե հանդիսանում, ծրա-

գրում ամենամեծ տեղն է գրավում և ավանդվում է ուսուցման բոլոր չորս տարիներում։

Շինարարական նյութերը (կավ, ավազ, ցեմենտ, կիր և այլն) հանդիսանալով իրենց կառուցվածքով յուրահատուկ նյութեր (ցրվող, կպչուն, հեղուկ)՝ յերեխաներին ծանոթացնում են այնպիսի նոր պրոցեսների հետ, ինչպես մոդելացումը, ձուլումը, թրծելը և այլն, վորոնք չեն պատահում վերոհիշյալ նյութերի մշակման ընթացքում։ Բացի դրանից, նրանք նույնպես նպաստում են յերեխաների մանր մկանների զարգացման և իրենց մշակման բացառիկ թեթևությամբ, մանավանդ փոքրիկ յերեխաներին մեծ բավականություն են պատճառում։

Մետաղը, վոր պոլիտեխնիկական աշխատանքային ուսուցման համար ամենից ավելի արժեք է ներկայացնում, 1-ին աստ. դպրոցում, շնորհիվ իր մեծ դիմադրության և մշակման դժվարության, համեմատաբար շատ փոքր տեղ է գրավում և, ինչպես ինքնուրույն մի բաժին, տրվում է միայն ուսուցման 4-րդ տարում։

Ծրագրում մտցված է գյուղատնտեսական աշխատանք և ծանոթություն գյուղատնտեսական արտադրության հիմունքների հետ՝ մի շարք պարապմունքների միջոցով, վորոնք յերեխաներին պետք է տան բուսաբուծության և մանր անասնաբուծության գիտելիքների և ունակությունների վորոշ պաշար։ Կառուցված լինելով պարզից դեպի բարդը — հեշտից դեպի դժվարը, ընդհանուր սկզբունքով՝ գյուղատնտեսության մասին ուսուցման առաջին յերկու տարում սկսելով ծաղիկների և բանջարեղենի խնամելու աշխատանքից, ուսուցման յերրորդ տարում անցնում է հողի մշակման՝ դպրոցի հողամասում և ջերմոցներում կատարվող աշխատանքներին։ Չորրորդ տարում՝ յերեխաներին էքսկուրսիաների միջոցով ծանոթացնում է դաշտավարության, հողի մեքենայական մշակման և գյուղատնտեսական մեքենաների հետ։

Սրա հետ միասին ուսուցման յերկրորդ և չորրորդ տարիներում տրվում են նաև մանր ընտանի անասուններին (ճագարներ, հավեր) խնամելու գիտելիքներ և կարողություններ։

Ինչպես ծրագրից յերևում է, գործնական և տեսական պարապմունքները տարվում են զուգընթաց և հանդիսանում են աստիճանաբար զարգացող ու բարդացող գիտելիքների և աշխատանքային կարողությունների մի սիստեմ, ըստ վորում յերեխաները գիտելիքները ձեռք են բերում հիմնականում աշխատանքային գործունեության պրոցեսում և այն մասամբ ընդարձակում են՝ էքսկուրսիաների միջոցով, լաբորատոր աշխատանքներում, տեխնիկական գրքույկների ընթերցանությամբ և այլն։

Գործիքների տիրապետման կարողությունների աստիճանական զարգացումը պայմանավորվում է այն սկզբունքով, ըստ վորի սահմանափակ քանակի պարզ ու թեթև գործիքներից անցնում ենք բազմազան և դժվարին գործիքների։ Այսպես, որինակ, փայտե աշխատանքներում յերեխաներն սկսում են սղոցից, մուրճից և անցնում են գչրակին (բուրղուին), տովրէչին (բաշպիլ), խարտոցին, շաղափին, հետո՝ ստամեսկային և թակին (փայտե մուրճ), դրանից հետո՝ ռանդային, շերխեբելին և, վերջապես, կլոր սղոցին ու կիսաֆուգանին։

Այս սկզբունքը պատահական չէ, այլ բխում է յերեխայի զարգացման առանձնահատկությունից։ Մկանային սիստեմի զարգացման տեսակետից՝ առաջին աստիճանի դպրոցականը տարբերվում է մեծահասակից և դեռահասից վոչ միայն քանակապես, այլև վորակապես։ Այդ տարիքի յերեխայի մկանները զարգացած են անհավասարաչափ և միակողմանի։ Համեմատաբար ավելի շատ են զարգացած խոշոր մկանունքները և զգալիորեն ավելի թույլ՝ վերջավորությունների մանր մկանները։

Ձեռքի թաթի զարգացումը, վոր այնքան կարևոր դեր է կատարում և դպրոցական այլ պարապմունքների ժամանակ (գիր, նկարչություն և այլն), բավականաչափ յետ է մնում յերեխայի ընդհանուր շարժողական սիստեմի զարգացումից։ Կավի, թղթի, տեքստիլի աշխատանքները զարգացնում են ձեռքի հենց այդ մանր մկանները, վորով և խոշոր չափով պայմանավորվում է նրանց կարևորությունը՝ աշխատանքային ունակությունների մշակման պրոցեսում, մի բան, վոր նպաստում է նաև դպրոցականի գրի վորակի լավացմանը։

Աստիճանական աճման նույն պրոցեսը տրված է տեխնոլոգիական նյութերի դասավորման ընթացքում։ Այսպես, որինակ՝ յերեխաներն առաջին խմբի թղթի աշխատանքի ժամանակ ծանոթանում են թղթի արտաքին նշանների, հատկությունների և կյանքում նրանց ոգտագործման ձևերի հետ։ Յերկրորդ տարում յերեխաները խորացնում են իրենց տեխնոլոգիական գիտելիքները մի շարք նոր խնդիրներով՝ թղթի և կարտոնի արտադրության ընթացքում նրանց հատկությունների փոփոխման մասին։ Ուսուցման յերրորդ տարում յերեխաներն անցնում են թղթի ոգտագործման ուսումնասիրությանը՝ պոլիգրաֆարտադրության մեջ։ Նույն ձևով էլ ընթանում է տեխնոլոգիական գիտելիքների աստիճանական աճումը և մյուս նյութերի նկատմամբ։ Տեխնոլոգիական գիտելիքները նույնպես, ինչպես և գործիքների գործածության գործնական կարողությունները, յերեխաները ձեռք են բերում, մանավանդ ստորին խմբերում, աշխատանքային գործունեության պրոցեսում։ Յերրորդ խմբից սկսած՝ տեխնոլոգիական գիտելիքների մի մասը ձեռք է բերվում լաբորատոր պարապմունքների, զրույցների, և էքսկուրսիաների միջոցով։

Ծրագիրը համարյա թե բոլոր բաժիններում այն սկզբունքից է յելնում, վոր նյութերի՝ ձեռքի մշակման տեխնիկայի ծանոթությունից անհրաժեշտ է անցնել այս կամ այն արտադրության ամբողջական ծանոթության՝ էքսկուրսիաների միջոցով։

Որինակ՝ թղթի աշխատանքը յերրորդ խմբում վերջանում է էքսկուրսիայով դեպի տպարան, փայտի աշխատանքը՝ էքսկուրսիայով դեպի փայտասղոցարան կամ փայտամշակման գործարան, մետաղինը՝ մեխանիկական արհեստանոց կամ մետաղամշակման գործարան, տեքստիլ աշխատանքը յերկրորդ տարում լրացվում է էքսկուրսիայով դեպի կարի արհեստանոց, իսկ յերրորդ տարում ավարտվում է էքսկուրսիայով դեպի տեքստիլ արտադրություն։

Առաջին աստիճանի դպրոցի պայմաններում՝ արտադրական պրակտիկայի բացակայության դեպքում, արտադրական էքսկուրսիաները խոշոր դեր ունեն կատարելու։ Սակայն անհրաժեշտություն չէ, վոր յուրաքանչյուր

տարում շատ էքսկուրսիաներ լինեն. ըստ ծրագրի, 1-ին խմբին հատկացվում է մեկ էքսկուրսիա, 2-րդ և 3-րդ ին՝ յերկու կամ յերեք, և 4-րդ խմբին յերեք կամ չորս էքսկուրսիա։ Մեծ նշանակություն ունի էքսկուրսիայի մանրամասն նախապատրաստումը, նրա պլանի և բովանդակության ճիշտ մշակումը և էքսկուրսիոն նյութի հետագա մշակումը։

Ծրագրերը խոշոր տեղ են հատկացնում տեխնիկայով հետաքրքրվելու և տեխնիկական մտահորիզոնն ընդարձակող ունակությունների զարգացմանը։ Այսպես, ուսուցման 1-ին տարում տեխնիկական մոդելացմանը տրվում է հետևյալ թեման,—«ինչով են մարդիկ ճամբորդում», վորը համապատասխանում է այդ տարիքի յերեխաների հետաքրքրության և պահանջներին։ Դրանից էլ յերեխաներն սկսում են իրենց ծանոթությունը մեխանիկայի և էներգետիկայի էլեմենտների հետ։ Յերկրորդ տարում տրվում է «վերամբարձ մեխանիզմներ (պոդյոմնիկներ) և փոխադրական միջոցներ» թեման, վորը ծանոթացնում է բարձրացնող պարզ հարմարանքների (ճախարակ, վոլորակ), անիվների, առանցքների, առանցքակալների գործածության հետ։ Յերրորդ տարում ծանոթություն է տրվում մեքենայի հիմնական մասերի և նրանց գործածության հետ, չորրորդ տարում՝ շարժիչ մեքենաների հետ (քամու, ջրի, և ջերմաշարժիչների) և առաջին ծանոթությունն էլեկտրականության և նրա գործածության հետ։ Ի տարբերություն նախկին ծրագրերի, մեխանիկայի և էներգետիկայի էլեմենտների ծանոթությունը ներկա ծրագրերում տրվում է յերեխաների ակտիվ աշխատանքային գործունեության՝ տեխնիկական մոդելացման միջոցով կոնստրուկտորով և այլ բազմազան նյութերով (փայտ, կարտոն, թիթեղ, ֆաներա, մետաղալար, գործվածք (վոր աշխատանքի ծրագրում մտցնում է մանկավարժական տեսակետից շատ արժեքավոր կոմբինատորական մոմենտներ։

Պոլիտեխնիկական կրթության բնագավառում հիմնական խնդիր է հանդիսանում յերեխաների ծանոթացումն իրենց աշխատանքի կազմակերպման ռացիոնալ ձևերին։ Անհրաժեշտ է առաջին խմբերից յերեխաներին կարգ ու կանոնի վարժեցնել աշխատանքի սենյակում, իր աշխատանքի տեղում, ունակություններ տալ իր աշխատանքի պաշտպանության և առողջապահության խնդրում, պատվաստել յերեխաներին այն, ինչ մենք անվանում ենք աշխատանքային կուլտուրա։ Ամենափոքր տարիքից պետք է պայքարել աշխատանքային կարգապահության և կազմակերպվածության համար, պայքարել՝ թափթփվածության, աշխատանքի, նյութի և գործիքի հանդեպ ունեցած անփույթ վերաբերմունքի դեմ։

Անհրաժեշտ է, վոր յերեխան ձեռք բերի աշխատանքի կազմակերպման ռացիոնալ ձևեր. կարողանա պլանավորել աշխատանքը, ճիշտ կազմակերպել աշխատանքի տեղը, պատրաստել այն բոլորը, ինչ անհրաժեշտ է աշխատանքի համար, հետևողական կարգով կատարել նյութերի մշակման համար անհրաժեշտ ոպերացիաներ, վերջապես, կոնտրոլի յենթարկվել և հաշվի առնել իր աշխատանքը։

Անհրաժեշտ է ամենավաղ տարիքից յերեխաներին կոլեկտիվ աշխատանքի վարժեցնել։ Թող սկսեն ամենափոքր խնդիրներից՝ աշխատանքի ժամանակ ընկերներին չխանգարել, ձեռքի տակից նյութեր, գործիքներ չքաշել աստիճանաբար անցնել կոլեկտիվ աշխատանքի փոխադարձ օգնու-

թյան պարզ ձևերին (փոքր բջիջներով) և, վերջապես, կարողանալ իր գործը կազմակերպել աշխատանքի բաժանմնա հիման վրա։

Ստորին խմբերից սկսած, յերեխաներին անհրաժեշտ է վարժեցնել կազմակերպչական աշխատանքի զանազան տեսակ կազմակերպչական աշխատանքային ֆունկցիաների կատարման—գործիքների, նյութերի տալը և հաշվառումը, հաճախումների հաշվառումը, հերթապահությունը և այլն։ Այդ պարտականությունները տանելու համար յերեխաներից պետք է ընտրել հաշվառ (տաբելշչիկ), գործիքների և նյութերի պահեստապետներ, սանիտար և այլն։ Ուսուցման յերրորդ տարուց աշխատանքի սենյակում պետք է գործի աշխատանքային հանձնաժողովը։

Յերեխաներին կազմակերպչական—աշխատանքային ունակությունների պատվաստումը պետք է տարվի այն ծանոթության զուգընթաց, վոր նրանք արտադրություններ հաճախելու ժամանակ ձեռք կբերեն մեծերի աշխատանքի կազմակերպման մասին։

Ուսուցման յերկրորդ տարում դպրոցականները ծանոթանում են աշխատանքի կազմկերպման հետ տնայնագործական արհեստանոցում և արտելներում (ատաղձագործական, կարի) և բանվորների հիմնական պրոֆեսիաների հետ։ Ուսուցման յերրորդ տարում տրվում է առաջին կոնկրետ ծանոթությունը գործարանային արտադրության և նյութերի մեքենայական մշակման հետ, դեպի մի շարք արտադրություններ (տպարան, տեքստիլ ֆաբրիկա) էքսկուրսիա կատարելու միջոցով։ Չորրորդ տարում գործարանի այդ ծանոթությունը բարդանում և կենտրոնանում է աշխատանքի և արտադրության կազմակերպման ժամանակակից ձևերի ու մեթոդների շուրջը, վոր տրվում է գլխավորապես փայտամշակման, մետաղամշակման և մայր արտադրության օրինակի վրա (պլանայնություն, աշխատանքի բաժանում, մեխանիզացիա, մասսայական արտադրություն, էլեկտրիֆիկացիա, աշխատանքի սոցիալիստական ձևեր և այլն)։

Արտադրության մեջ աշխատանքի ժամանակակից ձևերի այդ ծանոթությունը յերեխաներին պարզ պատկերացում պիտի տա կապիտալիստական և սոցիալիստական արտադրությունների միջև գոյություն ունեցող արմատական տարբերության մասին։

Կազմակերպչական-աշխատանքային ունակություններ և մեծերի աշխատանքի կազմակերպման մասին գիտելիքներ ձեռք բերելն ընթանում է ամբողջ տարին, ծրագրի յուրաքանչյուր բաժնի մշակմանը զուգընթաց։ Այս պատճառով դրան առանձին ժամ չի հատկացվում, բացի ուսուցման չորրորդ տարվանից, վորտեղ տարվա վերջում էքսկուրսիաներին հատկացվում է վեց ժամ՝ ծանոթանալու մայր արտադրության աշխատանքի կազմակերպման հետ, ինչպես և արտադրության մեջ մեծերի աշխատանքի կազմակերպման մասին առաջուց ստացած գիտելիքներն ամփոփելու համար։

Այս ծրագրերը նախկին բոլոր ծրագրերից տարբերվում են նրանով, վոր առաջին անգամ կառուցվում են ըստ թեմաների։ Յուրաքանչյուր թեմա իր մեջ պարունակում է գիտելիքների և կարողությունների ծավալը և ցույց է տալիս յերեխաների հետ տարվելիք աշխատանքի բովանդակությունը (աշխատանք, լաբորատոր պարապմունքներ, էքսկուրսիաներ)։ Գիտելիքների և կարողությունների ծավալը տրվում է Ա տառի տակ, աշխատանքի ձևերը՝ Բ տառի տակ։

Յեվ այնտեղ, և՛ այստեղ, ըստ եյության, տրված ե միևնույն նյութը, սակայն առաջին դեպքում ֆորմալ ձևով թվել ենք գիտելիքների և կարողությունների ծավալը, մինչդեռ յերկրորդ դեպքում. այնպես, ինչպես այդ ծավալը դպրոցում մանկավարժը յերեխաների հետ պետք ե մշակի։

Դպրոցի աշխատանքի պրակտիկայում մեծ դժվարություններ ե առաջացնում յերեխաների աշխատանքի օբյեկտների ընտրությունը։ Յերեխաների աշխատանքի բովանդակությունը պետք ե կառուցվի տարբեր նյութերի մշակման աստիճանաբար բարդացող ունակությունների վորոշ սիստեմով։ Այդ նոր ունակությունների շրջանակով, վոր մենք ցանկանում ենք յերեխաներին պատվաստել, պետք ե պայմանավորվի ինչպես յերեխաների աշխատանքային գործունեյության բովանդակությունը, այնպես ել օբյեկտների ընտրությունը։

Արդյոք այս նշանակում ե, վոր յերեխաների աշխատանքի օբյեկտների ընտրության խնդրում մենք չպետք ե հաշվի առնենք յերեխաների հետաքրքրությունը և այդ օբյեկտների հասարակական օգտակարությունն ու ռեալ անհրաժեշտությունը։ Բոլորովին վոչ։

Առաջին դպրոցական տարիքի յերեխան դեռևս շատ եմոցիոնալ ե, նա կարող ե աշխատել միայն դրավիչ և իրեն սրտին մոտ աշխատանքային օբյեկտի վրա։ Միայն այս դեպքում ե, վոր մենք կարող ենք ձեռք բերել նրա աշխատանքի վորակի լավացում և ունակությունների դաստիարակում։

Հաշվի առնելով, վոր յերեխան անընդունակ ե հմտություն ձեռք բերելու նպատակով կատարվող զուտ վարժողական (тренировочной) աշխատանքի, յեվ վոր այդ հմտությունը նա ձեռք ե բերում հասարակական-օգտակար իրերի պատրաստման պրոցեսում—միանգամայն ակնհայտ ե դառնում ինչպես աշխատանքային օբյեկտների ընտրության դժվարությունը, նույնպես և այդ խնդրի կարեվորագույն դերը։ Յերեխաների աշխատանքի ծրագրերը կառուցվում են աշխատանքային ուսուցման ոպերացիոն—առարկայական մեթոդով։ Յերեխաների աշխատանքային գործունեյության օբյեկտներն ընտրվում են այն ձևով, վոր յուրաքանչյուր իրը տալիս ե գիտելիքների և ունակությունների նոր շրջան, հանդիսանալով միաժամանակ յերեխաների համար մատչելի, հետաքրքիր և կյանքում օգտագործելի։

Անհրաժեշտ ե նաև առանձին ուշադրություն դարձնել աշխատանքի ժամանակ յերեխաների ֆիզիկական բեռնվածության խնդրի վրա։ Յերեխայի կմախքն առաջին աստիճանի տարիքում դեռևս լրիվ ամրացած չե, հոդակապերը հեշտությամբ լայնանում և խոցելի յեն դառնում, կրծքի վանդակը բավականաչափ զարգացած չե։ Յուրաքանչյուր ծանր բեռնվածություն և ուժեղ, յերկարատեվ լարումը կարող են օրգանիզմի զարգացման ընթացքում առաջացնել մի շարք անկանոնություններ (վողնաշարի ծռում, կրծքի վանդակի անկանոն ձևավորում, ներքանի սխալ զարգացում և այլն)։ Այստեղից ել ծրագրերի առաջ դրվում ե խոշոր պատասխանատվություն, այն ե՝ կատարել յերեխաների ուժերին համապատասխան աշխատանքային ոպերացիաների ընտրություն։ Այնպիսի աշխատանքներ, ինչպես, օրինակ՝ ծանրություններ բարձրացնելը և կրելը, մեծերի բանեցնելիք ծանր գործիքների գործածությունը, միևնույն գործիքով յերկարատեվ աշխատելը (օր. խոշոր տախտակի սղոցելը)—անթույլատրելի յեն այդ տարիքի յերեխաների համար։

Ծրագրերի խիստ ընտրություն են կատարում աշխատանքի սենյակում և հողամասի վրա կատարվելիք աշխատանքային պրոցեսների ծավալի խնդրում։ Բացի դրանից, այդ աշխատանքային պրոցեսները աշխատանքի սենյակի կամ հողամասի պարապմունքների յերկու ժամվա տեվողության ընթացքում պետք ե փոփոխության յենթարկվեն, փոխարինելով մեկը մյուսին։

Այս տեսակետից առանձնապես վախ ե առաջացնում ուսուցման առաջին յերկու տարին՝ փայտի աշխատանքի ժամանակ։ Պետք ե առանձնապես ընդգծել, վոր այդ տարիքի համար բաժնից հանված են այնպիսի պրոցեսներ, ինչպես յերկարությամբ սղոցելն ու ռանդելը։ Այդ պատճառով յերեխաների աշխատանքն այդ տարիքում պետք ե տարվի թերմշակ նյութերով (սղոցած և ռանդած տախտակներ, չորսվիկներ, անիվներ և այլն)։ Այդ խմբերում փայտի աշխատանքներում պետք ե գերադասելի համարել վոչ թե մշակման, այլ հավաքման (մոնտաժային) պրոցեսները։ Աշխատանքի այդպիսի տիպն արժեքավոր ե այն տեսակետից, վոր յերեխայի մեջ ե դաստիարակում կոնստրուկտիվ ունակություններ, հնարավորություն ե տալիս կարճ ժամանակամիջոցում և առանց ավելորդ լարվածության աշխատանքը վերջացնել։ Այդ աշխատանքները խոշոր չափով ավելացնում են յերեխաների հետաքրքրությունը դեպի աշխատանքը և համապատասխանում են այդ տարիքի հոգե-ֆիզիկական առանձնահատկություններին։

Ներկա ծրագրերը—վերամշակված լինելով դպրոցի մասին Կենտկոմի կայացրած վորոշումներից հետո, վորոնք անթույլատրելի յեն համարում պոլիտեխնիզացիայի գործի անջատումը «գիտությունների հիմունքների» յուրացումից—հրապարակվում են պոլիտեխնիկական աշխատանքային ուսուցման և հանրակրթական առարկաների ծրագրերի նյութերի փոխադարձ համաձայնեցումից հետո։ Այդ կապն ամենևին չպետք ե հասկացվի վորպես նյութերի զուգահեռ մշակում՝ միևնույն թեմայի կամ քառորդ տարվա սահմանում։ Յերեխաների աշխատանքը պետք ե կառուցվի բնագիտական, հասարակագիտական և մաթեմատիկական գիտելիքների պաշարի հիման վրա, վոր յերեխաներին հնարավորություն տա մի կողմից՝ մինչեվ վերջ գիտակցելու իրենց աշխատանքը և, մյուս կողմից՝ աշխատանքի մեջ ձեռք բերելու գիտելիքներ, վորոնք կարող են լուսաբանվել գիտությունների հիմունքներով։

Այսպես, օրինակ՝ ուսուցման առաջին տարում թղթի աշխատանքի ընթացքում յերեխան օգտագործում ե այդ տարում մաթեմատիկայից ստացած հասկացողությունները՝ քառակուսիների, ուղղանկյունների, շրջագծի մասին։ Փայտի աշխատանքներում նա գործնականում օգտագործում ե սանտիմետրական քանոնը և անկյունարդը։ Փայտի կոնստրուկտիվ աշխատանքներում նա հանդիպում ե իրերի տարբեր ձևերի (խորանարդ և այլն), վորոնց մասին գաղափար ե տալիս մաթեմատիկան։ Ուսուցման յերրորդ տարվա թեման «փայտի հիմնական տեսակները» շատ լավ համաձայնեցվում ե բնագիտության «բույսերի կյանքը» թեմայի հետ, վորտեղ խոսվում ե փայտի կազմության մասին (կեղեվ, միջուկ, բնափայտի տարվա շերտեր)։ Ուսուցման չորրորդ տարում ծանոթությունը տարբեր մետաղների և նրանց հատկությունների հետ հիմնվում ե ուսուցման յերրորդ տարվա

ոգտակար հանածոների մասին չեղած բնագիտական նյութի վրա, վոր տրվում է «Յերկիրը» թեմայում (հասկացողություն հանքերի մասին, հանքերի արդյունահանման պատկերներ, հանքի հալումը և այլն)։ Այդ բաժնում հասարակագիտության հետ կապվում է հնգամյա պլանի թեման։

Քամու և բնության մեջ նրա կատարած աշխատանքի մասին ունեցած գիտելիքների (բնագիտությունից) աշակերտներն աշխատանքի դասերին անցնում են քամու շարժիչների ծանոթության և նրանց մոդելների կառուցման։

Ջրի յերեք վիճակի, ջրի շոգիանալու, բնության մեջ նրա կատարած շրջանառության ուսումնասիրությունից՝ դեպի ջրային և շոգեշարժիչների ուսումնասիրությունը և մոդելացումը։

Ներկա ծրագրերը հանդիսանում են 1932 թվի ծրագրերի վերամշակումը Կենտկոմի 1932 թ. ոգոստոսի 25-ի վորոշման հիման վրա։ Համաձայն Կենտկոմի ցուցմունքների՝ տրված են հետևյալ փոփոխությունները։

1. Բավականաչափ կրճատված է ծրագրի ծավալը։

2. Ծրագիրը բավականաչափ բեռնաթափված է բանավոր նյութից, վորն անցյալ ծրագրերի մի շարք թեմաներում ուներ գերակշռող դեր (ծանոթություն նորակառույցների, այլուսի գործարանի, մեքենագիտության և էներգետիկայի հետ)։ Աշխատանքին հատկացված բոլոր ժամերից շատը հատկացված է յերեխաների աշխատանքին։

3. Տեխնոլոգիական գիտելիքներով լրացված են մյուս մասերը, վորոնք ներկայացնում եյին իրենցից միայն ունակությունների թվարկում (փայտը՝ 1-ին, 2-րդ 4-րդ տարիներում, թուղթը՝ 2-րդ, մետաղը՝ 4-րդ տարում)։

4. Ծրագրերի հիմքում դրված է յերեխաների աշխատանքը, վորի պրոցեսում յերեխաները ձեռք են բերում ունակությունների և տեխնոլոգիական գիտելիքների մեծ մասը։

Նախկին ծրագրերն ըստ էության տալիս եյին միայն ծավալը։ Յերեխաների աշխատանքը նրանց մեջ անջատված եր գիտելիքներից և ունակություններից։

5. Ծրագրային նյութն ավելի է սիստեմավորված ինչպես աշխատանքի ձևի, նույնպես գիտելիքների և ունակությունների ծավալի տեսակետից։

ա) Թղթի և կարտոնի աշխատանքները շարունակվում են մինչև ուսուցման 3-րդ տարին և վերջանում են տպարանի ծանոթությամբ։

բ) Տեքստիլի աշխատանքը, վոր առաջ 4 տարի էր տևում, կրճատված է և հասցված մինչև 3-րդ տարին։

գ) Մետաղը տեղափոխված է ուսուցման 4-րդ և հետագա տարիները։

դ) Ընդհանուր մեքենագիտության նյութը սիստեմատիզացիայի չի յենթարկված, տրված է առանձին թեմաներով՝ տեխնիկական մոդելացման մասում, սկսած 1-ին տարվանից։ Բանող մեքենայի ուսումնասիրության նյութը տրված է ծրագրի տեխնոլոգիական մասում, այս կամ այն նյութի կապակցությամբ։

ե) Սիստեմատիզացիայի չի յենթարկված աշխատանքի կազմակերպման նյութը, վոր նախկին ծրագրերում տրված եր տարբեր մասերում։

6. Աշխատանքի ծրագիրը բաժինների մեծ մասում համաձայնեցված է հանրակրթական առարկաների ծրագրերի հետ։

7. Ծրագրերը կառուցված են բոլորովին նոր ձևով՝ թեմաներով, վոր անցյալում գոյություն չի ունեցել։ Յուրաքանչյուր թեման ունի վերնագիր։ Վերնագիրն արտացոլում է հիմնականում յերեխաների գիտելիքների շրջանի ընդլայնման հետ կապված աշխատանքի բովանդակությունը։ Յուրաքանչյուր թեմայում տրված է գիտելիքի և ունակությունների նյութի սիստեմատիզացիայի յենթարկված ծավալը և մատնանշված է յերեխաների աշխատանքի բովանդակությունն ու ձևը՝ ժամերի մոտավոր բաշխում կատարելով նրանց մեջ (1 ժամ ամենուրեք հատկացվում է ընթացիկ կազմակերպչական աշխատանքին և զրույցին)։

8. Ծրագրերը նախատեսում են աշխատանքի գծով տարվելիք դպրոցական սիստեմատիկ պարապմունքներից դուրս նաև յերեխաների արտադպրոցական աշխատանք, վորի համար, վորպես հավելում, տրված է այդ աշխատանքի մոտավոր ձևերի և բովանդակության նյութը։

Տարրական դպրոցի աշխատանքային սարքավորման հետ կապված խնդիրները, ինչպես և անհրաժեշտ սարքավորման ցուցակը կհրատարակվի առանձին գրքով։ Այդ պատճառով էլ ներկա բացատրական նամակում այդ հարցը չի շոշափվում։

Վերջում անհրաժեշտ ենք գտնում կանգ առնել մի շարք աղավաղումների վրա, վորոնք պատահում են մեր դպրոցների պրակտիկայում։ Տարրական դպրոցի այդ աղավաղումները հետևյալներն են. 1. առաջին աստիճանի աշխատանքային ուսուցման նշանակության թերագնահատում, վորի հետևանքով տեղի յե ունեցել աշխատանքի սենյակների և դպրոցական հողամասերի կահավորման հատկացված գումարների կրճատում, խմբակավարների և աշխատանքի հրահանգիչների թույլ պատրաստություն, ավելի շուտ՝ այդպիսի պատրաստության իսպառ բացակայություն։

2. Յերեխաների արտադրողական աշխատանքի վերածումն իլյուստրատիվ աշխատանքի՝ մյուս դիսցիպլինների համար, ըստ վորի աշխատանքը դպրոցում համարվել է վոչ թե վորպես ինքնուրույն մի դիսցիպլին, այլ մյուս դիսցիպլինների մշակման մի մեթոդ։ 3. Պոլիտեխնիկական աշխատանքային ուսուցման վերածումը միմիայն լոկ խոսակցության՝ արտադրության մասին, էքսկուրսիաների, արտադրության վերաբերյալ գրքերի ընթերցանության (բանավոր պոլիտեխնիզմ)։ 4. Պոլիտեխնիկական աշխատանքային ուսուցման վերածումը մի կամ միքանի ձևի աշխատանքի սոսկ ունակությունների ուսուցման (արհեստավորական կամ բազմարհեստավորական պոլիտեխնիզմ)։

Սրա հետ միասին անհրաժեշտ է նախազգուշացնել տարրական դպրոցի աշխատանքային ուսուցման բնագավառում գոյություն ունեցող ձախ աղավաղումների դեմ, վորոնք արտահայտվում են նրանով, վոր 1. աշխատանքի բովանդակությունը չենթարկում են դպրոցի հասարակական-ոգտակար աշխատանքին. 2. փորձեր են կատարում 1-ին աստ. յերեխաներին արտադրական պրակտիկայի տանելու՝ գործարան, կոլխոզ, կամ սովխոզ։

Այդ աղավաղումների դեմ դպրոցը պետք է մղի ամենավճռական պայքար։

ՍԽԵՄԱ ՏԱՍԱՄՅԱ ԴՊՐՈՑԻ ՊՈԼԻՏԵԽՆԻԿ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ

Քառորդ, ժամերի քանակը	1. Ծանոթություն աշխատանքի և արտադրության կազմակերպման հետ	2. Ծանոթություն հիմնական արտադրությունների լավ գլխավոր նյութերի մշակման հետ						3. Ծանոթություն մեխանիկայի և էներգետիկայի էլեմենտների հետ տեխնիկ. մոդելավորման միջոցով
		ԹՈՒՂԹ	ՏԵՔՍՏԻԼ	ՇԻՆԱՐԱՐԱԿ. ՆՅՈՒԹԵՐ	ՓԱՅՏ	ՄԵՏԱՂ	ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	
1. 76 ժ.	1. Երեխաների աշխատանքի կազմակերպումը դպրոցի ներսում	1. Առաջին աշխատանքները թղթի հետ 9 ժ. 2. Թղթից ինչ են պատրաստում 10 ժ. 19 ժ.	1. Աշխատանք մանրաթելի և գործվածքի հետ ու հագուստի խնամքը 9 ժ. 9.	Կավը և նրա գործածությունը 9 ժ. 9 ժ.	1. Առաջին աշխատանքները փայտի վրա 10 ժ. 2. Անտառանյութեր և նրանց գործածությունը 9 ժ. 19 ժ.	—	1. Բանջարեղենի և ծաղիկների աճեցման աշխատանքները 10 ժ. 10 ժ.	1. Ինչով են մարդիկ ճանապարհորդում 10 ժ. 10 ժ.
2. 76 ժ.	2. Ծանոթություն արտադրութ. կազմակերպման պարզ ձևերի հետ (տնայ. նագործ. արտելներ)	3. Ինչպես են պատրաստում թուղթը և կարտոնը—7 ժ. 4. Առաջին աշխատանքները կարտոնից —10 ժ. 17 ժ.	2. Ինչպես է պատրաստվում հագուստը —10 ժ. 10 ժ.	2. Ինչպես է կառուցվում տունը—9 ժ. 9 ժ.	2. Ծանոթություն ատաղձագործական արհեստանոցի հետ —10 ժ. 4. Ցանցրային աշխատանքը—7 ժ. 17 ժ.	—	2. Կերի նախապատ. և հացահատ. ու մանր տնային անասուն. կեր տալը —4 ժ. 3. Աշխ. դպրոց. հողամաս. (բանջ. աճեցում)—9 ժ. 13 ժ.	2. Բարձրացման մեխանիզմներ ու փոխադրական միջոցներ—10 ժ. 10 ժ.
3. 76 ժ.	3. Առաջին ծանոթություն գործարանի հետ	5. Գիրքն ինչպես է տպագրվում—8 ժ. 6 Գիրքն ինչպես է կազմվում—8 ժ. 16 ժ.	3. Ինչպես են պատրաստում թելը և գործվածքը—10 ժ. 10 ժ.	3. Ժամանակակից շինար. նյութ.—10 ժ. 10 ժ.	5. Փայտի հիմնակ. տեսակները—6 ժ. 6. Ծանոթութ. անտառանյութ. պահպանման և մթերման հետ—6 ժ. 11 ժ.	—	4. Աշնանային աշխ. բանջարանոց.—6 ժ. 5. Դպրոց. բանջարանոցի և դաշտային աշխատ.—12 ժ. 18 ժ.	3. Մեքենաների հիմնական մասերը և նրանց աշխատանքը—10 ժ. 10 ժ.
4. 76 ժ.	4. Ծանոթություն մայր արտադրության և աշխատանքի ու արտադրության կազմակերպ. ժամանակակից ձևերի հետ—4 ժ. 4 ժ.	—	—	—	7. Ծանոթություն փայտի մեքենայական մշակման հետ —14 ժ. 14 ժ.	1. Առաջին աշխատանք մետաղալարից և թիթեղ.—8 ժ. 2. Ինչպես է մետաղը մշակվում արտադր. մեջ 8 ժ. 16 ժ.	6. Ծանոթություն կոլխոզի և խորհտնտ. դաշտավարության հետ—8 ժ. 7. Աշխատանք մանր անասնապահության գծով—8 ժ. 16 ժ.	4. Քամու շարժիչներ —4 ժ. 5. Ջրի և ջերմաշարժիչներ—12 ժ. 6. Ծանոթություն էլեկտրականության կիրառմ. հետ—10 ժ. 26 ժ.
304	4	52	29	28	62	16	57	56

Դպրոցը պետք է հաշվի առնի այն դժվարությունները, որ նա ունենալու է այս ծրագրերի իրականացման խնդրում (կահավորման միջոցների ու նյութերի պակաս, խմբակավարների թույլ պատրաստականություն, հրահանգիչների պակաս և այլն):

Այս պատճառով, պոլիտեխնիկական կրթության իրականացման գործում բոլոր խնդիրները միանգամից չպետք է դնել ու ձգտել 2-3 ամսում լուծել այն։ Յուրաքանչյուր դպրոց ելնելով իր կոնկրետ պայմաններից, պետք է կազմի պոլիտեխնիկական աշխատանքային ուսուցման իրականացման իր պլանը, առաջիկա տարվա համար ծրագրի մի շարք միջոցառումներ և համառ կերպով, քայլ առ քայլ ձգտի նրանց իրականացման։

* * *

Տվյալ ծրագիրը մշակված է քաղաքի դպրոցների համար. սակայն մինչեվ գյուղական վարիանտի մշակումը, սրանք կարող են կիրառվել և գյուղական դպրոցներում, ուժեղացնելով գյուղատնտեսական աշխատանքները և դրանց հատկացրած ժամերի թիվը,

ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Երեխաների աշխատանքի կազմակերպումը՝ աշխատանքի սենյակում ու դպրոցական հողամասում և աշխատանքային կուլտուրայի սկզբնական ունակությունների պատվաստումը նրանց մեջ։
2. Սկզբնական աշխատանք՝ տարբեր նյութերով, տարբեր գործիքներով և աշխատանքի պրոցեսում նյութերի արտաքին նշանների և հատկությունների մասին պարզ հասկացողություն և նրանց օգտագործումը կյանքում։
3. Երեխաների առաջին կոնստրուկտիվ ստեղծագործական աշխատանքները փայտով և թղթով։
4. Երեխաների մեջ հետաքրքրության զարգացումը դեպի ժամանակակից տեխնիկան՝ փոխադրական միջոցների ծանոթության հիման վրա։
5. Ծաղիկները և բանջարեղենը խնամելու առաջին աշխատանքները։

1։ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԹՂԹԻ ՎՐԱ (9 ժամ)

ա). Գիտելիքների ծավալը. — Թղթի գլխավոր հատկությունները և արտաքին նշանները. գույնը (ներկված-չներկված), ամրությունը (փափուկ-կոշտ), հաստությունը (հաստ-բարակ)։ Թղթի դիմացկունությունը (հեշտ ճմռվում է, պատռվում է, ջուրը ծծում է, այրվում է)։ Թղթի այդ հատկությունների համեմատությունը ուրիշ նյութերի հետ (գործվածքի, փայտի, մետաղի հետ)։

Թղթի մշակման հիմնական ձևերը — ծալելը, պատռելը, կտրելը, սոսնձելը, կարելը։

Թղթի աշխատանքի համար գործածվող պարզ գործիքները — մկրատ, քանոն, վրձին սոսնձի համար, քանոն։

Ունակությունների շրջանը. — Թղթի ծալելը և ծալվածքով կտրելը, մկրատով, դանակով կտրելը, իրար վրա սոսնձելը: Թղթի վրա աշխատելու պարզագույն գործիքները՝ մկրատ, դանակ, սոսնձի համար վրձին, քանոն:

բ) Աշխատանքի ձևերը. աշխատանք (7 ժամ). — Ծալելու պարզ աշխատանք, օրինակ՝ աղավնի, պարաշյուտ, ջրաղաց, նավակ և այլն: Թղթից տառեր և զարդեր կտրելը, սոսնձով իրար կպցնելը՝ խորագրերի և նախշերի ձևով:

2. ԹՂԹԻՑ Ի՞ՆՉ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ (10 ժամ)

ա) Գիտելիքների ծավալը. — Թղթի նշանակությունը մարդու կուլտուրական կյանքում: Թղթի տարբեր ձևերը, տեսակներն ու գործածելու նպատակը — տպագրականը՝ գրքեր ու լրագրեր տպագրելու, ծրարելու, ծծանը՝ թանաք ծծելու համար և այլն:

Թղթի հատկության կախումը նրանից, թե ինչ նպատակի է ծառայում. գրելու թղթի վրա թանաքը չպետք է տարածվի, գրիչը թղթի վրա հեշտությամբ պետք է սահի, ծծանը թանաքը լավ պետք է ծծի, փաթաթելու թուղթն ամուր պետք է լինի: Թաց թղթի հատկությունն այն է, որ ծավալը մեծանում է: Թուղթ կպցնելու համար գործածվող սոսնձող նյութերը և նրանց պատրաստումը. սոսինձ-գումիարաբիկ, շրեշ:

Ինչպես, ինչ նյութից են շինված և ինչպես են աշխատում՝ դանակը, մկրատը, հերյունը (բիզը) ասեղը, վրձինը:

Ունակությունների շրջանը: — Ըստ ձևի և ըստ շաբլոնի թղթից զանազան իրերի մասեր նախօրոք պատրաստելը: Թուղթն իրար կպցնելն ու թելերով կարելը: Շրեշ պատրաստելը:

բ) Աշխատանքի ձևերը. աշխատանք (8 ժամ). — Սոսնձելու և կարելու ամենապարզ աշխատանքներ: Ծրարների, տետրերի, ալբոմների և այլ իրերի պատրաստում:

Լաբորատոր աշխատանքներ. — Թղթի հիմնական տեսակների հատկությունների փորձարկում, թղթի տեսակների աղյուսակի կազմում, շրեշի պատրաստում:

3. ԿԱՎԸ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ (9 ժամ)

ա) Գիտելիքների ծավալը. — Կավի արտաքին նշանները՝ գույնը կազմությունը: Կավի հատկությունների փոփոխվելը, ջրի հետ միանալուց և թրծելուց:

Կավի գործածությունը — ամանեղեն, աղյուս:

Ունակությունների շրջանը. — Կավը ավազի ու ջրի հետ խառնելը, աղյուսիկներ կաղապարելը, աշխատանք՝ բրուտի պրիմիտիվ հաստոցի վրա:

բ) Աշխատանքի ձևերը. աշխատանք (7 ժամ). — Կավի շաղախ պատրաստելը, աղյուսիկներ ու խաղալիք-ամանեղեն կաղապարելն ու չորացնելը:

Լաբորատոր աշխատանք (2 ժամ). — Գնդացած կավը փշրելն ու մանրացնելը, կավի թրջելը, ուռչելու աստիճանի որոշումը, շաղախ պատրաստելը, չորացնելը, ավազի և աղյուսի հետ համեմատելը:

4. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՓԱՅՏԻ ՎՐԱ (10 ժամ)

ա) Գիտելիքների ծավալը. — Փայտի հատկությունները. կտրվում է, ողորկվում է, ճղվում է մանրաթելերի երկարությամբ: Փայտի գործածությունը. կահկարասիք, փոխադրական միջոցներ և այլն:

Ունակությունների շրջանը. — Փայտ ռանդելն ու դանակով կտրելը: Աղեղնասղոցի և ձեռնասղոցի արկղում լայնությամբ ու թեք ուղղությամբ սղոցելը: Փայտի մեջ մուրճով մեխ ամրացնելն ու աքցանով դուրս քաշելը: Փայտի ամենապարզ միացումները մեխով:

բ) Աշխատանքի ձևերը. աշխատանք (9 ժամ). — Թերմշակ նյութերից ուսումնական և տնտեսական պարզ իրեր ու խաղալիքներ պատրաստելը, օրինակ՝ խաղալիք-կահկարասիք (սեղան, աթոռ), դրոշակի կոթ, հաշվելու փայտիկներ և այլն:

5. ԱՆՏԱՌԱՆՅՈՒԹԸ ԵՎ ՆՐԱ ԿԻՐԱՌՈՒՄԸ (9 ժամ)

ա) Գիտելիքների ծավալը. — Անտառանյութերի տարբեր տեսակները. տախտակ, չորսվեկ (բրուսոկ), գերան, ձող (ծերդ, գոլա) և նրանց գործածությունը բնակարաններում: Փայտի այրվելը և նրա օգտագործումը վառելիքի համար:

Փայտեղենի պատրաստումը. փայտ կտրելը, տախտակ քաշելը և վառելափայտը:

Փայտամշակմամբ զբաղվող մարդկանց արհեստը. փայտահատ, սղոցող, հյուսն, ատաղձագործ:

Ունակությունների շրջանը. — Հերյունով և գչրակով անցք ծակելը: Չորսվեկների և ձողիկների միացումը՝ գչրակով ծակած անցքերով, շարժական միացումը մեխերով:

Նյութի չափումը սանտիմետրական քանոնով (20 սանտիմետրի սահմանում), անկյունաչափի օգտագործումը:

բ) Աշխատանքի ձևերը. աշխատանք (8 ժամ). — Թերմշակ նյութերից պարզ խաղալիքներ պատրաստելը. օրինակ՝ շոգենավ, պրոպելլեր — «ճանճ» սայլ, սահնակ, կախարան, արկղիկ և այլն:

6. ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆՐԱԹԵԼԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐՈՎ, ԳՈՐԾՎԱԾՔՆԵՐՈՎ ԵՎ ՀԱԳՈՒՍՏԻ ԽՆԱՄՔԸ (9 ժամ)

ա) Գիտելիքների ծավալը. — Գործվածքի գործածությունը հագուստ կարելու համար: Ամառվա, ձմեռվա հագուստի, սպիտակեղենի գործվածքներ: Գործվածքի հատկությունը՝ ուրիշ նյութերի համեմատությամբ — փափկություն, ճկունություն, թեթևություն:

Գործվածքի մշակման ձևերը. ձևելը, կարելը: Կարի մեքենայի աշխատանքի մասին առաջին հասկացողություններ և նրա առավելությունները ձեռքի աշխատանքի համեմատությամբ:

Ունակությունների շրջանը. — Կարերն ուղիղ գծով ձևելը. ասեղ թելելը, թելի ծայրը կապելը, «ասեղով առաջ և ետ» կարելը:

Թելի, պարանի և կեղևաթելի աշխատանք. դանակով և մկրատով կտրելը, ոլորելը, պարզ հանգույցներ կապելը:

Հագուստը խոզանակով մաքրելը։

բ) Աշխատանքի ձևեր. *աշխատանք (8 ժամ). — Մանր իրեր — կրկնակոշիկ, պարկ, թաշկինակ և այլն կարելը. կոճակ, կախարան, կեռիկներ կարելը։ Պատռված հագուստ վերանորոգելը։ Կեղևաթելից ու պարանից սանձ և ցատկաթոկ հյուսելը։ Վերջին, փոշի մաքրելու խոզանակ պատրաստելը։*

7. ԻՆՉՈՎ ԵՆ ՄԱՐԴԻԿ ՃԱՄԲՈՐԴՈՒՄ (10 ժամ)

(Տեխնիկական մոդելավորում)

ա) Գիտելիքների ծավալը. — *Ինչպես են մարդիկ մի վայրից մյուս վայրը փոխադրվում՝ գետնի, ջրի վրա և օդում, ուր և ինչ են տեղափոխում։ Հաղորդակցության միջոցներ — տրամվայ, հեծանիվ, շոգենավ, շոգեշարժ, այերոպլան։ Ամառային և ձմեռային կառքեր (սահնակ, սայլ)։*

բ) Աշխատանքի ձևեր, *աշխատանք (7 ժամ).—Փայտից, թերմշակ տախտակներից, չորսվիկներից, ուրիշ նյութերից (մետաղալար, բամբակ, պարան, կտորտանքներ) թափթփուկներից(տուփ, արկղ, բանկա) իրենց մանկապարտեզի, մանկհրապարակների համար փոխադրական խաղալիքներ պատրաստելը, օրինակ՝ նավակ, շոգենավ, բեռնատար ավտո, օդանավ և այլն։*

Էքսկուրսիա *(2 ժամ). — Դեպի յերկաթուղու կայարան կամ նավահանգիստ։ Յերկաթուղու կայարանի գծերի, սեմաֆորի, ջրհան մեքենայի դիտում։ Շոգեկառքի կամ շոգենավի արտաքին կառուցվածքի ծանոթություն։*

Խաղեր *(ազատ ժամանակ). — Փոխադրական խաղալիքների հետ (շոգեկառք, վագոն, շոգենավ, բեռնատար ավտո, կառուսել և այլն) խմբակային խաղեր («գնացքի, տրամվայի»)։*

8. ԴԱՇՏԱՅԻՆ, ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ ՅԵՎ ԾԱՂԿԱՆՈՑԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԱՃԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ (10 ժամ)

ա) Բույսերի աճեցումը արկղներում և ծաղկամաններում՝ բնության անկյունում։

1. Գիտելիքների ծավալը. — *Տարբեր վորակ ունեցող մի քանի հողերի (սևահողի, կավահողի, ավազահողի, խճահողի) համեմատությունն ըստ գույնի և ֆիզիկական կազմության (վորոշել շոշափելով)։ Ցորենի, գարու, լոբու, բամբակի, պամիդորի, կաղամբի և մի քանի ծաղիկների սերմերի և ծիլերի տարբերությունները։*

2. Աշխատանքի ձևերը. — *Դաշտից մի քանի՝ տարբեր վորակ ունեցող հողերի բերելը։ Ծաղկամանների և արկղների մեջ հող լցնելը, խոնավացնելը, հարթեցնելը։ Ցորենի, գարու, լոբու, բամբակի, պամիդորի և մի քանի ծաղիկների սերմերի ձևի և գույնի ծանոթացում։ Սերմեր ցանելը։*

բ) Բույսերի աճեցումը փոքր ածուներում (մարզերում)։

1. Գիտելիքների ծավալը. — *Հողի նախապատրաստումն ու նրա նշանակությունը բույսերի աճեցողության համար։ Հողի պարարտացումն ու նրա նշանակությունը բույսերի սննդառության համար։ Գոմաղբը, խառնաղբը (կոմպոստ) և մոխիրը վորպես պարարտանյութ։ Մի քանի կուլտուրաների ցանքը։ Ցանքի հետագա խնամքը։ Խնամքի նշանակությունը։*

2. Աշխատանքի ձևերը. — *Փոքր բահերով հող փորելը։ Հողի հետ պարարտանյութ (գոմաղբ, կոմպոստ, մոխիր) խառնելը։ Փորված տարածությունը ձեռքի փոքր փոցխերով հարթելը և մարգերի ու ածուների բաժանելը։*

Ցորենի, գարու, լոբու, բամբակի, պամիդորի, կաղամբի և այլ կուլտուրաների ցանքը ձգած լարի ուղղությամբ (յուրաքանչյուր կուլտուրային տրամադրել մեկ կամ յերկու փոքրիկ ածու)։

Ցանված կուլտուրաները խնամելը, ցնցուղով ջրելը, քաղհանելը և հողը փխրացնելը։

Ցցեր տնկելը և բույսեր կապելը։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Կազմակերպչական-աշխատանքային ունակություններ

Աշխատանքի սենյակի և դպրոցական հողամասի ներքին կարգ ու կանոնի օրենքների կատարում։ Գործիքների, նյութերի ստացումը և հանձնումը, կատարած աշխատանքների պահպանում, իր աշխատանքի տեղի կազմակերպման կարգը և այլն։

Պարզ հրահանգչական (ինստրուկցիոն) քարտերով աշխատելու առաջին փորձը, իր աշխատանքի առողջապահության և պաշտպանության տարրական հասկացողություն. մարմնի ճիշտ դիրք պահպանելու գաղափարը, կտրվելու և վնասվելու դեպքում կարողանալ ցույց տալ առաջին օգնություն Շենքն օդափոխելը, ձեռքերի և հագուստի մաքուր պահելը։ Որապահի պարտականությունների կատարում։

Ընկերոջ հետ աշխատելու ժամանակ փոխադարձ օգնության ունակություններ։

Ծանոթություն։ Վերոհիշյալ գիտելիքներն ու ունակությունները, աշխատանքի կազմակերպման ձեռք բերելը տեղի չեն ունենում ամբողջ տարվա ընթացքում՝ ծրագրի առանձին բաժինների մշակման պրոցեսում և այդ պատճառով էլ առանձին ժամեր դրան չեն հատկացվում։ Նյութերի մի մասը մշակվում է սանիտարական ժամին, վոր հատկացված է բնագիտության ծրագրով։

ՅԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ

ՈՒՍՈՒՑՄԱՆ 2-ՐԴ ՏԱՐՎԱ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Իր աշխատանքի կազմակերպությունից (ուսման 1-ին տարի) մեծերի աշխատանքի և արտադրության կազմակերպման պարզ ձևերի ծանոթությանն անցնելը (հասկացողություն՝ արհեստների, տնայնագործների և արտելների մասին)։

2. Նյութերի հատկությունների և նրանց գործածությունների հետ ծանոթությունից (ուսուցման 1-ին տարի) նյութերի և իրերի արտադրության առանձին շրջանների և պրոցեսների ծանոթանալուն անցնելը (ինչպես են պատրաստում թուղթը, կարտոնը ֆաներան, ինչպես են պատրաստում հագուստեղենը, ինչպես են կառուցում տունը)։

3. Թույլ դիմադրություն ունեցող նյութերի աշխատանքից մեծ դիմադրություն ունեցող նյութերի աշխատանքին անցնելը (ֆաներա, կարտոն):

4. Պարզ գործիքների աշխատանքից այնպիսի գործիքների անցնելը, վորոնք պահանջում են ֆիզիկական ուժի մեծ լարում և շարժումների մեծ համակարգություն (շաղափ, կարտոնի դանակ, «կոնստրուկտոր»-ի պտուտակիչ, բանալի և այլն):

5. Յերեխաների տեխնիկական մտապատկերների ընդլայնում՝ վորոշ մեքենաների աշխատանքի ծանոթության միջոցով (կարի, խառատի հաստոց, մեքենայական սղոց, բարձրահան (պոդյոմնիկ), փոխադրական միջոցներ և նրանց առանձին մասերը (առանցք, առանցքակալ, անիվ):

6. Տեսակավոր նյութերից և կոնստրուկտորից յերեխաների կառուցողական ստեղծագործության զարգացման ընթացքում հետագա քայլերը՝ տեխնիկական մոդելացման միջոցով:

7. Ծաղիկների և բանջարեղենի խնամքից՝ հողի պարզ մշակման, բանջարեղենի աճեցման և տնային մանր անասունների խնամքին անցնելը:

ԿԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԵՎ ՃԱԳԱՐՆԵՐԻ ՈՒ ՏՆԱՅԻՆ ՄԱՆՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ԿԵՐ ՏԱԼԸ (4 ժամ)

ա) Բանջարանոցի յեվ ծաղկանոցի բերքահավաքը յեվ կերի մթերումը:

Ա. Գիտելիքների ծավալը. — *Բանջարեղենը և նրա գործածությունը մարդու սննդի և անասունների կերի համար: Աշնանային աշխատանքները բանջարանոցում և ծաղկանոցում: Ճագարների կերը, բանջարեղեն, հացահատիկ, վայրի բույսեր (3—4 տեսակ): Տերևներն անասուններին վորպես ցամքար:*

Բ. Աշխատանքի ձևեր՝ *աշխատանք. — Բանջարեղենի և արմատապտուղների հավաքելը. տերևից կեր մթերելը. թափված տերևների հավաքելը:*

բ) Ճագարների յեվ թռչունների կերակրելը

Ա. Գիտելիքների ծավալը. — *Կեր պատրաստելու և տալու կարգը, հում բանջարեղենի և կանաչեղենի լվանալը, կտրատելը և յեփելը: Ճագարների և թռչունների կերի ամանների մաքրությունը:*

Բ. Աշխատանքի ձևերը. *աշխատանք. — Կերի պատրաստումը և ճագարներին ու թռչուններին կեր տալը: Նրանց տեղն ու կերամանների մաքրելը:*

2. ԻՆՉՊԵՍ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԹՈՒՂԹԸ ՅԵՎ ԿԱՐՏՈՆԸ: ԱՇԽԱՏԱՆՔ ԹՂԹԻ ՄԱՍՍԱՅՈՎ (7 ժամ)

ա) Գիտելիքների ծավալը. — *Թղթի պատրաստումը՝ թղթի գործարանում: Մանրաթելային նյութը՝ թուղթ և կարտոն պատրաստելու համար (փայտ, ծղոտ, փալասեղեն, հին թուղթ, ուռիլ). փալասեղենի յեփելը և աղալը, փայտի փշրելը, տրորելը՝ թղթի շաղախ պատրաստելու համար, սոսինձ ավելացնելն ու ներկելը:*

Թղթի պատրաստումը՝ թղթի մասսայից, ըստ գործածության նպատակների: Ինչից են պատրաստում թղթի և կարտոնի տարբեր տեսակները. փայտի թուղթ՝ լրագրերի համար, ծղոտի թուղթ՝ փաթաթելու համար, փալասի թուղթ՝ դրամանիշների համար:

Թղթի մանրաթելային կազմությունը և նրա համեմատությունը գործվածքի հետ:

Թղթե մասսայի գործածությունը պապե-մաշեյի համար և նրանից բանվածքներ պատրաստելու համար. խաղալիքներ, ուսումնական պարագաներ և այլն:

Ունակությունների շրջան. — *Թղթե շաղախի (մասսայի) աշխատանք՝ պատրաստի կաղապարի միջոցով և բանվածքի ներկելը:*

բ) Աշխատանքի ձևեր. *աշխատանք (3 ժամ). — Խաղալիքների և ուսումնական պարագաների պատրաստում թղթի շաղախից:*

Լաբորատոր աշխատանք. *(3 ժամ):*

Լաբորատոր աշխատանքներ հին թղթից շաղախ պատրաստելու համար: Այդ շաղախից թուղթ պատրաստելը. թղթի պատառոտված յեզրերը զննելը խոշորացույցով կամ մանրադիտակով: Զրույց թղթի արտադրության մասին՝ նկարների ցուցադրումով:

3. ԿԱՐՏՈՆԻ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ (10 ժամ)

ա) Գիտելիքների ծավալը. — *Կարտոնի գործածությունը կենցաղի և արտադրության մեջ. տուփեր, պատյաններ, գրքի կազմեր և այլն:*

Կարտոնի համեմատությունը թղթի հետ: Կարտոնի տեսակները — փայտից, ծղոտից, փալասից: Այդ տեսակների արտաքին նշանները, նրանց ամրությունը և գործածությունը: Կարտոնի համեմատությունը ֆաներայի և թերթավոր մետաղի հետ, ըստ նրանց հատկությունների:

Կարտոնի մշակման յեղանակները, — ձևելը, ծալելը, սոսնձելը, կարելը: Կարտոնի հատկությունը՝ սոսնձելիս մի կողմից կծկվել, թրջվելիս՝ ուռչել:

Կարտոնի մշակման գործիքները — դանակ, մկրատ (ձեռքի և լծակավոր), քանոն անկյունարդ, կարկին, վրձին, հերյուն, ասեղ, ծակահատ և նրանց գործածությունը:

Ինչպես է կարտոնը պատրաստվում կարտոնաժի արտադրության մեջ:

Ունակությունների շրջան. — *Պարզագույն նշում կարտոնի վրա՝ անկյունարդի և քանոնի գործածությունը: Նուրբ կարտոնի ձևելը մկրատով և դանակով (ամրացած քանոնի ուղղությամբ): Փոքր կարտոնակտրիչի օգտագործումը, թղթի կպցնելը կարտոնին: Պարզագույն յեզրատում:*

Կարտոնի միացումը կալենկորով և յերիզով: Կարտոնի ծակելը ծակահատով և սառմեսկայով:

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք *(9 ժամ). — Թուղթ կպցնելով կարտոնից ամենապարզ իրեր պատրաստելը, որինակ՝ ուսումնական պարագաներ (լոտո, աղյուսակներ, ժամացույց, թվատախտակ և այլն), խաղեր, թղթակալներ, հուշատետրեր և այլն:*

4. ՖԱՆԵՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ (7 ժամ)

ա) Գիտելիքների ծավալ.— Սոսնձած ֆաներան վորպես արհեստական նյութ՝ նրա առավելությունը։

Ֆաներայի գործածությունը կահկարասիների և շինարարության մեջ։ Ֆաներայի մշակման ձևերը. դանակով կտրվում է, սղոցով և լոբզիկով՝ սղոցվում, ծակիչով՝ ծակվում, ատաղձագործական սոսնձով, շրեշով՝ միացվում, մեխերով՝ ամրացվում։ Ֆաներայի համեմատությունն ուրիշ նյութերի հետ։

Ունակությունների շրջան.— Ֆաներայի սղոցելը, շրջաղոցով (կրուգոբեզ) շրջաններ սղոցելը՝ ծակելը հերյունով, շաղափով. ֆաներայի առանձին թերթիկների կպցնելը՝ սոսնձով, մեխերով։

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք (5 ժամ).— Տեսակավոր նյութերից և ֆաներայի շերտերից զանազան խաղալիքներ և ուսումնական պարագաներ պատրաստելը. որինակ՝ հայտարարության, ծեփի, մանկական կինոյի համար տախտակիկներ, կարտոնի ու ստվերային թատրոնի բեմեր և այլն։

Լաբորատոր աշխատանք (1 ժամ)։— Չոր և թաց ֆաներայի ճկելը, թրջելը, շերտերով բաժանելը, չոր և թրջած ֆաներան կորացնելն ու ծակելը։

5. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԱՏԱՂՁԱԳՈՐԾԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ՀԵՏ (10 ժամ)

ա) Գիտելիքների ծավալը.— Ատաղձագործի արհեստանոցը, նրա կահավորումն ու աշխատանքը։ Ատաղձագործի և արտելի տարբերությունը։

Փայտի մշակման հիմնական ձևերը,— սղոցելը, ռանդելը, ծակելը, փորելը, միացումը՝ բթակներով, պտուտակներով, մեխերով և սոսնձելը։ Գաղափար մի կամ յերկու փայտամշակման մեքենաների աշխատանքի մասին (որինակ՝ սղոց, խառատի հաստոց)։

Ունակությունների շրջան.— Անցքերի ծակելը շաղափով, խարտոցով և ավրիչով խարտոցելը։ Մակերեսի հղկումը ապակեթղթով (շկուրկա) փայտի ներկելը անիլինի ներկով։

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք (7 ժամ).— Իրեր՝ տնտեսության համար, որինակ՝ արկղներ, կերի ամաններ, սահնակներ, դարակներ՝ խաղալիքներ շոգեկառք, բեռնակիր ավտո և այլն։

Էքսկուրսիա (2 ժամ).— Ատաղձագործի արհեստանոց (ատաղձագործի արտել կամ տնայնագործի մոտ)։ Ծանոթություն արհեստանոցի կահավորման, աշխատանքի և նրա կազմակերպման հետ։

6. ԻՆՉՊԵՍ Է ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ՀԱԳՈՒՍՏԸ (10 ժամ)

ա) Գիտելիքների ծավալը.— Հագուստի պատրաստման համար անհրաժեշտ նյութերը և նրանց անունները— գործվածք, ոբիկոտաժ, բամբակ, մորթի, թել, կոճակ, կեռիկներ և այլն։

Գործվածքի հատկությունները— ջերմության պահպանում, ամրություն։ Տարբեր գործվածքներ և թելեր՝ բամբակի, բրդի, մետաքսի «տաք» և «սառը»։

Հագուստի պատրաստման հիմնական պրոցեսները.— ձևելը, կարելը,

դրվագում, Գաղափար՝ կարի արհեստանոցի աշխատանքի կազմակերպման
մասին։ Ծանոթություն կարի մեքենայի հետ և նրա աշխատանքի արա-
գության համեմատությունը ձեռքի աշխատանքի հետ։

Ունակությունների շրջան.— Գործվածքի լայնության և յերկարության
վորոշումը։ Գործվածքների ձևելը պարզ աշխատանքի համար։ Թեք ձևելը։
Կարելը հիմնական կարով՝ կրկնակի և թեք։ Հագուստի պարզ վերանորո-
գում (կարկատելը)։ Առաջին փորձնական աշխատանքը հարդարած կարի
մեքենայով։

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք (6 ժամ).— Թղթի պարզ ձևվածքների (վիկրոյկա) պատրաստումը՝ քառակուսի (թաշկինակի համար), ուղղանկյունի (յերեսսրբիչ, գրատախտակի ջնջոցներ, գրքի պայուսակ), յեռանկյունի (պիոներական վզկապ, թաշկինակ, գլխաշոր)։ Աշխատանք կարի մե-
քենայով։ Հագուստի պարզ վերանորոգում, կոճակների կարելը։ Ձեռամ բառ
ձևվածքի ու կարածի։ Աշխատանք հարդարած կարի մեքենայով։

Լաբորատոր աշխատանք (1 ժամ).— Կենդանական և բուսական ծագում
ունեցող տեքստիլ նյութերի կոլեկցիաներ կազմելը։ Ջերմահաղորդ գործ-
վածքների վորոշումը՝ տաք ջրով շիշը հավասար ժամանակով ու տարբեր
գործվածքներով փաթաթելու միջոցով։

Էքսկուրսիա (2 ժամ).— Կարի արհեստանոց։ Ծանոթություն աշխատան-
քի կազմակերպման և հագուստի կարելու պրոցեսի հետ։

7. ԲԱՐՁՐԱՀԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ՅԵՎ ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ (10 ժամ)

(Տեխնիկայի մոդելացում)

ա) Գիտելիքների ծավալը.— Բարձրահան պարզ մեքենաները և փոխա-
դրական միջոցները— ջրհան, կռունկ, վոլորան, ճախարակ, մխանիվ սայ-
լակ, վագոնետկա, սայլ։ Նրանց հիմնական մասերը— առանցք, առանցքա-
կալ, անիվներ։ Առանցքների յուղելու անհրաժեշտությունը։

Ունակությունների շրջան.— Շարժական կոնստրուկցիաների սարքավոր-
ման ունակություններ։

բ) Աշխատանքի ձևերը. աշխատանք (8 ժամ).— Ազատ կոնստրուկտիվ
աշխատանք (թերմշակ տեսակավոր նյութերից և կոնստրուկտորի մասերից),
դպրոցի և մանկապարտեզի համար խաղալիք,— մոդելներ, որինակ՝ վոլո-
րան, բարձրահան մեքենա, լիֆտ, սայլակ, վագոնետկա, մխանիվ սայլակ
և այլն պատրաստելը։

Լաբորատոր աշխատանք (1 ժամ).— Արկղով ծանրություններ տեղափո-
խելը հարթ տարածության վրա քաշելով, հրելով, անիվների վրա դնելով,

8. ԻՆՉՊԵՍ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ ՏՈՒՆԸ (2 ժամ)

ա) Գիտելիքների ծավալը.— Շենքի մասերը (հիմք, պատեր, հատակ,
առաստաղ, կտուր, պատուհան, շրջանակներ, դռներ)։ Բարձ և փայտե տան
կառուցման նյութեր (քար, աղյուս, գերան, տախտակ, յերկաթյա գերան,
տանիքի յերկաթ, ապակի, միացնող նյութեր)։

Կառուցմամբ զբաղվող բանվորների արհեստը (քարտաշ, հյուսն

տաղձագործ, վառարանագործ, տանիք ծածկող, ջրմուղ անցկացնող)։ Շինարարական աշխատանքները դյուրացնող հիմնական հարմարանքներ (բարձրահան մեքենա, վագոնետկա, միանիվ սայլակ)։

Ժամանակակից տան կառուցման մասին տարրական հասկացողություն (ջրմուղ, կոյուղի կենտրոնական ջեռուցում)։

Ունակությունների շրջան.— *Աղյուսների կաղապարում։ Աղյուսիկների և քարերի շարվածք՝ կավի շաղախով։*

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք *(5 ժամ).—Աղյուսների կաղապարում։ Մանակի թրծում։ Աղյուսե կառուցվածքների մոդելների կառուցում (փոքրիկ աղյուսների և քարերի շարվածք՝ կավի շաղախով)։*

Լաբորատոր աշխատանք *(1 ժամ).—Նյութերի հատկությունների հետազոտություն, ըստ նրանց արտաքին հատկանիշների։ Շինարարական նյութերի կոլեկցիաների պատրաստում։*

Էքսկուրսիա դեպի կառուցվող որևէ տուն *(2 ժամ).—Տան կառուցման, աշխատանքի առանձին պրոցեսների և հարմարանքների գործածության դիտում։*

9. ԱՇԽԱՏԱՆՔ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱԾԻԼԱՆՈՑՈՒՄ (9 ժամ)

ա) Գիտելիքների ծավալը.—Ջերմոցներ (парник) *պատրաստելը։ Գոմաղբը որպես տաքացնող նյութ։ Ջերմոցների և ջերմատների* (теплица) *տարբերությունը։ Ջերմոցների մեջ ցանվող կուլտուրաները (ծխախոտ, պամիդոր, կաղամբ և այլն)։ Ջերմոցների ցանքսերի ձևերը։ Բույսերի խնամքը ջերմոցներում։*

բ) Աշխատանքի ձևերը.—*Աշխատանքը ջերմոցներում։ Ջերմոցների տեղի պատրաստումը։ Գոմաղբը լցնելը։ Գոմաղբի յերեսին 10—15 սմ. փթահող լցնելը։ Հողի մակերեսը հարթելը։ Ցանելը։ Սերմերի ծածկելը, ջրելը, քաղհանելը, օդ տալը։ Մեկ միավոր տարածության վրա ծլած բույսերի հաշվելը։ Հասած սածիլներ դաշտում սածիլելը։*

Ամառային աշխատանքներ.—*Սածիլած բույսերի խնամքն ամառվա ընթացքում։*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ—ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իր աշխատանքի պլանավորումը (առանց գրանցման վորոշել անհրաժեշտ նյութերի, գործիքների չափերը)։ Իր աշխատանքի հաշվառումը, անցած դասերի ժամանակի, աշխատանքի վորակի վորոշումը։ Հրահանգչական (ինստրուկցիոն) քարտով աշխատելու ունակություն, խնամքով վերաբերմունք դեպի գործիքը։ Նյութերի տնտեսաբար ծախսում։

Գործիքատվի, պահեստապետի, սանիտարի պարտականություններ կատարում։ Յերկուսով աշխատելու ունակություններ՝ աշխատանքի պարզ բաժանման հիման վրա,

2. ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Գաղափար այն մասին, վոր ամեն մի իր պատրաստվում ե մի վորևէ նյութից (հումույթ) և անցնում ե մշակման մի շարք աստիճաններ։ Նյութերը ձեռքով և մեքենայով մշակելը և վերջինիս առավելությունը։ Գաղափար՝ մարդկանց միջև աշխատանքի բաժանման և հիմնական զբաղմունքների մասին (հյուսն, տաղձագործ, քարտաշ, դերձակ և այլն)։

Հասկացողություն մարդկանց աշխատանքի կազմակերպման պարզ ձևերի մասին. արհեստավորներ և միայնակ աշխատող տնայնագործներ, տնայնագործ արտելներ։ Աշխատանքի արտելային կազմակերպման առավելությունը։

Ծանոթություն.—*Մեծահասակների աշխատանքի կազմակերպման վերաբերյալ գիտելիքները յերեխաները ձեռք են բերում ամբողջ տարվա ընթացքում, գլխավորապես, տարեկան ծրագրով նախատեսված արտադրական եքսկուրսիաների ընթացքում։ Կազմակերպչական աշխատանքային ունակությունները յերեխաները ձեռք են բերում աշխատանքային գործունեության պրոցեսում՝ աշխատանքի սենյակում և դպրոցական հողամասում։ Այդ պատճառով աշխատանքի կազմակերպման բաժնին առանձին ժամ չի տրվում։*

ՅԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՅԵՐՐՈՐԴ ՏԱՐՎԱ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Մեծահասակների աշխատանքի կազմակերպման պարզ ձևերի ծանոթությունից (ուսուցման 2-րդ տարում) անցնել գործարանի, նյութերի մեքենայական մշակման և մեքենայի ծանոթությանը (հիմնական մասերը և դետալները)։

2. Հիմնական ուշադրությունը կենտրոնացվում ե տեքստիլի, պոլիգրաֆարտադրության և շինարարության գործի ծանոթության վրա։

3. Թղթի, տեքստիլի և շինարարական նյութերի հետ կապված աշխատանքի ավարտումը և եքսկուրսիոն ծանոթություն համապատասխան արտադրության և ժամանակակից տեխնիկայի հետ։

4. Ծանոթություն տարրական քիմիական պրոցեսների հետ՝ զանազան նյութերի մշակման հետ կապված (թղթի, գործվածքի, թելի, փայտի, ներկելը, կաղապարման—ձուլման պրոցեսներ՝ ցեմենտի հետ, ծանոթություն՝ հանքային պարարտացման հետ)։

5. Նյութերի մասին տեխնոլոգիական գիտելիքների խորացում՝ լաբորատոր—հետազոտական աշխատանքների միջոցով (մանրաթելի, գործվածքի, ընափայտի կազմությունը, փորձեր շինարարական նյութերով)։

6. Գործածություն ավելի բարդ գործիքների, վորոնք պահանջում են ավելի մանր մկանների զարգացում և ավելի մեծ ֆիզիկական ուժ (ստամեսկա, շերխեբել, ռանդա, յերկայնահատ սղոց, կարի մեքենա)։

7. Դպրոցի հողամասի վրա կատարվող փորձի ընդլայնում (աշխատանք ջերմոցներում, բանջարանոցում)։

1. ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ ՅԵՎ ԴԱՇՏԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

ա) Գիտելիքների ծավալը.—*Բանջարեղենն ու նրա գործածությունը մարդու սննդի համար։ Բանջարեղենի մնացորդների ավելցուկների և թփերի ոգտագործելը, վորպես անասունների կեր–սիլոս։*

Բանջարեղենի (լոբու, պամիդորի և այլն), հացահատիկների (գարու, ցորենի, հաճարի), ծխախոտի, բամբակի, ճակնդեղի, կարտոֆիլի և խոտաբույսերի բերքահավաքի ժամանակը, հասունացման նշանները և բերքհավաքի ձևերը (պարապմունքի ընթացքում առանձնապես ուշադրություն դարձնել այն կուլտուրաների վրա, վորոնք մշակվում են տվյալ վայրում)։

Աշխատանքի ձևերը.—*Սիլոսի հորերի ծանոթություն։ Սիլոս պատրաստելու հիմնական մոմենտների ծանոթացում։ Դպրոցական հողամասում ցանված կուլտուրաների հասունացման արտաքին նշանների ծանոթացում և հասունացման վորոշումը՝ ըստ գույնի, համի, մեծության, ամրության և հյութալիության։*

Բերք հավաքող մեքենաների (հնձող, հավաքող, հանող, փորող) աշխատանքի պրոցեսի ծանոթությունը։

Դպրոցական հողամասի բերքահավաքի մասնակցություն։

Կարտոֆիլի ու ճակնդեղի պահելը։ Պահեստներում, հորերում և կույտերում կարտոֆիլի դասավորելը։ Պտուղներ և բանջարեղեն չորացնելն ու պահելը։

2. ՓԱՅՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ (6 ժամ)

ա) Գիտելիքների ծավալը (1 ժամ).—*Տվյալ շրջանում ամենից ավելի տարածված ծառերի տեսակների արտաքին նշաններն ու հիմնական հատկությունները (կեղևը, բնափայտի գույնը, նրա կազմությունը, փխրությունը)։ Ինչի համար են գործադրում փայտի առանձին տեսակները։*

Փայտի համեմատությունը քարի, մետաղի հետ, Ռանդող գործիքների կառուցվածքը, նրանց համեմատությունը դանակի, ստամեսկայի հետ։

Ունակությունների շրջան.—*Փայտի ռանդելը շերխեբելով և ռանդով։ Ստամեսկայի և թակի (բութ մուրճ) գործածությունը։ Կիսափայտի միացումը։ Փայտի ներկելը յուղաներկով կամ եմալ ներկով։*

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք (4 ժամ).—*Տարբեր տեսակի փայտի գործնական աշխատանքներ, դպրոցի համար զանազան իրերի և մանկապարտեզի համար խաղալիքների պատրաստում. որինակ՝ դարակներ, կախարաններ, սահնակներ, շտատիվներ, կշեռք. շրջանակներ՝ բույսերի չորացման համար մամլակներ ու մանկապարտեզի փոքրահասակների համար՝ խաղալիքներ։*

Լաբորատոր աշխատանք (2 ժամ).—*Տարբեր և ավելի տարածված փայտի տեսակների հատկությունների ծանոթություն։ Փայտի, քարի, յերկաթի հատկությունների համեմատական վորոշում։*

3. ԱՆՏԱՌԱՆՅՈՒԹԻ ՄԹԵՐՄԱՆ ՅԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ (6 ժամ)

ա) Գիտելիքների ծավալը (1 ժամ).—*Անտառանյութի մթերումը և պահպանումը. կտրելը, ծառերի սղոցելը, նրանց փոխադրությունը, գետով տե-*

ղափոխելը, ձեռքով և մեքենայով սղոցելը։ Բնափայտի կազմությունը (ջրի, ոդի ներկայությունն այդտեղ)։ Թաց փայտի հատկությունը (չորացում, կորացում)։ Փայտի չորացումն ոդում և առանձին չորանոցներում։

Փայտի հատկությունների փոփոխությունը բնական պայմանների ազդեցության տակ (արև, քամիներ, ջուր) ճաքճքում է, կորանում է, փտում է, ուռչում է, չորանում է։ Փայտի պաշտպանումը փչացումից (ծածկի տակ պահելը, ոլիֆով, լաքով, ներկով պատելը, փայտի տոգորումը ձյութով, ածխացումը)։

Փայտի պաշարը մեր յերկրում (Խորհրդային Միության մեջ, Անդրկովկասում, Հայաստանում), անտառամշակումը, փայտի արտահանումը արտասահման՝ մեքենաների հետ փոխանակելու նպատակով։

Ունակությունների շրջան.—*Սղոցելը յերկանյական աղեղնասղոցով։ Ռանդելը քանոնի ոգնությամբ։ Փայտը գոլորշիով տաքացնելը և կորացնելը։*

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք (3 ժամ).—*Գործնական աշխատանք փայտի տարբեր տեսակներով։ Սահնակների, պատվանդանների (շտատիվներ), շրջանակների, բույսերի չորացման մամլակների և այլ բաների պատրաստում (կիսով չափ ռանդած տախտակներից)։*

Լաբորատոր աշխատանք.—*Փայտի խոնավության և չորանալուց նրա ձևի փոփոխության վորոշումը (կշռելը, թաց և չոր փայտի չափումը, կորացման վորոշումը)։ Փայտը փչացումից և փտելուց պաշտպանելու միջոցները (ներկելը, ձյութով տոգորելը, լաքով պատելը և այլն)։ Փայտի ուռչելը և չորանալու հատկության համեմատությունը՝ կավի, թղթի, գործվածքի նույնանման հատկությունների հետ։*

Եքսկուրսիա *(2 ժամ) դեպի սղոցարաններ կամ դրույց (դիապոզիտիվների ցուցադրումով, ամսագրերից և նկարներից ոգտվելով) կինոնկար՝ անտառանյութի պահպանման, չորացման և արտահանման մասին։*

4. ԳԻՐՔՆ ԻՆՉՊԵՍ Է ՏՊԱԳՐՎՈՒՄ (8 ժամ)

ա) Գիտելիքների ծավալը.—*Գրքերը, լրագրերը, պլակատները, նկարները և նրանց նշանակությունը կյանքում։ Գրքի տպագրությունը տպարանում. տպագրական տառեր (շարելու տառեր), շարվածքը տպագրելու համար, տպագրական մեքենայի աշխատանքը (հիմնական գծերով)։ Կլիշեներից նկարներից պատկերներ տպագրելը (փայտե կլիշեյի որինակով)։*

Տպագրության գյուտի պատմությունը (Գուտենբերգի առաջին տպագրական մեքենան)։

Ունակությունների շրջան.—*Փոքրիկ հայտարարությունների, խորագրերի, պատի թերթի բաժինների շարվածք՝ ինքնագործ կարտոնի կամ պատրաստի կաուչուկի տառերից և նրանց տպագրելն ուսումնական տպագրական պարզ հաստոցի վրա (պարզ սրբագրիչ հաստոցի ձևի։ Պարզ կլիշեների պատրաստումը կարտոնից, լինոլեումից, փայտից և նրանցով տպագրելը)։*

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք (4 ժամ).—*Աշխատանք հասարակ տպագրական հաստոցի վրա (հայտարարությունների, խորագրերի, պլակատների և այլն տպագրելը)։*

Լաբորատոր աշխատանքներ (2 ժամ).—Տառերի և կլիշեների պատրաստում՝ կարտոնից, խցանից, լինոլեումից (նայած թե ինչ կճարվի), տառերի շարվածքը և փորձնական տպագրություն։

Էքսկուրսիա (2 ժամ) տպարան՝ դիտելու շարվածքը, տպագրելը, բրոշյուրովկան, կազմարարությունը։

5. ԳԻՐՔՆ ԻՆՉՊԵՍ Է ԿԱԶՄՎՈՒՄ (8 ժամ)

ա) Գիտելիքների ծավալը.—Տպարանում տպված թերթերի բրոշյուրովկան։ Թերթերի կարելը՝ ձեռքով, մեքենայով։ Ինչու՞ համար է գիրքը կազմվում։ Ինչպե՞ս և ինչի՞ց է գրքի կազմը պատրաստվում (կարտոն, կտոր, կաշի, թել, մետաղալար)։ Գիրք կազմելու աշխատանքի կարգը։ Ծանոթություն կարտոնաժի—կազմարարական աշխատանքների մեքենաների հետ. կարտոնակտրիչ (պապշեր), կարիչ մեքենա։ Մեքենայի հիմնական բանող մասը։ Ձեռքի աշխատանքի և մեքենայի համեմատությունը։

Ունակությունների շրջան.—Բրոշյուրի նախապատրաստումը կազմելու համար (շապկի հանելը, կարի քանդելը, կազմի արմատի և սատառի պատրաստումը։

Բրոշյուրի կարելը թելով և մետաղալարով։ Բրոշյուրի կազմելը կարտոնի կողերի մեջ, շապկի կպցնելը և կտրելը մամլակով։

Գիրքը (վոչ հաստ) կազմելու նախապատրաստությունը (գրքի պատրաստումը կազմելու համար՝ հաստոցի վրա կարելը, սեղանին ամրացված մամլակի մեջ դրելով կտրելը և նրա կազմելը։

Գրքի պարզ վերանորոգումը (թերթերը սոսնձով կպցնելը, կարելը)։

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք (6 ժամ).—Բրոշյուրների և գրքերի կազմելն իր և դպրոցի գրադարանի համար՝ աշխատանքն ոպերացիաների բաժանելով. ա) գիրքը կազմելու և կարելու համար նախապատրաստելը, բ) կազմերի, արմատների պատրաստումը, գ) գրքի կտրելը և կազմելը։

6. ԹԵԼՆ ՈՒ ԳՈՐԾՎԱԾՔՆ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ (10 ժամ)

ա) Գիտելիքների ծավալը.—Գործվածքի գործածությունը կենցաղում և տեխնիկայում։ Գործվածքի կազմությունը։ Գաղափար ջուլհակության մասին (ձեռքի և մեքենայացված ջուլհակային հաստոցի հիմնական մասերը)։

Մանելու հիմունքները։ Թելի, պարանի, թոկի կազմությունը։ Նրանց մշակման համար գործածվող նյութեր։ Վուշի, կանեփի, բամբակի, բրդի, մետաքսի մանրաթելերը։ Ինքնաման ճախարակի և մանող մեքենայի աշխատանքը։

Ջուլհակի հաստոցի մասին տարրական հասկացողություն։ Գործվածքի դրվագումը (ներկելը, ոսլայումը)։ Կարի մեքենայի աշխատանքը, նրա հիմնական աշխատող մասերը, մեքենան խնամելու կանոնները։ Ծանոթություն մանվածագործվածքային արտադրության պրոցեսի հետ և աշխատանքի կազմակերպությունը գործարանում։

Ունակությունների շրջան.—Գործվածք ուսումնագործվածքային հաստոցի վրա։ Գործվածքի և թելի ներկելը։ Կարի մեքենայի յուղելը, կարգավորումը, խնամելը, նրանով կարելը։

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք (5 ժամ).—Կարի մեքենայի խնամքը, յուղելը և մաքուր պահելը։ Մեքենան կարգավորելը։ Մանր իրերի ձևելը պատրաստի ձևի հիման վրա (տրուսներ, մայկաներ, ճամբորդական պայուսակ և այլն) և նրանց կարելը մեքենայով։

Լաբորատոր աշխատանք (3 ժամ).—Բամբակի (վուշի, բրդի, մետաքսի պարանների թելերի կազմության անալիզը՝ քանդելով նրանց հյուսվածքը և նրանց առանձին մանրաթելերի բաժանելով։ Թելի հյուսվածքը բամբակից, ծանոթություն ճախարակի կազմության հետ և նրա վրա մանելը։ Խոշորացույցի միջոցով զննել և նկարել քաթանի հյուսվածքը։ Գործվածքային շրջանակի կամ դպրոցական գործվածքային հաստոցի վրա գործելը։ Գործվածքի հենքի և միջնաթելի վորոշելը։

Էքսկուրսիա (2 ժամ)՝ մանածագործվածքային գործարան կամ մանածագործվածքային տնայնագործական արհեստանոց, տեխնիկական կամ գավառագիտական թանգարան։ Ծանոթություն գործվածքի արտադրության տեխնոլոգիական պրոցեսի հիմնական մոմենտների հետ։ Էքսկուրսիայի նյութերից տեխնոլոգիական հավաքածուներ և նկարներ կազմելը։ Գործվածքը ներկելու պրոցեսի ցուցադրումը։

7. ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԸ (10 ժամ)

ա) Գիտելիքների ծավալը.—Մեքենայի նշանակությունը մարդու համար (մեքենայի միջոցով բարձրանում է արտադրողականությունը, վորակը և իջնում է արտադրանքի արժեքը)։ Մեքենայի հիմնական մասերը. ընդունիչ (ընկալիչ—պրիյոմնիկ), այն մասը, վորի վրա ներգործում է ուժը,—կոթ (բռնակ՝ ռուկոյատկա), վոտնակ (պեդալ), մխոց (պորշեն), շեղբ (լոպաստ—տուրբին թիակի բերան) փոկանիվ (շկիվ)։

Փոխանցող մեխանիզմ.—Այն մասը, վոր փոխանցում է այդ ուժը և կերպարանափոխում է շարժումը,—փոկանիվ (շկիվ), փոկ, ատամնավոր անիվ, շղթա, լծակ և այլն։

Բանող մեխանիզմ.—Այն մասը, վորն աշխատանք է կատարում—ծակիչ, ասեղ, մաղող, սկավառակ (դիսկ) և այլն։ Գտնել այդ մասերը մեքենաների և մոդելների մեջ։

Փոկային և ատամնավոր փոխանցման գործածության դեպքեր։ Ուղղահայաց շարժման փոխվելը շրջանաձև շարժման՝ կարի վոտքի մեքենայի, կամ վոտքի՝ սրելու հաստոցի և այլ մեքենայի որինակի վրա։ Շարժման արագացումը և դանդաղեցումը տարբեր տրամագիծ ունեցող փոկանիվի կամ ատամնավոր անիվների ընտրության միջոցով։

Ունակությունների շրջան.—Փոխանցող մեխանիզմների սարքավորումը։ Փոխանցող մասերի հավաքումը (փոկային, ատամնավոր և մեղխաշարժաբնային – կրիվոշիպնո-շատուննի)։

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք (8 ժամ).—Մոնտաժ՝ տեսակավոր նյութերից կամ կոնստրուկտորի մասերից—փոկային փոխանցում, կարապիկ (լեբյոդկա) մեքենայական լծակավոր մուրճ, բարձրահան շարժական մեքենա, փոխանցիկ և այլն։ Պարզ մեխանիզմների քանդելը և հավաքելը (դռան կողպեք, միս կտրելու մեքենա, պրիմուս կամ հեծանիվի ոտնահան (նասոս) և այլն։

Էքսկուրսիա (2 ժամ)՝ մեքենայական արհեստանոց: Ծանոթություն փոխանցումների և պարզ մեքենաների հիմնական մասերի հետ:

8. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ (10 ժամ).

ա) Գիտելիքների ծավալը.— Ժամանակակից հիմնական շինարարական նյութեր. հանքային (բնական՝ ավազ, կավ, քար, քավանդ տուֆ, արթիկ տուֆ, բազալտ, պեմզա), արհեստական (ցեմենտ, կիր, գաճ, աղյուս, ապակի), մետաղյա (տանիքի՝ ցերկաթե գերաններ, ձողեր, խողովակներ) փայտյա (գերան, տախտակ, ֆաներա):

Ցեմենտը, կիրը, պեմզան և նրանց հատկությունը՝ ջրի հետ միանալուց կարծրանալը: Ցեմենտի, կրի, պեմզայի և կավի գործածությունը շինարարության գործում: Շինարարական նյութերի նշանակությունը սոցշինարարության գործում:

Ունակությունների շրջան.— Ցեմենտի, կրի և պեմզայի շաղախի պատրաստելը, ձևի և կաղապարի մեջ ցեմենտի թափումը, քարի և աղյուսի շարելը ցեմենտի կամ կրի, կավացեխի շաղախով:

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք (6 ժամ).— Պատրաստի ձևերի, տախտակամածների միջոցով ցեմենտից տարբեր մոդելների թափում. օրինակ՝ կամրջի, ջրամբարի, խողովակների, նստարանների և այլ մոդելների: Որևէ շինարարության կամ նրա մասերի մոդելների կառուցումը քարերից կամ աղյուսներից՝ ցեմենտի կամ կրի շաղախով, օրինակ՝ կամուրջ, տնակ և այլն:

Լաբորատոր աշխատանք (2 ժամ).— Ծանոթություն շինարարական նյութերի հատկությունների հետ, նրանց համեմատությունը, կոլեկցիաների կազմումը՝ յուրաքանչյուր հատկությունների և գործածության նկարագրությամբ:

Էքսկուրսիա դեպի նոր շենքերը (2 ժամ):

9. ԱՇԽԱՏԱՆՔ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ (2 ժամ)

Գիտելիքների ծավալը (5 ժամ).— Սերմացվի նախապատրաստումը, սերմացվի զտումն ու ախտահանումը: Դաշտային կուլտուրաների ցանքը՝ սերմերով, սածիլներով և պալարներով: Ցանող մեքենաների աշխատանքի ծանոթացումը: Մեքենայի նշանակությունը: Ցանքի խնամքը (նոսրացումը, քաղհան, հողի փխրացում, ջրել): Խնամքի նշանակությունը: Ծանոթություն՝ սերմազտիչ, ախտահանող և ցանող մեքենաներին ու նրանց աշխատանքին:

Աշխատանքի ձևերը. Աշխատանք.— Սերմացվի մեջ գտնվող մոլախոտերի, սերմերի, ճմլված հատիկների, հողի և թեփի հեռացնելը սերմազտիչ մեքենայով: Սերմացվի ախտահանումը: Ծխախոտի չիթիլը: Կարտոֆիլ ցանելը բահերով, քաղհանելը, նոսրացնելը, հողի փխրացնելը, ջրելը:

Ամառային աշխատանքներ.— Գարնանային աշխատանքների վորոշ մասի՝ ջերմոցներից, արկղներից և ծաղկամաններից բանջարանոցային կուլտուրաների (պամիդորի, կաղամբի և այլն) սածիլները դաշտ տեղափոխելու աշխատանքների շարունակությունը:

Ցանքի խնամքը՝ ջրելը, քաղհանելը:

Վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարելը:

Դիտել կուլտուրաների աճեցման շրջանները (թփակալման, հասկակալման, ծաղկման և հասունացման): Հավաքել և հերբարիում կազմել դպրոցական հողամասում ցանված բոլոր կուլտուրաներից:

Հավաքել և պահել վնասատու միջատներն ու վնասված բույսերից մի քանիսը:

Հավաքել և պահել հիվանդացած բույսերի տերևները և պտուղները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՑԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Կազմակերպչական-աշխատանքային ունակություններ

Աշխատանքի պլանավորում: Ենթադրվելիք աշխատանքի պարզ էսքիզ նկար կազմելը՝ ցույց տալով նրա դետալները, անհրաժեշտ գործիքները, նյութերը և աշխատանքի անհրաժեշտ ժամանակը, իր աշխատանքի ռացիոնալ կազմակերպումը, նախնական ծրագրումը, անհրաժեշտ գործիքների, նյութերի աշխատավայրի (рабочее место) պատրաստումը, ժամանակի ճիշտ օգտագործումը, աշխատանքի լավ վորակի համար մղվող պայքարը, աշխատանքի արագության և վորակի հաշվառումը:

Աշխատանք բրիգադում, 3—4 հոգով՝ աշխատանքի պարզ բաժանում կատարելով:

Գիտելիքներ մեծաձեռնարկների աշխատանքի կազմակերպման մասին

Գաղափար գործարանի, վորպես բանվորների մի բարդ կազմակերպության մասին, վորոնք (բանվորները) մեքենաների օգնությամբ, մեքենաները շարժման մեջ դնելով՝ մեխանիկական ուժի գործածությամբ՝ հումույթից մարդկանց կյանքի համար անհրաժեշտ՝ պատրաստի իրեր են արտադրում:

Յուրաքանչյուր արտադրության հիմնական խնդիրներ.— Արտադրել վորքան կարելի յե շատ, արագ, էժան և լավ: Ինչպես են այդ խնդիրները լուծվում գործարանում. աշխատանքի բաժանում, մեքենաների գործածություն, նույնանման իրերի արտադրություն մեծ քանակությամբ (մասսայական արտադրություն):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Տես 2-րդ տարվա ծրագրի համապատասխան մասի ծանոթությունը

ՉՈՐՐՈԴ ԽՈՒՄԲ

ՈՒՍՈՒՑՄԱՆ 4-ՐԴ ՏԱՐՎԱ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ընդհանուր տարրական ծանոթություն ժամանակակից խորհրդային արտադրության կազմակերպման հիմնական ձևերին և մեթոդներին (պլանայնություն, մասսայականություն, անընդհատ հոսանք, մեխանիզացիա և էլեկտրիֆիկացիա՝ մայր արտադրության, փայտամշակման արտադրության օրինակի հիման վրա:

2. Հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է արտադրության առաջատար ճյուղերի (մետաղամշակում, փայտամշակում և գյուղատնտեսություն) և էներգետիկայի շուրջը։

3. Մետաղամշակումը վորպես ծրագրի ինքնուրույն բաժին, վորի հիման վրա ընդլայնում է յերեխաների հասկացողությունների շրջանը՝ նյութերի մշակման զանազան ձևերի մասին (սառը և տաք մշակում)։

4. Յերեխաների տեխնիկական հետաքրքրության խորացումն ու ստեղծագործական ընդունակությունների զարգացումը՝ մեքենաների ու շարժիչների մոդելացման և էլեկտրոտեխնիկական աշխատանքների միջոցով։

5. Ուսուցման նախկին տարիների փորձի հիման վրա պարզ ձևով յերեխաներին տալ ժամանակակից արտադրության ընդհանուր սկզբունքների հասկացողությունը (ցույց տալ գործիքների, մեքենաների և հաստոցների կառուցվածքի, տարբեր նյութերի մշակման պրոցեսների, տարբեր ձեռնարկություններում արտադրության և աշխատանքի կազմակերպման մեթոդների նմանությունը)։

1. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԿՈԼԽՈԶԻ ՅԵՎ ՍՈՎԽՈԶԻ ԴԱՇՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ (8 ժամ)

Ա. Գիտելիքների ծավալը.— *Ինչպես են կազմակերպված կոլխոզն ու սովխոզը։ Ծանոթություն դաշտավարական տնտեսության հետ։ Գյուղատնտեսական մեքենաների և տրակտորների կիրառումը։ Հողի տրակտորային մշակումը։ Տրակտորն ու կցորդ (կցվող) գործիքները և նրանց արտադրողականությունը։*

Ցանքը՝ տրակտորի, լծկանի և ձեռքի միջոցով։ Աշխատանքի արտադրողականության և կազմակերպման համեմատությունը։ Բերքի կալսելը, քաղհանելը, տեսակավորելը։ Գյուղատնտեսական մեքենաներ—կալսիչ, քամհար, սերմզտիչ և տեսակավորիչ մեքենաները. նրանց արտադրողականությունը ձեռքի աշխատանքի համեմատությամբ։ Աշխատանքի կազմակերպումն ու հաշվառումը։

Բ. Աշխատանքի ձևերը. աշխատանք *(4 ժամ).— Դպրոցական տնտեսության փորձնական հողամասի բերքահավաքը։*

Էքսկուրսիա՝ *սովխոզ կամ կոլխոզ (3 ժամ).— Աշխատանքի առանձին պրոցեսների և գյուղատնտեսական մեքենաների, տրակտորների աշխատանքի դիտում։ Ծանոթություն աշխատանքի կազմակերպման հետ։*

2. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄԵՏԱՂԱԼԱՐԻՑ ՅԵՎ ԹԻԹԵՂԻՑ (8 ժամ)

Ա. Գիտելիքների ծավալը.— *Մետաղը վորպես մեքենայի հիմնական նյութ. մետաղի գործածությունը շինարարական և կենցաղի սպասարկման գործում։ Մետաղը յերկրի պաշտպանության գործում։*

Ամենից ավելի կարևոր և տարածված մետաղները. յերկաթ, պղինձ, անագ, ալյումին, արճիճ։

Այդ մետաղների հատկությունները՝ իրար համեմատությամբ (գույնով, ամրությամբ, քաշով, ոդի ազդեցությամբ իրենց վրա)։

Մետաղների գործածությունը, ըստ իրենց հատկությունների։ Մետաղի համեմատությունը՝ փայտի, քարի հետ, ըստ ամրության, քաշի մշակման դժվարության և յերկարակեցության։ Յերկաթի տեսակները — թերթավոր յերկաթ, թիթեղ, յերկաթալար՝ կլոր, շերտավոր, քառակուսի և այլ տեսակների գործածությունը պատրաստի բանվածքներում և շինարարական գործում։

Ունակությունների շրջան.— *Յերկաթալարի խազելը, խարտոցելը, կտրելը, տափակցնելը, աքցանով կորացնելը։ Յերկաթալարի միացման տեխնիկան, վոլորելով և կորացնելով (շարժուն և անշարժ)։ Թիթեղի կտրելը (մկրատով՝ ձեռքի և հաստոցային), ծակելը, կորացնելը։ Կողերի և անկյունների ծալելը, յերկաթալարի մացնելը թիթեղի ծալած կողմերի մեջ։*

բ) **Աշխատանքի ձևերը. աշխատանք** *(4 ժամ).— Գործնական աշխատանք թիթեղով և յերկաթալարով։ Յերկաթալարից ուսումնական և տնտեսական իրեր, որինակ՝ յեռոտանի հենարան, սեղմակ, կեռ, ղապանակ և այլն պատրաստելը դպրոցի և ընտանիքի համար։ Թիթեղից փոքր վաննաներ, ոճառաման, քերիչ, գավաթներ, թիթեղյա բանկաներ, խաղալիքներ և այլն պատրաստելը։*

Լաբորատոր աշխատանք *(2 ժամ).— Ծանոթություն զանազան տեսակ մետաղների, նրանց հատկությունների և մշակելի նյութերի ձևերի հետ։ Կազմել տեխնոլոգիական աղյուսակներ՝ մետաղների հատկությունների և նրանց գործածության նկարագրություններով։*

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԵՏԱՂՆ ԻՆՉՊԵՍ Է ՄՇԱԿՎՈՒՄ (8 ժամ)

Ա. Գիտելիքների ծավալը.— *Մետաղի սառը և տաք մշակումը ձեռքով և հաստոցներով։ Աշխատանք՝ ձեռքի գործիքներով — խարտոցով, սղոցով, ձեռնասղոցով, ծակիչով. հատելը կտրիչով (դուրինով)։ Աշխատանք հաստոցների վրա։ շրջատաշելը՝ խառատի հաստոցի վրա, կտրելը՝ մեխանիկական ձեռնասղոցով, ծակելը ծակիչ հաստոցի վրա, ռանդելը՝ ռանդայող հաստոցի վրա։*

Ձուլման գործը. կաղապարում, ձուլում։ Դարբնոցի աշխատանք։ Մետաղի թափման նմանությունը՝ ցեմենտի, թղթի, շաղախի թափման հետ։

Աշխատանքի կազմակերպումը մետաղամշակման արտադրության մեջ. աշխատանքի մեխանիզացիան, աշխատանքի բաժանումը, արտադրության մասսայական բնույթը, աշխատանքի կազմակերպության սոցիալիստական ձևերը, հիմնական և ոժանդակ ցեխերը։

Ունակությունների շրջան.— *Խարտոցի աշխատանքի տարրական ձևերը։ Բարակ շրջակալի յերկաթի, յերկաթալարի ծայրերի խարտոցումը և այլն։ Զոդման պարզ աշխատանքներ։*

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք *(4 ժամ).— Պարզ գործիքների (պտուտակիչ, հերյուն ծակիչ), խաղալիքների և տնտեսական իրերի (որինակ՝ լիտր, դույլ, ձագար և այլն) պատրաստում (պարզ զոդման գործածությամբ)։*

Լաբորատոր աշխատանք *(2 ժամ).— Յերկաթի, պողպատի, թջի փորձումը։ Մետաղի փորձարկումը՝ ամրությունը վորոշելու համար։ Մեկ—յերկու մանր իրերի ձուլումն արճճից և անագից (կշռաքարեր, պատվանդանի հենարան)։*

գործիքների և մետաղի մշակման պարզ հաստոցների նկարագրում։ Ձեռքի և մեքենայական հաստոցների համեմատությունը։ Զրույց դիապոզիտիվի ցուցադրումով, կինո-նկար մետաղի տաք մշակման մասին։

Էքսկուրսիա (2 ժամ)՝ դեպի մետաղամշակման արտադրություն, մայր արտադրության վերանորոգման–մեխանիկական ցեխ կամ դպրոցի 2-րդ աստիճանի մեքենայնացված արհեստանոց։ Ծանոթություն մետաղի մեքենայական մշակման և արտադրության մեջ աշխատանքի կազմակերպման հետ։

4. ՔԱՄՈՒ ՇԱՐԺԻՉՆԵՐ (4 ժամ)

(Տեխնիկական մոդելացում)

ա) Գիտելիքների ծավալը.— Շարժիչ մեքենաների դերը։ Նրանց գործածությունը տրանսպորտում, արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ։ Շարժիչ մեքենաների նշանակությունը երկրի պաշտպանության գործում։

Քամու աշխատանքը.— Թռչան (թղթե օձ), պլանյոր, առագաստանավ, քամու շարժիչներ և այլն։ Թևավոր կամ կառուսելանման պարզ քամու շարժիչների կառուցվածքը և աշխատանքը։ Հողմացույց։

Օդային միջավայրի օգտագործումը շարժման համար։ Պրոպելլերը և նրա կառուցվածքը։ Պրոպելլերի առաջ շարժվելու ընդունակությունը։ Պտտվելիս նրա նմանությունը պտուտակի հետ։ Պրոպելլերի գործածությունը տրանսպորտում (սավառնակ, օդանավ, աերոսաննակ, գլիսեր)։ Սավառնակի արտաքին կառուցվածքը և հիմնական մասերը։

Ունակությունների շրջանը.— Մոդելների կառուցում տարբեր նյութերից։

բ. Աշխատանքի ձևեր. աշխատանոց (3 ժամ).— Ուսումնական իրերի և խաղալիքների ու գործող մոդելների պատրաստումը դպրոցի և մանկապարտեզի համար. օրինակ՝ թևավոր կամ կառուսելանման քամու շարժիչ, պրոպելլեր, հողմացույց, սավառնակ և թռչող այլ մոդելներ։

5. ՋՐԱՅԻՆ ՅԵՎ ՋԵՐՄԱՇԱՐԺԻՉՆԵՐ (13 ժամ)

(Տեխնիկական մոդելացում)

ա) Գիտելիքների ծավալը.— Թափվող ջրի աշխատանքը։ Ջրային շարժիչներ։ Ամբարտակի դերը, տարրական հասկացողություն նրա կառուցվածքի մասին։ Վերնամուղ և ստորամուղ անիվների կառուցվածքն ու աշխատանքը։ Տարրական հասկացողություն տուրբինի կառուցվածքի և աշխատանքի մասին։

Ջերմային շարժիչներ։ Հասկացողություն շոգեմեքենայի աշխատանքի և կառուցվածքի մասին (կաթսա, գլան, մխոց, բաշխման տուփ)։ Շոգեմեքենայի գյուտի պատմությունը։ Տարրական հասկացողություն ավտոմոբիլի և տրակտորի կառուցվածքի և աշխատանքի մասին։

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանոց (6 ժամ).— Ուսումնական իրերի, խաղալիքների, գործող մոդելի պատրաստում՝ դպրոցի և մանկապարտեզի համար (վերնամուղ և ստորամուղ անիվ, տուրբին)։

Էքսկուրսիա (2 ժամ)՝ դեպի ավտոգարաժ, տրակտոր վերանորոգող արհեստանոց, շոգեկառքի մոտ։

6. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ՓԱՅՏԻ ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՀԵՏ (14 ժամ)

ա) Գիտելիքների ծավալը.— Գաղափար՝ փայտամշակման գործարանի, փայտի մշակման հիմնական մեքենաների (կլոր և ժապավենասղոց, ռանդող և ծակիչ հաստոց, խառատի հաստոց), արտադրության և աշխատանքի կազմակերպման մասին (պլանայնություն, աշխատանքի բաժանում, մեխանիզացիա, արտադրության մասսայական բնույթ, սոցմրցում և հարվածայնություն). փայտի մշակման գործիքների և մեքենաների համեմատությունն իրար հետ (ձեռքի և մեխանիկական սղոցներ, ռանդա և ռանդող հաստոց)։

Փայտի և մետաղի մշակման պրոցեսների և գործիքների համեմատությունն իրար հետ։

Ունակությունների շրջանը.— Ձեռքի կամ ոտքի կլոր սղոցով սղոցելը, կարկինի գործածությունը, աշխատանքը, կլոր փայտիկների ռանդելը, առաջին աշխատանքները փոքրիկ կայնով։ Միացումը պտուտակով, ուղիղ միջանցիկ բթակով։

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանոց (4 ժամ). Դպրոցի, տան, մանկապարտեզի համար ուսումնական պարագաների, մոդելների պատրաստումը, օրինակ՝ պատվանդան, կշեռք, փորձանոթի հենարան, եկկեր, կերաման, պատգարակ, դարակ, գրքի պահարան և այլն։

Փայտի աշխատանքի մի մասի կատարումն անընդհատ հոսանքի միջոցով։

Լաբորատոր աշխատանք (2 ժամ).— Ծանոթություն գործիքների կառուցման հետ, նրանց նկարագրումը, փայտի և մետաղի մշակման գործիքների համեմատությունը։

Էքսկուրսիա (2 ժամ)՝ դեպի փայտամշակման գործարան, մայր արտադրության փայտամշակման ցեխ կամ դպրոցի մեքենայացված արհեստանոց տնայնագործական արտել։ Ծանոթություն փայտի մեքենային մշակման և արտադրության մեջ աշխատանքի կազմակերպման հետ։

7. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԵՏ (10 ժամ).

ա) Գիտելիքների ծավալը.— Ելեկտրական հոսանքի ստացումը գալվանական ելեմենտի միջոցով։ Լեկլանշեյի ելեմենտը։ Նրա բաղկացուցիչ մասը։ Գրպանի լապտերի մարտկոցը, նրա նմանությունն ու տարբերությունն ելեմենտից։ Ջերմության և լույսի ստացումն ելեկտրական հոսանքի միջոցով։ Ելեկտրական լամպեր և ելեկտրական ջեռուցիչներ (պլիտաներ)։ Ելեկտրական լամպի կառուցվածքը։ Ելեկտրական հոսանքի հաղորդիչները և վոչ հաղորդիչները։ Ելեկտրական զանգի անջատիչը և կոճակի կառուցվածքն ու դերը։ Տարրական հասկացողություն մագնիսի մասին. երկաթն ու պողպատը դեպի իրեն ձգելու նրա հատկությունը. ունի երկու բևեռ, նույնանման բևեռներն իրար վանում են (մագնիսական սլաքի փորձի հիման վրա)։ Ելեկտրոմագնիսը և նրա տարբերությունը մագնիսից։ Ելեկտրական զանգի-հեռագրի կառուցվածքը։ Ծանոթություն դետեկտորական ռադիո ընդունիչի կառուցվածքի հետ։ Տարրական հասկացողություն ելեկտրական շարժիչի կառուցվածքի մասին (խարիսխ, կոլեկտոր, խոզանակ, մագնիսի

բեռները)։ Էլեկտրականության ստացումը դինամոմեքենայի միջոցով։ Խորհրդային Միության արդյունաբերության և գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիայի նշանակությունը։ Էլեկտրոկայանների շինարարության աճումը։

Ունակությունների շրջան.— Էլեկտրական զանգի անցկացումը գալվանական էլեմենտից։ Գրպանի լապտերի էլեկտրական լամպի անցկացումը։ Դետեկտորական ռադիո-ընդունիչի պատրաստի մասերի հավաքումը և նրա գործածությունը։

բ) Աշխատանքի ձևեր. աշխատանք *(5 ժամ).— Էլեկտրական զանգի անցկացումը։*

Լուսաբերի, լուսարձակի մոդելների պատրաստումը. էլեկտրաշարժիչի, ռադիո-ընդունիչի պարզ մոդելների հավաքումը պատրաստի մասերից։

Լաբորատոր աշխատանք (2 *ժամ*).— *Լեկլանշեյի էլեմենտի հավաքումը պատրաստի մասերից։ Մագնիսի և էլեկտրոմագնիսի փորձեր։ Ծանոթություն՝ էլեկտրոմագնիսի, դինամոմեքենայի, հեռագրի գործող մոդելների հետ։*

8. ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆՐ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ (8 ժամ)

ա. Գիտելիքների ծավալը.— *Մանր անասնապահության նշանակությունը։ Ինչպիսի մթերք է ստացվում ճագարներից և ընտանի թռչուններից։ Դպրոցական կամ կոլխոզ-սովխոզային տնտեսության մեջ եղած ճագարների և ընտանի թռչունների ցեղը։ Կեր։ Մեծ և մատղաշ ճագարների ու թռչունների կերի նորմաները։ Ճագարների համար վնասակար կերը։ Ապրելու տեղը։ Վանդակների կառուցվածքը։ Ճագարաբուծության և թռչնաբուծության կենդանա-անասնաբուժ. մինիմումը (զոովետմինիմումը)։*

բ. Աշխատանքի ձևերը. աշխատանք.— *Մեծ և մատղաշ ճագարների կերի հաշվառումն ու կերակրելը։ Կերի կշռելն ու պատրաստելը։ Վանդակի և ամանների մաքուր պահելը։ Ճագարների և թռչունների առողջության վիճակի ուսումնասիրությունը (աշխատանքը կատարվում է դպրոցական տնտեսության մեջ՝ ստորին խմբերի յերեխաների մասնակցությամբ)։*

Ամառային աշխատանք.— *Ճագարների և թռչունների խնամքի շարունակությունը։ Կանաչ կերով կերակրելը։ Կանաչ կերի քաղելը։*

9. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԵՏ՝ ՄԱՅՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (6 ժամ)

Էքսկուրսիա *դեպի մայր արտադրություն։ Էքսկուրսիայի նյութի մշակումը և աշխատանքի ու արտադրության կազմակերպման մասին նախապես հավաքած գիտելիքների ամփոփումը։*

Ծանոթություն.— *Գիտելիքների ծավալը տես ստորև՝ «աշխատանքի և արտադրության կազմակերպումը» բաժինը։*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Կազմակերպչական յեվ աշխատանքային ունակություններ

Աշխատանքի պլանավորումը յենթադրվելիք աշխատանքների պարզ նկարների և գծագրությունների պատրաստմամբ։ Մանկական տեխնիկական

գրականության՝ տեղեկատվի օգտագործումն աշխատանքի մեջ։ Աշխատանք հրահանգչական (ինստրուկցիոն) քարտով, աղյուսակով։ Տեխնիկական նկարների և պարզ գործողությունների ընթերցում։ Աշխատանքի ինքնուրույն բաշխումն ու հաշվառումը բրիգադում։ Աշխհանձնաժողովի անդամի պարտականությունների կատարումը։ Մասնակցություն ինվենտարի և նյութական գրքի կազմելուն, աշխատանքի ու սենյակի նյութեր մատակարարելուն, առաջին բժշկական օգնություն ցույց տալուն։

Գիտելիքներ մեծահասակների աշխատանքի կազմակերպման գծով

Ինչպես է կազմակերպված և ինչպես է աշխատում ժամանակից արտադրությունը. պահեստի տնտեսություն, հիմնական և օժանդակ ցեխեր, ուժակայան, գործարանի ներքին տրանսպորտ, գործարանի վարչություն։

Հասկացողություն խորհրդային արտադրության կազմակերպման ժամանակակից մեթոդների մասին ա) պլանայնություն, բ) արտադրության և գործարանի ներքին տրանսպորտի մեխանիզացիա, գ) արտադրության մասսայական բնույթ և անընդհատ հոսանքներ, դ) էլեկտրիֆիկացիա։

Տարրական հասկացողություն՝ արդֆինպլանի, աշխատանքի արտադրողականության, արտադրանքի վորակի, արտադրության մեջ բանվորների կազմակերպման, սոցմրցության հարվածայնության, բանվորական գյուտարարության, արտադրական խորհրդակցությունների մասին.

Վորն է սոցիալիստական և կապիտալիստական արտադրությունների հիմնական տարբերությունը։

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

(Նյութ)

Պոլիտեխնիկական աշխատանքի պատրաստության բնագավառում տարրական դպրոցի հիմնական խնդիրներից մեկը յերեխաների տեխնիկական հետաքրքրության հրահրումն է, խնդիրներ, վոր ամբողջովին չեն կարող լուծվել աշխատանքին հատկացված դպրոցական ժամերին։ Այս պատճառով առանձին նշանակություն է ստանում գլխավորապես յերեխաների ազատ ստեղծագործական աշխատանքի վրա կառուցված արտադպրոցական աշխատանքի գործունեյությունը։ Այդ արտադպրոցական աշխատանքի բնույթն ըստ տարիների կարելի չե վորոշել ուսուցման տարբեր տարիների ծրագրից բխող կարողությունների շրջանից։ Ծրագրերին կցված այս հավելվածն իրեն նպատակ չի դնում տալու յերեխաների արտադպրոցական գործունեյության ծրագիրը, այլ նշում է միայն յերեխաների պատրաստության աստիճանից և տարիքային հետաքրքրությունից բխող այդ աշխատանքի մոտավոր բովանդակությունը։

Ուսուցման 1-ին տարի

Ուսուցման 1-ին տարում արտադպրոցական աշխատանքի միջոցով, վոր պետք է հանդիսանա դպրոցի ծրագրային աշխատանքի խորացումը,

ազատ թեմաների շուրջը մի շարք աշխատանք կարելի յե կատարել, վորոնք գլխավորապես պետք ե բխեն այդ տարիքի յերեխայի խաղի պահանջներից։ Այստեղ յերեխաներին հնարավորություն կտրվի այս կամ այն աշխատանքի համար ազատ ընտրություն կատարել այն նյութերից (թուղթ թելավոր նյութեր, փայտ, կավ) վորոնց մշակման հետ նրանք գործ են ունեցել դպրոցին կից աշխատանքի սենյակում։ Շատ կարևոր ե աշխատանքի այդ նյութերը պատրաստի վիճակում տալ — ռանդած տախտակ, չորսվինկներ, կտրտված կարտոնի շերտեր, թղթեր, աշխատանքի համար պատրաստված կավ և այլն։ Այս հնարավորություն կտա ընդլայնել յերեխաների կողմից կատարած իրերի շրջանը։

Այդ տարիքի յերեխաների համար ամենից մատչելի և հետաքրքիր աշխատանքները կլինեն խաղալիքներ, կենցաղի իրեր, զարդարանքներ պատրաստելը։

Աշխատանքի կոնկրետ թեմաներ կարելի յե մատնանշել — օդապարիկ, թռռան (թղթե ոձ), պլանյոր, պլանկաներից կահկարասիք, գունավոր թղթից նախշեր, կտրտված թղթերից խորագրեր և այլն։

Բոլոր այդ աշխատանքները պետք ե կատարվեն թեմաների ազատ ընտրության կարգով և պետք ե օգտագործվեն յերեխաների խաղերի ու զվարճությունների ընթացքում։ Յերեխաների պատրաստած իրերի օգտագործման այդ մոմենտի վրա ամենամեծ ուշադրություն պետք ե դարձնել, վորովհետև այդ իրերի հետագա օգտագործման հնարավորությունն անհրաժեշտ հետաքրքրություն ե ստեղծում դեպի աշխատանք։

Ուսուցման 2-րդ տարի

2-րդ տարում դպրոցական ծրագրերում նյութերի մշակման գծով մենք ունենք կարողությունների ընդլայնում և նոր նյութերի օգտագործում։ Այդ հնարավորություն ե տալիս ընդլայնել արտադպրոցական բնույթ ունեցող աշխատանքների թեմատիկան։ Պատրաստվելիք իրերի շրջանը հիմնականում մնում ե նույնը, ինչ 1-ին տարվա համար, ավելացվում են միայն կարտոնի վորոշ աշխատանքներ և խորացվում են կառուցողական աշխատանքները։ Այսպես, օրինակ՝ տեսակավոր և թափթփված նյութերից հնարավոր ե կառուցողական աշխատանքներ կատարել հետևյալ թեմաների շուրջը — կամուրջների մոդելներ, շենքերի մոդելներ, ծանրության բարձրացման մեքենա, փոխադրության միջոցներ՝ սայլ, «յերկաթուղի» և այլն։

Բոլոր այդ շինած իրերը զանազան կառուցողական կոմբինացիաների համար հնարավոր ե օգտագործել յերեխաների խաղի պրոցեսում։

Արտադպրոցական գործունեության ընթացքում (այդ տարիքի համար) կարող են տեղի ունենալ վորոշ ուտիլիտար աշխատանքներ, օրինակ թաշկինակ, պիոներական վզկապ, գոգնոց և այլ բաներ կատարելու աշխատանք։

Ուսուցման 3-րդ տարի

Այս տարիքի աշխատանքների շրջանը կարելի յե բավականաչափ լայնացնել. Այստեղ աշխատանքի սենյակի պայմաններում հիմնական նյութե-

րի մշակման խնդրում մենք յերեխաների մեջ մեծ փորձ ենք տեսնում, գործիքների շրջանի ընդլայնման հետ միասին՝ ռանդա, շերխեբել և այլն։ Այս հնարավորություն ե տալիս նյութերը լայն կերպով օգտագործել աշխատանքի համար և ավելի լայն կերպով բավարարել յերեխաների կառուցողական մտահղացումները։

Վորպես գործնական աշխատանքի օրինակներ՝ կարելի յե մատնանշել հետևյալ իրերը. սավառնակ, ավտոմոբիլ, բարդ ձևի պլանյոր, տրանսպորտյոր և այլն։ Ի հարկե՝ այստեղ բարդ կոնստրուկցիաներ տալու խնդիր չի դրվում, այլ տրվում ե նրանց տարրական սխեմատիկ արտահայտությունը՝ ռետինե մոտորի լայն օգտագործումով, վորպեսզի դրանք գործող մոդելներ և խաղալիքներ դառնան։ Այստեղ հնարավոր ե յերեխաների հետ սկսել մի շարք աշխատանքներ՝ ռազմական տեխնիկայի բնագավառից և պատրաստել հետևյալ իրերը՝ աղեղ, նետ, թնդանոթ, հակագազ և այլն։ Այդ տարվա համար ուտիլիտար իրեր կարող են լինել կազմարարական գործին վերաբերող իրերը (դասագրքեր, ընդհանուր տետրեր, գրադարանի գրքեր) բլոկնոտների, ալբոմների պատրաստումը, տուփների, մայկաների, ճամբորդական պայուսակի կարելը, գամակի, վոլեյբոլի, բասկետբոլի ցանցերի գործելը և այլն։

Ուսուցման 4-րդ տարի

Այս տարիքի աշխատանքները բավականաչափ ընդլայնվում են շնորհիվ այն բանի, վոր նոր նյութեր՝ թիթեղ ու մետաղալար են մտցվում։ Փայտի մշակման կարողությունների շրջանն ավելի յե մեծանում։ Այստեղ արտադպրոցական աշխատանքների գծով ամենալայն արտահայտություն են գտնելու տեխնիկական վորոնումները՝ տարբեր նյութերի կոմբինացիաների կիրառմամբ, պատրաստ իրերն ավելի ճշգրիտ մոնտաժի յենթարկելով։

Վորպես հրահանգչական աղբյուր, կարելի յե լայն կերպով օգտագործել մանկական տեխնիկական գրականությունը («ինքդ պատրաստիր», «ինքդ քեզ վարպետ և այլն)։ Այս բանը բավականաչափ ընդլայնում ե պատրաստվելիք իրերի շրջանը և հնարավորություն ե տալիս գյուտարարության զարգացմանը։ Վորպես օրինակ կարող են ծառայել՝ տեխնիկական մոդելացումը, ջրի, քամու, շոգու, ելեկտրական շարժիչները, և նրանց օգտագործումը խաղերի ընթացքում, հրապարակներում և մակետներում (ֆաբրիկայի, կոլխոզի, սովխոզի, ևներգետիկ ուստանովկայի մակետը, ամբարտակը և այլն) սիգնալիզացիա (հեռախոս, հեռագիր, ռադիոընդունիչ և այլն)։

Խաղալիք, սպորտիվ և եքսկուրսիոն սարքավորում — դահուկի փայտեր, սահնակներ, մարմնամարզական փայտյա իրեր, եքսկուրսիոն պայկաներ, լագերի կահավորում և այլն։

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Տարրական յեվ միջնակարգ դպրոցում.— Կերպարվեստի հիմնական խնդիրն ե՝ աշակերտին, վորպես գեղարվեստական դաստիարակության և ընդ-

հանուր պոլիտեխնիկական կրթության միջոց, տարրական գրաֆիկ կրթություն տալ, վորի համար աշակերտների մեջ անհրաժեշտ է զարգացնել դիտողականությունը, տեսնելու կարողությունը, տեսածն անալիզի յենթարկելու և պատկերելու կարողությունը։

Կերպարվեստը, իբրև դասակարգային պայքարի գործոն, մեր դպրոցական վողջ կառուցվածքի մեջ հանդիսանում է կոմունիստական դաստիարակության կարևոր միջոցներից մեկը։

Կերպարվեստի դաստիարակությունը մանուկներին պետք է տա կերպարվեստի տարրական գրագիտություն։

Կերպարանական աշխատանքն աշակերտին պետք է ոգնի, վորպեսզի գեղարվեստական պատկերի միջոցով նա արտահայտի իր մտքերը՝ թե գրաֆիկական արտահայտման և թե գունային ուղիով, ոգտագործելով կերպարանական բոլոր տեսակի աշխատանքներում ձեռք բերած ունակությունները։

Աշակերտների ավելի լրիվ գեղարվեստական դաստիարակությունն ու ընդհանուր կուլտուրական զարգացումն ապահովելու համար, անհրաժեշտ է կազմակերպել մասսայական դպրոցական կերպարանական աշխատանքը և ինքնագործ խմբակների աշխատանքը։

Խմբակային աշխատանքը նպաստում է դպրոցում կերպարանական ակտիվ ստեղծելուն։ Այս ակտիվը դասարանական կերպարանական աշխատանքի առաջատարն է հանդիսանում, վորով նպաստում է դպրոցի բոլոր աշակերտների մեջ գիտակից վերաբերմունք դաստիարակելուն՝ դեպի կերպարանական աշխատանքը։ Խմբակի կերպարանական աշխատանքը պետք լրացնի և խորացնի դասարանական կերպարանական աշխատանքը և միաժամանակ տարբեր տարիքային խմբերի աշակերտներին մոտեցնի աշխատանքի նոր ճյուղանակների հետ ծանոթացնելու և նոր նյութեր գործադրելու միջոցով ընդարձակի նրանց ստեղծագործական հնարավորությունները՝ իրենց ստացած կերպարանական ունակությունները դեկորատիվ — արտադրական աշխատանքներում գործադրելու։

Կերպարանական խմբակում կարող է տեղի ունենալ նաև ձևավորելու աշխատանքը՝ պլակատի, պատի լրագրի, դպրոցական ներկայացման ձևավորման, սակայն այն պայմանով, վոր նման աշխատանքներով աշակերտները չծանրաբեռնվեն։

Մասսայական աշխատանքի բովանդակությունը լինելու յե խմբակային ընդհանուր դպրոցական կոնֆերենցիաներ, վորտեղ անց են կացվելու կերպարվեստի ցուցահանդեսներ, դպրոցի հասարակական յելույթների կերպարանական ձևավորման անալիզ, ինչպես նաև կերպարանական արվեստի ընթացիկ հարցերի լուսաբանում (2-րդ կոնցենտր)։

Տարրական դպրոցը մաքսիմալ չափով ոգտագործելու յե յերեխաների կողմից իրականության սինթետիկ ըմբռնումը (восприятие)՝ գեղարվեստական պատկերի վրա աշխատելու համար։

Դրա համար անհրաժեշտ է սիստեմատիկ աշխատանք կատարել՝ ճշտելու համար առարկաների ձևի ու գույնի վրա յերեխաների կատարած դիտողությունները, ինչպես և ստեղծելու՝ ներկերի, մատիտների և պլաստիկ նյութերի հետ վարվելու կարողության համար անհրաժեշտ ունակություններ։ Այս բոլոր ունակություններն անհրաժեշտ և ամուր հիմք են տալիս

2-րդ կոնցենտրի ամբողջ ծրագրային նյութը յուրացնելու և մշակելու համար։

Տարրական դպրոցական կերպարանական աշխատանքի բովանդակությունը կազմում է.

ա) նկարչությունը, բ) աշխատանք՝ շրիֆտի վրա, լոզունգ և պլակատ գ) ծավալային կոնստրուկտիվ աշխատանքներ (ծեփ և մակետ, անպետք, դեն գցելու (бросовый) զանազան նյութերի ու բնական նյութերի գործածությամբ)։ Գլխավոր տեղը բռնում է նկարչությունը։

Տարբեր տարիքային խմբերում գործադրվում են նկարչական աշխատանքի տարբեր տեսակները, ինչպես, որինակ՝ ազատ նկարչություն, թեմատիկ նկարչություն, նկարչություն պատկերացմամբ և հիշողությամբ, իլյուստրատիվ նկարչություն, առանձին առարկաների նկարչություն հիշողությամբ, նկարչություն բնականից։

1-ին, 2րդ- և 3-րդ խմբերում ազատ նկարչության հատկացվում է մի քանի ժամ, վորովհետև այն դրսևորում է յերեխայի հետաքրքրությունները, գիտելիքներն ու կարողությունները, իսկ հետագայումն էլ հանդիսանում է ստուգողական աշխատանք, վորը ղեկավարին հնարավորություն է տալիս հետևելու յերեխաների առաջադիմությանը և նրանց ստացած գիտելիքներն ու կարողություններն ազատ ստեղծագործական աշխատանքում գործադրելու կարողությանը։

Շրիֆտի — լոզունգի և պլակատի աշխատանքը մտցված է 1-ին կոնցենտրի կերպարվեստի ծրագրի մեջ թե վորպես անհրաժեշտ մինիմում յերեխաների կողմից իրենց ուսումնական և հասարակական աշխատանքում դիտողական ագիտացիայի և պրոպագանդի հիմնական միջոցներին տիրապետելու համար և թե վորպես մի աշխատանք, վոր յերեխաներին տալիս է գծագրելու տարրական ունակություններ։

Ծավալային և կոնստրուկտիվ աշխատանքները (ծեփ, մակետներ) յերեխաներին տալիս են ռեալ տարածության ըմբռնման համար անհրաժեշտ վարժմունք [(տրենիրովկա) ծավալի և տարածության ուսումնասիրություն՝ իրի վրա աշխատալիս] և դրանով հեշտացնում են աստիճանական անցումը դեպի ձևի և տարածության գրաֆիկ վերարտադրությունը։ Նրանք զարգացնում են նաև յերեխաների տարածական մտածողությունը, նպաստում են նրա կոնստրուկտիվ գյուտարարության զարգացմանը, կերպարանական աշխատանքներն օրգանապես կապում են պոլիտեխնիկ աշխատանքի հետ։

Տարրական դպրոցի կերպարվեստի ծրագիրն այնպես է կառուցված, վոր ապահովվի յերեխաների պատկերացմամբ՝ ազատ նկարչությունից դեպի հիշողությամբ և դիտողությամբ նկարչությանն անցնելը, հետո՝ բնականից նկարելուն, առարկաներն իրենց սովորական վողջ շրջապատի մեջ պատկերելուց առանձին առարկաները դիտելուն, նրանց ուսումնասիրությանը։

Առարկայի տեսողական պատկերը ճշտելու նպատակով առանձին առարկաները զատելուն և ուսումնասիրելուն (առանձին առարկաների նկարելը հիշողությամբ և հետո՝ բնականից) զուգընթաց, յերեխաների հետ պետք տարվի նաև այնպիսի աշխատանք, վորը նրանց հնարավորություն տա արտահայտելու առարկայի և յերևույթների մասին իրենց ունեցած գիտե-

մեջներն ու պատկերացումներն ամբողջությամբ, նրանց ամբողջ շրջապատի հետ միասին, վորոնք միացած են բովանդակությամբ (թեմատիկ և իլյուստրատիվ նկարչություն 3-րդ և 4-րդ խմբերում-անալիզից դեպի սինթեզ)։

Ներպարանական ամբողջ աշխատանքը պետք է հետապնդի մի հիմնական նպատակ՝ յերեխաների տեսողական հիշողության, նրանց պատկերավոր մտածողության, տեսնելու, դիտելու կարողության սիստեմատիկ զարգացումը, նրանց ինքնագործունեությունն ու ստեղծագործական ինիցիատիվան մաքսիմալ չափով օգտագործելու հիման վրա ճշտել իրենց տեսողական պատկերացումները։

Այդ նպատակով պետք է գործադրվեն զանազան մեթոդներ, համապատասխան տարբեր տարիքային խմբերի, այն է՝ գլխի դցող հարցերի միջոցով պատկերների ճշտում (որինակ—«քաղաք և գյուղ» թեմայով նկարելիս—տարբեր շինանյութերն ինչով են միմյանցից տարբերվում (բնակարան, գործարաններ, կրպակներ և այլն), դասարանում և եքսկուրսիայի ժամանակ զանազան առարկաներ ցույց տալու միջոցով, յերեխաների ուշադրությունը բեվեռելով այդ առարկաների նշանակության, ձևի կառուցվածքի, գույնի, չափերի հարաբերության վրա։ Այդ դեպքերում հսկայական նշանակություն են ստանում եքսկուրսիաները, վորոնք յերեխաներին հնարավորություն են տալիս տեսնելու շատ բազմազան և հետաքրքիր առարկաներ իրենց ամբողջության, իրենց վողջ շրջապատի մեջ, ինչպես և հնարավորություն են տալիս անելու շատ արժեքավոր համեմատություններ։

Բարձր խմբերում (3-րդ և 4-րդ) յերեխաների տեսողական պատկերացումները հարստացնելու և ճշտելու համար, բացի դրանից, կարող է գործադրվել ռեպրոդուկցիաների, դիապոզիտիվների, լուսանկարների ցուցադրում։ Ցուցադրության նյութը բնավ արտանկարման նյութ չպիտի դառնա:

Թույլատրելի չէ, վոր արտաքին արդյունավետության նպատակով յերեխաներին դրդեն արտանկարելու պատկերներից, գրատախտակի վրա ուսուցչի նկարածից. անթույլատրելի յե նույնպես յերեխաների նկարների ուղղումն ուսուցչի ձեռքով. ուսուցչի խնդիրն է յերեխաներին գիտակցել տալ իրենց աշխատանքներում յեղած պակասներն ու սխալներն, ինչպես անհատական զրույցի միջոցով առանձին յերեխաների հետ, այնպես էլ աշխատանքների կոլեկտիվ դիտումի և քննության միջոցով՝ խմբով։ Աշխատանքները դիտելու և քննության առնելու ժամանակ խմբից մեծ պահանջներ անելուց միշտ էլ պիտի խուսափել։

Թե կերպարվեստի դասերին և թե մյուս դասերին յերեխաների կատարած նկարները դասատուն պետք է սիստեմատիզացիայի յենթարկի. նրանք հնարավորություն են տալիս դատելու յերեխաների առաջադիմության մասին և կարող են օգտագործվել հաշվետու ցուցահանդեսների համար։

Ներպարանական աշխատանքի թեմատիկան պետք է բավարարի այն սիստեմի պահանջները, վոր բխում են հենց դիսցիպլինից, հաշվի առնելով խմբի հանրակրթական և հասարակական աշխատանքը։ Այդ նպատակով ըստ հնարավորության պետք է լայն կերպով օգտագործել եքսկուրսիաները, ինչպես և գեղարվեստական գրական նյութը, վորը պետք է

ամենամեծ չափով հագեցած լինի կոնկրետ պատկերներով և լավ ծանոթ լինի յերեխաներին։ Այդպիսի գրական նյութը կարող է օգտագործվել նաև անկախ խմբի անցնելիք թեմաներից։

Աշխատանքի մատնանշված տեսակները պետք է միմյանց հաջորդեն։ Հաջորդման կարգը վորոշվում է առաջադրությունների բնույթով, ինչպես ունակություններ ձեռք բերելու սիստեմատիկայի իմաստով, այնպես էլ յելնելով թեմայի և օգտագործվող նյութի պահանջներից։ Այսպես, որինակ՝ մակետի աշխատանքը չի կարող կատարվել մի պարապմունքով։ Ֆրիզի աշխատանքը, վոր տալիս է ունակությունների սիստեմ, պետք է պլանավորվի 2-3 հերթական պարապմունքների համար։

Այնպիսի աշխատանք, ինչպես ազատ նկարն է, պետք է տեղավորել մի պարապմունքի մեջ և վոչ մի դեպքում իրար հետևից հերթական պարապմունքներ չպիտի զբաղեցնի,

Անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել ուսումնական նյութը ժամանակի մեջ բաշխելու վրա։ Դասատուն պետք է հաշվի առնի զրույցին և աշխակերտների կողմից առաջադրությունն անմիջականորեն կատարելուն հատկացված ժամանակի տևողությունը, ինչպես և, յեթե բավականաչափ ժամանակ կա, կոլեկտիվ դիտումին հատկացված ժամանակը։ Որինակ՝ ազատ թեմայով աշխատելու ժամանակ, վորտեղ նախնական զրույցը մեծ ժամանակ չի խլում, կարելի յե դասից հետո անցկացնել կոլեկտիվ դիտում։

Ծ Ր Ա Գ Ի Ր

1-ԻՆ ԽՈՒՄԲ

Աշխատանքի տեսակները

1. Ծ ե փ. — Ազատ ըստ մտապատկերների և թեմաների։
2. Նկարչություն. — Ազատ, հիշողությամբ, տվյալ թեմայի համաձայն։
3. Գեղարվեստական ստեղծագործական ձևավորում։

1. Ծ ե փ

Ծեփ կավից. — Պապյե-մաշեյից (թղթախմորից) ձյունից, ավազից։ Բաց մակետ։

Ծեփը, վորպես լավագույն միջոց՝ ուսումնասիրելու առարկաների ձևն ու ծավալը, առաջին աստիճանի դպրոցի ուսման պլանի մեջ պետք է գրավի կարևոր տեղերից մեկը։ Ծեփը պիտի տարվի յերեք մեթոդով։

ա) Ազատ ծեփ. — Ըստ յերեխաների ցանկության, թեմաների ընտրության ժամանակ տալով յերեխաներին վորոշ ազատություն՝ կերպարվեստի դասատուն պիտի հետևի և կարգավորի յերեխաների աշխատանքը և համապատասխան ուղղություն տվող հարցերով ու խորհուրդներով աստիճանաբար նրանց ընտելացնի՝ ըմբռնելու առարկաների ձևերն ու համաչափությունները։

բ) Ծեփն ըստ վորոշ թեմայի. — Այս տեսակ աշխատանքն սկսելուց առաջ դասատուն թեմայի բովանդակությունը և նրա կատարումը պարզաբանելու համար սկզբում պետք է ունենա համապատասխան զրույց:

գ) Ծեփ բնականից. — Առաջին և 2-րդ խմբերի յերեխաներից շատ դժվար է պահանջել, վոր նրանք մոդելը կարողանան պատկերել ճշգրիտ կերպով, ուստի ցույց տալով նրանց մոդելը (առարկան), բացատրական զրույցից հետո անհրաժեշտ է այն հեռացնել տեսողության դաշտից: Յերեխաները կարտահայտեն իրենց տպավորությունը և այն ամենը, ինչ նրանք ձեռք են բերել այդ առարկայի մասին:

Ծեփն ու կառուցումը կատարվում են.

ա) անհատապես — կավից ծեփած առանձին իրեր պատրաստելու ձևով (որինակ՝ բույս, պտուղներ, կենդանիներ, մարդիկ) և զանազան հավաքած նյութերից կառուցած առանձին իրերի ձևով (որինակ՝ տրանսպորտ, բնակարանների տեսակներ և այլն).

բ) կոլեկտիվ կերպով — ընդհանուր թեմայով մակետ պատրաստելու աշխատանքի ձևով, ըստ վորում յուրաքանչյուր յերեխա պատրաստում է վորևէ առանձին առարկա, վոր մտնում է մակետի մեջ: Մակետի թեմաներ կարող են լինել հետևյալները՝ կոլխոզ, քաղաք, յերկաթուղային տրանսպորտ թատրոն և այլն: Կոլեկտիվ աշխատանքի կարգը — թեմայի քննություն առաջադրությունների բաշխում աշակերտների մեջ: Առաջադրությունները բաշխելիս անհրաժեշտ է ճիշտ հաշվի առնել առաջադրությունների ելեմենտները, աշակերտների թիվը և նրանցից յուրաքանչյուրի ուժերը: Պատրաստված առարկաները ներկվում են և հետո հավաքվում կազմվում մակետ (յերեխաների կողմից նախորոք կազմած պլանով դասավորվում և մասամբ ամրացվում են ֆաներայի, կարտոնի կամ թղթի վրա): Այդ աշխատանքի համար անհրաժեշտ է եքսկուրսիայի ժամանակ և տանը յերեխաների հետ հավաքել հավաքովի և բնական նյութ — ֆաներայի, փայտի, թղթի, թիթեղի կտորտանք, զանազան տուփեր, կոճեր, ճյուղեր, մամուռ և այլն:

Այդ աշխատանքի համար ցանկալի յե նախորոք հավաքել մի շարք դրեմիտով պատրաստի ձեռ-փայտյա ձողիկներ, ֆաներայի և կարտոնի տալկներ, ուղղանկյուն ձևեր, զանազան տուփեր:

2. Նկարչություն

Նկարչությունը յերեխաների համար ամենամատչելի միջոցն է ի հայտ բերելու նրանց մտապատկերները, ուստի նրանք շատ են սիրում նկարել: Նկարչությունը զարգացնում է տեսողական հիշողությունն ու դիտողությունը և նրանց մեջ առաջ է բերում ձգտում դեպի ստեղծագործական աշխատանքները:

Նկարչությունը նույնպես, ինչպես և ծեփը, պիտի տարվի յերեք մեթոդով՝ գործադրելով ըստ հնարավորության բազմատեսակ մատերիալներ (նյութեր).

ա) ազատ նկարչություն.

բ) նկարչություն, համաձայն վորոշ թեմայի.

գ) իլյուստրատիվ նկարչություն՝ կուրսի հետ կապակցված:

Մոտեցումն այդ յերեք միջոցներին նույնն է, ինչ վոր ծեփի վերաբերյալ: Ազատ նկարչության ժամանակ խորհուրդներով և հարցերով պետք է ղեկավարել աշխատանքը: Նախքան տված թեմայի համաձայն նկարելը, անհրաժեշտ է յերեխաների հետ զրույց ունենալ թեման կոնկրետացնելու համար, իսկ իլյուստրատիվ նկարչության ժամանակ պետք է.

ա) պատկերավոր կերպով պատմել և բացատրել իլյուստրացիայի համար առաջադրած սյուժեն.

բ) կոնկրետ կերպով վորոշել այն մոմենտները, վոր կարելի կլինի պատկերել գրաֆիկ միջոցներով.

գ) վորոշել արտադրական մատերիալը և հետո սկսել աշխատանքը (սև մատիտ, գունավոր մատիտ, ջրաներկ, գունավոր կավիճներ և ածուխ):

Առաջադրությունն ավարտելուց հետո պետք է անցկացվի աշխատանքների դիտում և նրան համառոտ կոլեկտիվ քննություն: Քննությունը յերեխաների համար պարզելու յե, թե վոր աշխատանքներումն է թեման հաջող տրված, դասավորված և վորոնց մեջ պակաս հաջողությամբ և ինչու: Յերեխաներին հնարավորություն պետք է տրվի պարզ և տեսանելի կերպով համեմատելու յերեխաների նկարած առանձին առարկաների գույնի և ձևի բնորոշությունը տալու աստիճանը:

Դիտումի և քննության ժամանակ պետք է օգտագործվեն վոչ թե բոլոր նկարները, այլ նրանց մի մասը, ամենաբնորոշ մասը:

Առաջին աստիճանի դպրոցում տարվող աշխատանքի ժամանակ ուշիմ վերաբերմունք պիտի ցույց տրվի դեպի ամեն մի տարիքի հետ կապված առանձնահատկությունները:

3. Ազատ գեղարվեստական ստեղծագործական ձևավորումներ

Այս բաժնի մեջ ղեկավարի առաջ է դրվում այնպես անել, վոր աշակերտը կարողանա ի հայտ բերել իր գիտելիքները, պատկերացումները և զարգացնել վորոշ ունակություններ՝ այդպիսիները կիրառելու համար:

Աշխատանքը տարվում է.

ա) հեղափոխական օրերի ձևավորման,

բ) դասարանի ձևավորման,

գ) նրանց կյանքի զանազան մոմենտները ձևավորելու ուղղությամբ:

Այդ տեսակ աշխատանքի ժամանակ կերպարվեստի դասատուն պիտի ցույց տա ղեկավարություն, զարգացնելով մանկան մտապատկերի ճիշտ ղեկավարման անհրաժեշտ միջոցները:

Մանկական ստեղծագործության ուրույն կողմը, նրա սերը դեպի վառ և պայծառ գույները, սիմետրիկ գծանկարը, նույն նկարը մի քանի անգամ կրկնելը — այս բոլորը չպիտի վոչնչացնել արհեստական կերպով: Ուշադիր և ճիշտ մեթոդի կիրառման շնորհիվ պետք է կազմակերպել ստեղծագործական յեռանդը վորոշակի ուղղությամբ:

Առաջին խմբում անհրաժեշտ է զարգացնել կերպարվեստի հետևյալ ունակությունները.

ա) տիրապետել սև և գունավոր մատիտներին.

բ) իմանալ ջրանկարների բացելը և նրանցով գունավորել նկարը, դուրս չգալով կոնտուրից (ուրվագծից).

գ) սովորեցնել ըմբռնելու գծերի տարբեր տեսակները և յերկրաչափական մի քանի ֆիգուրներ (շրջագիծ, քառակուսի, յեռանկյունի).

դ) ճանաչել, ջոկել սահմանափակ գույներ և իմանալ նրանց անունները.

ե) ըստ հնարավորության, յերեխաներին վարժեցնել (ընտելացնել) գրատախտակի վրա կավճով նկարելուն.

զ) ծեփել կավից, աշխատանքը չփռել սեղանին և կավը ձեռքի մեջ չորոել.

է) սովորեցնել յերեխաներին՝ ըստ հնարավորության առարկան ծեփել մի կտորից։

ՅԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Աշխատանքի տեսակներ

1. Ծ ե փ. — ազատ ըստ մտապատկերի և ուսուցչի կողմից առաջադրած թեմայի. բաց մակետ։

2. Նկարչություն. — Ազատ, հիշողությամբ և համաձայն թեմայի։

3) Գեղարվեստական ստեղծագործական ձևավորում,

4) Մակետ։

Այս խմբում ծրագիրը նույնն է, ինչ առաջին խմբում՝ միայն ավելի խորացրած գիտելիքներով։

Առաջին խմբում կերպարանական աշխատանքների նկատմամբ յուրացրած ունակություններին պետք է ավելացնել.

1. կարողանալ ջոկել գծերը, համաձայն իրենց դրության (հորիզոնական, ուղղաձիգ, թեք և զուգահեռ).

2. ունենալ հասկացողություն՝ յերկրաչափական հիմնական ձևերի մասին (գունդ, խորանարդ, կոն, գլան և այլն)։

3. իմանալ ծածկել հարթությունը ջրաներկով, գույնով.

4. կարողանալ նկարել սոսնձաներկերով.

5. կարողանալ գծել ձողիկով, պլակատների համար պարզեցրած շրիֆտով.

6. մակետը ներկելիս (սոսնձաներկով) կարողանալ տալ առարկաների և նրանց մասերի բնորոշ գույնը, տալով հավասար գունագեղությամբ մակերես։

Մեթոդական ցուցմունքներ

Հիշողությամբ և պատկերացմամբ նկարելիս յերեխաներն օգտվում են գունավոր մատիտով և բացած անիլինի և ջրաներկով։

Հիշողությամբ աշխատելիս կերպարվեստի դասերին պետք է օգտագործվեն ինչպես հանրակրթական, այնպես էլ հատուկ նպատակով կազմակերպված էքսկուրսիաները։ Այդ էքսկուրսիաների նպատակն է՝ ճշտել յերեխայի տեսողական պատկերացումները, զարգացնել նրա տեսողական հիշողությունը, կազմակերպել յերեխայի ըմբռնումը՝ բնորոշ հատկանիշները

պարզելու նպատակով միատեսակ առարկաները համեմատելու միջոցով, ինչպես օրինակ՝ ծառերի առանձին տեսակները, գետային տրանսպորտի տեսակները, քաղաքային շենքերի տիպերը և այլն, և տարբեր առարկաների համեմատության միջոցով (մարդ, շենք), ըստ վորում ամբողջի վրա դիտողություն կատարելուց հետո, պիտի անցնել այդ ամբողջի մեջ մտնող առանձին առարկաների դիտողությանը։ Տվյալ նյութի մշակումը էքսկուրսիոն նյութից վերցրած թեմատիկ նկարների ձևով անց է կացվում դասարանում հիշողությամբ։

Նկարչության համար (իլյուստրատիվ) թեմա վերցվում է կարդացված, յերեխաներին ծանոթ, գեղարվեստական յերկերից կամ դասավանդված պատմվածքից։

Պատկերացմամբ իլյուստրատիվ նկարչությունն իրեն առաջ պիտի խնդիր դնի՝ զարգացնելու յերեխայի պատկերավոր մտածողությունը։

Մակետի վրա աշխատելիս մանկավարժը պիտի հետևի առանձին ամենապարզ պրոցեսներին, վոր անհրաժեշտ են մակետի վրա տարբեր նյութով աշխատելու համար, պետք է յերեխաներին դրդի աշխատանքից ձեռք բերած ունակությունները ստեղծագործորեն օգտագործելու համար։

Ծեփի ժամանակ անհրաժեշտ է յերեխաներին ցույց տալ մի ամբողջական կտորից ձևի վրա աշխատելու հնարավորությունը, պարզել նրանց համար տեսանելի կերպով, այդ յեղանակի առավելությունը (դիմացկունության ամբողջականությունը)։

ՅԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Աշխատանքի տեսակներ

1. Ծ ե փ:

2. Նկարչություն. — Ազատ, տպավորությամբ տված թեմայի համաձայն, հիշողությամբ և բնականից։

3. Գեղարվեստական ստեղծագործական ձևավորում. — Պարզ լոզունգներ։

Ծ ե փ կ ա վ ի ց յ և վ պ լ ա ս տ ի լ ի ն ի ց

ա) Ազատ ծեփ։

բ) Ծեփ համաձայն թեմայի։

գ) Ծեփ բնականից, պահպանելով ճշգրիտ ձևերը, համաչափությունները, կառուցվածքը և նպատակահարմարությունները։

Յերրորդ խմբում աշակերտներն ավելի լուրջ պիտի վերաբերվեն դեպի իրենց աշխատանքները, իսկ կերպարվեստի ղեկավարներն ավելի խիստ վերաբերմունք պետք է ունենան։ Թեմաներն ու մոդելները պետք է վորոշել այն հաշվով, վոր յերեխաները կարողանան կապել այլ առարկաներից ստացած գիտելիքները (օրինակ՝ ծաղկի կազմություն, ուսումնասիրություն)։

2. Ն կ ա ր չ ու թ յ ու ն

Յերկրորդ խմբում արդեն սկսվում է սիստեմատիկորեն բնականից նկարելու կանոնների ուսումնասիրությունը։ Այս խմբում նրանք նկարում են բնականից։

Յերրորդ խմբում նկարչության միջոցներն ավելի բազմապիսի չեն, քան առաջին յերկու խմբերում.

1. ազատ նկարչություն.
2. նկարչություն տպավորության տակ.
3 նկարչություն հիշողությամբ.
4. նկարչություն համաձայն տված թեմայի.
5. նկարչություն բնականի, սկզբում յերկրաչափական առարկաները, հետագայում՝ պարզ ծավալային մարմիններ, իսկ նրանց գունավորումը պիտի լինի տեղային (լոկալ)՝ ծածկելով ընդհանուր յերանգով, առանց նյուանսների:

Ցույց տված մեթոդները յերեխաների մեջ զարգացնում են այս կամ այն ընդունակությունը (հիշողությունը, դիտողությունը, պատկերավոր ըմբռնողությունը և աչքի չափը), ուստի անհրաժեշտ է գործադրել վերոհիշյալ բոլոր միջոցները:

Տպավորությամբ աշխատելու ժամանակ նկարչությունը պետք է անցնել դասարանում՝ նշանակելով վորոշ ժամկետ, վորպեսզի աշակերտը սովորի արագ կերպով ըմբռնել առարկայի ձևը և նկարել այդ ժամկետում:

Յերկրորդ անգամ դարձյալ ցույց տալ նույն առարկան, տալ նորից այդպիսին նկարելու: Այդպիսով ստացված յերկու նկարներն իրար հետ համեմատելով աշակերտները հեշտությամբ կտեսնեն իրենց կատարած սխալները:

Հիշողությամբ նկարելու համար կարող են իբրև նյութ ծառայել աշակերտներին լավ ծանոթ առարկաները, այսինքն՝ այն իրերը, վոր նրանք ամեն որ տեսնում են: Այդ տեսակ նկարչությունն աշակերտներին սովորեցնում է ուշիմ վերաբերմունք դեպի իրենց շրջապատը (դիտողություն): Նկարչությունը բնականից տարվում է՝ սկզբում գործադրելով ամենատարրական կանոնները (ինչպես սկսել աշխատանքը, ինչպես տեղավորել թղթի վրա, համաչափության մասին ծանոթություն և այլն):

3. Ազատ ստեղծագործություն

Պլակատների և լոզունգների ձևավորում, դիագրամների կազմելը, վորոշ ապլիկացիոն աշխատանքներ:

4. Նկարներ դիտելը

Կարողություններ յեվ ունակություններ

Կարողանալ տալ առարկաների մասերի չափերի բնորոշ հարաբերությունները:

Հիշողությամբ առանձին առարկաներ նկարելիս կարողանալ դիտակցորեն այդ առարկաները մի թերթ թղթի վրա դասավորել, ինչպես նաև կարողանալ տալ նախնական թեթև ընդհանրացրած բնույթի ճեպանկար (набросок), իսկ հետո մշակել առարկայի հիմնական կոնստրուկտիվ մասերը.

ա) աշակերտներին ծանոթացնել հարթության վրա տարածաչափություն ունեցող առարկաների խմբավորումը պատկերելու կանոնների հետ (առարկաները տարածության մեջ). առարկաները տարածության մեջ ավելի մոտ, միջին հեռու, ավելի հեռու և այլն.

բ) ծանոթացնել առարկայի մասերի համաչափ դասավորման հետ՝ դիտողության և համեմատության միջոցով.

գ) ծանոթություններ հավասարակշռության մասին — պլակատ և լոզունգ ձևավորելու ժամանակ.

դ) ծանոթություն հայկական պարզ շրիֆտի մասին.

ե) իմանալ քանոնի և անկյունաչափի հետ վարվելու յեղանակը, չափել և գծագրել սանտիմետրով.

զ) սովորեցնել կանոններով ձևավորել դիագրամներ, իմանալով նրանց հիմնական նշանակությունը և նպատակը.

է) ծեփի ժամանակ իմանալ գործածել տարբեր տեսակի ստեկաներ:

ը) ապլիկացիոն աշխատանքների ժամանակ պետք է թղթերը մաքուր կտրել և սոսնձել, սովորեցնել մաքուր վերաբերվել նյութերին և ապարդյուն կերպով չփչացնել.

թ) նկարներ դիտելու ժամանակ ծանոթացնել աշակերտներին արվեստի ճյուղերի հետ (գեղանկարչություն, քանդակագործություն և ճարտարապետություն).

ժ) կարողանալ թղթե ժապավենի վրա կտորների և վանդակների պլանկայով փաթաթելու միջոցով կազմել տառեր՝ լոզունգի մեջ, նրանց յուրաքանչյուրի միջև թողնելով վորոշ տարածություններ.

ժա) կարողանալ տառային վանդակներ նշանակելու և լոզունգի մեջ պլանկայով տառեր գրելու աշխատանքի ժամանակ, ուղղանկյունիները և կարտոնե պլանկան հավասար չափով փաթաթել.

ժբ) լոզունգում տառեր գրելիս կարողանալ ձեռքով քաշել գծերի հավասար և ուղիղ հատվածներ (կտորներ):

Մեթոդական ցուցմունքներ

Առանձին առարկաները հիշողությամբ նկարելիս անհրաժեշտ է խմբին ցույց տալ այն առարկաները, վոր նրանք պիտի նկարեն:

Ցույց տալու ժամանակ պիտի լինի զրույց, վորի նպատակն է լինելու յերեխայի ուշադրությունը բևեռել առարկայի կառուցվածքի, նրա մասերի չափերի հարաբերության վրա, այսինքն մոտեցնել յերեխային առարկաների անալիտիկ ըմբռնմանը: Ցույց տալու ժամանակ յերեխան պետք է հնարավորություն ունենա դիտելու առարկան մի քանի անգամ և ամեն կողմից:

Առարկաները բնականից չպետք է նկարել, այլ գլխավորապես հիշողությամբ:

Տվյալ դեպքում առարկան հանդիսանում է դիտողության օբյեկտ և վոչ թե նատուրա, վորպես այդպիսին: Ուստի առարկաները դիտվելուց հետո կարող են հեռացվել տեսադաշտից:

Յերեխաները յերկրորդ անգամ առարկաները դիտում են նկարելուց հետո, վորի նպատակն է տեսանելի կերպով համեմատել կատարած նկարն առարկայի հետ և մտցնել ուղղումներ (այդ ուղղումները վոչ մի դեպքում ինքը՝ ղեկավարը չի անելու): Առարկան յերկրորդ անգամ դիտելուց հետո պետք է մի անգամ էլ նկարվի:

Ժամանակ յեղած դեպքերում, մի պարապմունքի ընթացքում յերեխա-

ները կարող են նկարահանել վոչ թե մեկ, այլ մի քանի (յերկու կամ յերեք) առարկաներ։ Այդ դեպքում պիտի պահպանվի աշխատանքի նկարագրված մեթոդը։ Նկարելու համար առարկաներ ընտրելիս անհրաժեշտ ե հաշվի առնել հետևյալը. առարկաներն իրենց ձևով պիտի լինեն պարզ, անպայման ծավալային։ Բացի դրանից, նկարելու համար առանձին առարկաների ընտրությունը վորոշվում ե ձևի պարզությամբ և արտահայտչությամբ, ինչպես և դրանք միացնող բովանդակությամբ, այնպիսի հաշվով, վոր հետագայում առանձին առարկաների նկարահանումը կարելի լինի ոգտագործել վերամշակման համար (ամենապարզ պլակատ աղյուսակներ)։ Որինակ՝ «Տաք նախաճաշը դպրոցում» թեմայի համար կարելի յե նկարել բաժակներ, ափսեներ, դգալներ։ «Ուսումնական պիտույքներ» թեմայից կարելի յե նկարել տալ գիրք, պենալ, թանաքամաններ, գունավոր մատիտների տուփ։ Բանջարաբուծության պլակատի համար—դդում, բադրիջան, բանջարեղենի պահածոյի բանկա, բանջարեղենի կողով։ «Հանուն սանիտարիայի» պլակատ—աղյուսակի համար—ատամնափոշու տուփ, յերեսսրբիչ, ոճառ, բաժակ՝ ատամի խոզանակով։ Բոլոր մատնանշած առարկաները նախորոք հավաքված կամ գնված պետք ե լինեն վորպես ձեռնարկներ։

Առաջադրությունը վերջացնելուց հետո պետք ե անցկացվի աշխատանքների դիտում և նրանց կոլեկտիվ քննություն։

Դասատուն ջոկում և վերցնում ե բնորոշ նկարները (դրական, թե բացասական)՝ քննության ժամանակ ցույց տալու համար։ Աշակերտները դասատուի ցույց տված բնորոշ աշխատանքների որինակներով անալիզի պետք ե յենթարկեն իրենց աշխատանքը։

Իլյուստրատիվ նկարչությանը պիտի նախորդեն գեղարվեստական փոքրիկ պատմվածքի ընթերցումն ու վերլուծումը։ Յերեխաների հետ միասին պիտի պարզաբանել այն հիմնական մոմենտները, վոր ամենալրիվ չափով ի հայտ են բերում բովանդակությունը։ Անհրաժեշտ ե նաև զրույց՝ մանկական գրքերի իլյուստրացիաների նպատակների և նշակության մասին (ցանկալի յե դիտողական նյութ)։

Ծեփի աշխատանքները վերջացնելուց հետո ցանկալի յե անցկացնել նրանց դիտումը և քննությունը, նպատակ ունենալով հայտաբերել առարկաների բնորոշության հաղորդման աստիճանը և նրա կախումը մասերի համեմատականությունից։ Ծեփի թեման՝ վայրենի և ընտանի կենդանիներ և մարդ։

Լոզունգների վրա անհրաժեշտ ե յերեխաներին ցույց տալ ժապավենաձև ձողաձև շրիֆտ (վորպես իր պատրաստմամբ ավելի ցայտուն ու պարզ և արդեն պատրաստի լոզունգում) և զրույց շրիֆտի բնույթի, նրա պարզության և դյուրընթեռնելիության մասին։

Այս դեպքում ոգտակար ե, վորպես համեմատություն, վատ կարգացված լոզունգի ցուցադրումը։ Տվյալ աշխատանքի համար մանկավարժը պետք ե պատրաստի քառանկյունի տառային վանդակներ՝ նշելու համար և կարտոնի պլակատներ՝ տառերը գծագրելու համար, հաշվի առնելով լոզունգի մեծությունը և թղթի չափը, ինչպես նաև տողերը գծի։

Աշխատանքի յեղանակը. ա) վանդակներում կպցվում են թղթի ժապավենի կտորներից պատրաստած տառերը. բ) տառերը գրվում են քառանկյունու վրա պլանկայով գծված վանդակների մեջ և ներկվում անիլինի ներկով կամ ջրաներկով. գ) յերեխաները տառերը ձեռքով ազատ գրում են վանդակներում, վորոնք նույնպես—աչքաչափը վարժեցնելու համար—աչքաչափով ու ձեռքով են գծված։

Պլանկայով և թղթե ժապավենով աշխատանքի հետ միասին յերեխաներին անհրաժեշտ ե տալ շրիֆտի աշխատանք, ազատ աչքաչափով։

ՉՈՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Աշխատանքի տեսակները

1 Ծեփ՝ բնականից յեվ համաձայն տրված թեմայի։

2. Նկարչություն՝ բնականից և եքսկուրսիոն թեմաներից

3։ Գեղարվեստական ստեղծագործական (ձևավորում պլակատ, լոզունգներ պատի լրագիր, շրիֆտ։)

4. Գեղարվեստական նկարների դիտում

1. Ծեփ.—Նույնը, ինչ յերրորդ խմբում, ավելի խորացված։

2. Նկարչություն—ա) յերրորդ խմբի ծրագրին ավելացնել հեռանկարչության սկզբնական գիտելիքներ՝ զրույցների և դիտողությունների միջոցով.

բ) նկարների մեջ տալ լույս և ստվեր.

գ) ճեպանկար (կրոկի, նաբրոսոկ նկար բնականից)։

3. Ազատ ձևավորումներ պլակատի, լոզունգի ձևավորում) ավելի բարդ, քան նախընթաց խմբում. պատի լրագրի ձևավորում։ Ապլիկացիոն աշխատանքներ։

4. Նկարներ դիտելը— ժամ.

ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) Սովորել գտնելու իր տեսողական հորիզոնը։

բ) Վորոշել մոդելի վրա լույսը և ստվերը։

գ) Ծանոթանալ հիմնական և բաղադրիչ գույների հետ, նրանց խառնելու յեղանակը և իմանալ անունները։

դ) Իմանալ կազմակերպել դասարանի համար պատի լրագիր։

ե) Իմանալ գործածել կարկին և անկյունաչափ։

զ) Գծագրել կլոր դիագրամ։

է) Սովորեցնել, թե ինչպիսի կանոններով ե գծագրվում աշխարհագրական քարտեզը և ինչպիսի պայմանական նշաններ են գործադրվում քարտեզ գծագրելու ժամանակ։

ը) Սովորեցնել գծագրել ռուսական քառանկյունի շրիֆտ։

թ) Նկարները դիտելու ժամանակ աշակերտներին պետք ե ծանոթացնել նկարչության տարբեր ձևերի հետ, տալ հասկացողություն տարբեր գեղարվեստական նյութերի մասին (յուղաներկ, ջրաներկ, պաստել, տուշ, սոսնձաներկ)։ Պարզ յեղանակով տալ հասկացողություն՝ վերարտադրման (ռեպրոդուկցիայի) միջոցների մասին։

ժ) Կարողանալ տալ ինչպես խմբավորման մեջ առանձին առարկաների

չափերի հարաբերությունները, այնպես էլ առարկայի մեջ հիմնական մասերի համաչափությունը։

ժա) Կարողանալ հաշվի առնել և տալ առարկաների մեջ ցեղած տարածությունը (տարբեր պլանները)։

ժբ) Կարողանալ տալ նախնական թեթև ձևպանկար, մի խումբ առարկաներ թերթի վրա տեղավորելիս՝ հաշվի առնելով առարկաների հիմնական մեծությունները։

ժգ) Կարողանալ մոտիկ առարկաները պատկերել ավելի խոշոր, քան հեռավորները։

ժդ) Կարողանալ լոզունգի բառերը դասավորել առանց տողադարձի, հաշվի առնելով բովանդակությունը։

ժե) Կարողանալ կատարել անհրաժեշտ նշումներ (տարբեր չափերը տալիս է ուսուցիչը)։

ժզ) Կարողանալ կառուցել ձողաձև շրիֆտի տառեր։

ժէ) Կարողանալ բնականից և հիշողությամբ նկարած իր նկարները վերամշակել պլակատի մեջ գործադրելու համար, այսինքն մեծացնել աչքաչափով, վառ ներկել և տեքստի հետ միասին դասավորել թղթի վրա։

ժը) Կարողանալ պլակատի աշխատանքի մեջ գործադրել տառեր գրելու զանազան ցեղանակները (պլանկայով գծելը հետագա ներկումով, ինչպես նաև ծալելու միջոցով քառանկյունիներից կտրտելը)

Մեթոդական դիտողություններ

Աշխատանքի բոլոր տեսակները պետք է մեկը մյուսին հաջորդեն և հավասարաչափ դասավորվեն ամբողջ ուսումնական տարվա մեջ։

Բնականից նկարելը պետք է կատարվի գույներով, առարկաների խմբերը պիտի կազմվեն յերկու-յերեք առարկաներից վոչ ավելի։

Թղթի վրա առարկաների խմբի նախնական դասավորումը կարելի յե անել կամ մատիտով կամ ուղղակի անմիջապես վրձինով ներկելով՝ նայած առարկաների ձևի բարդության։

Բնականից նկարելուց առաջ դասատուն պետք է անցկացնի նախապատրաստական զրույց։ Զրույցի նպատակն է առարկաների անալիզը, նրանց չափը, գունային և տարածական համաչափությունները (մեծ է, փոքր է, հեռու յե, մոտ է, ավելի մուգն է)։ Անալիզը պիտի տանել կառհեցնող հարցերի ձևով, յերբ քննվում է բնականից նկարելու համար դրված առարկաների խումբը։ Անհրաժեշտ է, վոր յերեխաները սիստեմատիկ կերպով քննության առնեն աշխատանքները, վորպեսզի յերեվան բերվեն նրանց բացերն ու առաջադիմությունը։ Բնականից նկարելու համար առարկաներ ընտրելիս ղեկավարել յերրորդ խմբի համար տված ցուցմունքներով (հիշողությամբ առանձին առարկաներ նկարել)։

Հիշողությամբ եքսկուրսիայի թեմաներով նկարելը բաժանվում է յերկու մասի, 1. եքսկուրսիա—դիտողություններ և անալիզ, 2. եքսկուրսիոն նյութի մշակում դասարանում թեմատիկ կոմպոզիցոն նկարների ձեվով։

Եքսկուրսիայի ժամանակ յերեխաների դիտողությունները պիտի ընթանան հետևյալ ուղղություններով, ա) շրջապատող միջավայրի բովանդակության ուսումնասիրություն. բ) դիտողություններով առարկաների փոփոխությունների տարածության մեջ և մարդու կողմից՝ գործողության մեջ ու շրջապատին համապատասխան)։ Այս նպատակով պիտի օգտագործել վոչ միայն զանազան դիսցիպլինների գծով կատարած զանազան եքսկուրսիաները, այլև հատկապես կերպարվեստի գծով կազմակերպված եքսկուրսիաները։ Եքսկուրսիաների համար թեմա կարող են ծառայել՝ քաղաքը, հրապարակը, պուրակը (սկվեր), հասարակական շենքերի խումբը, տրանսպորտը. գյուղում բանջարանոցը, պիոներլագերը, գետը, կամուրջը և այլն։

Նյութը—մատիտներ և ներկեր։

Շրիֆտի վրա աշխատելիս յերեխաներին անհրաժեշտ է ծանոթանալ ձողաձև ու ժապավինաձև շրիֆտին, ցույց տալով ձողաձև շրիֆտի պատրաստի շաբլոնը (ամբողջ այբուբենը), կատարել նրա անալիզը։ Անհրաժեշտ է ցույց տալ լոզունգ՝ բառերի ճիշտ դասավորումով և սխալ դասավորումով։ Յերեխաներին պիտի ծանոթացնել ինչպես տառային վանդակների նշումների սիստեմի հետ, այնպես էլ սանտիմետրավոր քանոնի օգնությամբ տառեր գծելու հետ։ Առանձին տառեր գծելու ժամանակ անհրաժեշտ է կատարել անալիզ, ցույց տալով տառերի հիմնական պրապորցիաները, լայնության և բարձրության հարաբերությունը, ձողիկների հաստության հարաբերությունը՝ տառի հիմքին և այլն։ Ամբողջով շրիֆտը յուրացնելիս անհրաժեշտ է այբուբենը բաժանել առանձին խումբ տառերի, ըստ նրանց կազմության բարդության։

Պլակատի աշխատանքը պիտի սկսել համառոտ զրույցով պլակատի նպատակի և խնդիրների մասին և դրանից բղխող պլակատի առանձնահատկությունների մասին (խոշորությունը, պայծառությունը, տեքստի անհրաժեշտությունը)։ Ցանկալի յե ցույց տալ յերեխաների պատրաստած առավել հաջող պլակատները։ Աշխատանքը կարելի յե կատարել սոսնձաներկերով և ապլիկացիայի ցեղանակով, ամեն տեսակի թղթի վրա (փաթաթելու, պաստառի և բացրի)։

Լրագրի թուղթը պիտի նախորոք պատրաստվի պլակատի համար գործադրելու նպատակով։ Օրինակ՝ ներկված սոսնձաներկով կամ անիլինի ներկով, բացված կլեյստերով, վորը թղթին տալիս է լավ գույն և խտություն, ինչպես և փակում է ֆոտոնկարներն ու իլյուստրացիաները, վորոնք խանգարում են պլակատի կոմպոզիցիոն լուծմանը։

Պլակատյին աշխատանքում անհրաժեշտ է լայն չափով գործադրել բնականից և հիշողությամբ նկարելը, սովորեցնելով յերեխաներին համապատասխան ձևով նրանց վերամշակությունը։

Ծրագիրը մշակել են՝ ընկ. ընկ. Սարգսյան, Ցուրինյան, Գայֆեջյան։

ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Համկոմկուսի Կենտկոմի վորոշումները դպրոցական աշխատանքների վերակառուցման մասին մեզնից պահանջում են վերակառուցել և յերաժշտության դասավանդումը դպրոցում։

Նկատի առնելով գեղարվեստական կրթության խոշոր նշանակությունը մատաղ սերնդի կոմդաստիարակության խնդրում, անհրաժեշտ է առանձին հոգածությամբ մոտենալ ինչպես յերաժշտական նյութերի ընտրության, այնպես էլ նյութի դասավանդման մեթոդներին։ Դպրոցում յերաժշտության առաջադրվող խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է կիրառել աշխատանքի բազմազան ձևեր՝ յերգեցողություն, ունկնդրություն, շարժում (նվագակցությամբ), յերաժշտական զրույցներ, թեորետիկ և պատմական գիտելիքներ, նոտաներով յերգելու վարժություն, ցուցադրական համերգներ, մասսայական աշխատանք և այլն։

Այս ծրագրում Ունկնդրությանը խոշոր տեղ է տրված։ Գյուղական դպրոցներում, վորտեղ մասնագետ ուսուցիչներ չկան, պետք է աշխատել ունկնդրությունը կապել ռադիոհաղորդումների հետ և նրա միջոցով ծանոթացնել յերաժշտական յերկերին։

Անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնել յերաժշտական գրագիտությանը, վորովհետև յերաժշտական գիտելիքները հնարավորություն են տալիս յերեխաներին ավելի լայն և մտածված ոգտագործելու՝ անցած նյութերը։

Յերաժշտական կուլտուրայի յուրացումը պետք է տեղի ունենա թե կատարողական կարողությունների բարձրացման և թե անցյալի ու ներկա յերաժշտական կուլտուրաների լավագույն նմուշների ծանոթության միջոցով։

Ծրագիրը, սկսած առաջինից մինչև չորրորդ տարին ներառյալ, նպատակ ունի աստիճանաբար և հետևողականորեն զարգացնել յերեխաների ունակություններն ու գիտելիքները։ Նյութերը դասավորված են սիստեմատիկ կերպով, ներքուհիշյալ կարգով։

Առաջին և յերկրորդ խմբերում յերեխաներին տրվում են յերաժշտական նյութեր։ Յերեխաներին հնարավորություն է տրվում գիտակցելու յերաժշտության կապը հասարակական կյանքի և կենցաղի հետ։

Յերկրորդ և յերրորդ խմբերում տրվում են դարձյալ նյութեր, բայց ավելի բարդ բնույթի, վորպիսիք են՝ անցյալի ժողովրդական յերգը, հեղափոխական յերգը, անցյալ և ներկա յերաժշտագետները և այլն։ Հենց այստեղից էլ սկսվում է յերաժշտության գրագիտությունը, այսինքն յերաժշտության ըմբռնումը վոչ միայն ըստ բովանդակության, այլև ըստ իր արտաքին ձևավորման—ձայնանիշ, նրան գրի առնելու յեղանակը և այլն։

Ծրագրի մեջ նշված յերաժշտական ռեպերտուարը համարվում է որինակելի և կարող է փոխարինվել նոր լույս տեսնող գեղարվեստական յերաժշտական այլ համարներով։

Հասարակական ոգտակար աշխատանքները, վոր հանդիսանում են յերաժշտական դաստիարակության կարևոր մասը, սերտ միանում և յենթարկվում են դպրոցի ուսումնական և դաստիարակչական խնդիրներին։ Դաստիարակչական աշխատանքները տեղի յեն ունենում իդեոլոգիապես հարազատ յերաժշտական նյութերի ոգտագործման և անցյալի հարուստ ժառանգության՝ մեզ համար ընդունելի մասի յուրացման միջոցով։

* * *

1-ին և 2-րդ տարվա յերաժշտական աշխատանքների հիմնական խնդիրներն են՝ յերեխաներին տալ մատչելի գեղարվեստական, դասակարգայնորեն հարազատ եմոցիոնալ յերաժշտական նյութեր։

Առաջին յերկու տարվա ընթացքում յերեխաները պետք է կարողանան յուրացնել և ակտիվ կերպով արտահայտել անցած նյութերը։

Աշխատանքների ընթացքում ընտելանալով յերաժշտության՝ յերեխաները պետք է գիտակցեն յերաժշտության կապը հասարակական կյանքի և շրջապատող յերևույթների հետ, կարողանան ոգտագործել ձեռք բերած ունակություններն ու գիտելիքները հասարակական ոգտակար աշխատանքների և կենցաղի մեջ։

1-ին և 2-րդ տարվա անցնելիք նյութերի մեջ մտնում են մանկան կենցաղի վերաբերյալ զանազան յերգեր, խաղերգեր, պարերգեր, աշխատանքային, հոկտեմբերյան և այլ յերգեր։

ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ

Թեմատիկա

1. Քաղաքական տոներ և կամպանիաներ։
   - ա) Հոկտեմբերյան և նոյեմբերյան տոներ։
   - բ) Լենինյան որեր։
   - գ) Մարտի 8-ը։
   - դ) Կարմիր բանակ։
   - ե) Հակակրոնական։
   - զ) Մայիսի մեկը։
2. Բնություն՝ աշուն, ձմեռ, գարուն, ամառ՝ կապված աշխատանքի և կենցաղի հետ։
3. Մանկական կազմակերպություններ—հոկտեմբերիկներ, պիոներներ, լագեր։

Նյութեր յերգեցողության համար

Անցնել 20-25 միաձայն մելոդիայով և ռիթմով պարզ յերգեր՝ նվագակցությամբ և առանց նվագի, այն կապելով շարժումների հետ։

Օրինակներ յերգեցողության համար

1. Բերքի տոն
2. Եքսկուրսիա
3. Տրակտոր

} յերաժշտ. Միք. Միրզոյալի («Նախադպրոցականի յերգերն ու խաղերը)։

4. Հոկտեմբերիկներ
5. Մենք ունենք դրոշ

} («Պիոներ. յերգեր»)։

6. Պիոներ Մոսին—յերաժշտ. Ստ. Դեմուրյանի։

Ուլերը—Յեր. Ա. Տ. Ղևոնդյանի։

ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Յերգ

1. Մշակել ձայնը. յերգ՝ առանց ճչոցի. մշակել թեթև, ճկուն հնչյուններ, ուժեղ և մեղմ յերգեցողություն. 2. յերգի ֆրազների հաջորդականության ժամանակ կանոնավոր շնչառություն. 3. յերգ՝ առանց նվագի, մշակել մաքուր ինտոնացիա։ 4. յերգն սկսել և վերջացնել միասին և միաժամանակ. 5. աշխատանք տեքստի վերաբերյալ՝ ա. բառերի ճիշտ արտասանություն, բ. տեքստի պարզ և արտահայտիչ կատարում թե ամբողջ կոլեկտիվով և թե խմբակներով. 6. յերգ մեներգային մասով, վոր կազմակերպում է յերեխաների ուշադրությունը, զարգացնում է նրանց ունակությունը, հասկացողություն տալով մեներգային յերգերի մասին. 7. անցած յերգերի կատարումն անհատորեն և խմբակներով։

Շարժում

1. Ռիթմիկական և մետրիկական ունակություններ՝ քայլերթ, վազք, ծափ. 2. շարժողական ունակություններ՝ շարք ըստ հասակի, միաշար, յերկշար շրջան. հիշել իրենց տեղը շրջանում. կանգ առնել ազդանշանով և առանց այն։ Նմանողական (իմիտացիոն) շարժումներ. յերգեր խաղերով, բեմադրություններ, պարեր, վարժություններ առարկաներով՝ դրոշակներով, պլակատներով (տես «Նախադպրոցականի յերգերն ու պարերը» կազմեց Միք. Միրզոյան)։

3. Կազմակերպչական ունակություններ. կազմակերպված մուտք և յելք. տեղը նստել և կանգնել կազմակերպված, ամբողջ կոլեկտիվով։

ՅԵՐԿՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Կրկնել առաջին տարվա թեմաները։

Նյութեր յերգեցողության համար

Համեմատաբար ավելի բարդ յերգեր՝ առաջին խմբում նշված թեմաների շուրջը։ միաձայն մանկական՝ հոկտեմբերյան յերգեր թե նվագակցությամբ և թե առանց նվագի։

Օրինակներ յերգեցողության համար

1. Մեծ Հոկտեմբերը—յերաժշտ. Գալիկյանի։
2. Ջան բամբակ
3. Ջարկ թմբուկ

} » Մ. Մազմանյանի։

4. Ե՛, հեյ, պիոներ . . . («Պիոներ յերգեր»)։
5. Վորսորդը . . . . . . մշակեց Միք. Միրզոյան։
6. Գարուն յեկավ
7. Սարյակները

} («Նախադպրոց. խաղեր և յերգեր»)։

8. Գարնանը . . . . Յեր. Ան, Տ. Ղևոնդյանի։
9. Մեր կոլխոզի արտերը . . . . Յեր. Տ. Տ. Ավետիսյանի։
10. հեյ, ջան, հոկտեմբեր . . . . Կ. Զաքարյանի (պիոն. ժողովածու)։

ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Յերգ

1. Խորացնել առաջին տարվա ունակություններն ավելի բարդ յերգերի միջոցով. 2. մաքուր յերգեցողություն՝ յերկարաձիգ հնչյուններով. 3. կարողանալ արագացնել և դանդաղեցնել յերգի տեմպը, յուրացնել յերգի ուժեղ և թույլ կատարումը. 4. տարբերել բարձր, ցածր, կարճ և յերկար ձայները. 5. մշակել ձայնը, կատարել լեգատո և ստակկատո։

Շարժում

1. Խորացնել առաջին տարվա աշխատանքները. յերաժշտության միջոցով կարողանալ տարբերել վազքը քայլերթից։ Ուժեղն ու մեղմը. կանգ առնել պաուզաների ժամանակ (յերգի և նվագի ժամանակ)։ Ծանոթ յերգերի ռիթմիկան համաձայնեցնել քայլի, վազքի և ծափերի հետ։ Նույնը կատարել խմբական դեկլամացիայի ժամանակ։

2. Շարժողական ունակություններ։ Մի հասակի շարք. շարքեր զույգերով և քառյակներով։ Շրջան՝ քառակուսի և ոձաձև։ Յերկու շրջան (մեկը մյուսի ներսում) հերթով՝ խմբակներով շարժումներ։

3. Շարժական խաղեր՝ զանազան առարկաների միջոցով (գնդակ դրոշակ, թոկ, ողակներ)։

4. Կազմակերպչական ունակություններ. 1. խորացնել նախորդ տարվա աշխատանքները. 2. խաղեր, ինսցենիրովկաներ, պարեր, բեմադրություններ (տես Միք. Միրզոյանի կազմած «Նախադպրոցականի յերգերն ու խաղերը«)։

ՅԵՐՐՈՐԴ ՅԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԽՄԲԵՐԻ ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հասկացողություն անցյալի և ներկայի յերաժշտական ստեղծագործությունների տարբեր տեսակների մասին, այն կապելով առօրյա կյանքի յերևույթների հետ, վորպեսզի յերեխաները գիտակցորեն կատարեն իրենց մատչելի գեղարվեստական ստեղծագործությունները։

2. Յերեխաները պետք է յուրացնեն գեղարվեստական արժեք ունեցող յերաժշտական նյութերը, նրանց միջոցով զարգացնեն իրենց լսողական ու կատարողական ունակությունները և ըմբռնեն յերաժշտական յերևույթ

ների տարրական հիմունքները (յերաժշտական գրագիտություն 3-րդ խմբի յերկրորդ կիսամյակից)։

Պետք է բարձրացնել յերեխաների գիտակցությունը, վորպեսզի նրանք լինեն լավ կատարողներ և աշխատանքի վորակի բարձրացման մարտընչողներ։

3. Հասարակական աշխատանքների գծով նրանցից պետք է պատրաստել գիտակից ակտիվիստներ, վորպեսզի մասսայական աշխատանքներով իրենց յերգերի կատարումներով հանդես գան դպրոցական հավաքույթներում, ցերեկույթներում, էքսկուրսիայի ժամանակ և ամառը՝ լագերներում։

ՅԵՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Թեմատիկա

1. Անցյալի ժողովրդական և հեղափոխական յերգերը. 2. արդի հեղափոխական յերգերը. 3. Ս. Խ. Մ-ի ժողովուրդների յերաժշտական ստեղծագործությունները։ Արևմուտքի յերաժշտությունը։

Նյութեր յերգեցողության համար

Ըստ մելոդիայի և ռիթմի ավելի բարդ միաձայն յերգեր՝ նվագակցությամբ և առանց նվագի։ Ժամանակակից մասսայական յերգեր, մեր և հարևան ազգերի ժողովրդական յերգեր։ Հայ և այլ ազգի հեղինակների գեղարվեստական ստեղծագործությունները (յերեխաներին մատչելի յերգեր)։

Օրինակներ յերգեցողության համար

1. Յեկավ գարուն . . . Յեր. Ալ. Մանուկյանի։
2. Մեզ ջարդել կուզեյին . . . Յերաժշտ. Դավիդենկոյի։
3. Աշխատանքի կարմիր բանակ « » Գր. Վարժապետյանի.
4. Մայիսի (վրացերեն) . . . . « » Գուրգեն Միրզոյանի։
5. Իմ մատրոս տղա . . . . (Պիոներակ. յերգերի ժողովածու)։
6. Շտուրմ մարշ . . . . Յերաժշտ. Կարո Զաքարյանի։
7. Յերիտ. Գվարդիա . . . (Պիոներակ. յերգերի ժողովածու)։
8. Անվախ ընկեր
9. Դե շուտ, մեր շարքերը . . . (Պիոներ. յերգեր) մշ. Ռ. Մելիքյան
10. Գյոզյարիմ (թուրքերեն) . . . . Յերաժշտ. Գուրգեն Միրզոյանի։
11. Փամբուկ (թուրքերեն). . . . Մ. Ավետիսյանի։

ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Յերգ

1. Կարողանալ բառերը կանոնավոր դասավորել ձգվող հնչյունների տակ. 2. յերգ՝ առանց նվագակցության. 3. կանոնավոր շնչառություն՝ յերաժշտական յերկար նախադասությունների ժամանակ. 4. նոտային նշաններ, տևողություն (ամբողջ, կես, քառորդ). Նոտային սիստեմ, սոլի բանալի, չափ՝ $^2/_4$, $^3/_4$ տակտի գիծ։ Ձայնանիշեր առաջին ոկտավայի do-ից մինչև յերկրորդ ոկտավայի do-ն։ Յերգի ընթացքում ուժեղացնել և մեղմացնել ձայնը։ Պաուզայի հասկացողությունը յերգելիս՝ իբրև տևողության նշան։

Կազմակերպչական ունակություններ

Կառավարել $^2/_4$ և $^3/_4$ չափով. խմբակներով յերգել մեներգային մասով յերգեր։ Վոչ բարդ յերգերի ինքնուրույն կատարումը առանձին և խմբակներով։ Ուսման տարվա ընթացքում առանձին խմբակներով հանդես գալ դպրոցական ցերեկույթներում։

Շարժում

1. Խորացնել նախորդ տարվա աշխատանքները, յերգի մասերի ռիթմիկան մշակել քայլերթով, վազքով և ծափերով։

Կազմակերպչական ունակություններ. — Շարժական խաղեր՝ առարկաներով (մեծ և փոքր գնդակներ), խաղեր, ինսցենիրովկաներ, բեմադրություններ և պարեր։

Նյութեր ունկնդրության համար

Ձայնական և գործիքային յերաժշտական յերկեր. նույնը հակադրվող մասերով։ Նվագներ պարի ձևերով.

1. Ն. Տիգրանյան — Հայկական պարեր։
2. Ա. Սպենդիարյան — «Ղայթարմա»։
3. Ռ. Մելիքյան — «Զրիկ» Կաքավիկ»։
4. Կ. Զաքարյան — Ետյուդներ և պիեսներ։
5. Բարխուդարյան — «Ակվարել» «Արեվելյան պարեր»։
6. Գլինկա — Կամարինսկայա։
7. Գրիգ — Անիտրայի պարը։
8. Շուբերտ — «Ֆորել» «Ջրաղացպանը»։
9. Զ. Պալիաշվիլի — Լեզգինկա «Դաիսի» ոպերայից։
10. Բեթհովեն — Տաճկական մարշ։
11. Լյադով — «Музыка—табакерка»։
12. Մոցարտ — Մենուետ (մի մինոր)։

Ունակություններ յեվ գիտելիքներ

1. Վորոշել յերաժշտական յերկերի ընդհանուր բնույթը (ուրախ տխուր, հանգիստ, աշխույժ, թեթև, ծանր և այլն). 2. արտահայտության միջոցները ա) հասկացողություն ռեգիստրների մասին, բ) տարբերել ուժեղ և թույլ հնչյունները, լեգատո, ստակկատո, դանդաղ և արագ ընթացք, 3. կարողանալ տարբերել յերգը քայլերգից և պարերգից, 4. հիշել անցած յերաժշտական հեղինակությունները։

ՉՈՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ

Թեմատիկա

1. Պայքարի և սոցշինարարության յերգերը Խորհրդային կոմպոզիտորների ստեղծագործությունների մեջ։

Վերոհիշյալ նյութերի ուսումնասիրությամբ վերլուծել յերաժշտական լեզվի պարզ ելեմենտներն ու նրա զանազան ձևերը։ Ուսումնասիրել յերաժշտության արտահայտության միջոցները և անցյալի յերաժշտական յեր-

կերի լավագույն նմուշների միջոցով (Գրիգ, Շուբերտ, Բեթհովեն, Կորսակով, Կոմիտաս, Սպենդիարյան) ծանոթացնել չերկերի տարբեր տեսակների հետ (օպերա, ուվերտյուրա, սյուիտա, յերգի և պարերգի ձվեր և այլն)։

Համառոտ տեղեկություններ կոմպոզիտորների մասին. ծանոթություն յերաժշտական գործիքների և նրանց գործածության (որկեստր, անսամբլ, սոլո)։

Նյութեր յերգեցողության համար

Միաձայն յերգեր, պարզ յերկձայն յերգեր. յերգեր մեներգային մասով. յերաժշտական գրագիտության տարրական գիտելիքներ։

Օրինակներ յերգեցողության համար

1. Կոմինտերն — Յերաժշտ. Եյսլերի։
2. Փոքրիկ Թմբկահարը — Մշակ. Դավիդենկոյի։
3. Գարնան գուլթան — մշակում Կոմիտասի։
4. Իտալական բանվ. յերգը (յերկձայն)։
5. Գերմանական գործադուլների յերգը — Յերաժշտ. Միք. Միրզոյանի։
6. Ջրաղացպանը — » Շուբերտի։
7. Յերկաթե շարքերով — » Շեխտերի։
8. Տարար բռնության չարաչարանքը։
9. Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք » Բելի։
10. Ապրել կարմիր գարնան — Յերաժշտ. Ազատ Մանուկյանի։
11. Վոչուչն Բադու — » Միք. Միրզոյան։
12. Կոմսոմոլ (Թուրք). » Ս. Վոսկանյանի։

Նյութեր յերաժշտության ունկնդրության համար

1. Ռոմ. Մելիքյան — Սյուիտա ջութակի համար
2. Ս. Բարխուդարյան — Սյուիտա դաշնամուրի համար։
3. Կ. Զաքարյան — Եռյուղներ և պիեսներ 4,5,6։
4. Գուրգեն Միրզոյան — Թուրքական յերգեր (6 հատ)։
5. Կոմիտաս — Պարերգեր դաշնամուրի համար։
6. Սպենդիարյան — Յերեվանի եռյուդներ։
7. Բիզե — «Կարմեն» օպերայի ուվերտյուրա։
8. Շուբերտ — «Յերաժշտական մոմենտ»։
9. Մենդելսոն — «Յերգեր առանց բառերի»։
10. Գրիգ — Նորվեգիական ժողովրդ. յերգեր։
11. Մշվելիձե — Վրաց. աշխատ. յերգեր։
12. Բախ — Պարկապզուկ (Բախի ալբոմից)։
13. Դվորժակ — Սլավոնական պարեր։
14. Շեխտեր — Սպարտակիադա։
15. Հ. Ստեփանյան — Սյուիտա ջութակի համար («Պիոներական ցիկլից»)։

ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ա) Յերգ

Կարողանալ—1. ձայնակցել յերգին (յերկձայն) 2. ինքնուրույն սկսել յերգը, յերբ յերգն ու նվագը ընդհատումներով հաջորդում են միմյանց. 3. հետևել յեղանակին՝ նոտաներով. 4. ինքնուրույն կատարել յերգը. 5. հասկացողություն սովորած յերգերի մեջ պատահող տեվողությունների մասին —ամբողջ, կեսը կետով, քառորդը կետով, ութերորդը և տասնվեցերորդը։ Անցած պարզ յերգերի օրինակներից ռիթմիկական թելադրություն $^1/_4$ և $^1/_8$ տեվողություններով (յերկու կամ չորս տակտի սահմանում նշելով ձայնի բարձրությունները). 6. ծանոթացնել յերկրորդ օկտավայի do-ից մինչև սոլ ձայնանիշների հետ։ Պաուզա, ամբողջ, կես, քառորդ և ութերորդ։ Ծանոթություն յերաժշտ. տեմպերի մասին (արագ, դանդաղ, չափավոր և այլն). 7. կառավարել $^4/_4$ չափով։

բ) Ունկնդրություն

1. Յուրացնել յերաժշտական յերկերի մասերը. 2. վորոշել ծանոթ յերգերի, պարերգերի - քայլերգի բնույթը. 3. ծանոթանալ մաժոր և մինոր գամմաների բնույթին. 4. համառոտ տեղեկություններ՝ անցած նյութերի հեղինակների մասին։ 5. կազմակերպել եքսկուրսիաներ և յերեխաներին տանել համերգ, կազմակերպել ռադիո ունկնդրություն։

Շարժում

1. Խորացնել 3-րդ տարվա ունակությունները. 2. շարժական խաղեր զանազան առարկաներով (մեծ և փոքր գնդակներ, փայտեր, գլորաններ, թոկ) 3. խաղեր, ինսցենիրովկաներ, բեմադրություններ, պարեր։

Ծրագիրը կազմել են՝ Սպ. Մելիքյան, Կ. Զաքարյան, Մ. Միրզոյան։

ՀԱՆՐԱՊԵՏ. ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Публ. библиотека ՀՍՍՀ — ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ՝ ՊՈԼԻՏ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԾՐԱԳՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ ԲԱՌԵՐԻ

աղեղնավոր սղոց — лучковая пила
ամրություն — крепость
անագ — олово
անընդհատ հոսանք — непрерывный поток
անկյունաչափ, անկյունարդ — угольник
անհաղորդիչ — непроводник
անջատիչ — выключатель
անտառամշակում — лесоразработка
առանցքակալ — подшипник
ատաղձագործ — столяр
ատաղձագործարան — столярная мастерская
ատամնավոր անիվ — зубчатое колесо
արտադրանք — продукция
անցողիկ բթակ — сквозной шип
աշխատանքի տեղ — рабочее место

——

բանող մեխանիզմ — рабочй механизм
բաշխման արկղ (գոլորշու) — золотниковая каробка, золотник.
բեռ, բեռնվածություն — нагрузка
բթակ — шип
բիզ — шило
բուսահող — перегной
բուրղու-գչրակ — бурав, буравчик
բռնակ — рукоятка
բրուտ — гончарь
բրուտի հաստոց — гончарный круг.

——

գայլիկոն — сверло
գերան — бревно
գլան — цилиндр
գծագիր — чертеж
գնդացած — комковатый
գործիքատու — инструментальщик
գչրակ — буравчик

——

դազգյահ, հաստոց — станок
դահուկ — лижа
դարբին — кузнец
դարբնոց — кузница
դաշտավարական տնտեսություն — полеводческое хозяйство
դդում — тиква
դեղձանիկ — чижик
դիմադրություն — сопротивление
դիմադրականություն — сопротивляемость
դիրք — положение, поза
դիմացկունություն — прочность
դրվագում — отделка

——

զարդանկար — орнамент
զոդիչ — паяльник
զոդում — пайка
զոլա (շարբարագերան) — жердь

——

ընդունիչ — приемник

——

թակ — клянка
թափթփուկ — брос, бросовый материал
թաղար — горшок
թերթավոր մետաղ — листовой металь
թերմշակ — полуобработанный
թիթեղ — жесть
թևավոր — крыльчатый
թղթապանակ — папка
թոկ — веревка
թվատախտակ — циферблат
թրծում — обжиг.

——

ժանանիվ-ատամնավոր անիվ — зубчатка, зубчатое колесо
ժանանվային փոխանցում — зубчатая передача
ժողովիչ — коллектор

——

իր, բանվածք — изделие
ինքնաման — самопрялька
ինքնաշեն — самодельный

——

լծակ — рычаг
լծակավոր — ричажный
լուսաբեր — светофор

——

խարիսխ — якорь
խառատ — токарь
խառատել, խառտել — точить
խառատի հաստոց — токарный станок
խարտոց — напильник
խեցեղեն — глинянная посуда
խոզանակ — щетка
խոշորացույց — лупа
խիր, փայլաթ — мат

——

ծածկույթ — пакрышка
ծակահատ — пробойник
ծծան (թուղթ) — промокательная бумага
ծռել — сгибание
ծռվել — коробиться
ծրարման թուղթ — оберточная бумага

——

կաթսա — котел
կաթսայանոց — котельное помещние
կազմվածք — структура
կաղապար — шаблон
կաղապարում — формовка
կալսիչ մեքենա — малотилка
կանեփ — конопля
կապար (արճիճ) — свинец
կառուցող — конструктор
կառուցողական — конструктивный
կարապիկ — лебедка
կարի արհեստանոց — пошивочная мастерская
կարել — сшивание
արկատան — заплата
կեղև — кора
կեռիկ — крючек
կենտրոնական ջեռուցում — центральное отопление
կլոր-բերան — круглогубцы
կծում — откусывание
կծիչ, կծիչներ — кусачки
կշռաքար — розновески, гири
կորանալ — коробиться
կոյուղի — канализация
կտրել — резать
կտրիչ — резец
կտրվածք — порез
կցվող գործիքներ — прищипные орудия

——

հանածո — ископаемое
հանքային — минеральный
հանք — руда
հանքահոր — рудник
հաղորդիչ լար — проводник
հաշվառում — учет
հաստոց դազգյահ — стонок
հավաքում — сборка
հավաքածու -- коллекция
հատապտուղ — ягоды
հատապտղանոց — ягодник
հարդարանք — заправка
հարդարել մեքենան — заправлять машину
հարմարանք — приспособление
հատիչ (կտրիչ) — зубило
հեղույս — болт
հենք — основа
հերյուն (բիզ) — шило
հիմնական ցեխ — основной цех
հյուսն — плотник
հյուսում — витье
հոլովական շարժում — врощательное движение
հողամաս — земельный участок
հողմաշարժիչ--ветряной двигатель
հողմացույց — флюгер
հրահանգչական կարտ — инструкционная карта

——

ձագար — воронка
ձեռնարկություն — предприятие
ձեռքի սղոց — нажовка
ձևափոխում — формоизмеряемость, деформация
ձևում — закройка
ձևվածք — выкройка
ձողան — планка
ձուլող — литейщик
ձուլման գործ — литейное дело
ձուլում — литье

———

ճախարակ — блок
ճամուկ (ծաղկանկար) — узор
ճարմանդ (չափրաստ) крючек
ճաքել — трескаться
ճղվել – раскалываться
ճղվելու հատկություն — колкость
ճմռել — мять

——

մագոդ — челнок
մանրաթել — волокно
մաս (մեքենայի) — деталь (машинны)
մատղաշ — молодняк
մատրակող — плющильный
մատրակել — расплющивать
մարտկոց — батарея
միանվանի սայլակ — тачка
միջնաթել — уток
միջուկ — середцевиниа
մեխանիկական — механический
լծակավոր մուրճ — рычажный молот
մետաղալար — проволока
մետաղամշակում — обработка металла
մետաղների սառը և տաք մշակումը — холодная и гарячая обработка металлов
մետաղների փորձարկում — испытание металлов
մեղեխ — кривошип
մեղեխա-շարժարանային փոխանցում — кришипо-шатунная передача
մեխանիկա — механика
մեքենագիտություն — машиноведение
մեքենայնացում — механизация
մոդելացում — моделировние
մոլախոտ — сорняк
մխոց — поршень

——

յեզրատում — окантовка
յերիզասղոց — ленточная пила
յերեսից խարտոցել — опиловка
յեռոտան — треножник, таганчик.

——

ներգործարանային տրանսպորտ — внутри заводской транспорт
նիշնշում — разметка
նկար — рисунок
նկարահանում — зарисовка
նմուշ — образчик
նշանասյուն (յերկաթուղու) — семафор.

——

շաղախ — тесто, раствор
շաղափ — коловорот
շարժական արհեստանոց — мастерская передвижка
շարժական վերամբարձ կռունկ — передвижиой подемный кран
շարժումների համաձայնեցում — координация движений
շարժիչ — двигатель
շարվածք — набор
շեղր — лопасть
շերտավոր յերկաթ — полосовое железо
շինածո նյութեր — поделочный материал
շոգեքարշ — паровоз
շրեշտ — клейстр
շրջասղոց — кругорез
շրջակապ — обруч.

——

ոգտագործում — использование
ոդասահնակ — аэросани
ոդափոխում — проветривание
ոժանդակ ցեխ — подсобный цех
ուժակայան — силовая станция
ուժատար — привод
ուժատարային սռնակ — приводной вал
ուղղագիծ շարժում — прямолинейное движение
ուղղանկյունի — прямоугольник

չորացում — сушка, усушка
չորսու, չորսվիկ — брус, брусок

——

պահեստապետ — кладовщик
պարան — веревка
պարաշյուտ — порошют
պարապ փոկանիվ — холостой шкив
պարարտացում — удобрение
պատվանդան — подставка
պատյան — футляр
պնդություն — твердость
պտղափոխում — плодосмен
պտուտակիչ — отвертка
պտտվող սղոց — поворотная пила.

——

ջարդվածք — ушиб
ջերմածու — парник
ջերմաշարժիչ — тепловой двигатель
ջերմհաղորդականություն — теплопроводность
ջերմոց — теплица
ջեռուցիչ — нагреватель
ջեռուցում — нагревание, отапление
ջրամբար — водоем, водяной резервуар
ջրհան — водокачка
ջրանիվ — водяное колесо
ջուլհակություն — ткачество

——

ռադիոընդունիչ — радио приемник
ռանդա — струг
ռանդել — строгать

——

սաղարթ — листва
սայլակ — тележка
սանձափոկ — вожжи
սածիլավորում — рассадка
սարքավորում — оборудование монтаж
սավառնակ — аэроплан
սեղմակ — зажим
սկավառակ — диск
սղոց — пила
սղոցում — распиловка
սղոցող — пильщик
սոսինձ — клей
սոսնձել, կպցնել — склеивание
սռնակ — вал
ստորնամուղ անիվ — подливное колесо
ստվարաթուղթ, կարտոն — картон
ստվարաթղթի կտրիչ — картонорубилка
սրբագրման հաստոց — корректурный станок

——

վերամբարձ մեխանիզմ — под’емный механизм
վերնամուղ անիվ — наливное колесо
վոլորան — ворот
վուշ — лен
վուշ գզող մեքենա — льнотрепальная машина
վոտնակալ — педаль
վրձին — кисть

——

տախտակամածում — опалубка
տախտակամած – палуба
տաքացնող նյութեր — утепляющие материалы
տափակ-բերան — плоскагуцбы
տափակ-դուր — стамеска
տեսակավոր յերկաթ — сортовое железо
տեսակավորում — сортировка
տնայնագործ — кустарь
տնկարան — рассадник
տովրիչ, փայտի խարտոց — рашпиль
տոգորել — пропитывать
տպագրական տառեր — типографские литера
տպարանական արտադրություն — полиграфическое производство
տրամալար — отвес
տրանսմիսիա (փոխանցում) — трансмиссия
տրոս, մետաղալարային թոկ — тросе
տուփ, տփիկ — каробка

——

րեոստատ — реостат

——

ցեմենտի շաղախ — цементный раствор
ցնցուղ — лейка

——

փականագործ — слесарь
փական, կողպեք — замок
փայտահատ — лесоруб
փայտամշակման արդյունաբերություն — деревоабрабатывающая примешленность
փայտանյութ — древесник
փոխադրիչ — транспортер
փոխակերպիչ — трансформатор
փոխանցում — передача
փոխանցման մեխանիզմ — передаточный механизм
փոկ — ремень
փոկանիվ — шкив
փոկային փոխանցում — ременная передача
փորել (դուրով) — долбить

փորձադաշտ — опитный участок
փորձանակների կանգնակ — стойка для пробирок
փորձարկում — испытание
փոքր դրոշակ — флажок
փոքր կացին — топорик
փռվածք — розвертка

———

քաթան — полотно
քաթանի հյուսվածք — полотняное переплетение
քամհար — веялка
քարշ — тяга
քառակուսի — квадрат
քարտաշ — каменьщик
քերիչ — терка.

ՑԱՆԿ

էջ

1. Հայոց լեզվի ծրագիր 5
2. Մաթեմատիկայի » 17
3. Ռուսաց լեզվի » 29
4. Հասարակագիտության ծրագիր 33
5. Աշխարհագրության » 66
6. Բնագիտության » 80
7. Պոլիտեխնիկական աշխատանք. ուսման ծրագիր 98

ՀՀ Ազգային գրադարան
NL0231540

50.285